

# ԿՐՈՆ ԵՎ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յամար 10  
փետրվար, 2010



Յանդեսի հրատարակումը ֆինանսավորվել է  
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական  
մասնաճյուղի և Նիդեռլանդների Թագավորության կառավարության կողմից



The Publication is financed with the assistance of the Open Society Institute  
Assistance Foundation Armenia and the Government of the Kingdom of the the  
Netherlands

2010

## **Խմբագրական խորհուրդ**

**Լևոն Աբրահամյան**

**ՀՀ ԳԱԱ Յնազիտության և ազգագրության ինստիտուտ**

**Ստեփան Դանիելյան**

**Յամագործակցություն համուն ժողովրդավարության կենտրոն**

**Յրանուշ Խառատյան**

**ՀՀ ԳԱԱ Յնազիտության և ազգագրության ինստիտուտ**

**Շովիաննես Շովիաննիսյան**

**Երևանի պետական համալսարան**

**Վարդան Զալոյյան**

**Շումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն**

**2**

**Արամ Սարգսյան**

**Յայսաստանի պետական տնտեսագիտական համալսարան**

---

**Գլխավոր խմբագիր՝**

**Ստեփան Դանիելյան**

**Խմբագիր՝**

**Արթուր Ավքանդիլյան**

**Մրբագրիչ՝**

**Արփիկ Յանբարձումյան**

հեռ.՝ 010 22 36 97

կայք՝ [www.religions.am](http://www.religions.am)

Էլեկտրոնային հասցե՝ [colfordem@gmail.com](mailto:colfordem@gmail.com), [colfordem@religions.am](mailto:colfordem@religions.am)



Յամագործակցություն  
համուն ժողովրդավարության  
կենտրոն

# **Բովանդակություն**

## **Նրապարակումներ**

### **Հովիաննես Հովիաննիայան**

Հայաստանի Հանրապետության ներկա հոգևոր  
իրավիճակի վերլուծություն ..... 10

### **Արման Փոլառյան**

Իրանի կրոնական փոքրամասնությունները ..... 26

## **Հոդվածներ**

### **Նազենի Ղարիբյան**

Պարթևական ավանդույթները Հայաստանում և կաթողիկոսական  
աթոռի խնդիրը IV դարում ..... 48

**3**

### **Տաթկիկ Խաչիկյան**

Բողոքական հայերը Թուրքիայում ..... 76

### **Հայաստանի կրոնական կազմակերպությունները**

Հայ կաթողիկե Եկեղեցի ..... 89  
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի ..... 107

### **Օրենքներ, մեկնարամություններ, նախագծեր**

#### **«Կրոնական անհանդուրժողականությունը Հայաստանում – 2009»**

Մամուլի մոնիթորինգի վերլուծություն ..... 113  
Կրոնի և հավատքի ազատությունը Աղրթեանում ..... 146

## **Անցյալից**

### **Միքայել Նալբանդյան**

Նկատողություն ..... 155

# Religion and Society

Volume n.910, February 2010

## Editorial Board

**Levon Abrahamyan**

*Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of the Republic of Armenia*

**Stepan Danielyan**

*"Collaboration for Democracy" Centre*

**Hranush Kharatyan**

*Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of the Republic of Armenia*

**Hovhannes Hovhannisyan**

*Yerevan State University*

**4**

**Vardan Jaloyan**

*Armenian Center of Humanitarian Research*

**Aram Sargsyan**

*Armenian State University of Economics*

---

**Editor-in-chief**

Stepan Danielyan

**Editor**

Arthur Avtandilyan

**Proofreading**

Arpik Hambardzumyan

Web-site: [www.religions.am](http://www.religions.am)

phone: 37410 223697,

e-mail: [colfordem@gmail.com](mailto:colfordem@gmail.com) , [colfordem@religions.am](mailto:colfordem@religions.am)



## **Summaries**

### **Hovhannes Hovhannisyan AN ATTEMPT TO ANALYZE THE CURRENT RELIGIOUS STATE OF THE REPUBLIC OF ARMENIA**

In this article the author tries to analyze the current religious and spiritual situation of Armenia considering the fact that an overall analysis of the religious situation of Armenian religious reality has not been implemented. It is should be objectively said that an overall analysis of the religious situation in Armenia is quite hard to implement. Religion in Armenia plays not only spiritual role but also is closely related to national identity issue and several other social and political issues explored in this research. Having the purpose to make the analysis effective the author divided the article into different parts and tried to analyze the current structures of religious organizations, the role of youth in religious organizations, science, high technologies, etc.

**5**

The article also explored the problem of tolerance and dialogue among religious organizations in Armenia and showed the cases of intolerance and tried to reveal its roots. The author also showed the influence of high technologies on the activities of religious organizations.

At the end of the article the author concludes that the religious organizations are better to be concentrated on universal ideals and values then on disputes and intolerant activities.

### **Arman Poladyan RELIGIOUS MINORITIES IN IRAN**

The article explores a very important issue of the contemporary Islamic Republic of Iran concerning to religious minorities. First of all it explores the issue of Sunni minority in Iran which comprises a small number comparing to the Shia majority. The article is quite interesting from the point of Armenian minority living in Iran. The number of Armenians in Iran before the Iranian revolution was around 200 thousands and later the number has been sufficiently decreased. The author analyzed the structural organization of Armenian community and

Armenian Church in Iran. The article also explores the issue of catholic Armenians living in Iran who have their significant role in Iranian society.

The article is also interesting from the aspect of the relationship of political and religious perspectives. The issue of Protestants and their current increasing number is also under the interest of the author of the article. The author analyzed not only the Armenian but also the Assyrian and other ethnic and religious communities (Zoroastrians).

One of the basic issues discussed in the article is the religious community of Bahaism because it is one of the main problems in Iran. The author tries to analyze the roots of mutual intolerance and hostility of State and Bahai community.

At the end the author quotes and analyses the privileges given to religious communities of Iran under the Law and also the issues connected with the Kurdish population and their attempts to sovereignty.

### Nazeni Gharibyan

#### PERSIAN TRADITIONS IN ARMENIA AND THE PROBLEM OF CATHOLICOSATE IN IV CENTURY

6

The article explores the issue of structural organization of Armenian Apostolic Church in IV century and the influence of Hellenistic and Assyrian culture and religious trends in Armenia. Based on the primary sources the author shows the relationship between political and church authorities and from this point of view interprets the spread of Christianity and the establishment of Church structure in Armenia. The author also analyzed the establishment of sacred places in Christian culture and the role of the cooperation of political and spiritual authorities. One of the interesting aspects of the article is the analysis of the influence of Iran and its system on the clergymen of Christianity especially during the reign of Arshakuni dynasty.

During the reign of Catholicoses Nerses Mets and Sahak Partev the issue of the spiritual centre was one of the major problems of Armenian Church which is scrupulously explored in the article. The author showed that the Holy See based in Vaxarshapat in V century because that was the policy of Sasanian Iran opposite to the policy carried by the Partevian Iran.

**Tatevik Khachikyan**  
**PROTESTANT ARMENIANS IN TURKEY**

The article analyzes one of the “hot” topics recently discussed in Turkey. The issue is about the protestant missionaries and spread of Protestantism in Turkey under special phases starting from the beginning of 19<sup>th</sup> century. The author makes special emphasize on the spread of protestant missionaries and Protestantism among Armenians living in Turkey. It is also quite important that the article shows the foundation of the Armenian Evangelical Church which was the first not only in Turkey but also in the world.

In the second part of the article the author emphasizes the basic activities of Armenian Evangelical Church, shows the problems between Armenian Evangelicals and Armenian Apostolic Church, and points out the main characteristics and development trends of the Church. At the end the author concludes that the issue of Protestantism in Turkey is still a very important topic and needs to be studied deeply and scrupulously.

7

**Religious Intolerance in Armenia 2009**  
**PRESS MONITORING**

The aim of the article is to show the cases of intolerance, discrimination and hostile attitude towards the religious organizations in the Armenian press. The article focused on the articles having such kind of nature of intolerance and discrimination. The studied press and information concerned to the article are located in [www.religions.am](http://www.religions.am) website. The monitoring also showed the tolerant attitude of some articles towards the religious organization functioning in Armenia.

The author of the press monitoring analyzes the interviews taken from the heads of dioceses and the articles published in the daily newspapers and web-sites such as “Aravot”, “Hraparak”, “Golos Armenii”, “Haykakan Zhamanak”, “Azg”, “Azamatutyun”, [www.lragir.am](http://www.lragir.am), [www.panorama.am](http://www.panorama.am), [www.tert.am](http://www.tert.am), [www.arminfo.am](http://www.arminfo.am), [www.hetq.am](http://www.hetq.am), [www.armenianow.com](http://www.armenianow.com), etc. The author also analyzed special terms and concepts used in this articles such as “heresies”, “soul haunting” which are the evidence of intolerant attitude towards religious minorities.

The author concludes that articles concerning the religious com-

munities and religious organizations have been recently increased in Armenian press and the issue has been sufficiently politicized. The clergymen of Armenian Apostolic Church are being involved in politics proved by the recent Presidential elections in 2008. Meanwhile some of the newspapers emphasize the idea of religious tolerance and non-discrimination which can not be said about the TVs. Anyway the authorities do not pay sufficient attention to the problems and issues of various religious organizations and the intolerant press in Armenia.

### **ARMENIAN CATHOLIC CHURCH**

The article is about the establishment, development and current situation of Armenian Catholic Church. It tries briefly describe the main events happened during the history of the Church and evaluate some of the main issues and events. The article is written by the representatives of Armenian Catholic Church and it starts from the history in Ottoman Turkey where the head of Armenian Apostolics, Protestants and Catholics was considered the head of Constantinople Patriarch.

**8**

The article analyzes the activities of one of the Catholic actors named Abraham Artsivian and the trend in development of Catholic community. The article shows that two Catholic Centers in Constantinople and in Zmmar joined only in 1966.

One of the basic topics of the article is the foundation and development of Mkhitarian Unity which played a great role not only in Catholic community but for all Armenians in the world notwithstanding of religious belonging. The article also explored the issues concerning the Zmmar Unity and Armenian Virgin Sisters Unity. The both organizations played a great role in organization and development of Armenian Catholic Community.

### **THE CHURCH OF JESUS CHRIST OF LATTER DAY SAINTS**

The article is about the commencement and the development of activities of the Church of Jesus Christ of Latter day saints in Armenia. The religious organization which is mostly known as Mormon Church has penetrated to Western Armenia at the beginning of 20<sup>th</sup> century. In Eastern Armenia the Mormon missionaries appeared after the independence of Armenia in 1991.

The article provides basic knowledge on the establishment of

Mormon Church, Mormon Book, its Missionary activities, basic concepts on family, marriage, life, relationship with other religious organizations and Churches, etc. From this perspective it is quite essential the missionary work of Mormon Church because the basic power and specialty of the Church is rooted in its massive missionary work.

**Michael Nalbandian**  
**NOTICE**  
December 11, 1863

The article is a reply to an anonymous author who published an article in "Meghu" newspaper on the destructive role of Armenian Protestants. In his article Michael Nalbandian criticizes the approaches embodies in the article and shows the positive sides of Protestant Church which brought Freedom to the nations believing its doctrine.

In the article M. Nalbandian mostly emphasizes the concept and idea of Freedom and concludes that the believing or not believing to any religious or faith depends on the willingness of an individual. For M. Nalbandian there is no true or false religion because everything depends on the personal belief of people.

## **Հովհաննես Հովհաննիսյան**

Պատմական գիտությունների թեկնածու, 2006թ. ավարտել է ԵՊՀ կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտուրան: 2007թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, Դայ առաքելական եկեղեցու քարենորդոչական շարժումը 1901-1906 թթ. (Կրոնագիտական վերլուծություն) թեմայով: Դեղինակ է ավելի քան 20 գիտական հոդվածների, 2003 թ. ԵՊՀ կրոնի պատմության և տեսության ամբիոնի դասախոս:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՀՈԳԵՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ<sup>1</sup> ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**10**

Դասարակական, ինչպես նաև գիտական դիսկուլսում հաճախ շրջանառվում է այն տեսակետը, թե Խորհրդային Դայաստանի ու Երրորդ համբաւետության հոգևոր-մշակութային ու կրոնական դաշտերի միջև գոյություն ունեն բազմաթիվ նմանություններ մշտապես առկա տարաբնույթ մարտահրավերների ու սպառնալիքների առկայության առումով: Եթե խորհրդային շրջանի մարտահրավեր էր դիտվում կոնունիզմի անբաժանելի տարր համարվող աթեստական գաղափարախոսությունն իր բոլոր դրսերումներով ու դրանից բխող հետևանքներով, ապա անկախ Դայաստանի պարագայում մարտահրավերների շարքում առավել հաճախ հիշատակվում էն համաշխարհային գլոբալացումը և չարաբաստիկ Եվրոպական խղճի ազատությունը:<sup>2</sup> Ընդ որում, պարբերաբար շեշտադրվում է այն հանգանքը, որ դրանք Դայաստանին են պարտադրվում առավել հզոր ու «բարոյական անկնան մեջ գտնվող» Եվրոպայի կողմից, իսկ Դայաստանն էլ ստիպված է ընդունել պարտադրված խաղի կանոնները, որն առավելապես իրականության աղավաղված կամ էլ եկեղեցակենուն տեսակետուն է ներկայացնում:

Այս ինաստով շատ հաճախ, երբ խոսվում է «հոգևոր անվտանգության» հայեցակարգի կամ էլ ստեղծվելիք ազգային անվտանգու-

<sup>1</sup> «Դոգլոր» տերմինի գործածությունը հնարավոր է տարբերումների տեղիք տա, քանի որ այս բառի հմաստային ընդգրկունության ոլորտը բավականին մեծ է: Դասկանակի է, որ այս հորվածի շրջանակներում հնարավոր չէ անըղջական պատասխան տալ վերնագործ նախատեսված հարցին, այնուամենամեծվ: Կիործենք ամփոփ վերանայել այն բոլոր հիմնախնդիրները, որոնք ի հայտ են եկել այս ժամանակաշրջանում՝ հիմնական ուշադրություն դարձնելով հոգևոր ոյորությունը մաս կազմող կրոնական հրավիճակի վերլուծությանը: Դոգլում հիմնական խնդիր են դրել առանձացնել կամ իդենտիֆիկացնել հայ իրականության մեջ առկա հիմնախնդիրները, որի արդյունքում հնարավոր կլիներ որևէ խնդրի պատասխանառու պատուան նարմինների ուշադրությունը թևենել խնդրո առարկա հարցերի վրա:

<sup>2</sup> Յ. Մարգարյան, Արդի մարտահրավերներն ու Դայոց եկեղեցին հոգևոր անվտանգության համատեքստում, Բանբեր, թող. 5, Երևան, 2007, էջ 8:

թյան հայեցակարգի մեջ «հոգևոր անվտանգության» կարևորության նասին, ապա մեծ մասամբ «հոգևոր անվտանգություն» հասկացության տակ ընկալվում է Եկեղեցական անվտանգություն կամ էլ Յայ Եկեղեցու շահերի պաշտպանություն օտարամուտ, օտարածին և ոչ ավանդական տարրերից: Իր հերթին էլ հոգևոր անվտանգության կամ էլ Յայ Եկեղեցու անձեռնմխելիության կամ գերագահության հարցերը հայ էքնոսի հոգևոր տարածության մեջ հանգեցվում է ազգային ինքնության պահպանության խնդրին: Այսինքն՝ մի կողմից Եկեղեցին հանդես է գալիս ազգային ինքնության պահպանության հիմնական գրավական, իսկ օտարերկրյա կառույցներն ու կազմակերպությունները՝ ճիշտ հակառակը<sup>3</sup>:

Կարծում ենք՝ նման մտածողությունն առավել յուրահատուկ կարող է համարվել մինչինդուստրիալ ժամանակաշրջանում գործառնող հասարակությունների և ոչ թե պոստինդուստրիալ կամ ինֆորմացիոն ժամանակաշրջանների համար: Այս տեսանկյունից ժամանակակից աշխարհում պետք է առաջնորդվել նորագույն մեթոդներով ու միջոցներով, իսկ ազգային ինքնության պահպանության նպատակով պետությունը պետք է հնարավորություն ունենա ճշգրիտ ցանցերի միջոցով պաշտպանել Յայաստանի Յանրապետության հայ ազգաբնակչությանը ազգային նկարագիրը ձևախեղող և եվրոպական արժեքների անվան տակ երկիր ներթափանցող տարաբնույթ «արժեքային համակարգերից»: Այս գործում Յայ առաքելական Եկեղեցու հնարավորություններն առավելապես պետք է կենտրոնացն սփյուռքահայության հայ ինքնության պահպանման հիմնախնդիրների վրա, քանի որ Սփյուռքում Վերոնշյալ ցանցերի գործառնությունն անհնար է, որի հետևանքով, արտաքին աշխարհից Եկող տարաբնույթ ազդակների ամճիջական ճնշման տակ լինելով, առավել հաճախ ենք ականատես լինում հայ ինքնության կորստի փաստերին: Այս տեսանկյունից լեզվի, կրոնի, մշակույթի ինքնության պահպանության հիմնահարցը հիմնականում կարող է լուծվել տրանսկուլտուրալ այնպիսի կազմակերպության միջոցով, ինչպիսին Յայ առաքելական Եկեղեցին է՝ իր բոլոր ցանցային կառույցներով, ճյուղավորումներով ու կենտրոններով հանդերձ:

Հասարակական դիսկուրսի շնորհիվ ի հայտ եկած հետաքրքրական երևույթներից մեկն էլ ազգային գաղափարախոսության շուրջ պարբերաբար հնչող խոսակցություններն ու քննարկումներն են, որոնք դիտարկվում են ազգային ինքնության ու հոգևոր անվտանգության համատեքստում: Եթնիկ ու կրոնական ընդհանրության ու նույնության դիրքերից հանդես եկող տարաբնույթ քաղաքական,

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 9:

հասարակական գործիչներ ու կառույցներ ժամանակ առ ժամանակ շրջանառության մեջ են դնում «Մեկ ազգ, մեկ կրոն» կամ, ավելի խորքային, «Մեկ ազգ, մեկ եկեղեցի» կարգախոսներն ու դա փորձում ցույց տալ որպես ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ տարր: Կարծում ենք՝ նշված կարգախոսներն ու դրանցով պայմանավորված հնարավոր գործընթացները ոչ միայն չեն կարող կիրառելի լինել հասարակության ամբողջացման ու հզորացման գործում, այլև, ճիշտ հակառակը, կծառայեն առանձին կառույցների ու կազմակերպությունների հզորացմանը և միևնույն ժամանակ կվտանգեն ու կիսախտեն մարդկանց բնական իրավունքները, քաղաքացու սահմանադրական իրավունքները և այլն:

Առաջին հայացքից թվում է, թե նման «գաղափարախոսություն» քարոզողները մտահոգված են հավատքի պաշտպանությամբ կամ էլ հայ ժողովրդի պատմական անցյալում հսկայական դեր խաղացած Հայ առաքելական եկեղեցու դերի ու դիրքի անխախտ պաշտպանությամբ: Սակայն մի փոքր ուսումնասիրությունից հետո պարզ է դառնում, որ նման քարոզիչների մտահոգությունն առավելապես հասարակական է, քան կրոնական, և կրոնն ու եկեղեցին նրանց համար ավելին չեն, քան պետական, հասարակական, քաղաքական ու այլ հարաբերություններում մեծ ազդեցություն ունենալու ու դիվիդենտներ ստանալու միջոց: Դրան նպաստում է նաև օբյեկտիվ պայմաններով թելադրված իրականությունը, որտեղ կրոնին ու նրա ինստիտուտներին վերապահվել է առավելապես սոցիալ-հասարակական կյանքում հարաբերությունների կարգավորիչի գործառույթ:

Եթե փորձենք համադրել ազգային ինքնության պահպանության նպատակով կատարվող քայլերը և ազգային գաղափարախոսության հետ կապված դիսկուրսները, ապա հասկանալի կդառնան Հայ առաքելական եկեղեցու կողմից դրսևորվող քաղաքական մոտեցումներն ազգային հարցերում առաջնորդի դեր ստանձնելու կապակցությամբ: Հետաքրքրական է, որ այլ ազգերի մշակույթների մեջ, երբ խոսվում է ազգային գաղափարախոսության մասին, ապա դրա համատեքստում դիտարկվում է տվյալ ազգի հավատն իր յուրահատուկ պատմական առաքելության շուրջ: Այս համատեքստում դժվար է մտածել, թե ինչ պատմական առաքելության մասին է մտածում հայ ժողովրդի բաղկացուցիչ մասնիկ համարվող յուրաքանչյուր «միավոր», եթե ոչ միայն սեփական շահերի ու սեփական «ես»-ից բխող ինքնահրացման մասին: Նմանատիպ մոտեցմամբ Հայ առաքելական եկեղեցին հաճախ փորձ է կատարում այդ առաքելությունը նույնացնել քրիստոնեական համամարդկային ընդունված առաքելության հետ, իսկ ազգային գաղափարախոսությունն էլ նույ-

նացնել Եկեղեցական գաղափարախոսության հետ, որը, մեր կարծիքով, զուրկ է համոզիչ փաստարկման բազայից: Հասկանալի է, որ այն նպատակ ունի Յայ առաքելական Եկեղեցին իդենտիֆիկացնել հայ ազգի հետ, սակայն այստեղ էլ մոտեցումը սահմանափակվում է Էնրոմենոկուլտուրալ դաշտով, այսինքն՝ Յայ առաքելական Եկեղեցին պատմական պայմանների բերումով դարձել է տրանսկուլտուրալ կառույց, որի հետևանքով էլ մեծապես ընդլայնվել է նրա գործունեության ու ազդեցության դաշտը: Այս տեսանկյունից անպատկերացնելի է, թե ինչպես բազմաթիվ պետությունների ազգությամբ հայ քաղաքացիների ազգային ինքնությունը պահպանելու կոչված Եկեղեցին նրանց պետք է միավորեր մեկ միասնական ազգային գաղափարախոսության շուրջ:

### ***Սոցիալ-հասարակական իիմնախնդիրները և հոգևոր-կրոնական կառույցները***

Յուրաքանչյուր հասարակարգում ու ժամանակաշրջանում հոգևոր ոլորտի իիմնախնդիրները սերտորեն առնչվել են սոցիալ-հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացներին ու փոփոխություններին: Այս ինաստով բացառություն չէ ժամանակակից հայ հասարակությունը, որտեղ սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառների բերումով սոցիալական ու հոգևոր-կրոնական բնույթի հարցերը փոխներթափանցել են, որի շնորհիվ երթեմն դրանք հնարավոր չի լինում զատել ու առանձնացնել իրարից:

13

Յոգևոր ոլորտի գլխավոր հարցերից կարելի է մատնանշել այն, որ կրոնական պրակտիկան հայ իրականության մեջ վերափոխվել է ավանդութային կամ էլ մշակութային ժառանգության: Կրոնական կազմակերպությունները հասարակության մեջ դիտարկվում են ոչ թե իրենց իիմնական ֆունկցիոնալ դաշտում, այն է՝ հավատքային խնդիրների լուծում, հոգևոր բավարարվածություն և այլն, այլ առավելապես որպես ծիսապաշտանունքային և երթեմն էլ սոցիալ-հասարակական կառույցներ ու կազմակերպություններ<sup>4</sup>: Իհարկե, հոգևոր պահանջմունքների բավարարման և սոցիալ-մշակութային խնդիրների լուծման հարցում հասարակության կողմնորոշումը չի կարող ամբողջապես հակված լինել միայն կողմներից որևէ մեկին: Այս խնդիրը

<sup>4</sup> Օրինակ՝ Յայ առաքելական Եկեղեցու հետևորդների համար Եկեղեցու ֆունկցիոնալ դաշտը սահմանափակվում է մկրտության, նատադի, մոնավառության, քրիստոնեական-ազգային ավանդութային նորմերով: Այդ մասին մանրամասն տե՛ս Յ. Խառատյան, «Կրոնի և կրոնական իմստիտուտների հասարակական դերը կամ կրոնականության իրավիճակը Յայաստանում», «Կրոն և հասարակություն», թիվ 1, Երևան, 2007, էջ 87-98:

ոը բավականին ճշգրիտ է ծևակերպում ազգագրագետ Յ. Խառատյանը՝ նշելով, որ «շատերն, անշուշտ, շարունակում են այն (կրոնական պահանջմունքները- Հ.Հ.) բավարարել իրենց ավանդական կրոնական համակարգերում: Երբեմն այն իրոք կրոնական պահանջարկի բավարարում է, երբեմն՝ հասարակական մշակույթի ավանդական դրսևներում...»<sup>5</sup>:

Կրոնական կազմակերպությունների սոցիալական գործառութի մասին խոսելիս առաջին հերթին շեշտադրվում է մի կողմից՝ կրոնական համայնքի կողմից անհատին դեպի երկնայինի ուղղորդումը, իսկ մյուս կողմից՝ դիակոն-սարկավագների միջոցով՝ շրջապատող աշխարհի հետ կապի պաշտպանությունը: Առանց սոցիալական դիակոնիայի չեր իրականանա կրոնական կառույցի սոցիալական գործառութը, որն էլ նրա գոյության հիմնական պայմանն է: Սոցիալական դիակոնիայի միջոցով տարբեր կրոնական կառույցներ փորձում են հասնել էթնիկական-կրոնական նույնության ապահովմանը:

14

Ուսումնասիրելով քրիստոնեական եկեղեցիների պատմությունը՝ հարկ է նշել, որ նրանց մեծամասնությունը մեծ տեղ է հատկացրել և հատկացնում թմրամուների, հարբեցողների, հաշմանդամների, դատապարտյալների, ծանր իհվանդների հետ տարկող աշխատանքին: Եկեղեցիներն իրենց ներուժով նպաստում են սովոր ընտանիքներին, օգնում գործազրուրկներին ու տարեցներին: Սակայն այսօր նույնիսկ Յայ առաքելական եկեղեցու աստվածաբաններն ու եկեղեցագետներն են ընդունում, որ չկայացած ու թույլ վիճակում է եկեղեցու սոցիալական դիակոնիայի ինստիտուտը: Օրինակի համար կարելի է նեցրել եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵԽ) աշխատանքը, քանի որ այդ կառույցը բավական արագ ու կազմակերպված արձագանքում է աշխարհում տեղի ունեցող հակամարդկային ու հակաբնական երևոյթներին, առաջինը քննում ու հետամուտ լինում շատ հիմնախնդիրների և կանոնավոր կերպով բազմակողմանի կազմակերպված օգնություն ցուցաբերում աշխարհի տարբեր ծայրերում ապրող մարդկանց՝ անկախ նրանց կրոնական, սոցիալական, էթնիկական կամ ռասայական պատկանելությունից: Մարդկությանը հուզող ցցուն հիմնախնդիրների շարքում կարելի է առանձնացնել ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի խնդիրը, որին, ի տարբերություն շատ այլ երկրների կրոնական կազմակերպությունների, Յայաստանում գործառնող կրոնական կազմակերպությունները մշակված ու վերջնական պատասխան չունեն:

Յետաքրքրական է, որ բոլոր կրոնական գաղափարախոսությունները և նրանց «ներկայացուցիչ» կառույցները պարտավոր են

5 Նույն տեղում, էջ 92:

իրենց առօրյայում, կենցաղում, քարոզներում, վարվելակերպում ու դիրքորոշումներում առաջնորդվել համամարտկային այնպիսի արժեքներով, ինչպիսիք են արդարությունը, ազատությունը, հարգանքը դիմացինի նկատմամբ, մարդու բոլոր ծանաչված իրավունքները, մյուս կրոնների գոյության ու ազատ գործունեության իրավունքը և, իհարկե, այս բոլորի վրա խարսխվող հանդուրժողականությունը։ Սյուս կողմից՝ կրոնական հանդուրժողականությունը և այլոց կրոնական հայացքների նկատմամբ դրսորվող չափավոր վերաբերմունքը շատ հաճախ բախվում է կրոնական դոգմատիզմի ամուր պատին։ Ներկայիս հայ հասարակությունում թվում է՝ ինչ-որ առումով օրինաչափ կլիներ, եթե Յայ առաքելական Եկեղեցին լիներ ամենահանդուրժող կառույցն իր ավանդական ազդեցության գոտի մտած ժամանակակից այլածագ կրոնական ուղղությունների նկատմամբ, սակայն, որքան էլ զարմանալի հնչի, Յայաստանում գործառնող տարաբնույթ դենոմինացիաների ներկայացուցիչներ (նույնիսկ նույն հարանվանության տարբեր ցյուղավորումներ համարվող) երբեմն ավելի անհանդուրժող վերաբերմունք են դրսորում միմյանց նկատմամբ, քան հնարավոր է պատկերացնել։ Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ Յայ առաքելական Եկեղեցին ոչ թե պետք է փորձի այս կրոնական բազմազանությունը քանդել ու հաստատել իր հեգեմոն դերը, այլ, օգտագործելով այդ բազմազանությունը, փորձի «մարմնավորել նոր քրիստոնեական միասնությունը»՝ արդի Յայաստանի մշակութային և հասարակական բազմազանության հենքի վրա»<sup>6</sup>։ Խորապես աջակցելով հեղինակի բարի ցանկություններին՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ

«որևէ միասնության» կոչ բոլոր տեսակի կրոնական ուղղությունների կողմից ընդունվելու է սպիտակերով և, փաստորեն, որևէ նախաձեռնություն կամ ցանկություն դատապարտված է լինելու, ինչպես ցույց է տվել անցյալ տարիների մեջ փորձը<sup>7</sup>։ Իր հերթին, Յայ առաքելական Եկեղեցին երբեւ չի գնա իր դարավոր իրավունքի փոխզիջնան, այն է՝ Յայ առաքելական Եկեղեցու ինքնության և հայ ազգի ինքնության նույնացման փոփոխություն, որը, նախ, հնարավոր էլ չէ կատարել արիեստական ճանապարհներով և, երկրորդ, հասարակության ավանդապաշտ մեծ հատվածը դա կընդունի որպես երկրորդ

<sup>6</sup> Կ. Զալյամ, Յայական հասարակության հանդուրժողականության դերը կամ կրոնականության իրավիճակը Յայաստանում, (Կրոն և հասարակություն, թիվ 1, էջ 72):

<sup>7</sup> Օրինակ՝ Յայ առաքելական Եկեղեցու ներսում առկա հակասությունները կիլիկյայի հետ չեն կարողանում կարգավորել միևնույն քրիստոնեական վարդապետության շրջանակներում և այս պայմաններում ինչպես կարելի է խսել այլ վարդապետությունների հետ նմանատիպ բայցերի ծնննարկման նախին։ Այդ նասին առավել մանրամասն տես՝ Գ. Նովհաննիսյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Սեծի Տաճա Կիլիկիոն կաթողիկոսությունների 20-րդ դարի երկրորդ կեսի հարաբերությունների վերլուծության փորձ, Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք Գ, Երևան, 2008, էջ 316-338:

«զրադաշտականություն ընդունելու» փորձ:

Ժամանակակից աշխարհում գլոբալ փոփոխություններն օրավուր առավել մեծ արագությամբ են տեղի ունենում, որն էլ, բնականաբար, բերում է որոշ փոփոխությունների լոկալ մշակութային համակարգերում: Այդ փոփոխություններն առաջին հերթին պայմանավորված են միասնական արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդրով, որն ընդգրկում է իրավական, սոցիալական, կրոնական, մշակութային և այլ ոլորտներ և, բնականաբար, սվիմներով է ընդունվում «հակագլոբալիստների» կամ «պահպանողական» մեծամասնության կողմից: Սովորաբար մարդկության պատմության ընթացքում կայունության հիմնական առաջին են եղել կրոնական կառուցները, որոնք հնարավոր ամեն միջոցներով փորձել են խեղդել կամ լռեցնել այլ համակարգից թափանցող արժեքները՝ դրանց վերագրելով ազգային ինքնությանը սպառնալու վտանգը: Ազգային և եկեղեցական ինքնության նույնականացման պարագայում խնդիրն առավել է բարդանում մոնուեթնիկ տարածության մեջ ապրող ազգերի ու ժողովուրդների համար:

16

Վերջին շրջանում հայ իրականության մեջ ամենից շատ արծարծվող խնդիրն «անբարո» Եվրոպայից թափանցող կամ «պարտադրվող» օրենքներն են, որոնց մեջ էլ իր շուրջ առաջացրած աղմուկով աչքի է ընկնում «խղճի ազատության նախն» օրենքը<sup>8</sup>: «...համաշխարհային գլոբալացման և Եվրոպական խղճի ազատության դոկտրինայից բխող մարտահրավերները նոր խնդիրներ են առաջադրում ինչպես ողջ քրիստոնյա աշխարհին, այնպես էլ Հայաստանին և Հայ առաքելական եկեղեցուն», - ահա այսպիսին է պահպանողական զանգվածի ընդհանրական մոտեցումը նշված հարցի առնչությամբ<sup>9</sup>: Այս համատեքստում ևս գործում է խղճի ազատության նկատմամբ դրսևորվող երկակի ստանդարտը. Երբ նայում ենք աստվածաբանության հարթության, ամեն ինչ նորմալ է, իսկ երբ ազգային ու պետական՝ ճիշտ հակառակը: Երբ պետք է օգտվել դրա ընձեռած հնարավորություններից, ամեն ինչ նորմալ է, երբ որևէ բան այդպես չէ՝ մեղավոր է խղճի ազատությունը:

Այս հարթության մեջ են դիտարկվում նաև Արևանտքի կողմից «պարտադրված» այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աբորտի հիմնահարցը, սեռական բարոյականության հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր, թմրամոլության խնդիրը, մեծ աղմուկ բարձրացրած

8 Ընդունվել է ՀԽՍԴ ԳԽ-ի կողմից 1990 թ. հունիսի 17-ին՝ հետագայում 1997 թ. կատարված փոփոխություններով:

9 Յ. Սարգսյան, Արդի մարտահրավերներն ու Հայոց եկեղեցին հոգևոր անվտանգության համատեքստում, Բանքեր, թող. 5, էջ 8:

սոցիալական քարտերը և այլն: Ցավոք, հայ իրականության մեջ գործող կրոնական կառույցները, այդ թվում՝ հեգեմոն դիրք ունեցող Հայ առաքելական Եկեղեցին, չունեն հայեցակարգային մոտեցում հասարակական այնպիսի պրոբլեմների նկատմամբ, ինչպիսիք են ծխելու, աղքատների ու հաշմանդամների նկատմամբ վերաբերմունքի խնդիրը և այլն: Արևոտքում կաթոլիկ հոգևորականների շրջանում այդքան մեծ աղմուկ հանած մանկահասակների պղծման կապակցությամբ չկա ևս որևէ հստակ դիրքորոշում: Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ պարզ է և ավելորդ մեկնաբանությունների կարիք չկա, սակայն իրականում յուրաքանչյուր խնդիր պահանջում է համակարգված դիրքորոշում և մոտեցումներ: Եթե նի փոքր պատմական էքսկուրս կատարենք, պարզ կդառնա, որ Հայաստանում գործառնող կրոնական կազմակերպություններից շատերը բավարում են մարտավարական ու պահային մոտեցմամբ, որովհետև օբյեկտիվ պատճառներով շատ դեպքերում հնարավոր էլ չէ ռազմավարական ծրագրեր մշակել այնպիսի խնդիրների կապակցությամբ, որոնք ծագում են տարերայնորեն և պահանջում են արագ լուծումներ: Շատ դեպքերում նման լուծումները կարող են իրենց հերթին նոր և անսպասելի ցնցումների տեղիք տալ: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է գոնե հայեցակարգային մակարդակով կարողանալ ընդհանուր սկզբունքների շրջանակներում ուղղություն տալ ինչպես անսպասելի ծագած, այնպես էլ շղթայական ռեակցիայի արդյունքում առաջացած խնդիրների<sup>10</sup>: Բավական մեծ տոկոս է կազմում այն խնդիրների քանակը, որոնց կրոնական կազմակերպությունները չեն ցանկանում կամ էլ չեն կարողանում ճիշտ լուծումներ առաջարկել: Նման քաղաքական մոտեցման պատճառները լիովին հասկանալի են, քանի որ որևէ կրոնական կառույց ցանկություն չունի իր հավատացյալների աչքին ներկայանալ «ճշմարտություններ չժանաչողի կամ չգիտակցողի» կերպարանքով, ինչը զգալիորեն կսասանի սեփական Եկեղեցու հիմքերը: Այդ է պատճառը, որ շատ Եկեղեցիներ (օրինակ՝ Սորմոնի Եկեղեցին) հասարակական կյանքում առաջ եկած որևէ հիմնախնդրի լուծման կապակցությամբ հղում է անում Եկեղեցու Մարգարեի անխախտ հեղինակությանը և խոսքին, ինչը Եկեղեցու քաղաքականությունը քավականին ճկում է դարձնում:

Հետաքրքրական է նաև կրոնական կազմակերպությունների վերաբերմունքը հայ հասարակությանը հետաքրքրող քաղաքական հարցերի նկատմամբ, որից տվյալ կազմակերպությունները փորձում են ավանդաբար խուսափել: Յիմնական պատճառաբանությունն այն է, որ կրոնական կազմակերպությունը քաղաքականությամբ չի

<sup>10</sup> Օրինակ՝ կարող եմ նշել, որ սոցիալական քարտերի ներմուծման պատճառով առաջացած հսկայական աղմուկը այդպես էլ վերջնական լուծում չստացավ և մնաց հասարակական լուծմանը:

զբաղվում և այն դուրս է նրա գործառույթների շրջանակից: Այս փաստարկը բավական թույլ է, քանի որ եկեղեցին ինքը հենց հասարակությունն է և, երկրորդ, քաղաքական պրոցեսները ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադառնում են ժողովրդի սոցիալ-քաղաքական, հոգևոր և այլ հիմնախնդիրների վրա: Կարծում ենք՝ Հայաստանում գործող բոլոր կրոնական կառույցների ներկայացուցիչները ոչ թե պետք է մասնակցեն քաղաքական գործընթացներին, այլ առավել ակտիվ արձագանքեն այդ գործընթացների պատճառով տուժած մարդկանց իրավունքների պաշտպանությանը, միևնույն ժամանակ զերծ մնալով քաղաքական գործառույթներ ստանձնելու ոչ կրոնական պարտավորությունից:

### **Երիտասարդությունը հոգևոր-մշակութային ոլորտում**

**18**

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո չափազանց մեծ ուշադրություն է կենտրոնացվել երիտասարդության վրա, որը, ցավոք, երբեմն ուղեկցվում է հասարակության այդ կարողութիւնիցությամբ կամ էլ ոչ ճիշտ կողմնորոշմամբ: Այս հարցի կապակցությամբ առավել ավագ սերնդի ներկայացուցիչները մեղադրում են հենց երիտասարդությանը՝ իրենց արժեհամակարգերը հակադրելով երիտասարդության մեջ տարածված արժեքային կողմնորոշումների հետ: Նմանատիպ հակադրության դրսնորումները հասարակական դիսկուրսում դրսնորվում են «իսկ մեր ժամանակ այդպես էր» կամ «մեր ժամանակ հարգանք կար, պատիվ կար» և այլ արտահայտություններով: Յետևաբար, կարելի է ենթադրել, որ ժամանակակից երիտասարդությունը, ըստ ավագների, կորցրել է այն հիմնական արժեքները, որոնցով հպարտանում էին տարիներ առաջ: Կուեկտիվիզմին փոխարինելու է եկել ինտիվիդուալիզմը, ալտրուիզմը փոխարինվել է պրազմատիզմով: ահա այսպես կարելի է բնութագրել ժամանակակից երիտասարդության կողմնորոշումը և «արժեքային համակարգը»: Յետաքրքրական է, որ մշակութային կյանքին մասնակցության առումով ծնողներն ավանդաբար իրենց երեխաներին ընդգրկում են տարբեր տեսակի մշակութային գործունեության մեջ, սակայն, ցավոք, նրանցից քչերն են շարունակում իրենց ծնողների «երազանքը»:

Այս տեսանկյունից բավականին հետաքրքրական է երիտասարդության կողմնորոշումը հոգևոր-մշակութային, կրոնական կյանքի նկատմամբ: Այս իմաստով հետաքրքիր կլիներ տեսնել երիտասարդության ակտիվ մասնակցության աստիճանը Հայաստանի մշա-

կութային կյանքին և այն համեմատության մեջ դնել կրոնական կյանքում նրա ունեցած մասնակցության հետ: Ցավոք, նմանատիպ ուսումնասիրություններ դեռ կատարված չեն, որից էլ ելնելով՝ փորձենք մեր կարծիքը խարսխել ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հրատարակած՝ Դայաստանի երիտասարդության ազգային գեկույցում ներկայացված տվյալների վրա<sup>11</sup>: Այս իմաստով գեկույցում ներկայացված տվյալները բացարձակ հակառակ պատկերն են ներկայացնում մշակութային ու կրոնաեկեղեցական կյանքի առնչությամբ: Մշակութային կյանքը, ըստ ամենայնի, հանրապետությունում բավականին լուրջ վերելք է ապրում, որի վկայությունը վերջին տարիներին լեցուն թատրոններն ու կինոդահլիճներն են (սա ընդամենը մեկ դրսնորում է)<sup>12</sup>:

Կարելի է ասել, որ միանգամայն այլ պատկերի ենք հանդիպում կրոնական կյանքի հետ կապված հարցերում, որտեղ կրոնի նկատմամբ երիտասարդության նոտեցումները միանգամայն հակասական են, բայց և օրինաչափ: Գաղտնիք չէ, որ Դայաստանի բնակչության մեծամասնությունը իրեն համարում է Դայ առաքելական Եկեղեցու հետևորդ, չնայած դրանից բխող պարտականությունների ու պարտավորությունների մասին ընդհանրապես պատկերացում չունի: Այս տեսանկյունից երիտասարդությունը ևս բացառություն չէ, քանի որ հարցվածների 89.4%-ը իրեն համարում է Դայ առաքելական Եկեղեցու հետևորդ, սակայն միևնույն ժամանակ նշում, որ որևէ ակնկալիք չունի Եկեղեցուց (56.3%): Միևնույն ժամանակ, իհարկե, ավելորդ չենք համարում նշել, որ Եկեղեցական կյանքում հետևորդների ակտիվության առումով ավետարանական Եկեղեցիների երիտասարդները զգալիորեն գերազանցուն են Դայ առաքելական Եկեղեցու հետևորդ երիտասարդներից<sup>13</sup>.

Ցավոք, պետք է արձանագրել, որ նույնիսկ համալսարանական կրթությամբ երիտասարդներից շատերը խոր պատկերացում չունեն անգամ իրենց մասնակցած շատ ծեսերի ու տոնների նշանա-

<sup>11</sup> Ուշագրավ է, որ ՀՀ կառավարության 2006 թ. գետրվարի 2-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հրատարակված «Դայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 100%-ը պատկանում է առաջարկությունը» առանձնահատուկ ուշադրություն է դարձել երիտասարդության հոգևոր-մշակութային կյանքի բարեկամանը:

<sup>12</sup> Համաձայն Հայաստանի երիտասարդության ազգային գեկույցի՝ հարցված երիտասարդների 40%-ը դրական է զնահատել մշակութային կյանքում առկա տեղաշարժերը, չնայած մոտ 30%-ը դժվարացել է պատասխանել: Առավել մանրանասն տե՛ս Դայաստանի երիտասարդության ազգային գեկույց, Երևան, 2007, էջ 96:

<sup>13</sup> Դայ առաքելական Եկեղեցու որոշ թեմերին կից երիտասարդական կառույցները, մասնավորապես Արարատյան Դայապետական թեմի, Զրվեժի և այլն, Եկեղեցական համակարգում գործող հայորդյաց տները մեծ գործ են կատարում երիտասարդներին Դայ առաքելական Եկեղեցու շուրջ համախմբենու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ծշմարտության առջև չմնամքելու համար պետք է նշենք, որ այդ համախմբման գործընթացը տեղի է ունենում ոչ թե «մարուր հավատքի», այլ Եկեղեցու սոցիալական, կրթական, մշակութային, ծիսապաշտանության և այլ ասպեկտների շուրջ: Նշանակած ապացույցն այն է, որ երիտասարդների զգալի մասը մեծ կարևորություն է տալիս Եկեղեցում անուսնանալուն (60.4%):

կության ու կարևորության մասին: Մյուս կողմից՝ պետք է արձանագրենք, որ հայ Երիտասարդությունը մեծ մասամբ աշխարհիկ է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով<sup>14</sup>:

Կարծում ենք՝ Երիտասարդության ընդգրկվածությունը տարաբնույթ սոցիալական բնույթի գործողություններում կարևոր է Երիտասարդության մեջ հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ վստահության ու հավատքի առումով: Առավել մեծ նշանակություն ունի ոչ թե կրոնական պատկանելությունը, այլ տվյալ պատկանելությունից բխող գործողությունները, որոնք ազգային, պետական, քաղաքացիական, ընտանեկան, համագոյային և համամարդկան արժեքային դաշտում են:

### **Գիտությունը, բարձրագույն տեխնոլոգիաները և կրոնական կազմակերպությունները**

**20**

Դարեւ շարունակ գիտական նվաճումները տարաբնույթ խնդիրներ են առաջադրել կրոնական կազմակերպությունների ու կառույցների առջև: Այդ խնդիրների լուծումը կամ էլ լուծման ուղիների որոնումը նորանոր խնդիրներ էր առաջացնում ինչպես գիտության, այնպես էլ կրոնական կառույցների համար (խոսքը մասնավորապես քրիստոնեության մասին է): Դաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ բացառությամբ տնտեսական զարգացմանը հիմնականում առանձնանում են քրիստոնեական մեծամասնություն կազմող բնակչությամբ երկրները, պարզ կդառնա, որ գիտության, բանականության և հավատքի, եկեղեցու հարաբերության խնդիրը մշտապես արդիական է եղել քրիստոնեության համար:

Այս հարցում Դայաստանը և հայ հասարակությունը ևս բացառություն չեն: Արտաքուստ թվում է՝ առաջ քաշած հարցը շինծու է և արիեստական, սակայն խնդրի մեջ խորանալու պարագայում պարզ է դառնում նրա արդիականությունը նաև հայ իրականության համար: Դայ առաքելական եկեղեցին հավատարիմ է մնում իր ավանդական արժեհամակարգերին նաև այս հարցում և աշխատում է հնարավո-

<sup>14</sup> ԲՄՀԿ-ի անցկացրած հարցումը բարձրագույն կրթությամբ Երիտասարդների շրջանում ցույց տվեց, որ նրանցից շատերը, իրենց համարելով խոր հավատացյալներ, որևէ պատկերացում չունեն այդ հավատքից բխող իրենց գործողությունների, պարտականությունների կամ կենսավերափ մասին: Այս տեսանկյունից հետաքրքրական է հասենաստությունը արևմտյան Երիտասարդության հետ, երբ վերջններս հպարտություն են համարում խոսել իրենց հավատքի ու կրոնական պրակտիկայի մասին, մինչդեռ հայ Երիտասարդության մեջ սեփական հավատքի մասին վկանելը դիտարկվում է հասարակական տարբեների շարքում, ու շատերը խուսափում են խոսել այդ մասին: Դեռ ավելին, «հսկասացյալ լինելով» նույնազում է Դայ առաքելական եկեղեցուց այլ կրոնական կազմակերպության պատկանելու հետ, որն, իհարկե, շատ հարցեր է առաջադրում ու ցույց տալիս հայ Երիտասարդի ոչ միայն աշխարհիկ, այլև իրական հավատքից բավական հեռու լինելու բնույթը:

ոինս խուսափել բարձրագույն տեխնոլոգիաների գործածումից կամ էլ փորձում իր համակարգում ներառել այնպիսի տարրեր, որոնք եկեղեցական ատրիբուտները, ծիսապաշտամունքն առավել գրավիչ կդարձնեն այդ տեխնոլոգիաների բազմաթիվ դրսնորումներից ազդված երիտասարդների համար: Սակայն նմանատիպ որևէ առաջարկ արխայիկ արժեհամակարգերի պաշտպան եկեղեցիները հանարում են նարտահրավեր եկեղեցական կառույցին ու նրա ավանդույթներին: Այս դիրքերից հանդես եկող որոշ հեղինակներ էլ կարծում են, որ դա գլորալացմանք պայմանավորված վտանգ է, որի ազդեցությամբ հայ ազգային ավանդույթներն ու արժեքները կփոխարինվեն առավել հզոր երկրների ավանդույթներով ու արժեքներով<sup>15</sup>: Կարծում ենք՝ այս տեսակետն իրականության հետ որևէ եզր չունի և օգտագործում է շատ պարզ քարոզչական գործիքներ հավատացյալներին համոզելու համար:

Այս իմաստով պետք է նշենք, որ Հայաստանում գործառնող բողոքականության տարատեսակները և այլ կրոնական կազմակերպություններ առավել ճկուն են և գործածում են ժամանակակից տեխնոլոգիական ոլոր զինանոցը՝ իրենց արեպստների շարքերն ընդլայնելու նպատակով: Հայ առաքելական եկեղեցու կողմից այս հարցում որևէ մշակված ծրագիր կամ հայեցակարգ գոյություն չունի, սակայն եկեղեցին այս հարցում կիրառում է երկակի ստանդարտներ. մի կողմից՝ թե՛ եկեղեցականները և թե՛ եկեղեցու աշխատակազմը եկեղեցիներում գործածում են համակարգիչներ կամ էլ տաքացման ժամանակակից համակարգեր, սակայն միաժամանակ եկեղեցում մեծ էկրաններ տեղադրելու և պատարագին ու ժամերգություններին վիզուալ հետևելու՝ որոշ եկեղեցականներին արված առաջարկությունները դիտվում են բողոքական կամ արևմտյան ազդեցության արդյունք և համարվում անընդունելի:

Խնդիրն առավել հետաքրքրական է դառնում, երբ անդրադառնում ենք Հայաստանում գրանցված կրոնական կազմակերպությունների կողմից ինտերնետային հնարավորությունների գործածնակը: Այս իմաստով Հայ առաքելական եկեղեցու կառույցում գործում են Արարատյան թեմի կողմից ղեկավարվող [www.qahana.am](http://www.qahana.am) ինտերնետային կայքը, որը կոչված է պատասխաններու հավատացյալներին հուզող հարցերին, ինչպես նաև գիտատեղեկատվական [www.zvartnotec.am](http://www.zvartnotec.am) կայքը: Չնայած նրան, որ Հայաստանում հաճախ ենք ականատես լինում հեռախոսային քարոզի, սակայն դեռևս ինտերնետային հասցեներով քարոզչական կոչերի չենք հանդիպում: Որոշակի

<sup>15</sup> Յ. Մարգարյան, Արդի մարտահրավերներն ու Հայոց եկեղեցին հոգևոր անվտանգության համատեքստում, Բանքեր, թող. 5, էջ 16:

խնդիրների ենք հանդիպում Եջմիածնի Մայր Աթոռի, Մեծի Տաճառ Կիլիկիո, Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի հնտերնետային կայքերի հետ կապված, որոնք չնայած նրան, որ համակողմանի տեղեկություններ են պարունակում Եկեղեցական կենտրոնների աշխատանքի ու գործունեության մասին, սակայն դեռևս հեռու են բավարար տեղեկատվություն պարունակելուց և արագ արձագանքելու մշակութից:

Իհարկե, նշելով այս ամենի մասին, օբյեկտիվորեն գնահատելով մեր կարողությունները՝ ասենք, որ այս ոլորտում Հայաստանի կրոնական կազմակերպությունները նույնիսկ համեմատվել չեն կարող Արևմուտքում գործառնող Եկեղեցիների հետ (որոշ բացառություն են նրանք, որոնք իրենց կենտրոններն ունեն Արևմուտքում): Դա, իհարկե, պայմանավորված է հիմնականում օբյեկտիվ իրականությամբ, քանի որ ազգաբնակչության փոքր մասն է օգտվում ինտերնետից և, երկրորդ, տարածական սահմանափակությունը բացառում է այնպիսի երևույթների ծավալումն ու գործառնումը, ինչպիսին կիրեռվո՞նն է:

22

Պետք է նշել, որ, չնայած շատ դեպքերում բարձրագույն տեխնոլոգիաներով պայմանավորված է Եկեղեցատեխնիկայի օգտագործմանը, Յայ առաքելական Եկեղեցին երբեմն ինքնաբուխ գործողություններ է իրականացնում Արևմուտքից ներթափանցած արժեհամակարգերի կամ ավանդույթների դեմ (որպես այդպիսին կարելի է նշել ս.Վալենտինի օրվա կապակցությամբ հոգևորականների արտահայտած բացասական կարծիքները և այն Ս. Սարգսով փոխարինելը, ինչպես նաև Կոդ դա Վինչի ֆիլմի դեմ կազմակերպված քարոզարշավը): Այս իմաստով կարծում ենք, որ նմանատիպ չփաստարկված հակաքարոզը ոչ միայն չի կարող արդյունավետ լինել, այլև հնարավոր է ունենալ լրիվ հակառակ արդյունքը, որ տեղի ունեցավ նշանակած ֆիլմի դեմ առաջացած աղմուկի պատճառով: Քետևաբար, նպատակահարմար չէ հենց հայ ժողովրդի շահերի տեսանկյունից հակաքարոզ տանել կրոնական բովանդակություն ունեցող որևէ բանի դեմ, որ հղի է հակառակ արդյունքի առաջացման վտանգով:

### **Համդուրժողականության հիմնահարցը կրոնական կազմակերպություններում**

Պարսոնսյան կառուցվածքագործառնական դպրոցի ավանդությներին հետևելու դեպքում պետք է պնդենք, որ կրոնը սոցիալական փոփոխությունների մեջ հսկայական դեր է խաղում և հաճախ հանգեցնում է կոնսեսուսի, ինտեգրացիայի կամ էլ հավասարության: Չնայած այս տեսակետին՝ կրոնի սոցիոլոգիայի մեջ առկա է այն տե-

սությունը, որ կրոնը որևէ էական դեր չի խաղում հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացների մեջ, և նրա դերի բարձրացումը արհեստական շահարկումների արդյունք է<sup>16</sup>:

Չնայած վերը նշված տեսակետներին, պետք է նշել, որ կրոնն իր էությամբ սոցիալական իրականության կողմերից է, որ գործառնում է հասարակական միջավայրում և փոխազդեցության մեջ է այդ միջավայրի հետ: Այս իմաստով հասարակական կյանքում տեղի ունեցող շատ երևությներ դժվար է առանձնացնել իրենց կրոնական գործոններից, չնայած շատ դեպքերում այլ գործոններն աննկատ են կամ էլ դժվար է դրանք իդենտիֆիկացնել: Դա է պատճառը, որ գիտնականներից շատերը հաճախ դժվարանում են ժխտել, որ կրոնը կարևոր դեր է խաղում սոցիալական ուղղվածություն ունեցող ակտիվ գործողություններում:

Սոցիալական գործողությունների մեջ կրոնը կարող է ունենալ ինչպես կառուցողական, այնպես էլ կործանարար ազդեցություն: Խնդիրն այն է, թե ինչ ուղղվածություն են տալիս կրոնական աշխարհայացքին տվյալ կառույցի վերնաշենքում գտնվող առաջնորդներն ու ինչ նպատակների են այն ծառայեցնում: Երբեմն նույնիսկ հնարիավոր են այնպիսի իրավիճակներ, որ կրոնական կազմակերպությունների անդամները կարող են անգիտակցաբար ծառայել կրոնական աշխարհայացքի հետ անհամատենելի դեստրուկտիվ նպատակների: Միևնույն ժամանակ կրոններն ունեն մի շատ կարևոր առանձնահատկություն, որ չունեն շատ այլ կառույցներ. նրանք իրենց բնույթով ազգային են, նաև վերազգային ու տրանսազգային: Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները բավական հետաքրքիր պատկեր են ներկայացնում իրենց գործառնության դաշտի ընդգրկվածության իմաստով: Յայ առաքելական եկեղեցին պատմական փաստերի բերումով գործառնում է բավական մեծ տարածքի վրա, սակայն այն ունի համազգային բնույթ, այսինքն՝ գործում է միայն հայերի շրջանակներում (շատ հազվադեպ՝ այլազգիների): Իսկ ավետարանական հարամվանությունները, ինչպես նաև այլ կազմակերպություններ ունեն տրանսազգային բնույթ, որով էլ հաճախ պայմանավորվում են Յայ առաքելական եկեղեցու՝ իր առանձնահատկությունների ու բացառիկ իրավունքների մասին պնդումները:

Վերոնշյալը հանգեցնում է նրան, որ կրոնական կազմակերպությունների դեկավարների խոսքը հաճախ ավելի կարևոր ու մեծ նշանակություն է ունենում, քան քաղաքական դեկավարների, որովհետև կրոնական լիդերների քաղաքական լեգիտիմությունը գերազանցում է քաղաքական գործիչների լեգիտիմությանը: Այդ լեգիտիմության

23

<sup>16</sup> St'u Smith, Christian. The Emergence of Liberation Theology. Chicago, 1960, p. 3:

պահպանության նպատակով կրոնական կազմակերպությունները մշտապես հանդես են եկել պահպանողականության դիրքերից և շատ դժվարությամբ հարմարվել ժամանակի պահանջներին: Նույնիսկ լիբերալ հողի վրա գործառնող ավետարանական ուղղությունները երբեմն հանդես են գալիս ամենաուժեղ պահպանողականների դիրքերից ու կերպարով: Նմանատիպ դիրքորոշումը հաճախ հանգեցնում է սոցիալ-հասարակական կյանքում օրավոր ածող հիմնախնդիրների ոչ արագ ու ոչ արդյունավետ պատասխանների: Եթե Դայ առաքելական եկեղեցու պարագայում ամեն ինչ պարզ է, ապա տրանսազգային կառույց հանդիսացող կրոնական կազմակերպություններն ստիպված են լինում հարմարվել «հայ» տարածության մեջ, որն էլ երբեմն նրանցից մեծ գրիողություններ է պահանջում: Դա է պատճառը, որ սեռական բարոյականության, միասեռականների ամուսնության և այլ խնդրահարույց հարցերի կապակցությամբ տրանսազգային կառույցները դրսենում են տարբեր, երբեմն էլ հրարից բավականին տարբերվող դիրքորոշում:

24

Չնայած վերոնշյալին, որոշ հեղինակներ կարծում են, որ կրոնական կազմակերպությունները հասարակության կամ, ավելի ճիշտ, կառավարման համակարգի պահպանողականության կամ ավտորիտարիզմի պատճառով մնում են միակ «բաց տարածությունները» քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար<sup>17</sup>: Այս տեսակետին ժամանակակից քաղաքագետներին լիովին հակադրվում է Խ. Կազանովան, որը կարծում է, թե ժողովրդավարության երրորդ ալիքի առաջացումը կաթոլիկ երկրներում հենց պայմանավորված էր եկեղեցու ունեցած ավտորիտար-պահպանողական իշխանությամբ<sup>18</sup>:

Այս իմաստով կարող ենք ասել, որ վերոնշյալով էլ պայմանավորվում է կրոնական կազմակերպությունների կողմից դրսենորվող անհանդուրժողականությունն աշխարհիկ կյանքի տարբեր դրսենորումների, աշխարհիկ հասարակարգի պահանջների և մնացած այլ կրոնական կառույցների նկատմամբ, որն էլ կրոնահասարակական կյանքում հաճախ հանգեցնում է ստագնացիայի: Կարծում ենք՝ Դայաստանում գործառնող կրոնական կազմակերպությունները պետք է մի կողմ թողնեն հասարակական կյանքում իրենց քաղաքական պայքարը և առավել կենտրոնանալ իրենց բուն նպատակի՝ համամարդկային արժեքների քարոզչության և այդ արժեքներին համահունչ կեցվածք որդեգրելու վրա: Այս նպատակով կարե-

17 Տե՛ս նոյն տեղում, էջ 21:

18 Խ. Կազանովա, «Քաղաքացիական հասարակությունը և կրոնը. կարողիկության հետահայաց դիտարկում և մոռորումներ հաւաքայի շուրջ՝ ապագայի տեսանկյունից», (Կրոն և հասարակություն), թիվ 1, էջ 30-39:

լի է ստեղծել միջհավատքային հասարակական կառույցներ, որոնք կներառեն տարբեր կրոնական կազմակերպությունների անդամների և միասնաբար կփորձեն լուծել հասարակության մեջ առկա տարաբնույթ խնդիրներ՝ սկսած աշխատանքի տեղավորումից մինչև առողջապահական հարցերի լուծում։ Յաշվի առնելով Յայ առաքելական եկեղեցու ունեցած դարավոր դերը՝ նպատակահարմար կլիներ, որ այդ գործը ստանձներ հենց Յայ առաքելական եկեղեցին՝ իր երիտասարդական ու ոչ կրոնական ինստիտուտների միջոցով։ Առաջին հայցքից նման առաջարկը կարող է ուտոպիստական թվալ, սակայն մշակութային ու կրոնական բազմազանությամբ առաջացած ու առաջացող հնարավոր խնդիրների լուծումը և կանխարգելումը հնարավոր կլիներ նմանատիպ հասարակական կառույցների միջոցով, որին կմասնակցեր ամենակարևոր «կառույցը»՝ հայ հասարակությունը, այսինքն՝ Եկեղեցին։

## Արման Փոլադյան

Ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը,  
Իրանին և իսլամին ճպիրված հետազոտությունների և  
հրապարակախոսական հողվածների հեղինակ:

## ԻՐԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՁՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26

Իրանը, լինելով թեոկրատական (աստվածապետական) պետություն, ընդունում է փոքրամասնությունների «կրոնական» որակումը՝ մերժելով էթնիկ տարբերակումները: Ակնհայտ է, որ պաշտոնապես ընդունված չորս «կրոնական փոքրամասնություններն» ունեն իրենց էթնիկ բնորոշչիները: Նշենք, որ «ազգային փոքրամասնություն» եղի հանդեպ վերապահ վերաբերնունքը գոնե նորագույն պատմության մեջ գալիս է դեռ Ռեզա Փեհլեվի շահի վարած համահրանական քաղաքականությունից: Եվ այդ մոտեցումն ամենին իսլամական վարչակարգի ծնունդ չէ: Դամահրանական (պանիրանիզմի) գիտակցության մեջ էթնիկ ինքնատարբերակումը պրոպագանիզմը է որպես վնասակար դրսւորում: Մյուս կողմից՝ իսլամական հեղափոխության հաղթանակից հետո գաղափարանական դաշտում որդեգրվեց շիայականության վրա խարսխվող պանիրանիզմի գաղափարախոսությունը: Զարկ է նշել, որ սլաքը, պարսիկներից զատ, նախ և առաջ ուղղված է այլ իսլամադավան ազգություններին, ընդ որում ո՛չ միայն իրանական (քրդեր, լոռեր, բելուջներ, բախթիարներ<sup>1</sup>, արաբներ, թուրքմեններ, թուրքական ինքնագիտակցություն ունեցող այլ հանրույթներ<sup>2</sup>): Փաստենք, որ վերոնշյալ մոտեցումը բխում է նաև Իրանի՝ որպես իսլամական հանրապետության, ընկալած պետական շահերից: Նրանք բոլորը պաշտոնապես համարվում են իրանցիներ և իսլամական ումնայի ներկայացուցիչներ:

Նախքան ոչ իսլամական փոքրամասնություններին դիտարկելը, հիշատակենք սուննի փոքրամասնության պարագան: Ինչպես մեզ տեղեկացրին ՀՀ-ուն ԻԻՀ դեսպանության հասարակայնության

1 Ուշագրավ է, որ այս ազգերի անվանումներով են կոչվում նրանց բնակության վարչատարածքային միավորները՝ օստանները:

2 Մի փոքր այլ է Արևամտյան Աստրապատական և Արևելյան Աստրապատական օստանների թրախոս բնակչության պարագան: Այստեղ գործում են թուրքական ինքնագիտակցության վրա խարսխվող կազմակերպություններ, իրատարակվում են հանդեսներ: Ըստ Իրանից ստացվող տեղեկությունների՝ նշալ վարչատարածքային միավորների բնակչության միայն մի փոքր հատվածն ունի «աղբեճանական ինքնագիտակցություն», որը զիտմ է զանգվածներում առավել տարածված շիայական ումնային մաս կազմելու գիտակցմանը:

հետ կապերի բաժնից, սուննի մահմեդականները հիմնականում կենտրոնացած են Երկրի և արևայի և արևելյան սահմանամերձ ծայրագավառներում, ընդ որում ծագումով ոչ պարսիկ բնակչություն ունեցող շրջաններում: Նրանց թիվը մոտ 3 մլն 200 հազար է: Այն հարցին, թե արդյո՞ք սուննիները ներկայացված են խորհրդարանում հատուկ պատգամավորական մանդատներով, պատասխանեցին, որ «սուննիներն ընտրվում և ընտրում են ընդհանուր հիմունքներով և ներկա են օրենսդիր մարմնում, սակայն հատուկ պատգամավորական մանդատներ չունեն, ինչպես, ասենք, քրիստոնյաները և այլք, քանի որ մուսուլման են, ու նրանց սուրբ գիրքն էլ Ղուրանն է»<sup>3</sup>: Խորհրդարանում սուննիներից բաղկացած պատգամավորական խմբի թիվը մոտ 10-ն է:

Իրանի խոլանական Յանրապետության սահմանադրության 19-րդ հոդվածում նշվում է, որ «իրանցիներն, անկախ իրենց ազգային, ցեղային պատկանելությունից, օրենքի առաջ հավասար են, և մաշկի գույնը, ծագումը կամ լեզուն և այդորինակ այլ հատկանիշները չեն կարող արտոնություն համարվել»:

«Սույն հոդվածում պետությունը գործնական հողի վրա շատ խճողված ու բազմանշանակ, կողմնակալ մեկնաբանումների ու վերաբերմուճի դրսնորումներ է բույլ տալիս», - մեր գրուցում ասաց Եվրոպայում քրդական տարագրության ներկայացուցիչը, որը գերադասեց անհայտ մնալ:

21

Այսուհանդերձ, Իրանի խորհրդարանի 290 պատգամավորական մանդատներից 5-ը, ըստ Երկրի սահմանադրության, պաշտոնապես ճանաչված «կրոնական փոքրամասնություններին» են հատկացված: Դրանք են՝ 2 հայ (մեկը ներկայացնում է Թեհրանն ու հյուսիսային իրանահայությանը, մյուսը՝ հարավային իրանահայությանը), 1զրադաշտական, 1 հրեա, 1 ասորի («նեստորական» և «քաղդեացի»՝ կաթոլիկ համատեղությանք): Ինչպես նկատելի է, նշյալ խմբերին տրվող «կրոնական փոքրամասնություն» անվանումը լիովին համատեղելի է նրանց՝ որպես «ազգային» բնորոշման հետ: Ղուրս լինելով մահմեդական ումնայից (լայն իմաստով՝ հասարա-

<sup>3</sup> Տարբեր ժամանակներում սուննի և շիա ուղղություններ դավանողները իրենց կրոնական պարտը են համարել միջյանց մեղադրել Մոլիամեդ մարգարեթի նախանշած ուղղուց շեղվելու, ընդհուպ «աստվածութացության» մեջ: Իսկ VII դարի սուննի խայֆների ոտնօղություններին դիմադրուածն շարժումները, որոնց ժամանակ նախատակվում էին շիա իմանները, կազմում են շիայականության գաղափարախոսական ակունքները: Կրոնական իմքնառարերական դրոշի ներքո էին մովում նաև Օսմանյան տուրքանության և Սեֆյան շահնշահության միջև արյունակի, ցեղասպան պատերազմները XVI դարում: Ներկայումն է սուննիակավանների տեղաբաշխվածությունը հատկապես սահմանամերձ գոտիներում Իրանի պետական այրերի մտահոգության առարկան:

կությունից՝ այս խումբը, փաստորեն, շարիաթի վրա հիմնված սահմանադրության համաձայն՝ դիտարկվում է որպես «կրոնական փոքրամասնություն»: Մահմեդականություն դավանող մեծամասնությունը՝ ումնան, բնորոշելի է որպես հիմնականում իրանական ծագմանք ազգերի գուտ ֆորմալ մի դաշինք՝ պանիրանականության ատաղձով և շիայականության միավորիչ գործոնով<sup>4</sup>:

## Դայերը Իրանում

28

Ղերև 1935թ-ին Ռեզա Փեհլեվի շահի կառավարությունը հրատարակեց «Իրանահայության ընտանեկան և ժառանգական օրենքների ժողովածուն», որը համայնքի ներքին իրավունքների ճանաչման, համակարգման և միաժամանակ վերահսկման փորձ էր: Սակայն 1936թ-ին շահի վարած համադրանականության քաղաքականության համատարած պարսկացման պայմաններում փակվեցին հայկական դպրոցները: Դրանք վերաբացվեցին 1942-43թթ., արդեն գահաժառանգ Մոհամեդ-Ռեզա Փեհլեվիի օրոք: Սակայն կրթօջախներում գերիշխող և արտոնյալ կարգավիճակում մնաց պարսկերենը: Բացի հայոց լեզվի դասաժամներից, հայերենը թույլատրվում էր միայն հայոց պատմության, կրոնի ու երաժշտության դասավանդման ժամանակ:

1956թ-ին համաշխարհային երկու քևեռների միջև թափ հավաքող «սառը պատերազմի» պայմաններում շահ Մոհամեդ-Ռեզայի եռանդագին մասնակցությամբ Մայր Արոռ Ս. Էջմիածնի Իրանի թեմը հանձնվեց Անթիլիասի Կիլիկիո աթոռին: Իրանի եկեղեցին բաղկացած է երեք թեմներից՝ Թեհրանի, հյուսիսային և հարավային:

Մինչև 1979թ. հայերի թիվը Իրանում մոտ 200 հազար էր, որի 75%-ը քաղաքային բնակչությունն էր: Նրանք մեծապես ներգրավված էին պետական համակարգում և տնտեսական ու իրավաբանական ոլորտներում: Քիչ չէին խոշոր ձեռնարկատերերը: Դայերը ներգրավված էին նաև բանակային, սպայական ծառայության մեջ: Զգալի թիվ էին կազմում նավթարդյունաբերության ոլորտի աշխատակիցները: 1978թ-ի վերջին հակաշահական զանգվածային հուզումների պայմաններում զգալի թվով հայեր արտագաղթեցին Լիբանան և ԱՄՆ: Իր հերթին, հայ համայնքի երիտասարդ ներկայա-

<sup>4</sup> Ումայի մաս են նաև Խուզիստանի արաբները, որոնք սեմական են, իսկ ահա հնադավան իրանցիները՝ զրադաշտականները, հասկանալի է՝ ոչ:

ցուցիչների մի հատված այդ ժամանակ իր առաքելությունը տեսավ «Թուղե» համայնավարական կուսակցության շարքերում ընդգրկվելու և պայքարելու մեջ՝ դառնալով շահական ՍԱՎԱՔ-ի և Խոնեյնու գլխավորած շարժման կրկնակի քննադատության ու բռնաճնշումների թիրախ:

Ակնհայտ է, որ այդ հուզումնալից տարիներին հակամետ կողմերից յուրաքանչյուրը ցանկանում էր հատկապես իր կողքին տեսնել կազմակերպված հայ համայնքը: Դեղափոխությունից հետո, այդուհանդերձ, տիրող ընդհանուր անկայուն կացության և նկատվող անուղղակի խտրական վերաբերմունքի, արտագաղթի հետևանքով հայության թիվը կրկնակի կրճատվեց: Բացասական դրսերումներից հարկ է նշել հայոց դպրոցների նկատմամբ վարվող քաղաքականությունը, որի պատճառով 80-ականների սկզբին դրանք կրկին փակման ենթարկվեցին: Սա հայության վճռական ընդվզման պատճառ դարձավ: Եվ չնայած դպրոցները կազմակերպված բողոքի և գործադրության շնորհիկ վերաբացվեցին, այդուհանդերձ, ինչպես և 40-ականներին դրանցում դասավանդման մեջ գերիշխող դիրքում պարսկերենն է, մինչդեռ հայերենին վերապահված են լեզվի, հայոց և կրոնի պատճենությունները:

29

Չնայած հայերը չեն կարող զբաղեցնել զինվորական բարձր պաշտոններ, այդուհանդերձ այդ հանգամանքը չխանգարեց, որ հեղափոխությունից հետո, ընդհուպ 1988թ., իրան-իրաքյան պատերազմի ժամանակ հայերին որպես շարքային զորակոչեն բանակ՝ տեղաբաշխելով առաջին ճակատային գծում: Առանց այն էլ նոսրացող իրանահայությունը տվեց զգալի թվով զոհեր: Այս մասին, սակայն, պաշտոնական վիճակագրություն չկա (ի դեպ, քիչ չեր նաև հայերի թիվը իրաքյան բանակում):

Իսլամական հեղափոխությունից հետո հայերին նշյալ ոլորտներից, հատկապես պետական նշանակության պաշտոնական դիրքերից դուրս մղելու միտուն նկատվեց, որը հետզհետե խորացավ: Ներկայումս, որոշ վկայությունների համաձայն, նույնիսկ թաղապետի պաշտոն զբաղեցնելու ակնհայտ հնարավորություն ունեցող և համայնքից դուրս էլ իր վարչարարական ունակություններով հեղինակություն վայելող հայը, չգրված օրենքով ստիպված է չներկայացնել իր թեկնածությունը: Ի դեպ, հարկ է նշել, որ ներկա կացությանը ենթակա են նաև մյուս կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Ներկայումս հայ համայնքի գործերը տնօրինում է պետու-

թյան կողմից այդ իրավունքը վայելող Թեմական խորհուրդը՝ բաղկացած համայնքի 12 ներկայացուցիչներից: Այն իրավասու է զբաղվել ընտանեկան և ժառանգության խնդիրներով, որոնք ի հայտ են գալիս համայնքի ներսում: Թեմական խորհրդի փաստացի նախագահն է հոգևոր իշխանությունը ներկայացնող Սեպուհ արք. Սարգսյանը: Եկեղեցին իրավասու է զբաղվել կոնոնքի, պսակադրության և հուղարկավորության գործերի վարմանը: Թեմական խորհրդին կից գործում է աշխարհականներից բաղկացած Հոգաբարձուական խորհուրդը:

Ներկայումս ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ հայության թիվը հասնում է մոտ 50 հազարի, այսինքն՝ չորս անգամ պակաս, քան հեղափոխությունից առաջ: Նրանք զբաղված են առևտի և սպասարկման ոլորտներում: Յամայնքն իր առջև ծառացած խնդիրները խորհրդարանում բարձրացնելու հնարավորություն ունի վերոնշյալ երկու պատգամավորի միջոցով:

**30** Ինչպես նշեցինք, իրանահայ թեմն ունի երեք ճյուղ՝ Թեհրանի (կենտրոնական՝ Ս. Սարգիս), հյուսիսային (կենտրոն՝ Թավրիզում) և հարավային (կենտրոն՝ Սպահանում):

Իրանում գործող հայ ավանդական կուսակցություններից ամենաընդգրկունը Յայ հեղափոխական դաշնակցությունն է («Ալիք» շաբաթաթերթով): Վերջինիս փաստացի վերահսկողության ներքո են գտնվում ոչ միայն աշխարհիկ՝ մարմնամարզական, մշակութային, այլև Եկեղեցական կառույցներն ու Թեմական խորհուրդը: ՅՅԴ-ն տիրապետող դիրք ունի նաև կրթօջախների ուսուցչական անձնակազմի ընտրության հարցում: Ըստ ՅՅԴ տվյալների՝ կուսակցությունն ունի մոտ 5 հազար անդամ, սակայն կան տեսակետներ, որ իրականում անդամների թիվն ավելի փոքր է: Ընդհանրապես, Իրանի հայ համայնքի նկատմամբ այս կուսակցության ձևավորված հարաբերությունները ոչ դաշնակցական ներկայացուցիչների կարծիքով՝ բացատրվում են ինչպես շահական վարչակարգի, այնպես էլ իսլամական կառավարման մարմինների հետ ձևավորած «ավելի քան սերտ» հարաբերություններով: Ըստ նրանցից մեկի տեսակետի՝ «Տման իրավիճակում, երբ համայնքն իիրավի տրոհված է «կուսակցական» գերիշտող փոքրամասնության և «անկուսակցական» մեծամասնության, խաթարվում է համայնքի բարոյահոգեբանական ընդհանուր նկարագիրը, այն դարձնում նեղ կուսակցական շահերով առաջնորդվող, գերծ միասնականության տեսլականից»:

Իրանում գործում է նաև Յայ ժողովրդային միությունը, որը

հրատարակում է «Արաքս» շաբաթաթերթը: ՀԺՄ-ի շուրջ են հիմնականում համախմբված ՀՅԴ մենատիրությունից դժգոհ սփյուռքյան ներկայացուցիչները (ըստ որում՝ ոչ միայն Իրանում, այլև սփյուռքյան այլ գաղթօջախներում): Թեհրանի և Սպահանի համալսարաններում գործում են հայագիտության ամբիոններ:

Խոսելով համայնքի մասին՝ հնարավոր չեղանցել տարադավան հայերի գոյության փաստը: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն կից այստեղ գործում է նաև Յայ կաթողիկե համայնքը: Կաթոլիկ միսիոներները XIV դարի սկզբից իրենց գործունեությունն են ծավալում Պարսկահայք նահանգում: Այդ դարասկզբին ֆրանցիսկյան, ապա և դոմինիկյան միաբանները բավական ակտիվ քարոզություն են ծավալում հատկապես Ուրմիա լճի ավագանում: Դեռևս 1318թ. դոմինիկյան միաբան Բարդուղիմեոս Բոլոնիացու գործունեության շնորհիվ հաջողվում է Արտազի թեմն իր Սր Թաղեհ վանքով ամբողջովին կաթոլիկացնել:

Ակտիվ միսիոներական գործունեության շնորհիվ կաթոլիկություն է ընդունում Մարաղան՝ իր շրջակա գյուղերով: Արդեն XVIII դարում Սեֆյան, ապա և Ղաջարական տիրակալների ժամանակ Յոզոմի հետ հարաբերությունները (որի գործունեության ոլորտը, հասկանալի է, ընդգրկում էր բացառապես քրիստոնեադավան համայնքները) կանոնակարգված բնույթ են ստանում: Յատկապես Արա Ա-ի ժամանակ օրենսդրական բյուրեղացման միտվող հարաբերությունները ուսումնասիրողները մեկնաբանում են ընդհանուր աշխարհաքաղաքական թշնամու՝ Օսմանյան կայսրության ծավալապաշտական գործունեության հանգանքով:

31

Կաթոլիկ համայնքներ կան Սպահանում, Շիրազում: Յայ կաթոլիկներին արտոնում են հիմնել դպրոցներ, միաբանություններ, տպարաններ և տպագիր հանդեսներ:

Ներկայումս, ընդհանուր առնամբ, հայ համայնքի զանգվածային արտագաղթի պայմաններում բազմապատիկ նվազել է նաև հայ կաթոլիկ համայնքի անդամների քանակը: Վատիկանի պաշտոնական տարեկան վիճակագրական հրապարակումներում նկատվում է հետևյալ պատկերը. 1990-2000թ՝ 2200 մարդ, 2005-08թ՝ 10 հազար մարդ<sup>5</sup>: Սակայն այդ թիվը ևս ուժացված է թվում, չնա-

<sup>5</sup> Համբարձուական, թիվ 3, 2009թ. Յայ կաթոլիկ համայնքների մասին, Արիստակես Սիմավորյան:

յած այն կարելի է մեկնաբանել որպես Իրաքի վերջին պատերազմի հետևանք: Այդուհանդերձ, դժվար է հավատալ, որ Իրաքի հայ կաթոլիկ համայնքը, որի անդամների թիվը, ի դեպ, Վատիկանի նույն վիճակագրության համաձայն, միշտ էլ համարվել է 2000, արտագաղթել է հիմնականում Իրանի ուղղությամբ:

Այժմ Իրանի հայ կաթողիկե համայնքը ներկայացված է Սպահանի եպիսկոպոսությամբ, որի ղեկավարությունը համատեղության կարգով իրականացնում է Հայ կաթողիկե Եկեղեցու Արևելաեվրոպական թեմի (ընդգրկում է ԱՊՀ տարածքը՝ նստավայրը Գյումրի) առաջնորդ Նշան արք. Կարաքեհեյանը (նա համատեղում է նաև Արենքի օրդինարիատի ղեկավարությունը):

Ինչպես զրույցում նշեց սրբազնը, համայնքի առջև ներկայումս մի շարք հիմնախնդիրներ են ծառացած, որոնց հիմնական պատճառը արտագաղթն է: Առաջնորդը նույնական վիճարկելի համարեց հայ կաթոլիկների՝ 10 հազարի հասնող թիվը՝ այն մոտավոր հաշվարկներով համարելով 3 հազար, քանի որ ստույգ թիվն ինքն էլ չգիտեր: Փաստորեն, համայնքի արտագաղթի պատճառով փակվել են մի շարք հաստատություններ, դպրոցներ, մայրապետաց միարանությունը, և այսօր գործում է միայն մեկ դպրոց Թեհրանում: Գործում են Սբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին Թեհրանում, Սբ Վարդարանը (Աստվածամոր)` Սպահանում և Կասպից ծովի եզերքին՝ Սբ Անտոն Եկեղեցին:

Հայ կաթողիկե համայնքի և պետության միջև հարաբերությունները կանոնավորվում են Թեմական խորհրդի միջնորդությամբ, իսկ Եկեղեցական հարցերը (պսակադրություն, կնունք, հուղարկավորություն, ժառանգություն)` պետության հետ երկկողմնաշակված առանձին կանոնակարգով: Հայ կաթողիկե Եկեղեցուց զատ, կաթոլիկությունը Իրանում ներկայանում է նաև ասորական քաղեական Եկեղեցու ձևով: Մինչև վերջին տարիները առանձին գործել է նաև լատին Եկեղեցին, սակայն պետության հետ չկանոնակարգված հարաբերությունների պայմաններում դուրս է մղվում և այժմ միայն սպասարկում է դիվանագիտական ներկայացուցիչների անդամներին:

19-րդ դարավերջին Իրանում իրենց գործունեությունը ծավալեցին նաև բողոքական Եկեղեցու միսիոներները: Մեր օրերում, սակայն, բողոքականության և պետության հարաբերությունները առանձին գնահատման են արժանի:

Ըստ արևմտյան աղբյուրների՝ նոր բողոքական հարամվանություններին Իրանում հաջողվել է հիմնել Երկու այսպես կոչված

Պարսկախոս Ավետարանական Եկեղեցի՝ յուրաքանչյուրը մոտ 3-հազարական թվակազմով։ Վերջիններս գործում են Թեհրանում։ Նման առանձին խմբեր կան նաև Սպահանում։ Կառուցվածքային առումով այս կառուցները գործում են «տնային խմբակների» սկզբունքով։ Պարսկախոս անվանումը միտում ունի հուշելու, որ կառույցն ընդգրկում է ոչ միայն պարսիկների (մահմեղականների), այլև հրեաների, ասորիների և այլն։ Չնայած վերջին փաստին, բուն մահմեղական զանգվածների շրջանում քարոզչությունը անվտանգ չէ՝ ելնելով թե՛ շարիաթից, որ իրանի պետական օրենքների հիմքն է, թե՛ իսլամական հասարակության հոգեմտածելակերպից։ Մահմեղականների շրջանում միսիոներության վտանգավորությունը փաստում են նաև հետևյալ հանգամանքները։ նախ՝ հայտնի է, որ իրենց գործունեության ընթացքում բողոքական Եկեղեցիների քարոզիչները վերջին տարիներին ունեցել են նահատակներ։ Վկայությունների համաձայն՝ միսիոներների նկատմամբ ֆիզիկական բռնությունների, սպառնալիքների և նրանց սպանությունների հետևում կանգնած են պետական հատուկ ծառայությունները։ Նշենք, որ իրանցի պետական պաշտոնյանները մեկ անգամ չեն, որ ակնարկել են, թե մահմեղականների շրջանում գաղտնի քարոզչություն ծավալող կառույցների, տվյալ դեպքում բողոքական Եկեղեցիների հետևում տեսնում են ԱՄՆ-ի և Իսրայելի հատուկ ծառայություններին։ Բացի այն, որ կրոնափոխ մահմեղականը Ենթակա է մահապատժի, մահապատժի է Ենթակա նաև նրան «դարձի բերող» քարոզիչնը։ Դայտնի է, որ քրիստոնեությանն են հարում մահմեղական ումնայում մարգինալ դիրք ունեցող անհատները, որոնք միևնույն ժամանակ երկրում տիրող կայունության հանդեպ առավել արմատապես տրամադրվածներն են։ Վերջիններս վերոնշյալ հատուկ մարմինների առանձնակի ուշադրության կենտրոնում են։

Իրանում պարսկախոս բողոքականների թիվը դժվար գերազանցի տասը հազարը։ Այս թիվն էլ գերազանցապես կազմված է մեզապոլիսների բնակիչներից։ Եվ դա բնական է, քանի որ այն անընդունելի է ընկալվում հատկապես պահպանողականությամբ հատկանշվող իրանական գյուղում։

Բողոքական միսիոներական գործունեությանը որոշակի ինտրոհ է հաղորդում այն, որ որքան շփվող են այս հարցում Եկեղեցիների ստորին և միջին օղակների ներկայացուցիչները (հասկանալի է ինքնությունը չիրապարակելու պայմանով), օրինակ՝ «տնային խմբակների» ավագները, այնքան մերժողական են տրամադրված հարցազրույցի դեկավար շրջանակները։

Ինչպես մեզ հուշեցին Թեհրանից, թե՛ Թեմական խորհուրդը և թե՛ Հոգաբարձուական մարմինը դժվար թե կարողանան ինչ-որ

կերպ օգնել «սխալ» վայրում քարոզող ավետարանական քարոզիչ-ներին վերջիններիս նկատմամբ բռնությունների ժամանակ, մանավանդ որ մինչև հիմա էլ դա չի հաջողվել անել:

Բացի այդ, իրանում գործող բողոքականության հարանվանություններից իր ներկայությունը փաստեց Յայաստանում գործող Յոթերորդ օրվա շաբաթապահ գալստական եկեղեցին (աղվենտիստական): Յամաձայն Երևանի համայնքներից մեկի պատասխանատուի տվյալների, չնայած ժամանակին թերանում եղել է հարյուրի հասնող, բացառապես պարսկահայերից կազմված համայնք, ներկայումս արտագործի պատճառով այդ թիվը հասել է մոտ 30-ի:

«Եհովայի վկաներ» կազմակերպության պատասխանատուներն ասացին, որ իրանում կառույցի անդամների թիվը հստակ կարող է իմանալ միայն Յայաստանի իրենց ամենավագ երեցը: Իսկ վերջինս այդ մասին չի ասի նույնիսկ իրենց: Սակայն իրենց պատկերացումներով Եհովայի վկաների թիվը այդ երկրում չպետք է գերազանցի 150-ը: Մայրաքաղաքում կենտրոնացած հավատացյալները բացառապես հայեր են, պետությունն էլ նրանց նույնիսկ շինություն-հավաքատեղի գտնելու հարցում օժանդակել է:

### 34

Կարծում ենք՝ մահմեդականությունից նորադարձ քրիստոնյաների առկայությունը վերոնշյալ վեց հազարի տեսքով ունի նաև հետևյալ սկզբնապատճառը. կրոնափոխությունը շատ իրանցիների համար երկրից արտագաղթելու հավելյալ դյուրացնող միջոց է և առավել ներկայանալի, հասկանալի և ընթրնելի արևմտյան էնիգրացիոն կառույցների և ընդհանրապես արևմտյան հասարակության աչքին: Մեր այս կարծիքին համամիտ են Երևանում ուսանող պարսիկ մի քանի երիտասարդներ ևս, որոնք թեպետ կրոնափոխիչն եղել և ընդհանուր առմամբ բացասաբար են վերաբերվում այդ երևույթին, բայցև ունեն նման ծանոթներ իրենց շրջապատում:

Ահա այսպիսին է ընդհանուր առմամբ «կրոնական փոքրամասնություններից» հայ համայնքի ընդհանուր պատկերը:

## Մյուս կրոնական կազմակերպությունները

Յայ համայնքից բացի, երկրորդ խոշոր քրիստոնեական եթնիկ միավորը ասորիներն են, որոնք ներկայանում են երկու խմբով՝ նեստորական և քաղդեական (կաթոլիկ): Խվամական խորհրդարանուն համայնքները ներկայացնում է մեկ պատգամավոր:

Ասորիները հոծ զանգվածներով բնակվում են երկրի արևմուտքում՝ Արևմտյան Ատրպատականում, կենտրոնական հատվածում և

Խուզիստանում: Ինչպես մեզ հետ գրուցում հայտնեց Հայաստանի ասորիների «Աթուրա» միության նախագահ Արսեն Միխայլովը, որպես «կրոնական փոքրամասնություն»՝ ասորիները մոտ 25 հազար են: Այս թվի կեսը բաժին է ընկնում Ուրմիա քաղաքին՝ իր հարակից գյուղական շրջաններով, մնացած կեսը՝ կենտրոնական շրջաններին՝ Թեհրան, Սպահան և Ահֆազ: Վերջինս հատկապես իրաքյան պատերազմի հետևանքով իրաքի քաղդեացիների հոծ բնակչության կենտրոնատեղի դարձավ: Նեստորականների ստվար բնակության վայրը Արևմտյան Աստրապատականն է:

Քաղդեացիների և Նեստորականների միջև հարաբերությունները հարթ չեն, որոնք երբեմն վերաճում են արյունահեղ բախումների: Սակայն իրանում պետական յուրօրինակ վարչարարության պայմաններում այս երկու խմբերը հարկադրված են ձեռք ձեռքի տված ներկայանալ մեկ միասնական համայնքի շրջանակում: Այս հանգամանքը, ինչ խոսք, ասորական ազգային միասնության ուղղված անուղղակի խթան է դիտվում: Ասորական համայնքի առջև նույնպես ծառացած է արտագաղթի խնդիրը: Դեռ շահական վարչակարգի տարիներին մեծ թափ էր հավաքել արտագաղթը դեպի Ավստրալիա: Ինչպես նշեց պրն Միխայլովը, իրանի պետության աջակցությամբ ամեն տարի այդ երկրում անցկացվում են համաստրական մարզական «Թամուզ» կոչվող հավաքները, որոնց հրավիրվում են նաև Հայաստանի ասորի մարզիկները:

Ներկայումս իրանի խորհրդարանի ասորի պատգամավոր Յոնաթան Բիթ-Գույան ընտրվել է համաշխարհային ասորական համագումարի գլխավոր քարտուղար: Պետությունը ասորական սփյուռքի հետ համատեղ աջակցում է նրանց սրբատեղիների վերականգնմանը:

«Կրոնական փոքրամասնությունների» շարքում յուրահատուկ տեղ է զբաղեցնում հրեական համայնքը: Ինչպես հայերը, հրեաները ևս իրանում բնակվելու հազարամյակների պատմություն ունեն: Դեռևս Աքեմենյանների ժամանակաշրջանից հիշատակելի է բիբլիական Եսֆիր թագուհին: Սասանյան տիրակալ Շահփուր (Շապուհ) Բ-ի կողմից Հայաստանից և Սերծավոր Արևելքի այլ տիրույթներից հայերի հետ մեկտեղ բռնագաղթի ենթարկվեցին նաև հրեաները (քրիստոնյա և հուդայական): Արաս Ա-ը 1604-ին նոր բռնագաղթի ենթարկեց հրեաներին: Միշտ էլ ննան արարքը մեկնաբանվում էր առևտորի և արհեստների զարգացման միտումով: Բոլոր աղբյուրները միակարծիք են, որ մինչև իսլամական հեղափոխությունը հրեաների թիվը երկուում 80 հազարի էր հասնում: 1979 թ-ից հետո իսլամական իշխանությունը իրեն հռչակեց սիոնիզմի դեմ պայքարի համաշխարհային

առաջամարտիկ, իսկ Խորայել պետությունն էլ դադարեց ճանաչվել որպես այդպիսին: Դրա փոխարեն ընկալվեց և ընդունվեց որպես «Փաշխտական ավագակապետություն»: Այս հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չունենալ պետություն-համայնք հարաբերությունների վրա: Իշխանությունները հրեական համայնքի պատասխանատուներին հասկացրին, որ իրենց իրավունք են վերապահում համայնքին դիտարկել որպես միջազգային դրամատիրության և հատկապես ԿՅՎ-ի և ՄՈՍՍՍԴ-ի հինգերորդ շարասյուն: Այդուհանդերձ, իւլամական հանրապետությունը հրեական համայնքի նկատմամբ սկզբից և այս վարել և այժմ էլ վարում է բավական հանդուրժող, հավասարակշիռ մոտեցում՝ վերջինս բխեցնելով իսլամի գաղափարաբանությունից և ոչ թե քաղաքականությունից: Ըստ այդմ՝ հրեաները դիտարկելի են, ինչպես և քրիստոնյաները, որպես ահլ-ալ-քիթար (արաբ.՝ գրոց ժողովուրդ), միաստվածության և դրանով պայմանավորված՝ ընդհանուր մարդարեների պայմաններում: Իսկ Խորայելը Թեհրանի համար հրեա ազգի և վերջինիս իղձերի հետ կապ չունեցող ծայրահեղ ազգայնանոլական ֆաշխտական մի կազմավորում է, որն ընդամենը գործում միջոց է միջազգային դրամատիրության և կայսերապաշտության ձեռքում: Ակնհայտ է, որ հրեական համայնքը ննան պաշտոնական գաղափարախոսության դաշտում չի կարող այլինտրանքային տեսակետ ունենալ: Ավելին, ժամանակ առ ժամանակ պաղեստինյան ինքնավարության տարածքներում խորայելյան բանակի պատժիչ գործողություններից հետո վերջինիս դեմքողքի ճառերով հանդես են գալիս նաև Իրանի հրեական համայնքի պատասխանատու ներկայացուցիչները, այդ թվում՝ խորհրդարանի հրեա պատգամավորը: Պարզ է, որ Իրանից դուրս այս երկրի հրեական համայնքը ընկալվում է որպես «պատանդ» հանրույթ:

Հայաստանում գործող սինագոգի ռաբբի Մեհր Գերշտեյնը մեզ հետ կայացած գրուցում նշեց, որ Իրանի հրեաների վերաբերյալ տեղեկատվությունը շատ սուր է, և եղածն էլ հավատ չի ներշնչում: Խոչընդոտներ չհարուցելով համայնքի արտագաղթին՝ պետությունը, ըստ Բուրշտեյնի, խիստ հսկողության տակ է պահում գաղութի պատասխանատուների շփումները արտաքին աշխարհի հետ: Իրանցի իր պաշտոնակիցների հետ խիստ սակավաթիվ հանդիպումների ժամանակ վերջիններիս բարվոք և ապահով վիճակի մասին խոստովանությունները, ըստ նույն աղբյուրի, դժվար է ճշմարտացի համարել: Մյուս կողմից, ըստ Բուրշտեյնի, ինչպես կարելի է խղճի և կրոնական ազատությունների մասին խոսել, երբ սինագոգներում աղոթքի ժամանակ չի հիշատակվում Խորայել պետությունը և նրա ապահովության համար Աստծուց բարերարություն չեն

խնդրում: Եվ ինչ արժեք ունեն համայնքի ազատ լինելու մասին պետության հավաստիացումները, եթե Թեհրանը բարոյանյութական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Խսրայելի ոչնչացումը իրենց գերնպատակ հռչակած կազմակերպություններին:

Իրանի հրեական փոքրամասնության՝ պետության կողմից խիստ վերահսկման և որպես հետևանք ինքնամփոփ բնույթի մասին իր կարծիքն հայտնեց նաև Հայաստանի հրեաների պատասխանատու ներկայացուցիչ Ոիմա Վարժապետյանը: Արժե հիշել, որ գոնե Մոհամադ աթամին իր նախագահության տարիներին «կրոնական փոքրամասնությունների» հետ աշխատանքների շրջանականերում հանդիպումներ է ունեցել նաև երկրի հրեաների հոգևոր պատասխանատուների հետ և փորձել է աջակցել խնդիրների հաղթահարման հարցում:

Ներկայումս հրեական համայնքը կենտրոնացած է հիմնականում Թեհրանում և Շիրազում: Հարավ-արևմուտքում՝ Դիզֆուլ քաղաքից 20 կմ հարավ-արևելք, պատմական Շոշ քաղաքի ավերակների մոտ է գտնվում հրեանության մեծագույն սրբություններից մեկը՝ Դանիել մարգարեի դամբարանը, որը պետության հոգածության առարկան է: Գործում են դպրոցներ և սինագոգներ:

37

Փաստորեն, հրեաների հանդեպ ավանդաբար բարյացակամ և հանդուրժողական վերաբերմունք դրսնորոդ Իրանում (թե՛ նախիւլամական և թե՛ իսլամական շրջանում) 1979թ-ի հեղափոխությունից հետո էլ սիոնիզմի և հրեա ժողովրդի ու նրա դավանած կրոնի միջև հստակ տարբերակումների արդյունքում հրեա համայնքը ճանաչվեց չորս պաշտոնապես ընդունված «կրոնական փոքրամասնություններից» մեկը:

Հաջորդ կրոնական փոքրամասնությունը զրադաշտական համայնքն է: Համաձայն Հայաստանում իրանական դեսպանատան մշակույթի կենտրոնի տրամադրած տեղեկատվության՝ Իրանում զրադաշտականների թիվը հասնում է մինչև 100 հազարի: Նրանք հիմնականում կենտրոնացած են Յազդ, Քերման, Ֆարս և Խովահան օստաններում: Ներկայումս պաշտոնապես զրադաշտականությունը ևս կոչվում է «սուրբ գիրք ունեցող կրոն»՝ ի դեմս «Ավեստայի»: Այստեղ կցանկանայինք նշել, որ Իրանում որևէ կրոնական ուղղության պաշտոնական ճանաչումը պայմանավորված է երկու հանգանաքով. միաստվածության դոգմայի առկայությամբ և «Սուրբ գիրք» ունենալով: Տվյալ դեպքում հարցի յուրահատկությունն այն է, որ եթե հուդայականությունը, քրիստոնեությունն ու իսլամը ունեն ընդհա-

նուր մարգարեներ, ապա այլ է զրադաշտականության պարագան: Մյուս կողմից՝ այստեղ բազմաստվածության հետ առկա են ակնհայտ աղերսները: Զրադաշտի կրոնական համակարգը երկրում դիտարկվում է որպես միաստվածային (մոնոթեիկ) կրոն: Սակայն դարեր ի վեր մահմեդական շրջապատի կողմից զրադաշտական ինքնամփոփ համայնքները ընկալվել են որպես «ալ-քաֆիր» (անհավատներ, հեթանոսներ): Վերջին բարից էլ ծագում է նրանց համար գործածված «գաբր» անվանումը: Նրանց բնակավայրերից, սրբատեղիներից և գերեզմաններից ձգտել են հեռու մնալ, հավատալով, որ դրանք «շերթանների հավաքատեղիներ» են: Ակնհայտ էր նախկին կայսերական տիտղոսակիր դավանանքի հետևողական դեմոնիզացումը:

38

Զրադաշտական պատկերացումների արժարծում, վերաբերություն և վերածնունդ է նկատվում դարասկզբին ու կապիւմ է հիմնականուն Ուզա Փեհլեվի շահի գործունեության հետ: Նախահայլամական անցյալի փառաբանումն իր տեղը գտավ պարսկական ազգայնական գաղափարախոսության, որով և ընդհանրապես համահրանականության համատեքստում<sup>6</sup>: Դրան նպաստեց նաև 30-ական թթ-ին Գերմանիայում տիրող համարիականության պատկերացումների ազդեցությունը: Արդեն Մոհամեդ-Ուզա Փեհլեվիի օրոք իրանցիների արիական ինքնագիտակցության շահարկումը աստիճանաբար սկսեց հարուցել նաև շիա հոգևորականության վրդովմունքը<sup>7</sup>: Մյուս կողմից՝ Նորին գերազանցության մակարդակով

<sup>6</sup> Այս գաղափարական հակամարտությունը ցայտումորեն դրսկորվեց 1971թ-ի հոկտեմբերին՝ Իրանական կայսրության 2500-ամյակին նվիրված հանդիսավոր մասնակիցների ժամանակ, որ կազմակերպել էր Սուհամեդ-Ուզան: Այդ օրերին համապատասխան տեսքի էր բերվել Թափթե-Զամշիդ պատմանշակութային համալիրը Փասարգատ (Պերսուպոյի) հենանենի քաղաքի մասողորների վայրուն: Կառուցվել էին ծախսատար հսկյական դեկորացիաներ: Յարավիրվել էին աշխարհի տապը թագավոր, ինձ քագուհի, քանանեկ արքայադուստը, մեծարիվ նախազահներ և վարչապետեր: Ներկաների բրուն էր նաև ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի նախազահ Պողործին: Հանդիսավոր մեխը Մոհամեդ-Ուզայի խոսք էր՝ ուղղված Կյուրուս (ինչ պարսկերեն՝ Քուրուշ) ԲՄեջ դատարկ դամբարանին:

- Թեզ, օ՛ Քուրուշ, Մեծ արքային, Արքայից Արքային, Իմ՝ Իրանի շահնշահի անունից և իմ ժողովրդի անունից, փա՞ռ: Մենք այստեղ ենք՝ այնպիսի մի պահի, երբ Իրանը կրկին արժանին է հաստոցուն պատմությանը, և ողջ ժողովուրդն արասայստում է իր անսահման երախսագիտությունը՝ ուղղված Թեզ՝ պատմական աննահ հերոսի, աշխարհի ամենահն կայսրության հիմնադրին, բոլոր ժամանակների մեծագույն աստարարին, մարդկության արժանի զավակին: Բոլորու շ, մենք կանգնած ենք քո հավերժական դամբարանի արջն և արտասանում ենք այս հանդիսավոր խոսքերը: Ննջիր խաղաղությանը, քանի որ մենք արժանացել ենք և կհսկենք քո փառավոր ժառանգությունը: Այմինչ այսրուղան խոնցինին վրդովկեցնում է հորեւանական խրախճական միջաշառության միտված փիրսարի ծախսերի փաստը՝ երկրում տիրող համբարձուր չքավորության պայմաններում: «Մեզ հարկավոր չէ այդ տոնակատարությունը, մենք քաղցած ենք, վերջ դրեք մուտքան ժողովի քաղցին, մի՛ զարձացեք մարդկանց դիմուների վրա»:

Դ. Ժկուս "Օռերկա ուղղակի նույնականություն և համապատասխանություն", Մոսկվա, 2000.

<sup>7</sup> Հատկանշական է, որ որպես հետևանք այս հակատիր մոտեցումների, ողջ երկրով մեկ տեղի էին ունենում ուժային կառուցյների և հեղափոխական մոցեհեղների գինված բախումներ:

Ըստ համար այս տոնակատարությունների կազմակերպումը իր կաղչակարգի հզորության և կայունության ցուցադրման առիթ էր, իսկ այսրուղան խոնցինի և իր աշակեցների համար՝ «Երկրի հետամնացության և իրանական հասարակության բարոյական անկան առիթ»: Մյուս կողմից՝ հասուն էր, որ շիա հոգևորականությունը նաև կրոնազարդարական առումով առաջնային չնկատեց այս հանդիսավոր մեջացումը՝ ունենալով համահրանական միասնության իր արժեհանակարգն ու դրանց բխող տեսլականը՝ համբարձության ժողովումայի՝ համաշխարհային առումով իսլամական հասարակության համատեքստում:

«փառահեղ» գրադաշտական անցյալի գովերգումը մեծապես ազ-  
դեց գրադաշտական համայնքի ինքնազնահատականի վրա:

1979թ-ին իշխանության եկած շիա հոգևորականության հա-  
մար պարզ էր, որ այս համայնքի նկատմամբ դարերով դրսեւորված  
քանակական վերաբերմունքը պետք է վերագնահատման ենթարկ-  
վի: Դասելով գրադաշտականությունը «սուրբ գիրք ունեցող կրոննե-  
րի» թվին՝ իսլամական կառավարողները դրանով իսկ հաստատե-  
ցին, որ Իրանի պատմությունը դիտարկում են անընդհատ (ոչ դիսկ-  
րետ) գործընթաց պետականության ունիվերսալ ընկալման տիրույ-  
թում:

Նկատելի է, որ խնդրո առարկա փոքրամասնությունների  
նկատմամբ կիրավող «կրոնական եզրը» այս դեպքում լիովին ըն-  
դունելի և համընկնող է գրադաշտականների համայնքի պարագա-  
յում: Ի դեպ, վերջինս հեղափոխությունից հետո միշտ էլ եղել է ընդ-  
դիմադիր հայացքների յուրօրինակ մի գեներատոր: Այս համայնքի  
ներկայացուցիչ (կամ էլ որ անկարևոր չէ՝ իրենց գրադաշտական  
համարող) շատ ինտելեկտուալներ համացանցում «սև PR» արշավ  
են վարում ներկա իշխանությունների դեմ: Էլ ավելի ակտիվ գործու-  
նելություն են ծավալում, հասկանալի է, համայնքի՝ արտասահմա-  
նում բնակվող ներկայացուցիչները<sup>8</sup>: Իրենք՝ իշխանությունները,  
առանձնակի ուշադրության կենտրոնում պահելով բոլոր չորս «կրո-  
նական փոքրամասնություններին», առավել ուշադիր են իրենց  
«արիական անցյալը» փառաբանող գրադաշտականների և հրեա-  
ների հանդեպ՝ երկու խմբերից ելնող հավանական վտանգների  
հիմարավորությունը դիտարկելով որպես մեկ գրգռիչի հետևանք  
(ասել է թե՝ ԱՄՆ-իսրայել «սատանայական երկնիասնություն»):

Վերջին հաշվով գրադաշտականության ներկայացուցիչները,  
ի տարբերություն այլ «կրոնական փոքրամասնությունների», փաս-  
տորեն, բնիկ են և իրենց այդպես էլ ընկալում են, որն արտահայտ-  
վում է երկրին և այստեղ տիրող իրադրությանը տիրոջ հոգեբանու-  
թյամբ մոտենալով: Ոժվար է, սակայն, հավատալ, որ նոր համահրա-  
նական (խորքում՝ արիականության) գաղափարախոսությունը, որ  
արծարծվում է գրադաշտական ինտելեկտուալների կամ նրանց հա-

39

<sup>8</sup> Նախիւլամական անցյալի հանդեպ աճող հետաքրքրությունը նկատելի է նաև Իրանի պետական ծառա-  
յողների շրջանում: Այս համատեքստում պետք է դիտարկել այն հանգամանքը, որ Հայաստանում իրանական  
դեսպանատան և վերջինիս կից Մշակույթի տան որոշ աշխատակիցներ իրենց ընտանիքներով միշտ էլ հե-  
տաքրքրասիրությամբ են հետևում և ներկա են լինում Գաւանում պարբերաբար կասարվող «հերանոսական»  
զանգվածային ծիսակատարություններին: Դրանց ժամանակ փոքր չէ նաև պարսիկ ուսանողների թիվը:

բողների կողմից պետության ներսում առկա էթնոցենտրիկ, անջատողական նկրտումների պայմաններում կարողանա վերջիններիս կանխարգելման ու սրբագրման գաղափարական հիմք և մեխանիզմ դառնալ:

40

Անդրադառնալով «կրոնական փոքրամասնություններին»՝ հարկ է նաև հայացք նետել մինչ 1979թ. Իրանում գոյություն ունեցող բահայականությանը: Վերջինս սկիզբ է առնուն XIX դարի կեսերին բռնկված «բարիների» ապստամբության ժամանակներից: Բարիականության հիմնադիր Սեյյեդ Ալի Մուհամադը, որն իրեն հռչակեց Բար (արաբերեն՝ դուռ, ասել է թե՝ ճշմարտության դուռ), հայտարարեց աշխարհի երեսից անարդարության վերացման և նոր, արդարացի, բարիների սրբազն թագավորության հաստատման մասին, որտեղ բոլոր մարդիկ կլինեն հավասար: Սեյյեդ Ալի Մուհամադը բացառեց հասարակության՝ Ուլրանով և շարիաթով առաջնորդվելու անհրաժեշտությունը, պարզեցրեց իսլամական ծեսերը, հրաժարվեց շիայական արարողություններից: Նշենք, որ բարիականությունն ուներ նաև արտաքին վեկտոր. սկզբնական շրջանում այն ուղղված էր օրավոր աճող եվրոպական ներթափանցման դեմ: Կարծ ժամանակահատվածում Բարն իր շուրջը համախմբեց ոչ միայն գյուղական ու քաղաքաբնակ չքավոր խավերին, այլև նոր ձևավորվող ազգային բուրժուազիայի մանր առևտուրական շերտերին: Նրան միացան նաև պաշտոնական շիայականությունից հիասթափված գգալի թվով հոգևորականներ:

Սկզբում բարիների ապստամբական բռնկումները երկրի հյուսում պսակվեցին հաջողությամբ. Մազանդարանում նրանց նույնիսկ հաջողվեց կարծ ժամանակով ստեղծել իրենց օրենքներով առաջնորդվող համայնք: Յարվածների ազդեցության տակ շարժման հետևորդները ստիպված եղան անցնել պայքարի ահարեկչական եղանակին: 1852թ. նրանք անհաջող մահափորձ կատարեցին Նար-Էղ-Դին շահի դեմ, որից հետո շատ բարիներ<sup>9</sup> մահապատժի ենթարկվեցին, այդ թվում՝ Սեյյեդ Ալի Մուհամադը: Շարժումն անկում ապրեց: Մոտ հարյուր հետևորդ, անցնելով Բաղդադ, ընդունեց թրքահպատակություն՝ ապրելով համայնքներով: Շուտով նահատակ առաջնորդի եղբայր Միրզա Յուսեյն Ալի Բահա-Ոլլահը առաջ է քաշում կյանքի կազմակերպման իր սկզբունքները՝ յուրովի մեկնարանելով բարիզմը: Նա իրեն հռչակում է սկզբում մարգարե, ապա և աստված: Ուսափելով սուլթանական կառավարության հալածանք-

<sup>9</sup> Բահայիները հոգևորականների իմստիտուտ չունեն:

ներից՝ Բահայի կողմնակիցները տեղափոխվում են Պաղեստին: Այստեղ Բահան 1872թ. գրում է իր գլխավոր ստեղծագործությունը՝ «Քիթարի աղդասը» («Ամենասուրբ գիրքը»): Նրա մահից հետո առաջնորդությունը ստանձնում է որդին: Աստիճանաբար բահայականությունը թափանցում է այլ երկրներ (մոտ 130)՝ այդ թվում՝ ԱՄՆ ու Իրան: Վերջին տվյալներով՝ այն ունի մոտ 6 մլն 500 հազար հետևորդ: Սա որոշ ուսումնասիրողների թույլ է տալիս բահայականությունը համարել չորրորդ համաշխարհային կրոն:

Ներկայումս բահայական համայնքները վայելում են ԱՄՆ-ի և Խրայելի կառավարող շրջանների հովանավորությունը: Բահայականներին հովանավորում էր նաև Իրանի վերջին շահը: Վերջինիս արտաքին և ներքին քաղաքականությունը հավանության էր արժանանում հիմնականում մտավորականությունից և մեծահարուստ խավից բարկացած Իրանի բահայական համայնքի ներսում, որն ամեն կերպ ձգտում էր օժանդակել Մոհամեդ-Ռեզայի ձեռնարկումներին: Մի կողմ թողնելով այն հարցի քննարկումը, թե ինչ հենքի վրա էր կառուցված շահական համահրանական կայսրության և բահայական համաշխարհային- համամարդկային դաշնության տեսլականների գաղափարական դաշինքը՝ նշենք, սակայն, որ պատասխանատու պաշտոններում նշանակելով բահայական գործիչներին, միապետին հաջողվեց հնարավորինս սահմանափակել ուղղափառ հոգնորականության քաղաքական ազդեցությունը:

41

Խսլամական հեղափոխությունից հետո դրությունն անմիջապես փոխվեց. խսլամական հեղափոխականներն այաթոլլահ Խոմեյնիի առաջնորդությամբ բահայականներին դիտում էին որպես ամերիկյան և խրայելական գործակալներ: Այս հանգամանքին նպաստում էր այն իրողությունը, որ բահայական մեծահարուստների ֆինանսները պահ էին տրված հիմնականում Խսրայելի բանկերում: Քարուքանդ արվեցին բահայիններին պատկանող ձեռնարկությունները, գործարանները, բանկերը, բռնագրավվեցին ունեցվածքները: Բահայականությունն հայտարարվեց օրենքից դուրս աղանդ:

Բահայականության ներկայացուցիչ էր նաև շահական կառավարության վերջին վարչապետ Ջովեյդան: Վերջինս հեղափոխության նախօրյակին շահի երկիրը լքելուց հետո, կանոնակարգի համաձայն, չլեց իր դիրքը, որի հետևանքով ձերբակալվեց և կարծ ժամանակ անց նորաստեղծ հեղափոխական կրոնական դատարանի որոշմամբ մահապատժի ենթարկվեց:

Կարծում ենք՝ բահայականների նկատմամբ վարվող անհանդուրժականության պատճառներից է նաև այն հանգամանքը, որ նրանց կազմակերպչական օղակներից («Տեղական» և «Ազգային» խորհուրդներից հետո) գլխավորը՝ Համաշխարհային խորհուրդը, 1963թ-ից իսրայելում է և պաշտոնավարում է Յայֆե քաղաքում կառուցված «Արդարության համաշխարհային տանը»՝ բաղկացած ինը երևելիներից կազմված ավագների խորհրդից: Վերոնշյալ նստավայրը ճարտարապետաշինարարական առումով մի հրաշակերտ մեծատարածք համալիր է՝ կառուցված նաև հատուկ խորհրդապաշտության (միստիցիզմի) հաշվառմամբ: Պարզ է, որ իսրայելի «սիոնիստական» կառավարության հետ սերտ հարաբերությունների այս գործականը չէր կարող անհետևանք մնալ այաթոլլահ Խոմեյնու՝ իշխանության գալուց հետո:

42

Այժմ ներկայացնենք «կրոնական փոքրամասնություններին» տրվող արտոնությունները<sup>10</sup> իրականության հետ որոշակի համեմատության մեջ: Նկատի ունենանք, որ օրեցօր աճող՝ Իրանի ընդհանուր բնակչության պայմաններում էլ ավելի արագ է նվազում «կրոնական փոքրամասնություններին թիվը: Այս առումով 70 միլիոն ընդհանուր թվի դիմաց առկա է 200 հազար թիվը: Մյուս կողմից՝ պաշտոնապես միշտ էլ տարփողվում է, որ նման հարաբերակցության պայմաններում 290-հոգանոց խորհրդարանում «կրոնական փոքրամասնություններին» հատկացված հինգ պատգամավորական մանդատը վերջիններիս պետության կողմից ընդառաջ քայլ է:

### «Կրոնական փոքրամասնություններին» տրվող արտոնությունները<sup>11</sup>

*Տարեկան 17500 մլն ռիալ ընհանուր բյուջեի (որը մոտ 1մլն 750 հազար ԱՄՆ դոլարից քիչ ավելի է) հատկացում:*

Նշենք, որ այս հարցը միշտ էլ պարուրված է եղել անորոշությամբ և հաճախ էլ՝ դրամական զեղծարարությունների մասին պատմություններով: Տարբեր համայնքների ներկայացուցիչներ հաճախ տեղյակ էլ չեն եղել, որ իրենք նման հատկացումներ են ստանում պետությունից: Իսկ հայ համայնքին հատկացվող անցյալ տարվա գումարների առնչությամբ մի իսկական սկանդալային պատմություն

<sup>10</sup> Սույն արտոնությունների ցանկում որպես այդպիսին է ներառված համայնքապատկան դպրոցներում մայրենի լեզվով կրոնի դասավանդումը:

<sup>11</sup> Ցանկը տրամադրված է ՀՀ-ում ԴիՇ դեսպանության հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից:

ծագեց ՀՅԴ-ի և Հայ ժողովրդային միության միջև, քանի որ վերջինս առաջինին և փաստորեն նրան ենթակա Թեմական խորհրդին պատասխանատու նկատեց հայությանը հատկացված մոտ 782 հազար ԱՄՆ դոլար կազմող գումարի անարդարացի բաշխման հարցում: Այս կապակցությամբ ՀԺՄ-ի պարբերական «Արաքսում» տպագրվեցին մի շարք դատապարտող - բացահայտող հոդվածներ: Ինչևէ, նշենք, որ հատկացված 782 հազար ԱՄՆ դոլարից 540 հազարը տրված էր Թեհրանի և հյուսիսային իրանահայությանը, մնացած 242 հազարը՝ հարավային իրանահայությանը:

Ասորիներին հատկացվում է մոտ 300 հազար, իրեաներին՝ 300 հազար, զրադաշտականներին՝ 368 հազար ԱՄՆ դոլար:

- *Տարբեր պարբերականների իրատարակման թույլտվություն:*

- *Դպրոցների հիմնելու թույլտվություն և նրանցում մայրենի լեզվի անարգել դասավանդում:*

Ինչպես վերն արդեն անդրադարձանք, հայոց լեզվով ուսուցման արգելոք (որը տևեց մոտ տասը տարի, միահամուռ ըմբռստացման շնորհիվ վերացվեց 90-ականների սկզբին) նույնպես իրողություն է: Այժմ իրանում առկա է մոտ 50 հայկական դպրոց:

43

- *Դպրոցների տնօրենների նշանակում «կրոնական փոքրամասնությունների» ներկայացուցիչներից և նրանց աշխատանքի ընդունում որպես ուսուցիչ:*

Ինչպես հաստատում են վկայությունների վրա հիմնված փաստերը, հեղափոխությունից հետո հետևողականորեն կիրառված «փաքսագի» («մաքրագործման») համապետական քաղաքականության հետևանքով դպրոցի տնօրենների պաշտոններից համատարած հեռացվեցին տվյալ համայնքի ներկայացուցիչները: Իրենց պաշտոններում մնացին միայն քիչ թվով, այն էլ բնագիտական առարկաների մասնագետները:

- *Կրոնական ծիսակատարությունների անարգել իրականացում:*

Ինչպես նկատվեց, սինագոգներում կատարվող աղոթքները Խսրայել պետության հիշատակման արգելքի պատճառով արտերկրի իրեաները ոչ միայն թերի, այլև «պարտադրված խեղաթյուրում» են դիտում:

- *Քաղաքացիական ազատություններ:*

Երևի նկատի ունեն «կրոնական փոքրամասնություններին»

պատկանող տարածքներում որոշ ազատությունները:

-«Կրոնական փոքրամասնությունների» ժառանգության խնդրի լուծում, որն ստորագրել է 200 պատգամավոր:

Խորհրդարանը նաև հաստատեց կանանց ժառանգության մասնաբաժնի իրավունքը՝ ըստ համապատասխան հանայնքների կրոնական օրենքների:

-«Կրոնական փոքրամասնությունների» սրբատեղիների վերականգնում և վերանորոգում պետական բյուջեից հատկացված գումարներով և համայնքների ներկայացուցիչ ճարտարապետ և շինարար-մասնագետների մասնակցությամբ:

Ի հավելումն այս իրողության՝ նշենք նաև Սր Թաղեի եկեղեցական համալիրի վերականգնման-վերանորոգման փաստը: Որպես նաև համաքրիստոնեական առաջին սրբատեղի և համամարդկային պատմանշակութային արժեք, այն ներառված է Մշակութային ժառանգության համաշխարհային կազմակերպության կողմից պահպանվող կառույցների շարքում: Նշենք, որ իրանում առկա է մոտ 200 եկեղեցական համալիր:

**44**

-Արտոնված է ունենալ սեփական կրոնական կառույց:  
Դայոց պարագայում դա թենական խորհուրդն է:

-«Կրոնական փոքրամասնությունների» անդամների՝ մահմեդականների արյան զմի՝ «ղիյեհ» հավասարությունը:

Համաձայն այս կետի՝ մարդկային կյանքի կորստի հանգեցնող երեք միջադեպերում, օրենքով նախատեսված պատժից զատ, մեղավորը պարտավոր է նաև համապատասխան արյան գին վճարել, որը յուրաքանչյուր տարի որոշվում է Կենտրոնական բանկի կողմից՝ հաշվի առնելով հեղափոխության առաջնորդի տեսակետը: Միջադեպերը դասակարգված են ըստ հետևյալ դեպքերի. բացարձակ սխալ, որը հանգեցնում է մահվան, ոչ դիտավոր սպանություն, օրինակ՝ ավտովթար (իրանն այս խնդրում աշխարհում գրադարձնում է առաջին հորիզոնականներից մեկը) և դիտավորյալ սպանություն:

Սակայն մինչ 2005 թվականը վերոնշյալը վերաբերում էր միան մահմեդական կնոջը կամ տղամարդուն, իսկ ոչ մահմեդականների դեպքում օրենքը ոչ մի հատուցում չէր նախատեսում ո՛չ պատժի և ո՛չ էլ «ղիյեհ» վճարելու տեսքով, որը, իրանցի բարձրաստիճան հոգևորականներից շատերի կարծիքով, շարիաթի օրենքներից է բխում, որով և բնական է: Ասել է թե՝ եթե մահմեդականի ծեռքով

կյանքից զրկվում է մահմեդականը, ապա նա պարտավոր է, օրենքով սահմանված պատիժը կրելուց զատ (որը դիտավորության դեպքում մահապատիժ է), վճարել նաև «արյան գին»: Իսկ մահմեդականի՝ ոչ մահմեդական սպանելու դեպքում մինչ նշյալ տարեթիվը հանցագործը ոչ միայն ըստ օրենքի որևէ պատիժ կրելու ենթակա չէր, այլև չէր վճարում և «արյան գինը»: Սույն, հիրավի, խտրական նոտեցումն իր արտացոլումն էր գտել քրեական օրենսգրքի (իսլամական պատժամիջոցների համակարգի) բոլոր հոդվածներում ու դրույթներում և բազմիցս սուր քննադատության է ենթարկվել մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների կողմից: Դրույթունը միտվեց դրական փոփոխության Մոհամադ աթամի իշխանության տարիներին, երբ այս կապակցությամբ տեղի ունեցան հանդիպումներ վերջինիս և «կրոնական փոքրամասնությունների» ներկայացուցիչների հետ: Նախագահի կարգադրությամբ 2001 թվականին ստեղծվեց «կրոնական փոքրամասնությունների հարցերն ուսումնասիրող հատուկ կոմիտե», բաղկացած այն բոլոր նախարարությունների ներկայացուցիչներից, որոնք ի պաշտոնե առնչվում են խնդրո առարկա հարցերին: Յամայնքների պատգամավորները նախևառաջ «դիյեհե հավաստության հարցը ներկայացրին Կոմիտեին, վերջինս էլ հատուկ գեկուցագրի տեսքով այն ներկայացրեց նախագահին, որն էլ իր հերթին հարցի ուսումնասիրությունը հանձնարարեց արդարադատության նախարարությանը: Ի վերջո, 2002թ. մարտին, երկրի դատական իշխանությունը ղեկավար Յաշօռուդիի (ի դեպ, պահպանողական ճամբարից) գլխավորությամբ որոշում կայացրեց «սուրբ գրքերն ունեցող փոքրամասնությունների և մահմեդականների «դիյեհե» հավաստության վերաբերյալ: Սակայն դա հարցի լուծնան դժվարին ճանապարհին առաջին քայլն էր, որ կառավարությանը հնարավորություն տվեց մշակել խնդրո առարկա օրինագիծը և այն ներկայացնել խորհրդարանին: Եվ միայն երեք տարի անց 2005թ-ի գարնանային նստաշրջանում ընդունեց «դիյեհե» հավաստության օրենքը: Վերոշարադրյալը փաստում է նախագահ Խաթմանի իշխանության պայմաններում «կրոնական փոքրամասնությունների» ներկայացուցիչների միասնական քաղաքացիական պահվածքի կառուցողական դերի և դրանով պայմանավորված օրենսդրական էական հաղթանակների մասին:

Եվ, վերջապես, արտոնությունների ցանկում ներառված են երկրից դուրս մեկնելու հարցում անձնագրային դյուրացումները: Ի դեպ, մեր իրանահայ գրուցակիցները գրեթե միահամուռ հաստատեցին իրանում գործունեություն ծավալած հրեական ՅԱՅԱՍ (որն, ըստ վկայությունների, որքան տարօրինակ է, բայց եթրայական հա-

պավում է) կոչվող կազմակերպության մասին, որը մասնագիտացած է հատկապես հայերի արտագաղթի կազմակերպչական աշխատանքում: Համաձայն նույն վկայությունների՝ յուրաքանչյուր մարդուց արտագաղթը դյուրին և առանց թղթաբանական քաշքանչուկների կազմակերպելու համար հրեաները գանձում են 2500-3000 ԱՄՆ դոլար, ընդ որում գումարն արտասահմանում հետ վերադարձնելու պայմանով: Նշվում է, որ չնայած կազմակերպության իսրայելական լինելու մեջ հավանականությանը՝ այն իրանում գործում է փաստորեն անխափան և անարգել, ճիշտ է՝ առանց իրավաբանական ձևակերպումների: Հարցը ևս խիստ մտահոգիչ համարելով՝ այս առումով անհանգստություն հայտնեցին նաև Իրանի ասորական փոքրամասնության ներկայացուցիչները, որոնք նույնպես միաբերան հաստատեցին նաև իրենց ուղղությամբ աշխատող ընկերության գոյության փաստը:

46

Զրուցակիցները եզրակացնում են, որ արդեն երկար տարիներ զարմացնել դադարած իրան-իսրայելյան տանդեմի ներկա դրսևորումը դիտարկելի է այն համատեքստում, որ այս երկրում «կրոնական փոքրամասնությունների» և նրանց հետ կապված թեմաները դեռևս շարունակվում են դիտարկվել երկրի պետանվտանգության համար բարձր ռիսկայնության համատեքստում՝ «չկա համայնք, չկա և հնարավոր խնդիրը» կանխարգել բանաձևով: Այսպես թե այնպես, վիճակագրությունը խոսում է ինքն իր մասին. 1851թ-ին իրանահայերի թվով երկրում մոտ 20 հազար էր, 1890թ-ին՝ 80 հազար, 1979թ-ին՝ 200 հազար, ներկայում 50 հազարից ավելի պակաս:

Ըստ սույն հոդվածի՝ կարելի է եզրակացնել, որ «կրոնական փոքրամասնությունների» հիմնախնդիրները իր հոգածության առարկան դարձնելով, մերօրյա իրանական պետությունը միևնույն ժամանակ փորձում է կանոնակարգումների միջոցով հնարավորինս վերահսկելի և կանխատեսելի դարձնել տարադավան էթնիկ միավորներին՝ որպես արտերկրի ուժերի կողմից հնարավոր միջամտության լծակների: Մյուս կողմից՝ Իրանում կարծում են, որ իսլամն այստեղ միշտ եղել է և կլինի պետության, գոնե ներկա սահմաններում, միասնականության ամենավճռորոշ գործուններից մեկը: Ինչպես վերը նշվեց, արիական-զրադաշտականության վրա հիմնված պանիրանիզմի<sup>12</sup> գաղափարախոսությունը այս խնդրում գաղափարաբանական բավարար պոտենցիալ առումով ակնհայտ գիջում է

<sup>12</sup> Վերջիվեջոց չնայած «զրադաշտական» ժամանակների գովերգումներին՝ հայտնի չեն որոշակի փաստեր, թե Մոհամեդ-Ռեզա Փեհլեվիի կողմից իսլամը պիտի ենթարկվեր արմատական վերատեսության՝ վերջնականապես դուրս մղվելու հեռանկարով:

շիայականությանը: Եվ 1945-46թթ. դեպքերը, երբ իրանական ծագմամբ քրդերը համարանականության գաղափարների պայմաններուն Քաղի Մուհամադի առաջնորդությանը Մեհարադում հայտարեցին քրդական հանրապետության<sup>13</sup> ծնունդը, և որը դաժանորեն ճնշվեց շահի վարչապետ Ղավան Սալթանեյի գլխավորած կառավարության կողմից, միայն փաստում են դա:

Վերը ասվածի օգտին են խոսում հետագա տասնամյակներում ևս քուրդ անջատողականների և շահական զորքերի ծայրահեղ դաժանության հասնող արյունալի բախումները: Փաստեր, որոնք առկա էին նաև իսլամական կառավարման տարիներին ու վերջապես ավարտվեցին ոչ միայն գենքի կիրառման շնորհիվ<sup>14</sup>:

---

13 Ընդգրկում էր Արևմտյան Ասորապատականի և Քուրդիստանի տպածքները:

14 Արժե նշել, որ ներկայումն է Թուրքիայում գործող քուրդ զինյաների դաշտային հրամանատարները հրամի իրենց ազգակիցներին մեղադրում են շիայական հնքնագիտակցությանը չափից շատ տուրք տալու, որով և քրդական պայքարին խորթանալու մեջ:

## **Նազենի Պարիբյան**

Ավարտել է Երևանի գեղարվեստաբառերական ինստիտուտի արվեստաբանությամբ բաժինը: Որպես «Սիրարդի Տեր-Ներսեսեան» հիմնադրամի առաջին թոշակառու մեկնել է Փարիզ, ուր շարունակել է մասնագիտացումը Արվեստի և Յնագիտության ինստիտուտում (*Institut d'art et d'archéologie*), Կաթոլիկ ինստիտուտում (*Institut catholique*) և Սորբոնի համալսարանի Բարձրագույն կրթության պրակտիկ դպրոցում (*Ecole Pratique des Hautes Etudes*): Վերջինի պատմաբանասիրական բաժնում պաշտպանել է թեկնածուական (1993), ապա դոկտորական (2005) թեգերը: Դասավանդում է ԵՊՀ արվեստի պատմության ամբիոնում: ԵՊՀ եգիպտագիտության հայկական կենտրոնի փոխտնօրեն՝ ղեկավարում է համեմատական հետազոտությունները: Արվեստի պատմության մեջ նոր գիտ մեթոդի հեղինակ է, ունի երկու մենագրություն, գիտական հայտնագրություններ, որոնցից ամենանշանակալին Յիսուսի Խաչելության ճշգրիտ վայրն է (տես Wikipedia, Golgotha), *Association Internationale des Etudes Arméniennes*-ի լիիրավ անդամ:

**48**

## **ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ ԵՎ ԿԱՇՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՇՈՌԻ ԽՆԴԻՐԸ IV ԴԱՐՈՒՄ\***

4-րդ դարի հայ քրիստոնեությունը բարդ և յուրահատուկ նկարագիր ունի: Ներմուծվելով մի պետություն, ուր տիրում էր տոհմական-ժառանգական հասարակարգը, այսինքն՝ ուր յուրաքանչյուր նախարարական տան, այդ թվում՝ թագավորական տոհմի հասարակական դերն ու զբաղեցրած պաշտոնն այդ ընտանիքին հավերժ պատկանող իրավունքն ու արտոնությունն էին, եկեղեցական ինստիտուտն այստեղ ի սկզբանե կազմակերպվեց՝ ըստ կարելվույն հարմարվելով տեղական սովորույթներին:<sup>1</sup> Այսպես, հակառակ ընդհանուր եկեղեցական կանոնի՝ Յայաստանում հայրապետական պատիվը ժառանգական բնույթ ուներ և պատկանում էր Գրիգոր Լուսավորչի (Գրիգորյանների) ընտանիքին:<sup>2</sup> Իսկ երբ այս տոհմում համապատասխան թեկնածու չէր գտնվում, թափուր գահն ավանդապես անցնում էր կրոնական մեկ այլ տոհմի՝ Աղբիանոսյանների (Աղբիանոս Եպիսկոպոսի անվանք) հին քրմական տան ներկայացուցչին:<sup>3</sup>

\* Սույն հոդվածը ֆրանսերեն լրաց է տեսել Bulletin of Parthian and Mixt Oriental Studies, 1 (2005), 43-66. Ներկայացված հայերեն թարգմանությունը չնշին վոկուսություններով հեղինակին է:

<sup>1</sup> Աղոնց, 1987, 358-411 : Toumanoff 1963, 138-39.

<sup>2</sup> Աղոնց, նոյմը. 408-409 : Garsoian 1989, 49-50.

<sup>3</sup> Աղոնց, նոյմը. 391-92 : Garsoian, նոյմը. 345 և հետո, և 1999: 38-39, Mahé 1997b.

Ընդհանուր առնամբ այս ժամանակաշրջանի հայ ընտրանի հասարակությունը քաղաքաբնակ չէր:<sup>4</sup> Գրեթե բոլոր անվանյալ «մեծ քաղաքները» հելլենիստական ծագում ու կողմնորոշում ունեին:<sup>5</sup> Ոչ միայն հայ իշխաններն ու նախարարներն էին նախընտրում բնակվել իրենց ամուր բերդերում՝ հեռու արքունիքից և արքայանիստ քաղաքներից,<sup>6</sup> այլև նույնիսկ գավառների եպիսկոպոսները, հակառակ քրիստոնեական աշխարհում ընդունված սովորության, իրենց աթոռները չին հաստատում թեմերի կենտրոն համարվող գլխավոր քաղաքներում: Այս եպիսկոպոսները փաստորեն կցված էին նախարարական ընտանիքներին և համարվում էին նախնառաջ տվյալ տոհմի և ըստ այդմ՝ նոր միայն այդ տոհմին պատկանող կալվածքների և ողջ գավառի հոգևոր առաջնորդները:<sup>7</sup> Նրանք այդպիսով գրեթե միշտ հետևում էին իշխանական ընտանիքն (կամ ավելի շուտ ընտանիքի գլխավորին՝ տանտիրոջը<sup>8</sup>), շատ հաճախ իրենք էլ այդ տոհմից էին սերում և պաշտոնական փաստաթերում նույն տոհմանումն էին կրում (որը մեծ մասամբ նաև գավառի անվանումն էր):<sup>9</sup>

Մյուս կողմից՝ նոր կրոնի հաստատումը Յայաստանում նշանավորվեց երկու մտավորական հոսանքների ծևավորմամբ՝ հյուսիսում հունական և հարավում ասորական, որոնք ողջ այդ ժամանակահատվածում անընդհատ պայքարում էին գերակայության համար:<sup>10</sup> Յայրապետական արտօին հավակնող նշված երկու տոհմերի մրցակցությունը ևս արտահայտվում էր քաղաքական և դավանական կողմնորոշվածությամբ: Գրիգորյանները հակված էին կապադովկյան հելլենիզմին, խստիվ պահպանում էին նիկեական ուղղափառությունը և բյուզանդամետ քաղաքականության կողմնակից էին:<sup>11</sup> Իսկ Աղբյանոսյանները, որ Յայաստանի հարավային շրջաններից էին, ընդհակառակն, հարում էին Անտիոքի ասորա-միջագետքյան քրիստոնեական ավանդույթներին, նվազ հնագանդ էին

<sup>4</sup> **Garsoian** 1984-85, 1988-89 և 1997a.

<sup>5</sup> Նոյնը :

<sup>6</sup> Նոյնը :

<sup>7</sup> Toumanoff 1963, 138-39 ; Աղոնց, նոյնը, 407-11: **Garsoian** 1985(IX), 1984-85 և 1997a.

<sup>8</sup> Յայ տոհմական հասարակարգում հողային կալվածքները ողջ ընտանիքի սեփականություն էին, իսկ դրանց հսկումն ու կառավարումը ստանձնում էր ընտանիքի ավագ անդամ՝ տանուտերը: (Toumanoff, նոյնը, 118-23; Mahn 1993, 54-55).

<sup>9</sup> Օրինակ՝ Անանիս եպիսկոպոս Սիւնեաց (այսինքն՝ Սյունիքի և Սյունիների), Սահակ եպիսկոպոս Ոշտունեաց (այսինքն՝ Ոշտունիքի և Ոշտունիների), բայց Մերշապուհ Մամիկոնեան, եպիսկոպոս Տարօնի (եւ Մամիկոնեանների) և Եզնիկ Բագրեսանդայ Եափսկոպոս, տես Աղոնց, նոյնը, 366-67 : **Garsoian**, նոյնը:

<sup>10</sup> Ապիհասեաց 1940: 130 եւ *hētup*; Peeters 1929, Աղոնց, նոյն տեղում, **Garsoian** 1967a: 220 և *hētup*, 1989: 16, 46-47 և 1999: 19:

<sup>11</sup> **Garsoian** 1967a: 223-24 և 1999: 37-41.

Կոստանդնուպոլսի հայրապետական աթոռի դավանական դիրքորոշումներին<sup>12</sup> և առավել բարյացակամ վերաբերմունք ունեին Սասանյան արքունիքի քաղաքականության նկատմամբ:<sup>13</sup>

Հայաստանում ավետարանչական գործունեության երկու ավանդույթ կար, որ վկայում է քրիստոնեության դարձի երկու հաջորդական փուլերի գոյության մասին. առաջինը առաքելական ժամանակներից ասորա-պահեստինյան աշխարհից դեպի Հայաստանի հարավային շրջաններ թափանցած ավանդույթ է և կապված է Թաղենու առաքյալի անվան հետ, մինչդեռ երկրորդը Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ ներմուծվել է Կապադովկիայից չորրորդ դարի սկզբում և ընդունվել որպես Մեծ Հայքի թագավորության պետական կրոն:<sup>14</sup> Այս ավանդույթները զարգացում են ապրել երկու հոգևոր կենտրոնների շուրջ, որոնք ևս մեզ հետաքրքրող ժամանակահատվածում վիճարկում էին առաջնության պատիվը. հարավում՝ նախկին հեթանոսական սրբավայր Աշտիշատ ավանը<sup>15</sup>, հյուսիսում՝ արքունական մայրաքաղաքներից մեկը՝ Վաղարշապատը (տե՛ս կից քարտեզը): Ըստ հայագիտության մեջ ընդունված պատմական ավանդության՝ Հայաստանի դարձից անմիջապես հետո այս երկու վայրերում Գրիգոր Լուսավորչի հիմնած Եկեղեցիները համարվում են հայրապետական գահին հավակնող երկու տոհմերի նստավայրեր:<sup>16</sup>

Սակայն հայկական աղբյուրների առավել մանրազնին քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանի տարածքում ողջ այս հարյուրամյակի ընթացքում միաժամանակ մի քանի «մայր աթոռներ» են գոյություն ունեցել տարբեր գավառների տարբեր քաղաքներում, կամ ավելի ծիշտ՝ «մայր աթոռ» կամ «կաթողիկոսական նստավայր» դասական անվանումը այնպես, ինչպես մենք սովորաբար ընկալում ենք և ինչպես ընդունված էր Հռոմեական կայսրությունում, Հայաստանում գոյություն չի ունեցել 4-րդ դարում:

Այսպես, առաջնորդվելով տոհմական-ժառանգական համակարգի տրամաբանությամբ՝ պետք է ենթադրել, որ եթե եպիսկոպոսները կցված էին նախարարական ընտանիքներին, ապա եպիսկոպոսապետը կամ քահանայապետը<sup>17</sup> պետք է կցված լիներ արքայա-

12 Նոյմ տեղում :

13 *Histoire du Christianisme* II: 944 ; Աղոնց, նոյմը :

14 Աղոնց, նոյմը; Mahé 1999 ; Garsoian 1999: 1-19.

15 Ազարանգեղոս § 809 , Thomson 1976: Ixii-Ixiii ; Garsoian 1989: 449.

16 Տե՛ս Thomson 1976: Ixxvi.

17 Ըստ հայկական վաղ աղբյուրների՝ այս տիտղոսները հայ հայրապետի տարածված անվանումն էին 4-րդ դարում: «Կաթողիկոս» տերմինը հայտնվում է ավելի ուշ, 5-րդ դարի սկզբին: Տե՛ս ստորև դրա ընդուննան հավանական պատճառների մասին:

կան ընտանիքին,<sup>18</sup> ինչպես դա հասկացվում է Փավստոս Բուլգանդի (կամ Բուլգանդարանի<sup>19</sup>) հիշատակությունից. «... բայց որ լիներ աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, եւ հաց օրինէր քազաւորացն»<sup>20</sup>: Նույն աղբյուրը բավական որոշակի նշում է նաև, որ Գրիգորյանների ընտանիքի անդամները կնության էին առնում արքայադուստրերին<sup>21</sup>, և որ նրանց պատկանող կալվածքները մեծ մասամբ սահմանակից էին արքայական հողատիրույթներին<sup>22</sup>: Այս փաստերից կարելի է եզրակացնել, որ քահանայապետերի նստավայրը կամ «մայր աթոռը» պետք է որ գտնվեր մայրաքաղաքում, արքայի պալատի կողքին:

Սակայն, դատելով նույն աղբյուրներից, 4-րդ դարում «մայրաքաղաք» հասկացությունը հայ իրականության մեջ ևս չէր համապատասխանում տարածված ընկալմանը, քանի որ հայոց արքաներն իրենք էլ մշտապես չէին կենուն միևնույն քաղաքում՝ հոչակված որպես նրանց գլխավոր նստավայր: Չնայած Վաղարշապատը կամ Արտաշատը հայտնի են որպես «մայրաքաղաքներ», այնուամենայնիվ, հնարավոր չէ պնդել, որ արքաները այդ քաղաքներում երկար ժամանակ էին անցկացնում կամ էլ այնտեղ պատսպարվում էին իրենց իշխանության կրիտիկական պահերին:<sup>23</sup> Իրենց ժամանակի մեծ մասը նվիրելով որսին, խնջույքներին և ռազմախաղերին՝ հայոց արքաներն անընդհատ շրջում էին ողջ Երկրով սփռված իրենց սեփական տիրույթներով՝ բնակվելով «բանակ արքունի»-ներում՝ կիսաժամանակավոր ճամբարներում, «տաճար մայրիներում»՝ որսատեղիների հարևանությամբ կառուցված անտառային պալատներում կամ «ապարանքներում»՝ իրենց պատկանող տարբեր գյուղաքաղաքներում, ավաններում և բերդերում:<sup>24</sup>

Ըստ այսմ՝ կարելի է ենթադրել, որ եթե արքաները կլոր տարին երիվարում էին իրենց տիրույթներով, նրանց նստավայրերում պետք է որ եղած լինեին մի քանի եկեղեցիներ, որոնք «մայր աթոռի» կարգավիճակ ունեին: Եվ, իրոք, աղբյուրները բազմիցս հիշատակում են հայրապետերի ներկայությունը արքայական տարբեր բանակներում:

18 Արոնց, Առաջնակ, 408 : Toumanoff 1963: 139.

19 Այս վերնագիրը վերջերս ճանաչվել է որպես հինգերորդ դարի վերջերին գրված և Փավստոս Բուլգանդին վերագրված, Յայոց պատմության վավերական վերնագիր, տես՝ Garsoian 1989, *Introduction*.

20 Բուլգանդ., V. 29 :

21 Օրինակ՝ Գրիգորի բոյ Յուսիկը անումացած էր ապագա քազավոր Տիրանի դասեր հետ, նրա որդիներ Պապն ու Աքանագինեսը՝ քագավորի քույրեր Կարագրությունի և Բամբիշի հետ (առանց նշելու քագավորի անունը) : Բուլգանդ. III.5 և 15 :

22 Ինչպես՝ Այրարատի, Բագրևանդի, Դարանաղի, Եկեղեց կամ Շոփի տիրույթները, տես՝ Բուլգանդ. IV.14 :

23 Garsoian, 1988-89.

24 Garsoian, Առաջնակ, և 1984-85.

րում և նստավայրերում: Այդպիսի հայրապետական «աթոռների» ներկայությունը կարելի է կրահել, օրինակ, արքունի «բուն բանակ» Շահապիվանում (Շաղկոտն գավառ), որտեղ Արշակը (350-367/8) սպանել է տալիս իր զարմիկ Գնելին այն պահին, երբ Ներսես հայրապետը (353-373) առավոտյան ժամերգությունն էր կատարում<sup>25</sup> Եկեղեց գավառի Խախ գյուղաքաղաքում, ուր Պապ թագավորը (370-374) պալատ ուներ և ուր սպանել տվեց նույն Ներսեսին<sup>26</sup> Բագրեանդի Բագավան քաղաքում, ուր Գրիգոր Լուսավորիչը Եկեղեցի էր հիմնել<sup>27</sup> և ուր տոնվում էր Յովհաննես Կարապետի ամենամյա տոնը արքայի, հայրապետի և նախարարների մասնակցությամբ<sup>28</sup> (տես կից քարտեզը): Ամենայն հավանականությամբ, դարձյալ այսպիսի մի «նստավայրում» պետք է տեղակայել Տիրան արքայի (338-350) և Յուսիկ Ա հայրապետի (341-347) միջադեպը, որը վերջինիս մահվան պատճառը դարձավ.

«Արդ հասեալ Տիրանայ ի գաւառն Ծոփաց, յիւրումն արքայական Եկեղեցւոցն կամնցաւ կանգնել զպատկերն: Զոր հափշտակեալ սրբոյ Յուսիկանն, եհան ի ծեռաց արքայի. Եւ ընկեցեալ յերկիր՝ կոխեալ մամրեաց...»<sup>29</sup>

**52**

Ըստ Բուզանդարանի՝ Յուսիկ հայրապետը Տիրանի հրամանով մահացու ծեծի է ենթարկվում, որովհետև արքային արգելել էր տոն օրը մուտք գործել Եկեղեցի՝ նրա արատների ու գործած հանցանքների պատճառով:<sup>30</sup> Դիպվածը պատահել է Բնարեղ ամրոցի «դրան Եկեղեցում» (տես կից քարտեզը): Դատելով պատմական մեկ այլ հիշատակությունից, որ կապված է Տիրանի հայր Խոսրովի անվան հետ, հավանաբար Ծոփքի նույն ամրոցում պետք է տեղակայել պատմվող միջադեպը.

« Եւ աստի դարձեալ յաշխարհն Ծոփաց՝ Բագարատ վկա հաստատուն առանց նախանձու լինի առ արքայի վասն Վահանայ քաջութեանցն եւ առաքինի դիպուածոցն»:<sup>31</sup>

Յարկ է նշել, որ վաղ շրջանի աղբյուրներում Եկեղեցիներին հաճախ ուղեկցող «մեծ» մակդիրը նպատակ ունի ոչ թե կարևորել նրանց ճարտարապետական չափերը, այլ ընդգծել նրանց հիերարխիական բարձր աստիճանը: 4-րդ դարի բյուզանդական կրոնական բառապաշտարում, որն ի սկզբանե լայն կիրառություն է գտել նաև հայ

<sup>25</sup> Բուզանդ. IV.15: 444 թ. այս վայրում գրւմարվել է Եկեղեցական մեծ ժողով:

<sup>26</sup> Ստեփաննու Տարօնացի (Ասողիկ), II.1 ; նաև՝ Բուզանդ. V.24 :

<sup>27</sup> Ազարանգեղոս, § 831, Յունական Վարք, 163 :

<sup>28</sup> Բուզանդ. IV.15 :

<sup>29</sup> Սովու Խորենացի, III.14 :

<sup>30</sup> Բուզանդ. III.12

<sup>31</sup> Սովու Խորենացի, III.9: Տես նաև Ստեփաննու Տարօնացի, II.1, 1859: 68 :

Եկեղեցու լեզվական դարձվածքներում, ուցիւ կկլիս...ա (մեծ Եկեղեցի) արտահայտությունը վերաբերում է Եպիսկոպոսական աթոռներին:<sup>32</sup> Այսպիսով, բացի Վաղարշապատի «մեծ Եկեղեցուց»<sup>33</sup>, հայտնի են նաև Աշտիշատի և Խոզանի «մեծ Եկեղեցիները».

«...երթեալ հասանէր Եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն Եկեղեցեացն Յայոց, որ էր յերկրին Տարօնու», այսինքն՝ Աշտիշատ:<sup>34</sup>

Իր ծեռնադրությունից հետո Արիստակեսը (320-327)` Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին և փոխանորդը, «շինեաց զմեծ Եկեղեցին յաշխարհին Ծոփաց ի գիւղաքաղաքն Խոզան»<sup>35</sup>:

Բացի այդ, աղբյուրները թույլ են տալիս ենթադրել, որ հայ Եկեղեցու առաջնորդները մշտապես չէին կենում արքունիքում և ամենակին էլ պարտադրված չէին անընդհատ ուղեկցել թագավորին իր չվերթերի ժամանակ:<sup>36</sup> Արքունիքի և արքայական ընտանիքի հոգևոր ծառայությունների համար կար հատուկ կցված մշտական Եպիսկոպոս:

«...սուրբ Գրիգորը հրամայեց, որ Աղքիոսը (իմա՝ Աղքիանոսը) միշտ թագաւորի մոտ լինի եւ իր՝ [Գիրգորի] տեղը գրավի մշտական քարոզության և վարդապետության համար...»<sup>37</sup>, «և զԱղքիանոս զայր ծշմարիտ եւ աստուածաւը վերակացու թողոյր արքունական դրան բանակին»:<sup>38</sup>

Նույն նպատակներով Եկեղեցական մեկ այլ տիտղոս էլ հաստատված կար՝ «դրան Երեց արքունի»:<sup>39</sup>

Դատելով աղբյուրներից՝ հայ հայրապետները արքաների օրինակով նստավայրեր ունեին սեփական տիրույթներում, որոնք ևս կարելի է համարել «ժամանակավոր մայր աթոռներ»:<sup>40</sup> Այսպես, Ծոփքի «մեծ Եկեղեցին» կառուցելուց հետո Արիստակեսը ամենայն հավանականությամբ այնտեղ կենում է մի որոշ ժամանակ.

«Որոյ լուեալ զանառակ զնացս Աղքելայոսի՝ Չորրորդ Յայոց իշխանի՝ յանդիմանէր զնա յանապազ: Եւ նորայ սպասեալ դիպոյ

32 Wipszycka 1994.

33 Դազար Փարպեցի, I.8 :

34 Բուգամիդ. III.3 :

35 Ստեփանոս Տարօնացի, II.1, 1859, 64 :

36 Garsolian ,1984-85.

37 Յում. Վարք, 172, «ձ կաὶ Ἀλβιον ἀεὶ συνεῖναι τῷ βασιλεῖ ἐπέταττεν ὁ ἄγιος Γρηγόριος, καὶ τὸν οἰκεῖον τόπον ἀναπληρῶσαι ἐν τῇ συνεχεῖ προσφωνήσει καὶ διδασκαλίᾳ. Ἡ Յερεն թաρզός.» Բարթիլյան 1966:

38 Ազարանգեղոս , § 846 :

39 Garsolian,1988-89.

40 Ինչպես օրինակ՝ Աշտիշատը Գրիգորյանների ընտանիքի համար և Մանազկերտը՝ Աղքիանոսյանների համար (Garsouian, Մույզը և 1999: 27 և 42) :

ժամու՝ եգիտ զուրբ հայրապետն Ռստակէս ի ճանապարհին Ծոփաց սուսերահար արարեալ՝ յերկիր ընկենոյ».<sup>41</sup>

« Եւ ի հասանել համբաւոյ վախճանի Տրդատոյ առ երանելի հայրապետն Վրթանէս ի Տարօն գաւառի յեկեղեցւոջն Աշտիշատի ի հսկման տօնի զատկին».<sup>42</sup>

Վրթանեսը (333-341) Գրիգորի ավագ որդին էր և հաջորդեց Եղբոր նահից հետո: Իսկ Աշտիշատի սուրբ Վայրերը Գրիգորյանների տոհմական ժառանգությունն էին: Աղբյուրները այս առիթով պատմում են, որ շրջակա լեռների հեթանոս բնակիչների մահացու սպառնալիքների պատճառով Վրթանեսը Աշտիշատից հեռացավ Եկեղեց ագ գավառի Թիլ ավանը<sup>43</sup>, որը նույնպես իր հողային տիրություններում էր գտնվում և հատկապես գետեղում էր Գրիգորյանների տոհմական դամբարանը:<sup>44</sup> Կարելի է ենթադրել, որ այստեղ ևս «մեծ Եկեղեցի» կար, որովհետև այս նույն ավանում հանդիպում ենք քորեպիսկոպոս Դանիելին՝ ամենայն հայոց Եկեղեցիների «հրամանատար տեսուչին»<sup>45</sup>, որն իր հսկողությանը Ենթակա Եկեղեցիների ստուգողական այցերի ժամանակ կենում էր միմիայն հայտնի սրբավայրերի «գլխավոր Եկեղեցիներում»<sup>46</sup>:

**54** Ենթադրաբար մեկ այլ «մեծ Եկեղեցի» պետք է լիներ նաև Թորդան քաղաքում (Դարանաղի), որտեղ գտնվում էին Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի գերեզմանները:<sup>47</sup> Բուզանդարանը տեղեկացնում է, որ այս վայրը Աշտիշատի, Վաղարշապատի և Բագավանի նման նույնպես կարևոր սրբավայրերից էր, որտեղ ամենամյա հիշտակի տոն էր կազմակերպվում Յայաստանի երկու «լուսավորիչների» պատվին.

«Քանզի այնպէս իսկ սովոր էին Եպիսկոպոսապետքն Յայոց, հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհայնումբ բազմութեամբ պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տե-

<sup>41</sup> Ստեփանոս Տարօնացի, II.1, 1859, 64: Տես նաև՝ Մովսէս Խորենացի, II.91: Նոյմիսկ եթէ 536 թ. վարչական բանանոմից հետո գրյացած Զորորոր Յայաստանի ժամանակավեպ հիշտակելությունը կասկած տակ է դնում Արխանակեսի սպանությունը մկարագրված հանգամանքներում (տես՝ **Garsoian**, 1989, 25, գլ. III.2, ծանոթ. 6 և էջ 351), զրա «խոստովանական» մահը Ծոփում հաստատում է նաև Բուզանդարանը (III.2):

<sup>42</sup> Ստեփանոս Տարօնացի, նոյմը, 65: Զատկի տոնը ևս հիշտակում է Բուզանդարանը, ավելի մանրամասն տեղեկացնելով, որ այդ օրը Ավագ ուրբարն էր՝ Խաչելության օրը (III.3). «Սա երթեալ կատարել ամոց, ըստ հանսապազ սովորութեամբ, զՏեառն զիաշական զիրութեանն զաւառազն գոհութեան՝ զհաղողութիւն չարչարանաց յիշտակի»: Մովսէս Խորենացին (III.2) նշում է, որ Վրթանեսը գտնվում էր «ի վկայարանի սրբոց Յովիանու, որ ի հօդ նորին շննեալ էր ի Տարօն»: Տես նաև Յովիաննես Դասիանակերպոց, գլ. 10 :

<sup>43</sup> Նոյմ տեղում :

<sup>44</sup> Բուզանդ. III.2, V.24 ; **Garsoian** 1989: 461 :

<sup>45</sup> Բուզանդ. III.14 :

<sup>46</sup> Նոյմ տեղում :

<sup>47</sup> Նոյմը, III.3 :

ղիք պատկերաց կրոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեան, եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: Սանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ:<sup>48</sup> (...) որպէս ի Դարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորդանու պատուին վասն զերեզմանացն հայրապետին Գրիգորի: Սոյնապէս եւ զյիշատակս թագաւորին Տրդատայ (...) սոյնապէս եւ ի գաւառն Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն եւ Յոհիվսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն, սոյնապէս առաւել եւ զնախեկեղեցին».<sup>49</sup>

« Եւ յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովաննու, որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալ էին, եւ բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զիսար...».<sup>50</sup>

Չնայած Բուզանդարանը քանիցս նշում է Աշտիշատի եկեղեցու առաջնայնությունը,<sup>51</sup> որին մեծարում է «մեծ, առաջին, մայր եկեղեցեաց» մակդիրներով, և որտեղ կար եպիսկոպոսական պալատ («եպիսկոպոսանոց»),<sup>52</sup> այս կացարանը երբեք մշտական աթոռանիստ չի եղել:<sup>53</sup> Յայրապետները այստեղ գալիս էին միայն ամենաճյա մեծ տոնակատարությունների առիթով,<sup>54</sup> կամ եկեղեցական ժողով գումարելու<sup>55</sup>, կամ ել իրենց կալվածքների հերթական ստուգողական այցերի առիթով:<sup>56</sup>

Ասվածից կարելի է եզրակացնել, որ 4-րդ դարում Յայաստանուն կրոնական կյանքը պտտվում էր մի քանի մեծ սրբավայրերի շուրջ, գրեթե բոլորն էլ նախկին հեթանոսական սրբատեղիներ՝<sup>57</sup>

48 Նույն տեղում :

49 Նույնը, III.14 :

50 Նույնը, IV.15 :

51 Նույնը, III.3, 14, 19, IV.4, 14 :

52 Նույնը, III.19, IV.14 ; **Garsoian**, 1984-85, ծանոթ. 90 :

53 **Garsoian**, 1999: 104, ծանոթ. 199.

54 Բուզանդ. III.3 :

55 Նույնը, IV.4 :

56 Նույնը, IV.14 :

57 Տե՛ս Բուզանդ. III.3 : Ազարանգեղոսք հայտնում է տասը կարևոր սրբարանների մասին (ուր՝ ըստ Carrére A, *Les huit sanctuaires de l'Arménie payenne*, Paris 1899), որոնք նմիրված էին տարբեր աստվածությունների և տեղակայված յոթ վայութում, որտեղ Գրիգորը կուրքերը տապալելուց հետո կանգնեցնում է խաչեր՝ դրանք քրիստոնեացներու նպատակներ: Դրանց թվում են Ամահիսի (Արտեմիս) և Տիրի (Յերեսն կամ Ապոլլոն) դիեր՝ Արտաշատում, Բարչամինը՝ Թորդանում, Նանեմ՝ Թիլում, Կահազնը (Յերակլես), Աստղիկը (Աֆրոդիտե) և Անահիտը՝ Աշտիշառում (անս Carrére, *Անյմը*, և Thomson 1976: xl: Մենք կավեացնեմք այս ցուցակին նաև Բագավանը, որի պարբռական ամվանումը ցուցանում է սրբավայր: Ըստ Ազարանգեղոսքի՝ այստեղ էին գտնվում Վանատուրի և Ամանորի դիցարանները, որոնց տոնն նավասարդի օրը Գրիգոր Լուսավորիչը փոխարիմնել է Յովիաննես Սկրտչի և Արանագինես վկայի հիշատակի տոներով:

որոնք իրենց ճարտարապետական համալիրում ներգրավում էին մեկ «մեծ եկեղեցի» և մի քանի վկայարաններ կամ հիշատակարան կառույցներ: Այս համալիրները միաժամանակ ծառայում էին որպես հայրապետական «աթոռներ», վանական, հոգևոր և մշակութային կենտրոններ և սուրբ ուխտատեղիներ: Որպես կանոն, այս սրբատեղիները գտնվում էին Գրիգորյանների հողային տիրույթներում:

Նույնը նկատելի է նաև հայ հայրապետների օժման պարագայում: Եպիսկոպոսի օծումը բաղկացած է երկու արարողությունից. ձեռնադրություն և գահակալություն: Ձեռնադրման ծեսից հետո նորոնծա եպիսկոպոսին նստեցնում են իր հոգևոր իշխանության գահին:<sup>58</sup> Նախքան Կապաղովկիայի եկեղեցու հետ նվիրապետական կապի խզումը, որ տեղի ունեցավ 4-րդ դարի վերջին, հայ հայրապետական աթոռի թեկնածուները ձեռնադրությունը ստանում էին Կեսարիայում, իսկ աթոռակալության հանդիսավոր արարողությունը տեղի էր ունենում հայրենիք վերադարձից հետո:<sup>59</sup> Սա տեղի է ունեցել ոչ միայն Գրիգոր Լուսավորչի պարագայում<sup>60</sup>, այլ, դատելով տեքստերի վերլուծությունից՝ նաև նրա որդիներ Արիստակեսի և Վրթանեսի<sup>61</sup>, թոռան՝ Յուսիկի և ծոռան՝ Ներսեսի դեպքում<sup>62</sup>, ինչպես նաև Աղքահանոսների տոհմի ներկայացուցիչներ Փառենի (348-352) և Շահակի (352-353) դեպքում<sup>63</sup>:

56

Այս հանդիսությունները նկարագրող հատվածների համեմատությունը երևան է հանում լեզվական արտահայտությունների և արարողակարգի ընթացքի անփոփոխ կրկնություն, որ թույլ է տալիս կրահել հաստատված ավանդույթի գոյությունը:<sup>64</sup> «Ըստ սովորութեան օրինակին», ինչպես նշում է Բուզանդարանը<sup>65</sup>, նախ գումարվում է ընդհանուր հավաք՝ «աշխարհաժողով», կազմված բնակչության բոլոր շերտերի ներկայացուցիչներից, որոնք ընտրում կամ հաստատում են թեկնածուին: Վերջինս ուղարկվում է Կապաղովկիայի Կեսարիա քաղաքը՝ արքայական կառքում բազմած («յարքունական կառան»), նախարարական շքախմբի ուղեկցությամբ և բազում նվերներով՝ ձեռքին ունենալով թագավորի նամակը: Այնտեղ կատարվում է օժման առաջին արարը՝ ձեռնադրությունը.

«Գնացին եկին հասին ի քաղաքն կեսարացւց. ետուն ի կաթո-

58 Տես Անանեան ,1959-60 :

59 Նույն տեղում :

60 Նույն տեղում : Տես նաև Ազարամզեղոս « 805 և 3ուն. վարք 145 և 158 :

61 Համեմատել՝ Ազարամզեղոս § 860-62 և 3ուն. վարք 195-98 :

62 Բուզանդ. III.12 և IV.4 :

63 Նույնը, III.16 և 17 :

64 Տես նաև Garsoian 1985(IX) :

65 Բուզանդ, III.12

*ղիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել»:<sup>66</sup>*

*«...առին գնացին զՓառեն սուրբ ի մայրաքաղաքն Գամրաց Կեսարիա, եւ անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Յայոց Մեծաց»:<sup>67</sup>*

*«... եւ յուղարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա: Անդ ձեռնադրեն զՃահակն ի կաթողիկոսութիւն Յայոց Մեծաց...»:<sup>68</sup>*

*«...զնոսա զամենեսին կազմեցին եւ արձակեցին բազում ընծայիք եւ մեծամեծ պատարագօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եսերիոս յերկիրն Գամրաց, եւ ի մայր քաղաքացն նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Յայոց Մեծաց»:<sup>69</sup>*

Կրկին, ըստ տեքստերի համեմատության, վերադարձի ճանապարհին նախարարները բանբեր են ուղարկում արքային ծանուցելու համար: Վերջինս իր ողջ շքախմբով մեկնում է տվյալ պահի իր նստավայրից՝ վերադարձողներին դիմավորելու նպատակով երբեմն երկար ճանապարհ կտրելով: Յանդիպման ողջույնը կատարելուց հետո, որը թվում է՝ նույնպես պաշտոնական արարողության բնույթ ունի, բոլոր միասին վերադառնում են՝ օժնան երկրորդ արարը կատարելու. տեքստերում «հայրապետական աթոռին նստաւ», «հաջորդեց հայրապետների տեղին» արտահայտություններն անմիջապես հետևում են հանդիպման դրվագին: Սակայն քանի որ արքաները, ըստ սովորության, հաճախ էին տեղաշարժվում իրենց տիրույթներով, պետք է ենթադրել, որ բանբերները ամեն անգամ նրանց գտնում էին տարբեր նստավայրերում: Ահա թե ինչու պատվիրակության և արքայի հանդիպումներն ամեն անգամ տարբեր վայրերում էին պատահում, բայց միշտ Յայաստանի քաղաքներն իրար կապող մեծ ճանապարհների եզրերին (տե՛ս նշված հանդիպման վայրերն ու կտրած ճանապարհները կից քարտեզում): Տեքստերի ընթերցումից հստակ տպավորություն է ստեղծվում, որ բանբերն ուղարկվում է մինչև Յայաստանի սահմանին հասնելը, և նորընծա հայրապետի շքախումբը ամեն անգամ ընտրում է այն ուղղությունը, որ տանում է դեպի տվյալ պահին արքայի գտնվելու նստավայրը: Ավելին, կարելի է նույնիսկ պնդել, որ նայած վերադարձի բռնած ուղուն, զահին նստեցնելու արարողությունն էլ կատարվում է կամ տվյալ արքայանիստների «մեծ եկեղեցիներում» կամ էլ դրանց հարևանությամբ գտնվող հայրապետական տիրույթների «մայր աթոռներում»:


57

<sup>66</sup> Նույն տեղում :

<sup>67</sup> Նույնը, III.16 :

<sup>68</sup> Նույնը, III.17 :

<sup>69</sup> Նույնը, IV.4 :



Յունական վարքը հստակ չի նշում, թե որտեղ է կայացել Տրդատի և Գրիգորի հանդիպումը, բայց տեղեկացնում է, որ Գրիգորը «նստում» է Աշտիշատի եկեղեցու «առաքելական մայր աթոռին»:<sup>70</sup> Յամապատասխան պարբերության մեջ Ազարանգեղոսը չունի այս տեղեկությունը<sup>71</sup>, դրա փոխարեն մանրամասնորեն նկարագրում է նրանց հանդիպումը Բագավանում՝ հայերի մկրտության ավանդական վայրում.

«Լուաւ ապա մեծ թագաւորն Տրդատ, եթէ Գրիգոր եկեալ հասեալ է յերկիրս Յայց: Առ զօրս իւր և զԱշխեն տիկին եւ զքոյրն իւր զ ուրովիդուխտ, եւ չու արարեալ յԱյրարատեան գաւառէն, ի Վաղարշապատ քաղաքէ, ընդ առաջ Գրիգորի, գայր հասանէր ի քաղաքեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթևարէն լեզուէն՝ Դիցաւան (...) Ապա գայր հասանէր (Գրիգոր) յանուանեալ Դիցաւանն ամենայն մեծամեծօքն և զօրօքն եւ աշխարհակոյտ ամբոխիւն (...) Երանելի եափսկոպոսն (...) գայր հասանէր առ ստորոտով Նպատական լերին: Ընդ առաջ ելանէր նմա թագաւորն ամենայն զօրօքն համդերձ, առ ափն Եփրատ գետոյն, որ եւ ընդ պատահելն իսկ լի առնէր զամենեսեան ողջունի Աւետարանին Քրիստոսի, եվ թագում ցմծութեամբ եվ ուրախութեամբ յաւանն դառնային»:<sup>72</sup>

Շարադրանքից պետք է եզրակացնել, թե «յավանն դառնային» վերաբերում է Բագավանին, և թե Գրիգորի գահակալության արարողությունը տեղի է ունեցել այստեղ: Սակայն պարբերության մեջ նկատելի է աշխարհագրական թյուրիմացություն: Եթե Գրիգորը եկել հասել էր Բագավան, ինչպես և թագավորը, վերջինս չէր կարող «ընդառաջ գնալ» Գրիգորին և նրան հանդիպել Եփրատի ափին, քանի որ գետը անցնում է Բագավանի հյուսիսով, և արքան, ուրեմն, պետք է «ետ գնար»: Միևնույն ժամանակ, Նպատ լեռը գտնվում է Աշտիշատը և Բագավանը կապող ճանապարհի մոտ, երկուսից գրեթե նույն հեռավորության վրա: Թվում է, թե Ազարանգեղոսը միտումնավոր փոփոխել է պատմական տեղեկությունը՝ աթոռակալությունը Բագավանում գետեղելու և Աշտիշատը չնշելու համար:<sup>73</sup>

Յուսիկի շքախումբը հասնում է Այրարատ գավառը, որտեղ պետք է այդ պահին գտնվեր Տիրան թագավորը: Նախապես բանբերներից ստանալով նորընծա հայրապետի ժամանելու լուրը՝ ար-

59

70 Յուն. Վարք, 158. « ձ էնթրոնասթեὶς և լαβὼν τὸν ἀποστολικὸν θρόνον».

71 Ազարանգեղոս § 814: Միա փոխարեն նա մի քանի պարբերություն հետո նկարագրում է Կաղարշապատի կարողիկն եկեղեցու կառուցումը, որ Գրիգորի տեսիլքում անվանված է «աթոռ թահանայապետութեան» (§ 745):

72 Ազարանգեղոս § 817-19 :

73 Երկու քաղաքների մրցակցության համար տես ստորև՝ ծանոթ. 140: Այս դիտարկումը բացակայում է հոդվածի ֆրանսերեն տարբերակում:

քան «ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամենայն բանակօքն բազմութեամբք: Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յԵկեղեցին դառնային. Եւ նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոր հայրապետական»:<sup>74</sup>

Բուզանդարանը չի տեղեկացնում, թե որտեղ է գահ բարձրացել Ներսես հայրապետը, սակայն նշում է, որ Արշակ թագավորի հետ հանդիպումը կայացել է Առևէ (Առյուծ) լեռան վրա. «Եւ Եկին հասին նոքա մեծապարծ Երևելի հոգևորազգեաց փառօք ի Յայաստան երկիրն. Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեռան, որ անուանեալ կոչի Առևէ: Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրինութեամբ ողջունիւմ, անդուստ յաշխարհն դարձան»:<sup>75</sup>

60

Այս լեռան ճշգրիտ տեղանքը հայտնի չէ: Յամաձայն Բուզանդարանի՝ այն գտնվում էր Երեզի Անահիտ դիցուիու սրբավայրի մոտ, Եկեղեց գավառում:<sup>76</sup> Քարտեզագետներն այն տեղակայում են այս գավառի սահմաններին կից, կամ հարավ կամ արևամուտք՝ Աղիւն կոչվող տիրություն, որ հայտնի է նաև Առևէ անվամբ<sup>77</sup> (տե՛ս կից քարտեզը): Ինչպես և մյուս բոլոր դեպքերում այս լեռը Ենթադրաբար պետք է որ հեռու չլիներ մեծ ճանապարհից, այս դեպքում դեպի Սատաղ քաղաքի ուղղությամբ, որը Յայաստանի քաղաքները Կապաղովկիայի, Կեսարիայի հետ կապող բանուկ ճանապարհի առաջին սահմանագլխային կայանն է:<sup>78</sup> Այս պարագայում կարելի է Ենթադրել, որ ուղարկված բանբերը պետք է Արշակին գտած լիներ շրջակայքում գտնվող իր նստավայրերից մեկում, օրինակ՝ Խախուն, և Ներսեսի գահադրությունը կատարված լիներ Գրիգորյանների տոհմին պատկանող Թիլի կամ Թորդանի «մեծ Եկեղեցում» կամ էլ հենց Խախի «մեծ Եկեղեցում»:

Այսպիսով, կարող ենք Եզրակացնել, որ Յայ Եկեղեցու հիմնադիրներն ու նրանց անմիջական փոխարինողները կրկին առաջնորդվել են տեղական սովորությունը՝ աշխարհիկ իշխանների

<sup>74</sup> Բուզանդ. III.12: Ըստ Վան Էսբրուկի (Van Esbroeck, Revue des Etudes Arméniennes, 9, 241-284)՝ IV դարում գոյություն ուներ Երկու հայրապետական աթոռ՝ Թաղւան առաջալինը Աշտիշատում և Գրիգոր Լուսավորչինը Վաղարշապատում, որոնք միավորվեցին Յուսիկի ծեննադրմամբ: Սակայն, չնայած աղբյուրը ըստ ամենայն բավական հարազան ներկայացնում է Յուսիկի գահ բարձրանալու իրական արարողությունը Կրտաշատի մայր Եկեղեցում, այնուամենամեծի, կարծում ենք, որ «հայրապետական արորին նատել» արտահայտությունն այստեղ աւելի շուտ խորհրդանշական ինձաստ ունի և կապված չէ որևէ կոնկրետ Եկեղեցու հետ:

<sup>75</sup> Բուզանդ. IV.4 :

<sup>76</sup> Նույնը, V.25 :

<sup>77</sup> Յայ տեղանուն. բառ. Երևան, 1986-2001, հատ. I, էջ 328, Garsoian 1989: 489-90 :

<sup>78</sup> Մամանյան, 1936: 18, 1965: 79, 86, 91-95, Garsoian 1989, 489-90: Յայաստանի աշխարհագրական քարտեզի վրա այս վայրում մոտ 2000 մ բարձունք է նշված, որ կարող է Առևէ լեռը լինել:

օրինակով որդեգրելով հոգևոր առաջնորդության՝ Եպիսկոպոսության «շրջիկ» սկզբունքը: Սակայն այսօր այլևս ապացուցման ենթակա չէ այս պնդումը, որ այդ ժամանակաշրջանի հայ հասարակությունը խորապես կրում էր իրանական մշակույթի ազդեցությունը:<sup>79</sup> Պատկանելով Արշակունիների պարթևական դինաստիայի կրտսեր ճյուղին՝ հայ թագավորները շարունակում էին պահպանել իրենց նախնիների սովորույթները, որոնցով ապրում էին նաև երկրի մյուս մեծ նախարարական ընտանիքները:<sup>80</sup> Յաշվի առնելով այս հանգանքը՝ հայ Եկեղեցական կյանքը, որ լայնորեն կազմակերպվել էր այս սովորույթների համաձայն, պետք է ևս ընդգծված պարթևական գունավորում ունենար, որի ակնհայտ արտացոլումներից կարելի է համարել նաև «հայրապետական աթոռի» շրջիկ ընկալումը:

Սակայն պարթևական ազդեցությունը հայ Եկեղեցու վրա ներգործություն է ունեցել ոչ միայն աշխարհիկ հասարակության սովորույթների որդեգրման միջոցով, այլ նաև մինչև քրիստոնեության ընդունումը Յայաստանում գործող հոգևոր քրմական համակարգի անմիջական ժառանգության փոխանցմանը:

Առայժմ պատմական արժեք ունեցող շատ քիչ տեղեկություններ են մեզ հայտնի նախաքրիստոնեական Յայաստանի քրմական կաստայի մասին: Դրա փոխարեն հայ Եկեղեցական ինստիտուտի և նրան ժամանակակից իրանական հոգևոր-քրմական դասի տարբեր ասպեկտների միջև համեմատությունները ակնհայտ զուգահեռներ են երևան հանում:<sup>81</sup> Ծիշտ է, այդ համեմատության համար հայկական օրինակների հղումները Սասանյան Իրանում փնտրելու մեր փորձը ժամանակավորեպության վտանգ է պարունակում, մանականդ եթե հաշվի առնենք, որ Սասանյանների դինաստիան, իշխանության գալով, պետք է որ նշանակալի փոփոխություններ ներմուծած լիներ հասարակության նախկին կառուցվածքում:<sup>82</sup> Սակայն Իրանում ծավալվող քաղաքական զարգացումները, որոնք միտված էին պետության կենտրոնացմանը և հոգևոր-քրմական ինստիտուտին «պետական մարմնի» ստատուսի շնորհմանը, իրականում միայն մասնակի փոփոխություններ են կատարել այդ հասարակարգում, որը մեծավ մասամբ շարունակում էր պահպանել նախկին պարթևական ավանդույթները:<sup>83</sup> Սասանյան շահնշահերը, ինչպես և հայոց արքաները, ապրում էին նույն պարթևական կենսաձևով, որ

79 Garsoian 1985(X & XII), 1989, 51-55 և 1997a.

80 Christensen, 1936, 18-23.

81 Garsoian 1989, 53-54.

82 Christensen ,1936, 92-93.

83 Նույնը, 89, 93-107 :

ընթանում էր որսավայրերում կառուցված «դրախտներում»<sup>84</sup> կամ «բանակներում»: Պետական գործերից զատ և խաղաղ ժամանակներում նրանց նախընտրած զբաղմունքը որսն էին և խնջույքը, որոնք նաև համարվում էին ազնվականության չափանիշ և խորհրդանիշ: Սասանյան կայսրության քաղաքական համակարգի հիմքում ընկած յուրահատուկ երկվության պատճառը պարթևական կայսրությանը բնորոշ ազգային քաղաքականության և սոցիալական բաժանման միջև եղած հակասությունն էր: Սասանյան շրջանի հոգևոր դասի ներկայացուցիչների տիտղոսներն ու պաշտոնները, նրանց հարաբերություններն արքունիքի հետ, նրանց նվիրապետական կարգը, նրանց կենսաձևն ու ծիսական ավանդույթների շատ մանրամասներ սերում էին նախկին պարթևական շրջանից:<sup>85</sup> Օրինակ՝ Իրանում քրմերն ընտրվում էին միմիայն մոգերի ցեղից, որոնց տոհմածառը չէր զիջում մեծ ազնվական ընտանիքներին:<sup>86</sup> Հայաստանում, ինչպես արդեն Նշեցինք, ոչ միայն հայրապետական պատիվը Գրիգորյանների ընտանիքի ժառանգական սեփականությունն էր, այլև, երբ վերջինս չէր կարողանում թեկնածու ապահովել, աթոռ էր բարձրանում մեկ այլ ավանդական ընտանիքի ներկայացուցիչ, որի նախնիները սերում էին նախկին քրմական ցեղից: Հայ աղբյուրները Գրիգոր Լուսավորչին վերագրում են պարթևական բարձր ազնվական ծագում<sup>87</sup> և պատմում, որ նրա թոռան թոռ Սահակը մեծագույն պատիվներով ընդունելություն գտավ Շապուհ Գ (383-388) շահնշահի կողմից, որովհետև սերում էր Սուրեն Պահլավների մեծ ու հզոր ընտանիքից:<sup>88</sup>

«Քահանայապետ», «կաթողիկոսաց կաթողիկոս» կամ խառնածին «Եպիսկոպոսապետ» կոչումները, որոնցով հայ առաջին աղբյուրները մեծարում են հայ հայրապետներին և Կեսարիայի Եպիսկոպոսին, ակնհայտորեն կրում են իրամական «մոգպետաց մոգպետ» (mōbadhān mōbadh)տերմինի ազդեցությունը: Ըստ ամենայնի, բնական զուգահեռ է անցկացվել քրմական բարձր դասի ներկայացուցիչներ և իրամական գավառների հոգևոր առաջնորդ-

<sup>84</sup> Այս առումով տեղին է հիշել Ղազար Փարպեցու «Նամակում» հիշատակված «Սեւկոյ դրախտը», որի ինքնության շուրջ բանավիճել են հայագետները (տես հրատ., աշխարհ. թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբարյան, Երևան, 1982 թ., Թուղթ, էջ 518, ծանոթ. 27: Մեզ թվում է, որ դա պարսկական «որսադրախտների», այսինքն՝ որսավայրերում կառուցված պալատական հատուկ օճի համալիրների օրինակով եղած վայր պետք է լինի՝ «Սեւկոյ դրախտ» անունով:

<sup>85</sup> Տես Christensen, Առյումը, 112-16 :

<sup>86</sup> Առյումը, 111 :

<sup>87</sup> Ազարանգեղոս, § 25-37 , Սովետ Խորենացի, II. 28, 68, 74 և 91:

<sup>88</sup> Ղազար Փարպ., I.14, Սովետ Խորենացի, III.51 ; Thomson 1976: Iviii. Խորենացին, շփոթելով Շահպուր (Շապուհ) Բ և Շահպուր Գ գահակալության տարիները, այս դրվագը թվագրում է Արտաշիր Բ (379-383) օրոր, Mahé 1993, գլ. III.50, էջ 405, ծանոթ. 3 :

ներ «մոգաբետների» և քրիստոնեական «Եպիսկոպոսների» կարգավիճակի ու գործառույթների միջև։ Այս ենթադրությունը առավել կարևորվում է նրանով, որ մոգաբետները, ինչպես և հայ Եպիսկոպոսները<sup>89</sup>, նույնպես կրում էին իրենց գավառի կամ այդ գավառի տեր ընտանիքի անունը։ Յայտնի են, օրինակ՝ Փափագ, Խոսրով-Շահ-Որմիզդի մոգաբետ, Վեղահ-Շահպուր, Արտաշիր-Վարեհի մոգաբետ կամ Բաֆարագ, Մեշանի մոգաբետ։<sup>90</sup>

Իրանում տաճարների աստվածային ծեսերը գլխավորում էր առանձին դաս՝ «հերպատները» (*herbadh*), որոնք ունեին իրենց առաջնորդը՝ «հերպատաց հերպատ» (*hērbadhān herbadh*)։ Վերջինս իրականացնում էր իրավադատական գործառույթները և տաճարների հսկողությունը։ Այս պաշտոնը Յայտանում կարելի է համեմատել վերոնշյալ քորեպիսկոպոս Դանիելին հանձնված ծառայությունների հետ, որը՝

«վերակացու եւ գլխաւոր Եկեղեցեացն նահանգին Տարօնոյ՝ Գրիգորի ծեռական իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ուներ զիշխանութիւնն զայն առանձինն. այլ վերակացու եւ իրամանատար տեսուչ եւ հոգաբարձու ամենայն Եկեղեցեացն Յայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս»։<sup>91</sup>

«Գործակալութիւն մեծի դատաւարութեանն» արտահայտությունը, ինչպես նաև «իրամանատար» կոչումը բավական անսովոր են հնչում քրիստոնեական ենթատեքստում։ Դրա փոխարեն դրանք զրադաշտական տիտղոսների համապատասխան ճշգրիտ թարգմանություններն են։<sup>92</sup> Մեկ այլ հոգևոր կոչում, որ հայ Եկեղեցին ժառանգել է իրանական համապատասխան ինստիտուտից, «Վարդապետ» տիտղոսն է (*vardabādh* նշանակում է հոգևոր վարժանքների կամ խոսքի, ուսմունքի ուսուցիչ, վարժապետ<sup>93</sup>)։ Սա IV-V դարերի ողջ քրիստոնեական աշխարհում եղակի, համարժեք չունեցող կոչում է<sup>94</sup>, որ սկզբնական շրջանում Եկեղեցու ներկայացուցիչներին տրվում էր ավելի շուտ իրենց հոգևոր բարձրագույն ունակությունների և շնորհների համար, քան որպես զուտ նվիրապետական աստիճան։ Այն ասցացվում է հոգևոր կրթության, աստվածաբանների և վանահայրերի հետ։<sup>95</sup>

89 Տես վերևում, ծանոթ. 9 :

90 Անումնների համար տես Christensen ,1936, 112 :

91 Բուզամդ. III.14 :

92 Տես Garsoian 1985(IV) և 1989, մեկնություն գլ.13, ծանոթ. 24 և III.14, ծանոթ. 4 :

93 Երկու մեկնաբանությունների համար տես Revue des Etudes Arménientes IX (a. s.) 1929, էջ 1-3 (Alphonse) և 10 (Benveniste):

94 Thomson 1962.

95 Նույն տեղում :

Մոգպետաց մոգպետը ոչ միայն երկրի ողջ հոգևոր գործերի գերագույն դեկավարն էր, այլև արքայի աստվածաբանական խորհրդատուն, բարոյական ուղեցույցը, հոգևոր դաստիարակն ու տնօրենը:<sup>96</sup> Ըստ միապետության մասին իրանական աստվածաբանական և բարոյական ընկալման՝ արքայի ձախողակությունը կամ նրան պատահող փորձանքները կարող են այն բանի արդյունքը լինել, որ նա չի հետևում գերագույն քրմի խորհուրդներին և ցույց տված ուղուն:<sup>97</sup> Բուզանդարանում կան տարբեր հատվածներ, ուր հայրապետները, հատկապես Գրիգոր Լուսավորչի սերնդի ներկայացուցիչները, անհանգստանում են հայ արքաների վարքի համար և մտահոգ են նրանց քրիստոնեական դաստիարակություն ներարկելու, ավետարանական խոսքն ուսուցանելու համար։ Նրանք անմիջապես միջամտում են, երբ արքաները բարոյական վարքի շեղումներ են ցուցաբերում։ Որպես օրինակ կարելի է բերել Յուսիկի և Տիրանի հարաբերությունները։

«Իսկ թագաւորն Տիրան եւ այլ մեծամեծ աւագանին նախարարացն կամ աշխարհն ամենայն ոչ ինչ ըստ աստուծոյ կամացն վարս յանձն առեալ (…). Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լիներ երանելի հայրապետն Յուսիկն, վարժ բանիւքն համեստութեան քրիստոսական խրատուն, հանապազ յերեսսն յանդիմանութեամբ հարկանելով, խրատելով, կշտամբելով արկանէր (…). արգելոյր զթագաւորն եւ զմեծամեծն չտալ թոյլ զմտանել յեկեղեցին»։<sup>98</sup>

Կամ ասենք՝ Ներսես մեծի հարաբերությունը Արշակի, ապա նրա որդու՝ Պապի հետ։

«… Եւ որ այժմ դեռ մեւք ընդ քեզ խոսի, լուր Քրիստոսի, զի մի կորիցես դու. գուցե անկեալ ի թագաւորութենեղ քումնէ, կենդանւոյն միայն շրջիցիս, եւ ոչ ոք քեզ օգնիցէ։ Այլ այժմ լուր Քրիստոսի, և խնայեայ յանձն քո, մի հեղուլ զարին եղօր քո հարազատի…»։<sup>99</sup>

«Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Յայոց հանապազոր ընդդիմացեալ թագաւորին Պապայ, կշտամբէր եւ հանդիմանէր մեծաւ վկայութեամբ յանդիմանութեամբ։ Եւ վասն չարեաց նորայ բազմաց ոչ համարձակէր նմա զսեամս եկեղեցոյն կոխել, եւ ոչ մտանել նմա ի ներքս։ Յանապազ կշտամբեալ յանդիմանէր եւ խրատէր, զի գոտէ զանձն իւր ի կորստենէ գործոց իւրոց։ Եւ հանապազ խօսէր ընդ նմա, զի փոյթ արասցէ ապաշխարութեան»։<sup>100</sup>

<sup>96</sup> Christensen, Առյնը, 113 :

<sup>97</sup> Նոյմ տեղում :

<sup>98</sup> Բուզանդ., III.12 :

<sup>99</sup> Նոյմը, IV.15 :

<sup>100</sup> Նոյմը, V.23, տես նաև V.4 :

Տեսնելով, որ Արշակ թագավորը չի պատրաստվում հետևել իր խորհրդին, Ներսես Մեծը «կանխագուշակում է» նրա մոտալուտ կործանումը, ինչպես նաև նրա ընտանիքի անկումը<sup>101</sup>, որը նույնպես ուղղակի աղերս ունի միապետության իրանական ընկալման հետ: Ծիշտ է, պատմիչի նկարագրած այս «բարոյական բախումների» ետևում, որոնց համար նշված հայրապետները վճարել են կյանքով, մասնագետները իրավացիրեն տեսնում են լուրջ տարածայնություններ՝ նիկեական ուղղափառությանը հավատարիմ հայրապետների և բյուզանդական կայսրերի դավանական կողմնորոշումներին հարիր խուսավարող արքաների միջև:<sup>102</sup> Այնուամենայնիվ, այս բախումների նկարագրությունը, արքաների գործերին հայրապետների միջամտության ձևը, ուղղակի մեջբերմամբ նրանց վերագրված երկար դաստիարակչական ժառերը թույլ են տալիս եզրակացնել, որ աշխարհիկ և հոգևոր առաջնորդների միջև այս բարոյական հարաբերությունը բավականաչափ ինստիտուցիոնալիզացված և հաստատված ավանդույթի բնույթ ուներ:

Մոգպետաց մոգպետների մասին գոյություն ունեցող տեղեկությունները թույլ չեն տալիս միանշանակ պնդելու, որ 4-րդ դարի հայ հայրապետները նրանց օրինակին են հետևել շրջիկ «մայր արուների» երևույթի ընդունման դեպքում ևս: Սակայն դատելով ամենայնից՝ իրանական հոգևոր առաջնորդները ևս մշտական չեն կենում արքայական քաղաքում՝ շահաստանում՝ հոչակված որպես նրանց միակ նստավայրը: Նրանք վայելում էին լայն անկախություն և ինքնուրույնություն, ունեին բազմաթիվ պալատներ իրենց պատկանող հողային տիրույթներում,<sup>103</sup> և չնայած արքունիքի անդամ էին համարվում՝ բոլորովին ստիպված չեն մշտական կենալ արքայի կողքին (բացի, իհարկե, պատերազմի ժամանակ):<sup>104</sup>:

387 թվականին<sup>105</sup> Հայաստանի բաժանումը իրանական և բյուզանդական կայսրությունների միջև քաղաքական և կրոնական խոր ճգնաժամի պատճառ դարձավ երկրում: Տարածքների մեծ բաժինը անցավ պարսիկների իշխանության տակ: Այլևս պարսիկների անմիջական հպատակությանը ենթակա հայերի համար հավատարմության օրենքները փոխվեցին, և հակառակորդ կայսրության հետ շփ-

101 Առյ. IV.15 :

102 Garsoian 1967b, 1985(IX) և 1999, 38.

103 Ամիանոս Սարսելինու, XXIII, 6.35 , Christensen ,1936, 112 :

104 Encycl. de l'Islame, Nouvelle éd, Leiden-New York-Paris, v. VII, tց 216.

105 Այս տարեթիվը, որպես ամենահավանականը, տես Blockley R.C., Historia 36/2 (1987), էջ 222-234 : Ըստ Լաբուրի (Labourt 1904: 84)` համաձայնագիրն առավել ամրապնդեց 388 թ.` Կահրամ Դ Կրմանշահի թագաղությունից հետո, Garsoian 1999, 45 :

ման կամ համագործակցության ցանկացած փորձ կասկածելի էր համարվում:<sup>106</sup> Յունալեզոր քրիստոնեության և Յամընդհանուր Եկեղեցու մայր կենտրոնների հետ կապը սպառնում էր խսպառ դադարել<sup>107</sup>, ինչպես խզվել էր նվիրապետական և դավանական կապը Կապադովկիայի հետ<sup>108</sup>: Նույնիսկ եթե բաժանմանը անմիջապես հետևած շրջանում պարսից արքաները բարյացակամ էին տրամադրված իրենց տերության հապատակ քրիստոնյաների նկատմամբ<sup>109</sup>, միևնույն է, նրանք ոչ պակաս ջանքեր էին գործադրում Յայաստանը պարսկացնելու<sup>110</sup> և պայմաններ ստեղծելու՝ կամոք թե բռնի՝ զրադաշտականություն ընդունելու համար<sup>111</sup>: ճնշումը հատկապես զգալի էր այն ժամանակ, երբ Յայաստանի գահին նստած էին պարթևական Արշակունիների տոհմի կրտսեր Ծյուղի ներկայացուցիչները, որոնք երիտասարդ Սասանյան դինաստիայի համար դեռևս առկա սպառնալիք էին : Այսպիսով, Յայաստանի քաղաքական բաժանումը մեծագույն վճար էր հասցնում ոչ միայն հայերի դավանական միաբանությանը, այլև նրանց էթնիկական և մշակութային ամբողջականությանը:

**66**

Առաջին քայլը, որ Վոամշապուհ արքան (394/99-413/17) և բարձրագույն հոգևորականությունը կատարեցին երկիրն այս սպառնալիքներից փրկելու համար, հայրենի այբուբենի ստեղծումն էր: Սեփական միացյալ այբուբեն ունենալը թույլ տվեց ոչ միայն անմիջական մատույց ունենալ Սուրբ Գրերին և քրիստոնյա ծեսն ու պաշտամունքը խորապես խարսխել համապազօրյա կյանքում, այլև մեկընդիշտ վաճել հայ ժողովրդի երկու բաժանված հատվածների մշակութային և դավանական օտարումը:<sup>112</sup> Գրերի գյուտին հաջորդած մշակութային անախաղեա ծաղկումը վերջնականորեն ամրագրեց հայ ժողովրդի յուրահատուկ ինքնությունը:<sup>113</sup>

Աղքանոսյան տոհմի հավակնություններին, պարսկական արքունիքի տիրակալական նկրտումներին և բռնի կրոնափոխությանը դիմագրավելու համար Գրիգոր Լուսավորչի վերջին շառավիղը՝ Սահակ Պարթևը (387-428), փորձեց իր դիրքերն արմատավորել հյուսի-

<sup>106</sup> Յին Աշխարհում և Միջնադարում հպատակության քաղաքական հավատարմությունն ինքնարերաբար ներառում է նաև կրոնական նույնություն, Garsoian 1967b 1999, 58-59, Winkler 1985 , Mahn 1997a :

<sup>107</sup> Peeters 1929 և 1942, Աբեյյան ,1962, 60-62 , Garsoian ,1995, 1997b և 1999, 45-48 .

<sup>108</sup> Սահակ Սեֆի հայրը՝ Ներսես Սեֆը, Կեսարիայում ձեռնադրված վերջին հայրապետն է: Garsoian 1967a, 222-25 և 1999, 42 և 65 :

<sup>109</sup> Christensen 1936, 264-66.

<sup>110</sup> Peeters 1933, II, էջ 17 , Աբեյյան, Առյօն տեղում :

<sup>111</sup> Առյօն տեղում, տես նաև Labourt 1904, 104 և հետո, և 1929 , Christensen, Առյօնը, 279 և հետո; Tallon 1955, 11 , Սահանյան, 1978, 251-52 :

<sup>112</sup> Peeters, Առյօնը և 1929 , Մանանյան, Առյօնը , Աբեյյան, Առյօնը. Winkler 1985 :

<sup>113</sup> Thomson 1976, ix.

սային գավառներում, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ Սուլը Գրիգորի վարդապետության ավանդույթներին: Այս ձգտումն իրականություն դարձնելու համար նա իր նատավայրը հաստատեց Վաղարշապատում, որտեղ ծավալվեց Մեսրոպ Մաշտոցի հիմնած թարգմանական-աստվածաբանական մեջ դպրոցի գործունեությունը:

Նայ իշխանությունների երկրորդ քայլը, կարծում ենք, եղավ 5-րդ դարի սկզբին Վաղարշապատի կարգավիճակի փոփոխությունը Դայաստանի քրիստոնեացման հյուսիսային կենտրոնից ողջ հայության հոգևոր մայրաքաղաքի:<sup>114</sup>

Ցանկանալով անսասան պահել հայ ավանդական ուղղափառությունը և իր նախնու՝ Գրիգորի լուսավորչական առաքելության հիշատակը՝ Սահակ Պարթևի այս ընտրությունը հնարավորություն էր տալիս Նայ Եկեղեցուն համաձայնեցնել իր քրիստոսաբանությունը տիեզերական ժողովների որոշումների հետ և լավագույնս պայքարել պարսկական իշխանությունների կողմից հավանության արժանացած և անգամ պարտադրված տարատեսակ աղանդների վտանգավոր ծավալման դեմ:<sup>115</sup>

Վաղարշապատի նոր կարգավիճակը նշանավորվեց սուլը Շոհիսիմյան նահատակների նշխարների գյուտով, որին հետևեց նրանց նվիրաբերված երեք մատուռների կառուցումը և կաթողիկե մայր տաճարի վերակառուցումը.<sup>116</sup>

«Եւ եղեւ հանումն եւ նորոգումն ուսկերացն սրբոցն Գայիանեայ եւ Շոհիսիմեայ եւ ընկերաց նոցին ի Սահակայ կաթողիկոսէ. զի եղածովն Գրիգորի կային նոքա: Եւ շինեաց զվկայարանսն վիմատաշ կոփածոյ քարամքք ի Վաղարշապատ քաղաքի. եւ նորոգեաց զոտոն Աստուծոյ, այսինքն զոտորը Եկեղեցին»:<sup>117</sup>

«Սա նորոգեաց զոտածար սուլը կուսանացն զկործանեալն ի Ծապուհ թագաւորէ, եւ անգէտ տեղույ ուսկերացն սրբոյն Շոհիսիմեայ՝ խնդրուածովք յԱստուծոյ գտակ եղեւ»:<sup>118</sup>

Աղբյուրներն այս իրադարձությունը տեղավորում են այբուբենի ստեղծումից և Սուլը գրերի թարգմանությունից հետո, բայցև Վոամշապուհի օրոք:<sup>119</sup> Ըստ ամենաընդունված հաշվարկների՝ հա-

114 Garsoian 1999, 35-36.

115 Նույնը, 65-122 և 135-239, նաև՝ 1997b, Tallon 1955, 11 :

116 Սահակ կաթողիկոսի կողմից Շոհիսիմյանների նշխարների գյուտի մասին մանրամասն տես՝ Garibian de Vartavan 2005 (Հոլկուրական թես), էջ 279-83 :

117 Նշանագիր կառաց..., II :

118 Ստեփանոս Տարոնացի, II.1, 1859, 76 :

119 Այս վերակառուցումը սովորաբար թվագրվում է 385/7 տարիներով, հավանաբար Սահակի արռողջապահ տարվա հետ համընկեցնելու նպատակով, ըստ Օրմանյանի հաշվարկների (I, § 200, էջ 286), տես, օրինակ՝ Վ. Դարությունյան, Նայ ճարտարապետություն, 1992, 132: Նույն թվագրությունն է առաջարկում նաև Զամբեանը, Պատմութիւն Նայոց, 1784, I, 488 :

յոց այբուբենի ստեղծումը թվագրվում է 404, իսկ Աստվածաշնչի թարգմանությունը՝ 406 թվականով:<sup>120</sup> Վռամշապուհի զահակալության տարիներն ավելի նվազ վստահությամբ են հաշվարկելի, քանի որ հայ աղբյուրների տեղեկությունները չեն համընկնում այս հարցում և թույլ չեն տալիս ճշգրիտ ընդհանուր հայտարարի գալ:<sup>121</sup> Այսպես, նրա թագաղբության տարին տատանվում է 389 և 401 թվերի միջև, իսկ նրա զահակալության տևողությունը՝ 14 և 21 տարիների միջև:<sup>122</sup> Փորձելով հնարավորինս ճշգրիտ լինել, հաշվի առնելով այս շրջանին վերաբերող տեղեկությունները՝ կարող ենք եզրակացնել, որ Վռամշապուհի մահվան տարեթվի վերջնաժամկետը մոտավորապես ընկնում է 413/4 և 417 թվականների միջև:<sup>123</sup> Յետևաբար, Սահակ Մեծի ծեռնարկած վերակառուցման աշխատանքների ժամանակագրական սահմանները կարելի է գտնել 406 և 417 թվականների միջև:<sup>124</sup>

Եվ, վերջապես, Վաղարշապատի գերակայությունը նախկին Մեծ Յայքի ինչպես բյուզանդական, այնպես էլ պարսկական մասերի ողջ տարածքով ամրագրելու համար հարկավոր էր նրան շնորհել պատմական և հոգևոր լեզիտիմություն՝ հաստատագրված «Երկնային» աստվածակերպ (թեոփանիկ) միջամտությամբ: Այս նպատակով գրի է առնվում Յայաստանի դարձի պատմությունը մայրենի լեզվով, որն էլ, ըստ մեզ, հանդիսանում է հայ իշխանությունների երրորդ քաղաքական քայլը:<sup>125</sup>

Այս Պատմությունը, որ գիտական գրականության մեջ այժմ անվանվում է «Ազարանգեղոսի ցիկլ» կամ ավելի լայն ընդգրկումով՝ «Դարձի ցիկլ»,<sup>126</sup> ներառում է տարբեր լեզուներով մեզ հասած բազմաթիվ խմբագրությունների, տարբերակների, վերաշարադ-

120 Stev Աճառյան ,1968, 364-373 և 390-91 :

121 Նոյն տեղում, տես նաև Մանանյան ,1978, 249, Hewsen 1978-79 , Garsoian, 1999, 102 :

122 Stev Աճառյանի ժամանակագրական աղյուսակը, նոյնը, էջ 390 և Hewsen, նոյնը:

123 Այս տարեթվերը նույնպես առաջարկում են տարբեր մասնակետներ, տես Մանանյան, 1978, 251 և Աճառյան, նոյն տեղում:

124 Յնարավոր է նաև, որ աշխատանքները շարունակվել են Վռամշապուհի մահից հետո, սակայն մենք չունենք ոչ մի հավաստի փաստարկ այս ենթադրությունը պահելու համար:

125 Garibian de Vartavan 2005 (որկտորական թեզ), էջ 219 և հետո : Երկանյան լեզիտիմացման համար տեսն Peeters 1942 :

126 Այս ցիկլի «պաշտոնական խմբագրության»՝ «Յայոց պատմության» հեղինակը իրեն անվանում է Ազարանգեղոս և ներկայանում է որպես Տրդատ IV (298-330) թագավորի քարտուղարը: Իրականում նա անանուն կրոնական է, որ շարադրել է իր գիրքը հինգերորդ դարի 60-ական թվականներին, արդեն գոյություն ունեցող «Սւլը Գրիգորի վարդի հինգնմ վրա, որի բնօրինակային տարբերակը թվարկվում է հինգերորդ դարի 20-ական թվականներով: Այս հարցով գիտական բանավեճի մասին տես Thomson 1976, Ixxv-xcvii : Ազարանգեղագիտության մասին գրականության համար տես Garsoian 1999, 3, ծանոթ. 5: Ի տարբերություն «Ազարանգեղոսի ցիկլի», որը պարունակում է պաշտոնական խմբագրությանը վերաբերող բոլոր տեքստերը և գիտական գրականության մեջ նշվում է A տարբերաշանություն, մենք նախընտրում ենք անվանել «Դարձի ցիկլ» այս պատմական աղյուրի հայտնի տեքստերի հավաքական ամրողությունը, որոնք դասակարգված են A (Ազարանգեղոս) և V (Կարք) տարբերանշաններով:

րանքների տեքստերի հավաքական ամբողջությունը: Բոլոր հայտնի տեքստերում Հայաստանը նկարագրված է որպես միացյալ տարածքներով հզոր մի պետություն, որն այլևս գոյություն չուներ իինգերորդ դարի սկզբին<sup>127</sup> և անգամ չէր համապատասխանում չորրորդ դարի սկզբի իրողություններին:<sup>128</sup> Այրարատ նահանգը ներկայացված է որպես Սուլր Գրիգորի լուսավորչական գործունեության կենտրոն, իսկ Վաղարշապատը՝ որպես ողջ Հայքի փրկության և լույսի աղբյուր: Նրա հողն օրինված է հայ ազգին տրված աստվածային շնորհմերի միջոցով, որոնք տարածվելով լցնում են Երկիրը «ի հիւսիսական կողմանաց»: Աստվածային շնորհը արտահայտվում է նախ Հռիփսիմյան կույսերի նահատակության պարագայով, ապա Գրիգորի հրաշագործ թժկումներով և վերջապես՝ նրա աստվածակերպ տեսիլքով:<sup>129</sup> Վերջինում անտեսանելի Երկինքը միանում է Երկրին, և աստվածային շնորհը թափվում է ցած անձրևի տեսքով.

«Արդ՝ զիհնելոցն ընդ ծեզ զկեցուցաբեր տուչութիւնն զոյ շնորհելոց է՝ յայտնեաց ինձ, եւ երեւեալ ինձ տեսիլ աստուածակերպ սքամչելի անպատում (...) Բացեալ են աւամիկ դրունք Երկնից, բացան եւ ջուրքն որ ի վերայ նորա, զի մի՛ արգել լիցի այսմ աշխարհի մարդկամ՝ ելանել ի վեր: Զի սուրբ վկայրս այս որ աստ վկայեցին՝ հիւսիսական կողմանց ճանապարհ գործեցին. զի ինքեանք ելին եւ այլոց շաւիղս ուղղեցին: Աւասիկ լոյս զի ելից զկայրս՝ այս քարոզութիւն Աւետարանին է, որ եւ զկողմն հիւսիսոյ լնու»:<sup>130</sup>

Գրիգորն այնուհետ տեսնում է լուսավոր խաչով պսակված հրես սյուներ, որոնք կանգնում են քաղաքում, և խաչով բեռնված պատարագի ոսկե սեղաններ, որոնք լցնում են ողջ տարածքը մինչև հորիզոն: Նա արժանանում է Երկնային առաջյալի այցին, որը նրան մեկնաբանում է տեսիլքի խորհուրդը՝ նշելով ապագա կաթողիկե եկեղեցու և նահատակ կույսերի մատուռների կառուցման վայրը:<sup>131</sup>

Զորս սրբարանների աստվածակերպ իիմնարկությունը փոխում է արքայանիստ քաղաքի դեմքը՝ այն դարձնելով «Սուլր տեղիներին» համահունչ սրբազն քաղաք:<sup>132</sup> Վաղարշապատի եկեղեցին հենց Երկնիցից է ստանում հայրապետական աթոռի պատիվը. «Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, եւ տուն աղօրից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, եւ աթոռ քահանայապետութեանն»:<sup>133</sup>

127 Garsoian 1999, 5, Thomson, Առյնը, xcii-xciii :

128 Garsoian ,1971 և 1999, 5-8.

129 Ազարանգեղոս, § 732-755: Տե՛ս Garibian de Vartavan 2005 (դոկտորական թեզ), էջ 227 և հետո:

130 Ազարանգեղոս, § 731 և 741-42 :

131 Տեսիլքի և նրա մեկնաբանությունների տարբեր խմբագրությունների առավել մարդաբան վերլուծության մասին տես՝ Garibian de Vartavan 2003-2004 և 2005 (թեզ), էջ 234 և հետո:

132 Garsoian 1999, 7 և ծամոք. 26 , Garibian de Vartavan, Առյնը :

133 Ազարանգեղոս, § 745:

Այդուհանդերձ, մեզ թվում է, որ եթե ներքաղաքական պատճառները դրդում են Սահակ Պարթևին հաստատվել Վաղարշապատում և այնտեղ կազմակերպել աստվածաբանական կենտրոնը, ապա հայրապետական աթոռի մշտական իիմնումը Վաղարշապատում ավելի շուտ թելադրված էր արտաքին գործոնների ազդեցությամբ: Այսպես, Սասանյան կայսրության կենտրոնացման գործընթացն իր գագաթին հասավ չորրորդ դարի վերջին և հինգերորդի սկզբին:<sup>134</sup> Այս գործընթացն ուղեկցվեց ի թիվս այլոց նաև Պարսկական Եկեղեցու վերակազմակերպմանը, որի սկիզբը նշանավորվեց 410 թ. Սելևկիայում Եկեղեցական ժողովի գումարմամբ:<sup>135</sup> Ժողովի արդյունքում Պարսկական Եկեղեցու կանոնները և համակարգը համաձայնեցվեցին Արևմուտքում ընդունված դավանաբանության և նվիրապետական կարգի հետ: Այսպիսով, Սելևկիա-Տիգրանի Եկեղեցին հոչակվեց «առաջին և գլխավոր աթոռ», իսկ նրա Եպիսկոպոս Խահակին շնորհվեց Իրանի համայն քրիստոնեական Եկեղեցու մայրաքաղաքային մեջ Եպիսկոպոսի կամ կաթողիկոսի տիտղոսը:<sup>136</sup> Սակայն Իրանում քրիստոնեության ճանաչումը որպես ընդունելի կրոն ունեցավ այն հետևանքը, որ շահնշահը ինքնըստինքյան դարձավ Պարսկական Եկեղեցու առաջնորդ և ղեկավար և այդպիսով իրավունք ստացավ միջամտելու Եկեղեցու գործերին, այդ թվում նաև նշանակելու կաթողիկոսներ, ինչպես, ըստ սովորության, նշանակում էր մոգաբետաց մոգաբետներին:

Այս Եկեղեցական ժողովը չէր կարող հետևանքներ չունենալ Հայաստանում, որի տարածքների մեջ մասը գտնվում էր Իրանի իշխանության տակ, և որի Եկեղեցու ղեկավարն իսկ իրանական կայսրության հպատակ էր:<sup>137</sup> Իրոք, ըստ աղբյուրների տեղեկությունների, կարող ենք պնդել, որ այս ժամանակից սկսած՝ ոչ միայն Սահակ Պարթևը սկսում է առաջին անգամ կրել «կաթողիկոս» տիտղոսը, այլև հայրապետական պաշտոնի հաստատումը սկսում է կախված լինել միմիայն շահնշահի կամքից: Վերջինս չվարանեց, օրինակ, հակառակ Հայաստանում խստորեն պահպանվող ժառանգական սկզբունքի՝ Սահակին գահընկեց անել իր աթոռից 428 թվականին՝ փոխարենն այդ տիտղոսը շնորհելով հոգևոր տոհմից չսերված կամ նույնիսկ ասորական ծագում ունեցող հավակնորդների:<sup>138</sup>

Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ Եկեղեցական ժողովի արձա-

<sup>134</sup> Christensen 1936, 253.

<sup>135</sup> Նոյնը, էջ 264-66:

<sup>136</sup> *Synodicon Orientale*, 272.

<sup>137</sup> Տե՛ս *Garsōian*, 1999: 49-62 :

<sup>138</sup> Նոյնը, 1997b: 40 և 1999, 59 :

նագրությունը, Յազկերտ Ա «հրամայեց, որպեսզի ողջ կայսրությունում իր նախորդների կողմից քանդված եկեղեցիները հոյակապ վերականգնվեն...»:<sup>139</sup> Ըստ հայկական առյուրների՝ Վաղարշապատի մայր Եկեղեցին և նահատակ կույսերի վկայարանները այն սրբարանների թվում էին, որոնք կործանվել էին Շապուհ Բ հալածանքների ժամանակ, 363 թ.:<sup>140</sup> Այս քննությունը թույլ է տալիս առավել ճշգրտել Վաղարշապատի սրբարանների վերակառուցման տարեթվի վերջնական սահմանը, որն, այսպիսով, ընկնում է 410 թվականից հետո:

Ամփոփելով շարադրանքը՝ Եղրակացնում ենք, որ հինգերորդ դարի սկզբին Վաղարշապատի Եկեղեցում հայրապետական աթոռի հաստատումը անփոփոխ և առաջատար կերպով նորույթ էր Յայ Եկեղեցու ինստիտուցիոնալ կառուցվածքում: Չորրորդ դարի Ենթատեքստում, «հայրապետական աթոռ» և «Եպիսկոպոսական աթոռ» արտահայտությունները ցույց էին տալիս այս տիտղոսի միայն նվիրապետական արժեքը: Եպիսկոպոսապետության վարժան շրջիկ ձևը, որն արտացոլում է Երկրում դեռևս պահպանվող պարթևական ավանդույթների կենսունակությունը, իր տեղը զիջեց Յանձնդիանուր Եկեղեցում ընդունված կարգին, որը պարտադրվեց Սասանյան արքունիքի քրիստոնեական նոր քաղաքականությամբ:<sup>141</sup>

Մի քանի տասնամյակ հետո կաթողիկոսական աթոռը տեղափոխվում է Դվին, որն այդ ժամանակ Յայաստանի կայուն մայրաքաղաքն էր, և ուր Արշակունիների դիմաստիայի անկումից հետո կենում էին պարսիկ, այնուհետև հայ մարզպանները:<sup>142</sup> Այն մնաց Դվինում մինչև տասներորդ դարը:

139 *Synodicon Orientale*: 254.

140 Բուզանդ , IV.55 , Ստեփանմանու Տարօնացի, II.1, 1859, էջ 76 :

141 Վաղարշապատի Եկեղեցու որպես Յայաստանի հոգևոր կենտրոնի ընտրությունը դեռ վիճակման առարկա էր հիմներորդ դարի վերջին՝ հայ քրիստոնեության հարավային՝ ստրամիշագնորյան ավանդույթների պաշտպանների կողմից, որոնց կարծիքով՝ այդ պատվի իրավունքը պատկանում էր Աշուշանի Եկեղեցուն: Ահա թե ինչո՞ւ Բրւզանարանի հեղինակը, որ այս հոսանքի ներկայացուցիչն է, միայն դիպակածքը է նշում Վաղարշապատը «առաջին Եկեղեցու» և վկայարանների աղիքով (Garsoian, 1989, 16, 46-47, 498-99 և էջ 257, ծանոթ. 11): Նա նոյզիսկ այստեղի Եկեղեցում «մեծ Եկեղեցի», «մայր Եկեղեցի» կամ «կարողիկէ» տիտղոսներով չի կոչում, ինչպես և ոչ մի ակնարկ չի առնում այս շինության կարողիկոսական արքո լինելու մասին: Դրա փոխարեն Աշտիշատը ներկայացված է ոչ միայն որպես առաջին և գլխավոր Եկեղեցու վայր, այլև որպես Եկեղեցական ժողովների կենտրոն և ամենակարևոր նահատակների սրբավայր: այս տեղ են գտնվում Առաքելարանը և Սարգարեանը (Բուզանդ, III.3 և 14, IV.4 և 14 , Thomson, 1976, lxvi): Այս սրբավայրերի անւնները անբարեկ են առաջին քրիստոնա կայսրերի ժամանակների Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի հետ, իսկ նրանց տեղադրությունը, որ նույնպես հիմնված է աստվածակերպ տեսիլքի վրա (տես Ազարանգեղոս, § 810-14; Յու. վարք, 155-57), վկայում է տեղական «սուրբ Վայրերի» վաղագույն գոյության մասին (Garsoian, 1989, 449-50): Ի հակակի Վաղարշապատի «սուրբ Վայրերի»:

142 Կարողիկոսական արքոի տեղափոխության թվականի և պայմանների մասին տես՝ Garibian de Vartavan 2003-2004: 447-48 և ծանոթ. 161 :

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Աբեղյան (Մ.) 1962** -Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, գետեղված՝ Կորյուն, Վաղք Մաշտոցի, աշխ. թարգմ., առաջարան և ծանոթ., Երևան, էջ 5-68 :

**Ադոնց (Ն.) 1987** – Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, հայ. թարգմ. ռուսական 1908 թ. հրատարակության, Երևան :

**Ազաթանգեղոս** – Ազաթանգեղոս պատմութիւն Հայոց, հրատ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Թիֆլիս 1909 :

**Ամիանուս Մարտելինուս** - Ammien Marcellin, *Histoire*, nds. J. Fontaine et al., 5 vol., Paris 1968-1996 :

**Անանեան (Ր.) 1959-60** -Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրութեան թուականը Եւ պարագաները, Բազմավեպ, ո 117, էջ 9-23, 129-142, 225-238, ո 118, էջ 53-60, 101-113 :

**72 Աճառյան (Ր.) 1968** – Հայոց գրերը, 2-րդ հրատ., Երևան :

**Բուզանդարան** - Բուզանդարան պատմութիւնը = Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, քննական հրատ. Ք. Պատկանեան, Վենետիկ 1892 :

**Christensen (A.)** 1936 - *L'Iran sous les Sassanides*, Copenhague, Paris

**Garibian de Vartavan (N.) 2003-2004** -§primitif de l'église-mère « Eymiacin », *Revue des Études Arméniennes*, 29, p. 403-501

**Garibian de Vartavan (N.) 2005** – *Art et théologie en Arménie du V au VII siècle : Etude de l'église comme§ temple chrétien* », thèse de doctorat soutenue à l'EPHE (Sorbonne), Paris

**Garsoïan (N.) 1967a** - *The Paulician Heresy. A Study of the Origin and Development of Paulicianism in Armenia and the Eastern Provinces of the Byzantine Empire*, The Hague – Paris

**Garsoïan (N.) 1967b** -§ Politique ou orthodoxie ? L'Arménie au IV<sup>e</sup> siècle», *Revue des Études Arméniennes*, 4, pp. 297-320

**Garsoïan (N.) 1971** -§ Armenia in the Fourth Century : an Attempt to Redefine the Concepts 'Armenia' and 'Loyalty"', *Revue des Études Arméniennes*, 8, pp. 341-352

**Garsoïan (N.) 1984-85** - "The Early-Medieval Armenian City : an Alien Element", *The Journal of the Ancient Near Eastern Society*, 16-17, pp. 67-83 .

**Garsoïan (N.) 1985** - *Armenia Between Byzantium and the Sassanians*, Variorum Reprints (CS 215), London  
**VI** - Sur le titre de *Protecteur des pauvres*  
**IX** - Secular Jurisdiction over the Armenian Church (Fourth-Seventh Centuries) .  
**X** – "Prolegomena to a Study of the Iranian Elements in Arsacid Armenia"  
**XII** – "The Iranian Substratum of the "Agathangelis" Cycle"

**Garsoïan (N.) 1988-89** - *T'agaworaništ kayeank' kam banak ark'uni* . Les : résidences royales des Arsacides arméniens , *Revue des Études Arméniques*, 21, pp. 251-270 .

**Garsoïan (N.) 1989** - *The Epic Histories attributed to P'awstos Buzand: Buzandaran Patmut'iwnk'*, Cambridge, MA .

**Garsoïan (N.) 1995** - § Acace de Mésilène et la présence de Dyophysites en Arménie au début du V<sup>e</sup> siècle », *Au Carrefour des religions. Mélanges Philippe Gignoux. Res Orientales*, 7, p. 73-85

73

**Garsoïan (N.) 1997a** - Les éléments iraniens dans l'Arménie paléochrétienne, *Des Parthes au Califat : Quatre leçons sur la formation de l'identité arménienne*, Paris, pp. 9-37 .

**Garsoïan (N.) 1997b** - L'Eglise arménienne aux V<sup>e</sup>-VI<sup>e</sup> siècles: Problèmes et hypothèses, *Des Parthes au Califat : Quatre leçons sur la formation de l'identité arménienne*, Paris, pp. 39-57

**Garsoïan (N.) 1999** - *L'Église arménienne et le grand schisme d'Orient*, CSCO n 574, Subsidia, t. 100, Louvain .

**Hewsen (R.H.) 1978-79** - "The Successors of Tiridates the Great: A Contribution to the History of Armenia in the Fourth Century, *Revue des Études Arméniques*, 13, pp. 99-126 .

**Histoire du Christianisme II** – vol. II : *Naissance d'une chrétienté (250-430)*, Paris 1995 .

**Labourt (J.) 1904** - *Le christianisme dans l'empire perse sous la dynastie sassanide (224-632)*, Paris

**Ղազար Փարպեցի – Պատմութիւն Հայոց**, քննական հրատ., Անդրած. Գ. Տեր-Սկրչեան եւ Ստ. Մալխասեանց, Թիֆլիս, 1904:

**Mahé (A. et J-P.) 1993** - *Movsēs Khorenac'i, Histoire de l'Arménie*, Introd. trad. française et notes, Paris .

**Mahé (J-P.) 1997a** - Confession religieuse et identité nationale dans l'Eglise arménienne du VII au XI s. , *Des Parthes au Califat quatre leçons sur la formation de l'identité arménienne*, Paris, pp. 59-78 .

**Mahé (J-P.) 1997b** - Le rôle et la fonction du catholicos d'Arménie du VII au XI siècle , *Des Parthes au Califat : Quatre leçons sur la formation de l'identité arménienne*, Paris, pp. 79-105 .

**Mahé (J-P.) 1999** – Le premier siècle de l'Arménie chrétienne : de la littérature à l'histoire , *Roma Armena*, Catalogue de l'exposition, Rome, 25 mars – 16 juill. 1999, ed. C. Mutafian, Rome, p. 64-72 .

74

**Մալխասեանց (Ստ.) 1940** – *Խորենացու առեղջվածի շուրջը*, Երևան :

**Մանանդյան (Ր.) 1936** – Յին Հայաստանի գլխավոր ճամապարհները, Երևան :

**Manandyan (H.) 1965** - *The Trade and Cities of Armenia in Relation to Ancient World Trade*, transl. from the second revised edition par N. Garsoian, Lisbon 1965 .

**Մանանդյան (Ր.) 1978** – Քննական պատմություն հայոց, Երկեր, Երևան, հատ. 2 :

**Սովոր Խորենացի – Պատմութիւն Հայոց Մեծաց**, հրատ. և աշխարհ. թարգմ. Ստ. Մալխասեանց, Երևան, 1968 :

**Յովհաննես Դրասխանակերտցի – Պատմութիւն Հայոց**, հրատ. Մ. Էմին, Մոսկվա, 1853 :

**Նշանագիր կարգաց** - Նշանագիր կարգաց բանից Եզնկան Երիցու, Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ 1893, էջ 267-68 :

**Peeters (P.) 1929** - Pour l'histoire des origines de l'alphabet arménien , *Revue des Études Arméniennes*, 1<sup>er</sup> s., 9, pp. 203-237 .

**Peeters (P.) 1942** - S. Grégoire l'Illuminateur dans le Calendrier lapidaire de Naples , *Analecta Bollandiana*, 60, pp. 91-130 .

Ստեփաննոս Տարօնացի (Ասողիկ) – *Պատմութիւն սիեզերական*, հրատ. Եւ ծանոթ. Կ. Շահնազարեան, Փարիզ, 1859 :

**Synodicon Orientale** – *Recueil des synodes nestoriens*, Ed. du texte syriaque et trad. française, introd. et notes par J.B. Chabot, *Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale et autres bibliothèques*, T. 37, Paris, 1902 .

**Tallon (S.J.) 1955** - *Livre des Lettres, 1<sup>er</sup> groupe : Documents concernant les relations avec les Grecs*, Beyrouth .

**Thomson (R.W.) 1962** - Vardapet in the Early Armenian Church , *Le Muséon* 75, p. 367-384 .

**Thomson (R.W.) 1976** – *Agathangelos, The History of Armenia*, Introduction, trad. anglaise, et notes, Albany .

**Toumanoff (C.) 1963** – *Studies in Christian Caucasian History*, Georgetown

**75**

**Vie grecque** - *Vie de saint Grégoire, version grecque (Vg)*, éd. texte, introd. notes, Garitte G., *Documents pour l'étude d'Agathange*, Studi e Testi, 127, Rome 1946; հայերեն աշխարհաբար թարգմ. Բարթիլյան Ր., Ազարանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), *Էջմիածին*, 1966, VII, էջ 28-34, VIII, էջ 46-51, IX, էջ 79-87 :

**Winkler (G.) 1985** - An Obscure Chapter in Armenian Church History, *Revue des Études Arméniennes*, 19, pp. 85-180 .

**Wipszycka (E.) 1994** - Καθολικὴ et les autres épithètes qualifiant le nom ἐκκλησία : contribution à l'étude de l'ordre hiérarchique des églises dans l'Egypte byzantine , *The Journal of Juristic Papyrology*, 24, pp. 180-210, repr. Idem, *Études sur le christianisme dans l'Egypte de l'Antiquité tardive*, *Studia Ephemeridis Augustinianum*, 52, Rome, 1996, pp. 157-175 .

## **ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Վերջին շրջանում թուրքական նամուլում ավելի ու ավելի հաճախ է խոսվում միսիոներների և նրանց ծավալած գործունեության մասին: Բացի այդ, հիմնականում շեշտադրվում է այն տեսակետը, թե վերջին տարիներին քրիստոնեություն ընդունած նուսուլմանների մեջ մասը նախկին քրիստոնյաներ են: Այս տեսակետը ժամանակ առ ժամանակ ապացուցվում է արձանագրվող պատմությունների և դեպքերի միջոցով: Կարծում ենք՝ հայ իրականության մեջ այս թեման այսօր քիչ է ուսումնասիրված, բայց միաժամանակ այն շատ կարևոր է: Վերջին տարիներին լուրջ ուսումնասիրություններ են կատարվել Թուրքիայում ապրող իսլամացած հայերի թեմայի շուրջ: Նախկինում մեզ համար անհայտ բազմաթիվ իրողություններ են հրապարակվել: Սա մեծ քայլ է ցեղասպանությունից հետո Թուրքիայում մնացած հայերի, ինչպես նաև նրանց սերունդների հետագա պատմության ուսումնասիրության և բացահայտման համար<sup>1</sup>: Կարծում ենք՝ ցեղասպանությունից հետո Թուրքիայում ապրող ծագումով հայերի խնդրի համապարփակ ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուսումնասիրել այնտեղ ապրող ողջ հայությանը, ինչպես նաև անդրադառնալ միսիոներների գործունեության պատմությանը:

19-րդ դարից սկսած՝ միսիոներների համար Մերձավոր Արևելքը ավետարանչության համար կարևոր կենտրոն էր: 1800-ական թթ. սկսած՝ նրանք սկսում են գործել այս տարածքում, մասնավորապես մուսուլմանների և հրեաների մեջ, սակայն ցանկալի արդյունքների չեն հասնում: Մուսուլմանական հասարակությունը բացասաբար էր ընդունում միսիոներների գործունեությունը: Բացի այդ, քրիստոնեություն ընդունած նուսուլմանների համար խստագույն պատիժներ էին սահմանված: Այդ իսկ պատճառով որոշում է կայացվում տեղի քրիստոնյաների միջոցով թափանցել ոչ քրիստոնյաների մեջ<sup>2</sup>:

Եվ այսպես, 19-րդ դարից միսիոներն ակտիվ գործունեու-

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդրիների շուրջ, Երևան, 2009:

<sup>2</sup> Տես Վահան Յ. Թուրքիյան, Դայ ավետարանական եկեղեցի, 1846-1996, Ամերիկյան հայ ավետարան չական ընկերակցության և հայկական ժառանգության հանձնախմբի, 1996թ., էջ 182:

թյուն են ծավալում ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարածքում: 1800-1813թթ. միսիոներները հիմնադրում են տարբեր կազմակերպություններ, որոնց նպատակը Սուլթան գրքի տպագրումն ու տարածումն էին Մերձավոր Արևելքի ժողովուրդների մեջ: Այնուհետև մի շարք այցելությունների և շփումների շնորհիվ միսիոներները եզրահանգում են, որ իրենց գործունեությունն առավել նպաստավոր կլինի հատկապես հայության շրջանում:

Տեսականորեն արևմտյան միսիոներների շփումը հայերի հետ կարելի է բաժանել չորս փուլի:

1800-1830-ական թթ., երբ սկսվում են առաջին անհատական շփումները:

1830-1847թթ., այսինքն՝ մինչև Օսմանյան կայսրության կողմից բողոքական համայնքի ճանաչումը:

1850-1915թթ., երբ համայնքի ճանաչումից հետո ծեռնարկվում են քայլեր, որպեսզի ավետարանական առանձին Եկեղեցիները միսիոներների հսկողության տակ առնվեն և դրանք արևմտյան Եկեղեցիների կառուցվածքին համապատասխանեցվեն:

1915թ. հետո այսպես կոչված Յայ ավետարանականության Սփյուռքի շրջանը, երբ միսիոներների գործունեությունը զգալիորեն նվազում է հայության շրջանում:

7

Միսիոներների առաջին շփումը հայերի հետ, այսինքն՝ շփման առաջին շրջանը, տեղի է ունենում Արևելյան Յայաստանում, երբ Ալեքսանդր Բագավորը Յնդկաստանից ռուսական տարածքներ թափանցած միսիոներների միջոցով հնարավոր է համարում իր երկրի տարածքում ապրող մուսուլմանների քրիստոնեացումը: 1811թ. Բրիտանական Սուլթան գրքի ընկերությունը գնում է Վենետիկի հրատարակած Նոր Կտակարանի 1500 օրինակ և դրանք տարածում հայության շրջանում: Այնուհետև 1813թ. Բրիտանական և ամերիկյան Սուլթան գրքի համատեղ ընկերությունը նախաձեռնում է Աստվածաշնչի գրաբար հրատարակումն ու տարածումը: 1815թ. 5000, 1817թ. 2000 օրինակ Աստվածաշունչ և 2000 օրինակ Նոր Կտակարան է տարածվում հայերի մեջ<sup>3</sup>:

Փաստորեն, միսիոներները սկսում են ակտիվորեն գործել հայերի շրջանում: Ժամանակի ընթացքում այս գործունեությունը պետք է արմատներ գցեր արևմտահայերի մեջ, որ կատարվեց 1820-ական թթ., երբ ամերիկյան և բրիտանական ընկերություններն սկսեցին Աստվածաշունչը հրատարակել հայատառ թուրքերենով:

<sup>3</sup> Տե՛ս Բ. Եղիայան, Յայ կաթոլիկ և ավետարանական հարանվանությանց բաժանումը ԺԹ դարուն, Անթիւլիաս-Լիբանան, 1971թ., էջ 182:

Արևմտահայերի շրջանում գործունեություն ծավալած առաջին ամերիկացի միսիոներները Լեվի Փարսոնզն ու Փլինի Ֆիսքն էն, որոնք 1819թ. ժամանում են Մալթա, այնտեղից էլ մեկնում են Իզմիր: Յարկ է նշել, որ այս միսիոներները շատ տպավորված էին հայերի կրոնասիրությամբ: Լեվի Փարսոնզը նույնիսկ դեկավարությանը գրած նամակում հայտնում է, որ Օսմանյան կայսրություն ավելի հեշտ կլինի թափանցել հայերի, քան մուսուլմանների և հրեաների միջոցով:

1828թ. Մալթայում տեղի է ունենում կարևոր միսիոներական ժողով, որտեղ պետք է որոշվեր ամերիկյան Բորդ ընկերության հետագա քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Այդ ժողովին մասնակցում է նաև Ուիլյամ Կուտելը, որը 1824թ սկսած՝ կապ էր հաստատել Երուսաղեմի մի շարք հայ միաբանների հետ: Կուտելի առաքելությունը հատկապես հայերի շրջանում գործելու մեջ էր: Ժողովում մի շարք դրույթներ են ընդունվում, որոնք վերաբերում էին հայերին: Նախ, հաշվի առնելով մուսուլմանների մեջ ծավալած գործունեության ապարդյունությունը, որոշում է կայացվում այդուհետ գործել հայերի շրջանում, ինչպես նաև այսպես կոչված քննական պտույտներ կատարել հայկական գավառներում՝ հասկանալու և յուրացնելու հայ ժողովրդի առանձնահատկությունները, քիչ թե շատ սովորելու հայերենը և ծանոթանալու հայերի խնդիրներին: Փաստորեն, 1828թ. սկսած՝ միսիոներներն իրենց գործունեությունը պաշտոնապես ծավալեցին հայերի մեջ:

Այն, որ հայերի մեջ գործունեությունն առավել նպաստավոր կլիներ, և որ դրա համար կային բոլոր նախադրյալները, հայտնում է նաև միսիոներական պատմիչ Ռուֆուս Անդերսոնը իր “History of the Missions” գրքում: 19-րդ դարի մեկ այլ ժամանակագիր՝ Յարություն Գ. Մրմրյանը, իր 1908թ. Կ. Պոլսում հրատարակված «Տասնիններորդ դար և Հովհաննես Պրուսացի Տերոյենց» գրքուն գրում է, որ ազգային եկեղեցուց հռոմեական հայերի բաժանվելուց հետո հայերի մեջ ծայր է առնում բոլորքականությունը և ակտիվութեն տարածվում ամերիկյան միսիոներների կողմից: Նա այդ ամենը բնական է համարում՝ ասելով, որ ժողովրդի մի մասի կողմից կաթոլիկության ընդունումը պետք է հանգեցներ մյուս հատվածի ծգտմանը դեպի բողոքականություն, նշելով, որ այդ երևույթը առավել ընդգծված էր միմյանց հետ թշնամանքի մեջ գտնվող ընտանիքներուն:

Արդեն 1835թ. ապրիլ և նոյեմբեր ամիսներին Կուտելը տեղեկացնում է կենտրոնին, որ իրենք մեծ հաջողություններ են գրանցում հայերի շրջանում:

Այս ամենի հետ մեկտեղ միսիոներները շարունակում են իրենց

ծավալած կրթական գործունեությունը: 1834թ., ընդարձակելով իրենց հիմնած Բերայի վարժարանը, այն վերածում են երիտասարդների համար բարձրագույն վարժարանի: Ի դեպ, վերոնշյալ վարժարանում է ուսանել նաև Կ.Պոլսի առաջին ավետարանական հովիվ Արիստոդ Ութունյանը: Այնուհետև Զմյուռնիայում բացվում է աղջիկների վարժարան հայ և հույն աշակերտների համար: Այստեղ է հաստատվում հայագետ միսիոներ Իլիհաս Ոիքսը, որը հետագայում կարևոր դեր է խաղում Սուլը գրքի աշխարհաբար թարգմանության մեջ: Միսիոներները Զմյուռնիա են տեղափոխում նաև Մալթայի և Բեյրութի իրենց հրատարակչատների հայերեն բաժինները: 1833-1840թթ. այստեղ սկսում են հրատարակել «Ծտեմարան պիտանի գիտելյաց» շաբաթաթերթը: Արիստոդ Ութունյանի եղբայր, ժամանակագիր Ստեփան Ութունյանը վկայում է, որ բողոքականության տարածմանը մեծապես նպաստել են նրանց հրատարակությունները, գրականությունն ու կրթական գործունեությունը: Նա գրում է. «Պէտք է գիտնալ ու խոստովանիլ, որ միսիոնաերաց դպրոցն ու հայատար թրքերէն Սուլը Գիքը եւ ուրիշ օգտակար գրեանց տարածուիլը շատ կարեւոր դեր ունեցած է այդ քաղաքին եւ անոր սահմանակից վայրերու մէջ»:

Միսիոներական այս գործունեության շրջադարձային պահը լինում է 1835թ., երբ միսիոներներն իրենց «միսիոներական տան» մեջ սկսում են պաշտոնապես կիրակնօրյա ժողովներ կազմակերպել, ստեղծում են իրենց ժողովարանը, հոգևոր քարոզչության վայրը: Ինչպես գրում է վեր. Եղիա Քասունին՝ «Նրանք կը վարեն կազմակերպուած կրօնական ժողովներ, որոնց կ,ընդունուէին ապաշխարածները եւ հոգեւոր ճշմարտութիւն փնտռողները»<sup>4</sup>:

5 տարվա ընթացքում, ինչ Բորդ ընկերությունը գործունեություն էր ծավալել հայերի մեջ, երբեմ հրապարակային կրոնական պաշտամունքներ և քարոզներ չեն եղել: Սակայն Կուտելը իր բնակարանում շաբաթը երկու անգամ Սուլը գրքի մեկնության ժամ է սահմանում, որին հաճախում էին հայեր և հույներ: Նույն թվականին Հ.Յ.Օ. Դուայթը անգլիական դեսպանատան մոտակայքում գտնվող փողոցի իր տան մի սրահը վերածում է մատուրի և սահմանում պաշտամունքի և քարոզչության օրեր, որոնք էին ուղբաթ և կիրակի օրերը<sup>5</sup>:

1836թ. կարևոր իրադարձություններից էր նաև «Բարեպաշտության միաբանությունը»՝ հետագայում «Բարեպաշտից», որը,

79

<sup>4</sup> Տե՛ս Բ. Եղիայան, Հայ կաթոլիկ և ավետարանական հարամվանությանց բաժանումը ժմ դարուն, Անթիլիաս-Լիքաման, 1971թ., էջ 211:

<sup>5</sup> Տե՛ս Dr. Ahmet Hikmet EROĞLU, ERMENİLER ARASINDA PROTESTANLIĞIN YAYILIŞI VE PROTESTAN ERMENİLER, Doktora Tezi , էջ 91:

ինչպես վկայում է Ե. Քասունին, «Հայ երիտասարդներու իրենց մէջ Ս. Գիրքի ուսումնասիրութեան հետ միաբանական ինքնաբուլս աղօթքի վարժութիւն կ.ընէին»<sup>6</sup>:

Հենց այս խմբակն էր, որ հետագայում պետք է ակտիվորեն մասնակցեր և հանդիսանար բողոքական համայնքի (protestant milleti) հիմքը: Իրականում սա առաջին հայ ավետարանական կազմակերպությունն էր Կ.Պոլսում: Պատմագիր Տիգրան Խրլոյանը նշում է, որ ավետարանականությանը հարող հայերի թիվը հետզհետեւ ավելանում էր: Շուտով նրանց շարքերից մի փոքր խումբ է առանձնանում և ստեղծում վերոհիշյալ կազմակերպությունը, որն ուներ իր նախագահն ու քարտուղարը: Այս խմբի թիվը 1838թ. հասնում է 500-ի: Խումբը, որ սկզբում ուներ ընդամենը 12 անդամ, ինչպես նշում է Ս. Ութունյանը, գնալով մեծանում և հզորանում էր:

80

Այս իրադարձություններին զուգընթաց Յ.ճ.Օ. Դուայթը շարունակում է ակտիվորեն զբաղվել իրատարակչական գործունեությամբ: 1838թ. Կ.Պոլսում նա հիմնում է նաև գրքերի առաքման կենտրոն: Միայն 1838թ. ընթացքում իրատարակվում և տարածվում է ավելի քան 6 միլիոն, իսկ հաջորդ տարի ավելի քան 5 միլիոն է հայերեն և հայատառ թուրքերեն գիրք: Հետագայում՝ 1842թ., Կուտելի նախաձեռնությամբ Աստվածաշունչը թարգմանվում է թուրքերեն: 1853թ. Իլիաս Ոիքսի նախաձեռնությամբ այն թարգմանվում է արդի հայերեն: Հավելենք նաև, որ վերոհիշյալ գործունեությունը պետք է տար իր պտուղները, որն արտահայտվելու էր առանձին համայնքի ստեղծմամբ<sup>7</sup>:

Համայնքի ստեղծման համար առաջին քայլերը կատարեց «Բարեպաշտության միաբանություն» խումբը, որը, դիմելով Բորդ ընկերության միսիոններին, հարց բարձրացրեց առանձին վարչական օրենսգրքի և կանոնագրի անհրաժեշտության մասին: 1846թ. հուլիսի 1-ին Յ.ճ.Օ. Դուայթի բնակարանում հավաքված 37 տղամարդ և 3 կին անդամները Սուրբ գրքի ընթերցումից և աղոթքներից հետո ընտրեցին հովիվ՝ պատ. Արիստորմ Ութունյանին, 2 սարկավագ և 2 հոգաբարձու: Որոշ ժամանակ անց «Բարեպաշտության միաբանությունը» ստանում է Հայ ավետարանական եկեղեցի անվանումը, որն, ըստ Էտիքյան, ոչ միայն առաջին Հայ ավետարանական եկեղեցին էր Թուրքիայում, այլև ամբողջ աշխարհում, իսկ 1846թ. օգոստոսի 25-ին հայտարարվում է, որ իրենք անկախ են հայ եկեղեցուց: Հաջորդ կարևոր քայլը, որ պետք է արվեր, համայնքի

6 Տե՛ս Բ. Եղիայան, նույն տեղում, էջ 211:

7 Տե՛ս Վահան Յ. Թուրքիյան, Հայ ավետարանական եկեղեցի 1846-1996, Ամերիկյան հայ ավետարանչական ընկերակցության և հայկական ժառանգության հանձնախմբի, 1996թ., էջ 68:

պաշտոնական ճանաչումն էր: 1846թ. օգոստոսի 7-ին Կ.Պոլսում ժողով է հրավիրվում և ստեղծվում է գործադիր հանձնախումբ: Այս հանձնախմբի պարտականությունն էր համայնքը ներկայացնել արտաքին հարաբերություններում: Ժողովից 10 ամիս անց՝ 1847թ. հունիսի 16-ին, որոշվում է դիմել սուլթանին՝ համայնքը պաշտոնապես ճանաչելու խնդրամքով: Հաջորդ մի քանի ամիսների ընթացքում 4 խնդրագիր է ներկայացվում, որոնք, սակայն, հաջողության չեն հասնում: Այնուհետև վերոհիշյալ հարցում սկսում են գործել միսիոներները: Հատկապես մեծ աջակցություն են ցուցաբերում Անգլիան և Ամերիկան: Անգլիայի դեսպանը հանդիպում է Մուստաֆա Ռեշիդ փաշային, որից հետո 1847թ. նոյեմբերի 5-ին դեսպանին հաջողվում է ստանալ ֆերմանը (հրամանագիրը), որով Օսմանյան կայսրության բողոքականները ճանաչվում են որպես առանձին համայնք: Այս հրամանագիրը, սակայն, տրված էր նախարարության կողմից և կարող էր չեղյալ հայտարարվել կառավարության փոփոխության դեպքում: Վերջնական ճանաչում շնորհվում է սուլթան Աբդուլ Մեջիդի կողմից 1850թ. նոյեմբերի 27-ին: 1850թ. դեկտեմբերի 13-ին Կ.Պոլսում հայ ավետարանականների ժողով է գումարվում, որտեղ ընթերցվում է այս հրամանագիրը: Սուլթանական մեկ այլ հրամանագրի համաձայն՝ համայնքի ազգապետ է ընտրվում Ստեփան Սերոբյանը: Համայնքի ազգապետը ներկայացնում էր բոլոր բողոքական եկեղեցիները, կազմակերպությունները և ժողովուրդներին՝ հայ կամ ոչ հայ: Այսինքն՝ Օսմանյան կայսրության բոլոր բողոքականները, անկախ ազգությունից, ենթարկվում էին ազգապետին: Թուրքիայում հաջորդաբար ծառայել է 5 ազգապետ: Առաջին ազգապետը եղել է Ստեփան Սերոբյանը (1847-1865թթ.), երկրորդը՝ Դավուդ Պողոսյանը (1865-1868թթ.), երրորդը՝ Հակոբ Մաքսոսյանը (1868-1888թթ.), չորրորդը՝ Հակոբ Բոյաջյանը (1915-1928թթ.) և հինգերորդը՝ պրոֆ. Զենոր Պեզջյանը (1915-1928թթ.): Այս քաղաքականությունը կիրառվում էր նաև այլ համայնքների, ինչպես, օրինակ՝ կարուղիկների համեմայք, և սուլթանատին համայնքները վերահսկելու ավելի լայն ու հեշտ հնարավորություններ էր տալիս<sup>8</sup>:

Համայնքի ճանաչումից հետո Հայ ավետարանական եկեղեցիներ են բացվում Տրապիզոնում, Իզմիրում, Գազիանթեփում, Երզրումում, Բուրսայում<sup>9</sup>:

Այս համատեքստում հետաքրքրական են նաև հայ ավետարանականների և օտարերկրյա միսիոներների միջև հարաբերություն-

<sup>8</sup> Տես Վահան Յ. Թուրքիյան, Հայ ավետարանական եկեղեցի 1846-1996, Ամերիկյան հայ ավետարանական ընկերակցության և հայկական ժառանգության համձնախմբի, 1996թ, էջ 66:

<sup>9</sup> Տես Dr. Ahmet Hikmet EROĞLU, ERMENİLER ARASINDA PROTESTANLIĞIN YAYILIŞI VE PROTESTAN ERMENİLER, Doktora Tezi , էջ 106:

ների զարգացումները: Ի տարբերություն սկզբնական շրջանի, հետզհետև նրանց հարաբերություններում որոշակի սառնություն է նկատվում: 1855թ. Ամերիկյան հանձնաժողովը հրատարակում է «Առաջնորդ ավետարանական եկեղեցու անդամներին» խորագրով օրենսգիրք՝ բաղկացած 158 էջից, որտեղ տեղ գտած մի շարք կետեր առաջ են բերում հայ ավետարանականների բացահայտ դժգոհությունն ու հիասթափությունը:<sup>10</sup> Սեծապես դժգոհություն է առաջացնում այն հանգամանքը, որ, ըստ այս օրենսգրքի, այդուհետ միությունների վերին վարչական մարմիններ կարող էին ընդգրկվել միայն միսիոններները: Ժողովներին չին կարող մասնակցել հայ, հույն կամ այլ քնիկ հովիվներ: <sup>11</sup> Վերջին խոսքը պատկանում էր Ամերիկյան հանձնաժողովին: Այսինքն՝ բողոքական համայնքը փաստացի դեկավարում էր վերոհիշյալ հանձնաժողովը: Փաստորեն, աստիճանաբար սահմանափակվում էին Յայ ավետարանական եկեղեցու հեղինակությունն ու իրավունքները: Բնական է, որ նման պայմաններում հայ ավետարանականներն աստիճանաբար պետք է բռնեին ինքնուրույնության և անկախացման ուղին:

**82**

1860թ. Արտաքին առաքելությունների ամերիկյան հանձնաժողովը, հաշվի առնելով միսիոններական գործունեության նման ծավալները, այն կանոնակարգելու համար որոշում է կայացնում գործունեության դաշտը բաժանել 3 շրջանի՝ արևելյան, կենտրոնական և արևմտյան: Որոշ ժամանակ անց նույն քաղաքականությունն են որդեգրում նաև Յայ ավետարանական եկեղեցիները: Ստեղծվում է 4 միություն: 1864թ. ստեղծվում է Բութանիայի միությունը 27 եկեղեցիներով, 1866թ.՝ Արևելյան միությունը՝ 4 շրջաններով և 68 եկեղեցիներով, 1867թ.՝ Կիլիկիայի միությունը՝ 4 շրջաններով և 65 եկեղեցիներով, 1868թ.՝ Կենտրոնական միությունը՝ 3 շրջաններով ու 42 եկեղեցիներով<sup>12</sup>:

Այս ամենին զուգընթաց չեր դադարեցվում տպագրական և կրթական գործունեությունը: Դեռևս 1822թ. Սալբայում Փլինի Ֆիսթի հիմնած հրատարակչատունը 350 հազ. հունարեն, իտալերեն և հայերեն կրոնական գրքեր հրատարակելուց հետո 1833թ. տեղափոխվում է Իզմիր, իսկ 1852թ.՝ Ստամբուլ, որտեղ շարունակում է գործել շուրջ 20 տարի:<sup>13</sup> Այս ընթացքում ակտիվորեն շարունակ-

<sup>10</sup> Տես Վահան Յ. Թութիկյան, Յայ ավետարանական եկեղեցի 1846-1996, Ամերիկյան հայ ավետարան չական ընկերակցության և հայկական ժառանգության հանձնախմբի, 1996թ, էջ 68-69:

<sup>11</sup> Տես Բ. Եղիայան, Յայ կաթողիկ և ավետարանական հարանվանությանց բաժանումը Ժթ դարուն, Ամբիլիա-Լիբանան, 1971թ., էջ 285:

<sup>12</sup> Տես Վահան Յ. Թութիկյան, նույն տեղում, էջ 65:

<sup>13</sup> Տես Agos, 30 kasim 2007:

վում է Սուրբ գրքի թարգմանությունը՝ հայերեն, հայատառ թուրքերեն: Բացվում են բազմաթիվ դպրոցներ, ճեմարաններ, վարժարաններ: Յիմնալում է 3 աստվածաբանական ճեմարան. 1859թ.՝ Խարբերդի աստվածաբանական ճեմարանը, 1864թ.՝ Մարաշինը, 1865թ.՝ Սարգվանինը: 1875-1915թթ. Հայ ավետարանական Եկեղեցին թուրքիայում հիմնում է 7 քոլեջ՝ Այնթապում, Խարբերդում, Մարաշում, Սարսոնում, Գոնիայում և Իզմիրում: 1908թ. արդեն գործում էր 35 երկրորդական վարժարան, որոնցից 20-ը նախատեսված էր հգական սեռի համար<sup>14</sup>:

Օսմանյան կայսրությունում միսիոներների ծավալած գործունեության ողջ ընթացքում հետաքրքիր զարգացումներ են արձանագրվել Հայ առաքելական Եկեղեցու և միսիոներների, հետագյում նաև Հայ ավետարանական Եկեղեցու հարաբերություններում: Սկզբնական շրջանում Հայ առաքելական Եկեղեցին բարեհած վերաբերմունք էր ցուցաբերում միսիոներների հանդեպ: Միսիոներնը մի շարք հանդիպումներ են ունենում Կ.Պոլսի պատրիարքի հետ և հետագայում իրենց կենտրոնին ուղարկած նամակներում ընդունված են հայոց պատրիարքի ջերմ ընդունելությունը: Պատրիարքարանը դրական է գնահատում միսիոներների կողմից նախապատրաստվող կրթական գործունեությունը և համաձայնում աջակցել: Նույնիսկ 1833թ. սեպտեմբերին Ստեփանոս պատրիարքը երկու միսիոներների հրավիրում է Եկեղեցի՝ ականատես լինելու նորադարձների ծերնադրությանը<sup>15</sup>: Սակայն ժամանակի ընթացքում հարաբերությունները սրվում են: Միսիոներները շեղվել են իրենց ուղղությունից և դրժել խոստումը, որն էր՝ չքաջալերել հավատափոխությունը: Հարաբերությունները սրվում են հատկապես Հայ ավետարանական Եկեղեցու և համայնքի ստեղծումից հետո<sup>16</sup>: Փաստորեն, ստեղծվում է առանձին Եկեղեցի, որը հայտարարում է, թե ինքն անկախ է Հայ առաքելական Եկեղեցուց: Հայ առաքելական Եկեղեցին դադարեցնում է բոլոր տեսակի շփումները Ավետարանական Եկեղեցու հետ: Նույն իրավիճակը տարածվում է նաև հասարակության մեջ: Եկեղեցու, ինչպես նաև հայ համայնքի կողմից որպես դավաճանություն էր ընկալվում բողոքականության ընդունումը. ընդհուպ անհամատելի են դաշնում հայ և բողոքական անվանումները: Թշնամանքն աճում է այն աստիճան, որ խզվում են բոլոր տեսակի

<sup>14</sup> Տե՛ս Ոքման Ներսես Լևոնյան, Արտաշես Ղազարյան, Հայաստանյաց ավետարանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999թ., էջ 13:

<sup>15</sup> Տե՛ս Բ. Եղիայան, Հայ կաթոլիկ և ավետարանական հարամվանությանց բաժանումը Ժմ դարուն, Անքիլիաս-Լիքաման, 1971թ., էջ 206:

<sup>16</sup> Տե՛ս Վահան Յ. Թուրիկյան, Հայ ավետարանական Եկեղեցի 1846-1996, Աներիկյան հայ ավետարանական ընկերակցության և հայկական ժառանգության հանձնախնդիր, 1996թ., էջ 28:

կապերը այս երկու համայնքների միջև նույնիսկ առևտրական և տնտեսական հարաբերություններում: Յայ ավետարանական համայնքը հայտնվում է որոշակի կենցաղային մեկուսացվածության մեջ: Յետագայում՝ 1915թ. հետո, նկատվում է որոշակի մերձեցում՝ հաշվի առնելով ժամանակաշրջանի տարերայնությունը: Յետագայում՝ արդեն 1970-ական թթ., մերձեցման փորձեր են կատարվում: 1970թ. ստեղծվում է երկու եկեղեցիների մերձեցման հանձնաժողով, որի շնորհիվ երկու տարի անց Յայ առաքելական եկեղեցին ճանաչում է հայ ավետարանական համայնքի ինքնուրույնությունը<sup>17</sup>:

19-րդ դարի վերջին իրականացված ջարդերն ու հայահալած քաղաքականությունը մեծ չարիք դարձան ողջ հայության, այդ թվում՝ Յայ ավետարանական եկեղեցու համար: Ավերվում են բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ: Սպանվում և ձերբակալվում են բազմաթիվ հոգևոր հայրեր, հովիվներ: Ինչպես գրում է Կահան Թութիկյանը՝ «Այս սարսափելի ջարդերը ցոյց տուին բաժանուած հայ համայնքին, թէ թքական բարբարոսութիւնը եւ ջարդերը սահմանափակուած չէին մեկ «Միլլեթի» կամ քաղաքական կուսակցութեան, այլ առանց խտրութեան ուղղուած էին ամբողջ հայ ազգին դեմ»:

**84**

Բացի այդ, սկսած 1860-ական թթ. մինչև 1890-ական թթ. Յայ ավետարանական եկեղեցին բավական թուանում է նաև այլ պատճառներով. պառակտումներից ու բաժանումներից կորցնում է բազմաթիվ անդամներ: 1860-ական թթ. հայերի շրջանում գործունեություն է ծավալում անզիական եկեղեցին, մասնավորապես այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Լոնդոնի միսիոներական և Բրիտանական Աստվածաշնչի ընկերությունները: 1863թ. Այնթապում նրանք հիմնում են առաջին եկեղեցին, ավելի ուշ ևս մեկը՝ Դիարբեքիրում<sup>18</sup>:

Նախ 19-րդ դարի հայկական ջարդերը, հայոց ցեղասպանությունը, այնուհետև 1915-1922թթ. ամենաորերգականն էին հայ ժողովրդի, ինչպես նաև Յայ ավետարանական եկեղեցու համար:

Մինչև 1915թ. Թուրքիայում կային 4 ավետարանական միություն, 137 եկեղեցի, 82 ձեռնադրյալ հովիվ, 97 քարոզիչ, 14 000 հայորդական անդամ, 270 կիրակնօրյա դպրոց՝ 22 700 ուսանող, 7 քոլեջ՝ 1 700 ուսանողով, 46 բարձրագույն վարժարան՝ 1 750 ուսուցիչով և 4 700 ուսանողով, 3 աստվածաբանական ճեմարան՝ նախակրթարանների 19 400 սովորողով և 850 ուսուցիչով: Յայ

<sup>17</sup> Sie see Dr. Ahmet Hikmet EROĞLU, ERMANLILER ARASINDA PROTESTANLIĞIN YAYILIŞI VE PROTESTAN ERMANLILER, Doktora Tezi , sayfa 109:

<sup>18</sup> Sie see Կահան Յ. Թութիկյան, Յայ ավետարանական եկեղեցի 1846-1996, Ամերիկյան հայ ավետարան չական ընկերակցության և հայկական ժառանգության հանձնախմբի, 1996թ., էջ 74:

ավետարանականների ընդհանուր թիվը հասնում էր 51 000-ի: Հայոց ցեղասպանությունից հետո Հայ ավետարանականների թիվը հասնում էր մոտ 14 000-ի: Նրանք ունեին 31 եկեղեցի, 25 ձեռնադրյալ հովիվ և 13 քարոզիչ<sup>19</sup>:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմից և հայոց ցեղասպանությունից հետո հայ ավետարանական համայնքը մեծ կորուստներ ունեցավ: Մեծ թվով անդամներ գաղթեցին այլ երկրներ, և սկսվեց հայ ավետարանականության սփյուռքի շրջանը: Աշխարհի տարբեր երկրներում ստեղծվեցին Հայ ավետարանական եկեղեցու միություններ, որոնք դեկավարվում էին ԱՍՍ-ի Հայ ավետարանական եկեղեցու կողմից: Այսօր այդ միությունների թիվը հասնում է հինգի: Դրանք են՝ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների Միություն, Ֆրանսիայի Հայ Ավետարանական Միություն, Յուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական Միություն, Հայաստանի Հայ Ավետարանական Միություն, Հայաստանի, Վրաստանի, Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի հայ ավետարանական միություն<sup>20</sup>: Այսօր Թուրքիայի հայ ավետարանական եկեղեցների կենտրոնը Լիբանանում գտնվող Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միությունն է:

Մինչև 1996թ. հայ ավետարանական եկեղեցիները Թուրքիայում հինգն էին, որոնք Ստամբուլում էին: Դրանք էին՝ Ավետարանական Ամենասուրբ Երրորդության եկեղեցին, Գեղիկփաշայի հայ ավետարանական եկեղեցին, Էմանուել Ժողովարանը, Հաքյոլի ավետարանական եկեղեցին և Ուսքուդարի հայ ավետարանական եկեղեցին: 2005թ. դրանք երկուսն էին: Դեռևս 2000թ. անդամների թվի աճի և իրենց շարքերում ասորիների ընդգրկման հետևանքով էնանուել եկեղեցին կողցնում է իր՝ Հայ ավետարանական եկեղեցու կարգավիճակը: Այս եկեղեցիները կազմված են քաղաքացիական և հոգևոր խորհուրդներից: Քաղաքացիական խորհրդի ընտրությունները տեղի են ունենում 4 տարին մեկ: Օրինակ՝ Գեղիկփաշայի եկեղեցու քաղաքացիական խորհրդի ղեկավարը միաժամանակ նաև հոգևոր խորհրդի նախագահն է: Վերջին շրջանում այս երկու պարտականությունները սովորաբար համատեղվում են: Վերապատվելիները ծեռնադրվում են Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության կողմից<sup>21</sup>:

85

19 Տե՛ս Ռեմե Ներսես Լևոնյան, Կրտաշես Ղազարյան, Հայաստանյաց ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999թ., էջ 15:

20 Տե՛ս Վահան Յ. Թուրիկյան, Հայ ավետարանական եկեղեցի 1846-1996, Ամերիկան հայ ավետարանական ընկերակցության և հայկական ժառանգության համախմբի, 1996թ., էջ 194-195:

21 Տե՛ս Dr. Ahmet Hikmet EROĞLU, ERMENİLER ARASINDA PROTESTANLIĞIN YAYILIŞI VE PROTESTAN ERMENİLER, Doktora Tezi, sayfa 112 :

Վերջին տարիներին թուրքական զանգվածային լրատվամիջոցների պնդմամբ միսիոներական գործունեությունը նոր ծավալներ է ստացել: Շատերը նույնիսկ մեղադրում են Թայիփ Էրդողանին միսիոներներին տրվող իրավունքների և հնարավորությունների համար: Վերջին մի քանի տարիների ընթացքում բացվել են նոր եկեղեցիներ, իիմնարդվել են ֆոնդեր, իրատարակչատներ<sup>22</sup>: Այսօր Թուրքիայի Հանրապետությունում ինչպես առհասարակ ավետարանականների թվի վերաբերյալ տեսակետները տարբեր են: ԱՄՆ Կոնգրեսի փոքրամասնությունների գծով հանձնաժողովի տվյալների համաձայն՝ Թուրքիայում կան շուրջ 3000 ավետարականներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում հայերը<sup>23</sup>: 2006թ. կառավարությանը ներկայացրած գեկույցում Թուրքիայի անվտանգության խորհուրդը մտավախություն էր հայտնում, որ 2020թ. Թուրքիայի բնակչության 10%-ը քրիստոնեություն ընդունած կլինի, և որ 2001թ. տվյալներով արդեն 50 000 մարդ ընդունել է քրիստոնեություն, որոնց մեջ կան մեծ թվով մուսուլմաններ<sup>24</sup>: Սակայն Թուրքիայի բողոքական եկեղեցիների միության իրավաբանական խորհուրդը իր գեկույցում առանձին անդրադարձել է այս թեմային՝ նշելով, որ քրիստոնեություն ընդունած մուսուլմանների մեծ մասը նախկինում իսլամացվածների սերունդներ են<sup>25</sup>: Վերջին շրջանում քրիստոնեական արմատներով մուսուլմանների թեման դարձել է բավական արդիական: Քրիստոնեություն ընդունող այս մուսուլմանների նախկինում քրիստոնեական արմատներ ունենալու տեսակետը ապացուցվում է ուսումնասիրությունների, արձանագրվող դեպքերի, վերջիմներիս կողմից իրենց նախնիների և արմատները գտնելու պատմություններով: Այս ամենի համար հիմք են ծառայում նաև, ինչպես թուրքական մանուլն է նշում, վերջին տարիներին միսիոներների ակտիվ գործունեությունը հատկապես քրիստոնեական շրջանում, ինչու չէ, նաև այստեղ արձանագրվող հաջողությունները: Բազմիցս առաջ է քաշվում ցեղասպանության տարիներին քրոների և ալիքների մոտ ապաստան գտած հայերի գոյության հարցը: Միսիոներների արձանագրած բազմաթիվ պատմություններ սրա ապացույցն են: Մեծ թվով գիտնականներ պնդում են, որ Ազգային անվտանգության հիշատակած՝ քրիստոնեություն ընդունող մուսուլմանները հենց այդ նույն նախկին քրիստոնյաների սերունդներն

<sup>22</sup> Süleyman Müfid Yüksel, turkiyede misyonerlik faaliyetleri, alevi ve kurtlerin protestanlastirilmasi calismalari ile ilgili bir molahaza, <http://www.refikengin.com/urun/file/yuklenen/68077.doc>:

<sup>23</sup> Bureau of democracy, human rights, and labour, International religious freedom report 2005, Turkey.

<sup>24</sup> Fatih Polat, Misyonerlik faaliyetleri, 21.04.2007:

<sup>25</sup> Süleyman Müfid Yüksel, turkiyede misyonerlik faaliyetleri, alevi ve kurtlerin protestanlastirilmasi calismalari ile ilgili bir molahaza, <http://www.refikengin.com/urun/file/yuklenen/68077.doc>:

Են, որոնք վերադառնում են իրենց արմատներին: Չնայած մեծ վտանգին՝ դրանով է բացատրվում նաև միսիոներական գործունեության ակտիվությունը հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում: Այս հանգամանքը բացատրվում է նաև նրանով, որ այս տարածքում բնակչությունը բավական ծանր սոցիալական, ինչպես նաև կրթական պայմաններում է: Այս հարցը, թե ինչու վերոհիշյալ նախկին քրիստոնյաների սերունդները չեն դիմում Հայ առաքելական եկեղեցուն՝ պատրիարքարանին, պայմանավորված է նրանով, որ շատ հաճախ այս գյուղական շրջաններում պարզապես չեն լինում առաքելական եկեղեցու ծառայողներ, և գյուղացիները դիմում են տվյալ տարածքում գործունեություն ծավալած միսիոներին: Եթե նույնիսկ բանը հասնում է պատրիարքարան գալուն, ապա շատ հաճախ այս մարդիկ արժանանում են մեղմ ասած ոչ գրկաբաց ընդունելության, որը կարող է ունենալ տարբեր պատճառներ, ինչպես, օրինակ՝ գգուշավորությունը, պետության կողմից իրականացվող սահմանափակումները, այդուհանդերձ, ցանկանալով վերադառնալ սեփական արմատներին և ինքնությանը, նրանք դիմում են ավետարանական կամ կաթոլիկ եկեղեցիներին:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ հայ ավետարանականության պատմությունը հետաքրքիր զարգացումներ է ունեցել: Յատկապես Թուրքիայում բնակվող հայ ավետարանականների խնդիրներն ու կյանքի պայմանները, կարծում ենք, առանձնանում են աշխարհի այլ երկրներում բնակվող հայ ավետարանականների խնդիրներից: Դա հասկանալու համար նախ անհրաժեշտ է չմոռանալ, որ թուրքական պետությունն իր կառուցվածքով տիպիկ հսկամական պետություն է, որտեղ քրիստոնյա լինելն արդեն իսկ մեծ վտանգ է, առավել ևս երբ այդ քրիստոնյան հայ է: Այս ամենից բացի, հարկ է նշել նաև, որ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանից մինչև այսօր միսիոներներն ընկալվում են որպես ազգի թշնամիներ: Յետևաբար, նրանց գործունեությունը ևս խիստ բացասական արձագանք է ստանում: Այսօր հնարավոր չեն ստույգ տվյալներ հաղորդել Թուրքիայում բնակվող հայ ավետարանականների թվի մասին: Այս հարցում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայեր են ընդգրկված ոչ միայն Թուրքիայում գործող հայ ավետարանական եկեղեցիների կազմում, այլև երկրի տարբեր մասերում գործունեություն ծավալած միսիոներների հիմնած եկեղեցիներում: Այդ մասին վկայում են հենց իրենց՝ միսիոներների արձանագրած դեպքերը: Միսիոներների գործունեությունը կրոնական հիմքի վրա է, և շատ հաճախ մարդիկ, պարզապես հրաժարվելով մուսուլմանությունից, դառնում են քրիստոնյա առանց իրենց իրական էթնիկ ծագման մասին որևէ մեկնաբանության: Նրանք կարող են ներկայանալ որպես քրդեր,

ալևիներ և թուրքեր, սակայն այս խնճում մեծ թիվ են կազմում իրական էթնիկ հայերը՝ նախկին իսլամացված հայերի սերունդները։ Պետք է հավելել նաև, որ նույն խնդիրը գոյություն ունի նաև հույների շրջանում։ Իրականում, կարծում ենք՝ այս խնդիրը մեզանում դեռևս մնում է չուսումնասիրված և կարիք ունի գիտական, ինչպես նաև պետական լուրջ մոտեցման։ Այս բնագավառում լուրջ ուսումնասիրությունների դեպքում հնարավոր է գտնել իրենց ինքնությունն այս կերպ գոնե պահպանել ցանկացող մեծ թվով հայերի։

# Հայաստանի կրոնական կազմակերպությունները

Պատրաստված է ըստ Հայ կաթողիկե եկեղեցու նյութերի

## Հայ կաթողիկե եկեղեցի

### 1. Օսմանեան Կայսրութիւնը եւ քրիստոնեաները

«Թիւքերը, Պետականութեան մասին իրենց աստուածաբանական ըմբռնումներուն պատճառով, իրենց ոչ-հսլամ հպատակները կը դասէին անոնց եկեղեցական պատկանելիութեան համաձայն, եւ ոչ թէ անոնց ազգութեան։ Այսպէս «Ռում միլլէթեր» (Յոյն ազգ), կը նդգրկէր յունական ծէսին պատկանող բոլոր քրիստոնեաները, Պուլկարացիները, Սերպերը, Ռումանացիները, ուղղափառ Ալպանացիները, նոյնիսկ Սուրբիոյ արաք մելքիտները, ինչպէս նաև իսկական յոյն Հելլենները։

89

Պոլսոյ յոյն տիեզերական Պատրիարքը, որ ըստ եկեղեցական կանոններու, միայն իր Պատրիարքութեան սահմաններուն, այսինքն՝ Թրակիոյ եւ Անատոլիայի վրայ իրաւասութիւն ունէր, դարձաւ քաղաքական պետը բոլոր յուանծէս քրիստոնեաներուն, որոնք այսպէս կազմեցին «Հռոմայեցիներուն ազգը» (Ռում միլլէթի)։

Ժամանակ մը ետք, միեւնոյն ձեւով, Հայ Պատրիարքութիւն մը ստեղծուեցաւ Պոլսոյ մէջ (1461-ի շուրջ, ծանօթ.), որուն գահակալը իր ազգակիցներուն վրայ ստացաւ նոյն իրաւասութիւնները, զորս յոյն Պատրիարքը կը վայելէր իրեններուն վրայն (Colonel Lamouche, Histoire de la Turquie)։

Հետեւաբար, պետական այս օրինագծով, թրքահպատակ Հայերը, ըլլան առաքելական, կաթողիկէ թէ աւետարանական, Ենթակայ էին մէկ եկեղեցական իշխանութեան։ Պոլսոյ Հայ Առաքելական Պատրիարքին, որ հակառակ ազգային-եկեղեցական կանոններուն, Սոյ Կաթողիկոսէն ալ բարձր հեղինակութիւն ունէր Բ. Դրան մօտ, օսմանեան Հայութեան միակ պետական ներկայացուցիչը ըլլալուն։ «Քրիստոնեաները իրենք զիրենք կը կառավարէին իրենց համայնքին չափանիշներով։ կը պահպանէին իրենց աւանդութիւններն ու իրենց լեզուն, իրենց Առաջնորդին ու աշխարհական խորհրդատուներու ղեկավարութեամբ։ Թրքական վարչաձեւին մէջ, անհատը Պե-

տութեան անդամ ըլլալէ առաջ, իր համայնքին անդամ է: Պետութիւնը վերեւի կառոյցն է: Քրիստոնեայ համայնքները կրնային իրենց անդամներէն տուրքեր գանձել իրենց Եկեղեցական եւ մշակոյթային պահանջներուն համար, դպրոցներ ու բարեսիրական հաստատութիւններ ունենալ: Ամուսնութիւնները, ապահարզանը ու ժառանգական խնդիրները Եկեղեցական ատեաններու յանձնուած էին (J. Boulos, les peuples et les Civilisations du Proche Orient, vol. V.) Յետեւաբար, Օսմանեան Տէրութեան բոլոր հայ կաթողիկէնները կրօնապէս ու քաղաքականապէս հպատակ էին Պոլսոյ Յայոց Պատրիարքին: Անոնց արգիլուած էր ուրոյն պետ ունենալ, ուրոյն Եկեղեցի, կղեր կամ աղօթավայր ունենալ: Այս օսմանեան իրավիճակին զօրութեամբ, Յայ Կաթողիկէնները յաճախելու էին Պոլսոյ Պատրիարքին Եկեղեցինները, ինն մկրտուելու, պսակուելու եւ թաղուելու էին, անոր դատական ատեանին դիմելու էին: Օսմանեան կայսրութեան մէջ կային նաեւ Երոպացի կամ լատին կաթողիկէններ, որոնք Պոլսոյ գրաւումէն առաջ, ինն էին...: Անոնք շնորհիլ Capitulations-ի (1535) եւ Պոլիս բնակող Երոպական դեսպաններու ներկայութեան, կրօնական ազատութիւն կը վայելէին, ունին իրենց Եկեղեցինները, կղերն ու Արքեպիսկոպոսն մը: Ուստի Երկու տեսակ կաթողիկէններ կապէին Օսմանեան Կայսրութեան մէջ. անոնք որ կաթողիկէ ըլլալնուն համար կրնային հալածուիլ, բանտարկուիլ ու աքսորուիլ (որոնցմէ էին Յայ Կաթողիկէնները), եւ անոնք որ կրնային անպատիժ ու քիչ մը ցուցադրաբար իրենց կաթողիկէնները ապրիլ:

### Յայ Կաթողիկէ Եկեղեցին «Միաբանո՞ղ Եկեղեցի» է

Արծիւեան հիմնադիրը չէ Յայ Կաթողիկէններ: Իր ժամանակ ու իրմէ առաջ՝ արդէն քիչ մէ ամէն տեղ հայ կաթողիկէ կեղրոններ գոյութիւն ունին:

Կարապետ Եպս. Ամատունի, իր “L'Eglise Arménienne et la Catholicité”, (1978, Venise, Imp. T.L.A.) աշխատասիրութեան մէջ, կեզրակացներ ուրիշ հեղինակներու հետ. «Մեր օրերուն Յայ Կաթողիկէ Եկեղեցին, որպէս ժառանգորդը այն Եկեղեցին զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ կանգնեց եւ զոր պահպանեց Ս. Սահակ, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ անոնց հաւատարիմ հետեւորդ Յայրապետները, չի կրնար դասուիլ այն կաթողիկէ Եկեղեցիններուն շարքին, որոնք Արեւելքի մէջ ծնունդ առին ժԶ. եւ ժԷ. դարերուն՝ Բիւզանդական շրջագիծին մէջ եւ որոնք «Միաբանող» կը կոչուին:

Բոլոր Յայրապետները, որոնց անունը յիշուած է այս կայքին

մէջ, կազմեցին այն կաթողիկէ առէջը, սկիզբէն մինչեւ ԺՈ դար: Աբրահամ Արծիւեանի, 1742-ին, Յալէպի մէջ Յայ Կաթողիկէ ուրոյն Նուիրապետութիւն մը նախաձեռնելու այդ շղթային շարունակութիւնն է:

Այս տուեալներուն լոյսին տակ, Յայ Կաթողիկէները «միաբանող» կոչելը՝ Պատմութիւնը խեղաթիւրել պիտի նշանակէր (Կարապետ Եպս. Անատունի)...

### Յայ Կաթողիկէութիւնը Արծիւեանէն առաջ

Յայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը վերահաստատող Աբրահամ Արծիւեանէն առաջ, Պոլսոյ, Մարտինի, Յալէպի, Տիարպեքիրի, Լեհաստանի, Թրանսիլվանիոյ, Իտալիոյ մէջ հաստատուած հայ կաթողիկէ ժողովուրդ կար, մերթ սակաւաթիւ, մերթ ստուարաթիւ, Ենթակայ զանազան ու զարմանազան հայ թէ ոչ-հայ Առաջնորդներու. Յօտ մը առանց Յայ Կաթողիկէ Նուիրապետութեան:

Պէ՞տք էր այդպէս շարունակել:

Կարգ մը հայ եւ լատին Եկեղեցականներ, համարելով որ Յայոց Եկեղեցին արդէն կը պատկանէր Տիեզերական Եկեղեցիին ու միայն տգիտութենէ կամ անգիտութենէ մղուած՝ Ֆիզիքապէս բաժնուած էր անկէ, կը նախընտրէին չխօսուիլ Յայոց Եկեղեցին, այլ զայն ներսէն ներգրաւել լուսաբանութեան ուժով: Այս տեսակետը նկատի չէր առներ, թէ Յայոց Եկեղեցին, ինք, ի՞նչ կը մտածէր այս հարցին շուրջ:

91

Ուրիշ Եկեղեցականներ, մանաւանդ Պոլսոյ Ֆրանսացի դեսպաններուն նախաձեռնութեամբ, համամիտ էին երկխօսութեան ճամբով՝ լեզու գտնելու Պոլսոյ Յայ Պատրիարքութեան հետ: 1701-էն սկսուած ու մինչեւ 1830 շարունակուած բանակցութիւնները մնացին ապարդիւն, մերթ այս կողմին, մերթ միւս կողմին յարուցած դժուարութիւններուն պատճառով:

Յիմնահարցը հետեւեալն էր. արդեօք Յայոց Եկեղեցին Տիեզերականն բաժնուած թէ անոր միացած նկատուելու էր: Այս հարցումին տրուած դրական կամ ժխտական պատասխանին համաձայն, հայ կաթողիկէներուն թոյլ կը տրուէր կամ կը մերժուէր զայն յաճախել: Յայ կաթողիկէութիւնը, մանաւանդ Պոլսոյ մէջ, երկու հոսանքի բաժնուած էր: Դրական պատասխանին կողմնակիցները հանգիստ կը յաճախէին ազգային Եկեղեցիները:

Իսկ ժխտական պատասխանին կողմնակիցներուն համար՝ երկընտրանքը խղճի ծանր հարց կը դառնար, որ ի վերջոյ կրօնական ազատութեան պահանջ ու խղճի կաշկանդումի դէմ բողոքի ծեւ առ-

նելով, հայ կաթողիկէ զանգուածները մղեց ուրոյն Համայնք մը դառնալու որոշումին:

Անկախացումի առաջին փորձը կատարուեցաւ Մայրաքաղաքին մէջ, 1714-ին, Սուլթանին ու Հայ Պատրիարքին աչբերուն տակ ու վերջ գտաւ մասնակցողներուն աքսորով, բանտարկութեամբ կամ փախուստով: Բանտարկեալներուն մէջ էին Մելքոն Եպս. Թազպազեան, որ պատրիարք ընտրուած էր, եւ Հալէպի Եպիսկոպոս Աբրահամ Արծիւեան, եւ որոնք թիարանի դատապարտուեցան:

### Արծիւեանի անկարելի գրաւը

Անկախացումի երկրորդ փորձը կատարուեցաւ Հալէպի մէջ, կեղրոնէն հեռու, 1740-ին, եւ Աբրահամ Արծիւեան ընտրուեցաւ Հայ Կաթողիկէ Պատրիարք: Բենեդիկտոս ԺԴ. Պապը Վաւերացուց Արծիւեանի ընտրութիւնը եւ անոր Աթոռին յանձնեց աշխարհով ցրուած Հայ Կաթողիկեութիւնը իր հովանիին տակ համախմբելու առաքելութիւնը:

**92**

Ծրագիրը պայծառ էր, բայց իրագործումը երկարաշունչ: Արդարեւ, Հայ Կաթողիկէները կապրէին տարբեր ազգերու եւ պետութիւններու, տարբեր կրօններու ու մշակոյթի, տարբեր անցեալի պատկանող եւ իրարու դէմ թշնամի տարբեր երկիրներու մէջ, որոնց իշխանաւորները կասկածով կը նայէին դուրսէն եկող նոյնիսկ եկեղեցական միջամտութեան: Ուստի պէտք էր ճեռնարկել Օսմանեան կայսրութենէն, ուր կային հողային, քաղաքական ու վարչական միաձեւութիւն:

Ծրագիրը իր մեծողիութեան պատճառով, երկու գլխաւոր արգելքներու բախեցաւ. առաջինը Բ. Դուռը չճանցաւ Յօնմի կողմէ ստեղծուած այն նոր «միլլէք»ը, որ կը խախտէր օսմանեան օրէնսդրութիւնը: Արծիւեան պետական ոճրային հետապնդումի տակ դրուեցաւ: Պոլսոյ ճամբանները իր առջեւ փակ գտնելով, ան իր Պատրիարքական Աթոռը Լիբանան հաստատեց, որ թէեւ օսմանեան իշխանութեան ենթակայ, սակայն քաղաքականօրէն աւելի մօտ էր Եգիպտոսի ըմբոստ Փաշաններուն քան թէ Պոլսոյ:

Արծիւեան բախեցաւ երկրորդ արգելքի մը, որ իրմէ առաջ գոյութիւն ունեցող հայ եւ լատին կաթողիկէ Առաջնորդներուն ընդդմութիւնն էր: Անոնց համար դժուար եղաւ այս նորեկ իշխանութեան ենթարկուիլ:

Յուսկ Յօնմ եւս, ներկայ հանգուածի դժուարութիւններուն դիմաց, նախընտրելի գտաւ Օսմանեան տէրութեան հայ կաթողիկէնե-

ոը, փոխանակ մէկ պետի տակ դնելու, ինչ որ տակաւին ժամանակ կ'ուզէր կազմակերպուելու, զանոնք յանձնել երկու կեդրոններու իրաւասութեան, ընդօրինակելով Յայ Եկեղեցիին գործադրած սահմանային բաժանումները:

Ուստի, Սսոյ Կարողիկոսութեան համապատասխանող թեմերը յանձնեց Արքիւեան Պատրիարքութեան, իսկ Պոլսոյ Պատրիարքութեան համապատասխանող թեմերը՝ նախ յանձնեց Լատին Արքեպիսկոպոսին, ապա Յայ Կարողիկէ Արքեպիսկոպոսութեան, երբ ան հիմնուեցաւ ապագային: Այսպէս, Օսմանեան կայսրութեան հպատակ հայ կաթողիկէները ունեցան երկու կեդրոն, Պոլիս ու Զմնառ, որոնք ի վերջոյ իրարու միացան 1966-ին:

### Լատին Եկեղեցին արեւելքի մէջ

Եւրոպական յաղթական զօրքերուն հետքերով, լատին միսիոնարներու փաղանգը մուտք գործեց Արեւելք: Անոնք դէմ առ դէմ գտնուեցան Արեւելեան Եկեղեցիին բազմազգի ժողովուրդներուն ու այլազան ծէսերուն: Այս միսիոնարներուն ոնանց մօտ՝ քարոզելու եռանդը յաճախ աւելի մեծ էր քան անոնց ունեցած ծանօթութիւնը՝ այդ պատմական Եկեղեցիներուն մասին: Այս պատճառով, արեւելեան ծէսերը յարգելու ու պահպանելու Յոռմէն տրուած իրահանգները՝ միշտ չէ որ յարգուեցան միսիոնարներու կողմէ: Ներկայ միութենական հոգեբանութենէն շատ հեռու էին տակաւին:

Սակայն այդ միսիոնարներուն կը պարտինք հոգեւոր կեանքի ու բարեպաշտութեան արծարծումը, քանի որ նախորդ մութ դարերուն ընթացքին՝ անհիկա շիշած էր, քաղաքական ու հոգեւոր անտրութեան հետեւանքով:

250-ամեակի առիթով՝ հոս յիշուող անձերուն մօտ, ըլլան պատրիարք, Եպիսկոպոս թէ պարզ վարդապետ կամ կրօնաւոր, կը նկատենք կրօնաւորական կեանքի հանդէպ պապակ մը, խերուն ծարաւ մը քրիստոնէական ապրումի, սրբութեան, նուիրումի եւ զոհողութեան: Այս մարդիկը հոգեւորականներ են, ո՛չ դիւանագէտներ կամ անձնական շահը որոնող արկածախնդիրներ: Կը ծրագրեն ու կը գործեն յանուն ճշմարտութեան կամ այն ինչ որ անոնց ճշմարտութիւն կը թուի: Յոգեւորական պայծառ դէմքեր, որոնք մեր ժամանակի մարդոց համար օրինակ կրօնան ծառայել. ինչպէս որ օրինակ հանդիսացան իրենց դարերուն մէջ:

## 2. Միսիթարյան միաբանութիւն

Միսիթար աբբահայր ծնած է Սեբաստիա 1676ին, երբ Հայաստանի մեծ մասը եւ ժողովուրդը կ'ապրէր դժուարին օրեր: Տակաւին շատ փոքրիկ ստացաւ կրօնական դաստիարակութիւն: Բարձրագոյն ուսման անյագ ծարաւով շրջեցաւ Եջմիածնի, Սեւանի ու Բասենի վանքերը, ուր յուսախար չգտաւ իր ակնկալածը: Պատանի տարիքն Ս. Նշան վանքին մէջ նուիրուեցաւ անխոնջ ընթերցումի եւ ինքնազարգացման: Քսան տարեկանին, հազիր քահանայ ծեռնադրուած՝ ականատես Հայաստանի նիւթական եւ իմացական տիսուր վիճակին, կը յղանայ աշակերտներ հաւաքելու եւ Միաբանութիւն մը հիմնելու գաղափարը, հաւաքարար աշխատելու՝ Հայ ժողովուրդին հոգեւոր, բարոյական եւ իմացական մակարդակը բարձրացնելու համար:

Մեծ խորհուրդ, գեղեցիկ ծրագիր, բայց իրագործումը այդ օրերում՝ շատ դժուար:

1700ին, ինը աշակերտներէ շրջապատուած, դրաւ իիմը իր երազած հաստատութեան, որ յաջորդաբար իր անունով ալ պիտի կոչուէր Միսիթաբան ՄիԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Հալածուած ազգակիցներէ իր կրօնական եւ ազգային հաշտարար համոզումներուն պատճառով, կ.ապաստանի նախ Մեթոն (Յունաստան) եւ ապա 1715ին վերջնականապէս կ.անցնի Վենետիկ: Անձնական ճիգերով եւ բարեկամներու օգնութեամբ՝ օրուան իշխանութիւններէն սեփականութիւն կը ստանայ Ս.Ղազար կղզին: Պաշտօնապէս հոն կը հաստատուի 8 Սեպտեմբեր 1717ին, տասնվեց միաբաններով:

Այդ թուականէն սկսեալ, ամայի կղզին կը դառնար օրրանը հայ մշակոյթին, ամենէն կենսունակ կեղրոնց ԺԸ-րդ դարու Հայկական Վերածնունդին:

Միսիթարի կեանքը մէկ նպատակ ունեցաւ.- Հասցնել պատրաստուած վարդապետներ մտաւոր լոյս եւ գիտութիւն սփռելու համար Հայ ժողովուրդին:

Իր բովանդակ կեանքը նուիրեց իր ժողովուրդի լուսաւորութեան սրբազն գործին, տոգորուած այնպիսի բարոյական կորովով մը, որ չի՛ գիտեր կանգ առնել խոչընդոտներու դիմաց:

Ան խորունկ հաւատքի, բացառիկ կամքի, հզօր եւ խորաթափանց մտքի տէր անձնաւորութիւն մըն էր, օժտուած իմացական ու հոգեկան արտակարգ ձիրքերով:

Անհուն խանդավառութեամբ լծուեցաւ ծանր ու յարատեւ աշխատանքի՝ շինարարական, կրօնական եւ ուսումնական մարզերու մէջ:

Մխիթարի գրական արտադրութիւնը կը կազմեն շուրջ քսան հրատարակութիւններ, որոնց մէջ ամէնէն ակներեւն է «Հայկական Բառարան»ը, որ լոյս տեսած է 1749-ին, իր մահէն երեք շաբաթ յետոյ։ Մխիթարի մեծագոյն արժանիքներէն մին։ Ընդարձակ գործ եւ դժուարին ձեռնարկ մը, որ դարձաւ հիմնաքարը եւ փրկութիւնը մեր լեզուին։

Սակայն ամենամեծ նորութիւնը իր հրատարակութիւններուն մէջ որ ամենամեծ նորութեան պէս ողջունուեցաւ, բանալով դարագ-լուս մը, եղաւ «Աստուածաշունչ»-ը։

Անոնց կողքին ունի նաև լեզուական, մեկնողական եւ քերթո-ղական գործեր։

Մխիթար իբրեւ միտք եւ կարողութիւն հանճարեղ յայտնութիւն մըն է, ինքնաշխատութեամբ հասած զարգացման բարձրագոյն աս-տիճաններուն, ինացականութիւն մը, որ մեր մէջ մտցուց գիտութե-ան սէրը։

Մխիթար իր աշխատանքով եղաւ ոչ միայն հիմնադիր կրօնա-կան հաստատութեան մը, այլ վերստեղծող մը գրական, մշակութա-յին, կրթական եւ ուսումնական այնպիսի շարժումի մը, որ միշտ աւ-ելի զարգացաւ ու ծաւալեցաւ եւ 1800-ական թուականներէն սկսե-ալ գործնականապէս յաջողեցաւ ներշնչել ազգային ուժեղ ոգի, գի-տակցութիւն, սէր՝ ազգային պատմական եւ մշակութային գանձե-րուն հանդէպ, հաւատը՝ նոր դարաշրջան մը սկզբնաւորելու՝ մտաւ-որ եւ գրական կեանքի ծաղկումով։

Իր հրատարակած Աստուածաշունչի վերջաբանին մէջ որպէս կտակ կ.աւանդէ կրօնքի եւ ազգասիրութեան երկու անշփոք զաղա-փարներու վարդապետութիւնը առանց մէկը միւսին զոհելու. այդ իր տուած ուղղութիւնը եղաւ նկարագիրը իր աշակերտներուն։

Կրօնական ու մշակութային կեանքի մը վերանորոգումին, եւ ատոր հասնելու լուսաւոր ծրագիրի մը յղացումին մէջ հետեւաբար հարկ է տեսնել անոր բուն արժեքը, եւ մանաւանդ այն ապառաժեայ կամքին մէջ որ գիտցաւ ստեղծել գրական շարժումի կեդրոն մը եւ տալ անոր անհրաժեշտ մղումը որպէսզի իր յաջորդները կատարե-լագործեն իր ձեռնարկները եւ տան անոնց հաստատութիւն ու բեղմ-նաւոր կեանք։

Մխիթար եղաւ որ առաջին անգամ, յետ անկումի դարերուն, ներարկեց մեր մէջ կրօնքի, հայրենիքի, ծշմարտութեան եւ արուես-տի զաղափարները, փոխեց մեր մտայնութիւնը, փարատեց հայ մտ-քի հորիզոնին թանձր խաւարը բանալով նոր աշխարհ մը լոյսի, գի-տութեան եւ կեանք։

## Մխիթարեան գոյգ ճիւղեր եւ վերամիացում

Մխիթար կը նահանար 27 ապրիլ, 1749ին. իրեն կը յաջորդէր երիտասարդ Ստեփանոս Մելքոնեան աբբահայրը (1750-1800): Որոշ տարակարծութիւններու պատճառով, 1773 թուականին, խումբ մը վարդապետներ կը հեռանան Սր Ղազար կղզին ուղղուելով Թրիեստ: Սիրալիր հիւրընկալութիւն գտնելով աւստրիական կայսրութեան կողմէ, վերջնականապէս կը հաստատուին Վիեննայի մէջ 1811ին: Մխիթարեան գոյգ թեւերը բազմաշան աշխատանքով կը նուիրուին հայ ժողովուրդի կրթադաստիարակչական, մշակութային եւ հովուական ծառայութեան:

96

Մխիթարեան Միաբանութիւնը, Վենետիկի եւ Վիեննայի իր պատմական գոյգ ճիւղաւորումներով, յետ երկարամեայ բանակցութիւններու եւ քննարկումներու, Վենետիկի Սր Ղազար Մայրավանքին մէջ, 10-21 Յուլիս, 2000-ին, կազմակերպեց միացեալ ընդիանուր արտակարգ ժողով մը, մասնակցութեամբ երկու հաստատութիւններու բոլոր միաբաններուն: Սոյն ժողովին Միաբան Վարդապետները միասնաբար որոշեցին անմիջական եւ ամբողջական միութիւն մը իրականացնել, ստեղծելով Մխիթարեան միացեալ մէկ Միաբանութիւն, մէկ կեդրոնական վարչութեամբ:

Պատմական այս քայլը կը գուգադիայի Մխիթար Վրդ. Սեբաստացիի կողմէ հիմնուած Միաբանութեան 300ամեակին, Քրիստոնէութեան 2000-ամեայ յորելեանին, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ Քրիստոնէական Կրօնքի պաշտօնական ընդունման 1700ամեակին:

Ներկայիս գոյութիւն ունի մէկ Մխիթարեան Միաբանութիւն, որուն գլխաւոր կեդրոնատեղին է Վենետիկի Սր Ղազարի Մայրավանքը, իսկ Վիեննայի վանքը կը դառնայ իբրեւ առաջին գլխաւոր Մենաստան: Վիեննայի այս Մենաստանը, իր կարգին ունի տեղական Աբբահայր տիտղոսը կրող Վանահայր մը:

Զոյգ Միաբանութիւններու բոլոր առաքելավայրերն ու կեդրոնները կը կառավարուին Ընդհանրական Աբբահօրմէ եւ իր միացեալ վարչական խորհուրդէն:

Ներկայիս Մխիթարեան միաբանութեան անդամներուն թիւը ներառեալ 3 եպիսկոպոսները՝ 26 է:

### Մխիթարեաններու մշակութային գործունեութիւնը

Մխիթարի օրինակին հաւատարմօրէն հետեւեցան իր հաստատութեան անդամագրուող միաբանները, ջանալով իրագործել անոր

գաղափարականը եւ կատարելագործել ընդհանուր ծրագիրը հետեւողական կերպով: Այսինքն, ուսումնասիրել ու ծանօթացնել Յայ ժողովուրոխն իր պատմական, Եկեղեցական, գրական, լեզուական, գիտական ու մշակութային արժեքները դարերու ընթացքին:

Այս բացայայտ աշխատանքին դիմաց է որ ժմ. դարու Զարթօնք-Վերածնունդը անընդունելի կը դառնայ առանց Միսիթարեաններու:

Միսիթար եւ իր յաջորդները ծրագրուած աշխատանքով տարիներու ընթացքին հաւաքած են հայկական ընտիր ձեռագիրներ, փրկելով զանոնք կորուստէ: Այսօր Միսիթարեան Մատենադարանները ունին շուրջ 5000է աւելի ձեռագիրներու ճոխ հաւաքածոյ մը մեծարժեք ու բացարիկ կարեւորութեամբ:

Միսիթարեան զոյգ վանքերը հեռու գտնուելով աշխարհակործան աղէտներէ, դարերու ընթացքին, համբերատար ու գուրգուրոտ խնամքով հաւաքած են Սփիտոքէն եւ Մայր Յայրենիքէն հայ տպագրութիւններ, կազմելով ճոխ գրադարան մը, տասնեակ հազար հատորներով, հայկական եւ Եւրոպական լեզուներով, ինչպէս նաև ամսաթերթեր ու հազուագիւտ հին հայ լրագիրներ:

Կենետիկի եւ Վիեննայի հարուստ թանգարաններուն մէջ կը պահուին անգնահատելի գանձեր. անոնց ցուցափեղկերուն մէջ արդար հպարտութեամբ ցուցադրուած են հայկական հին դրամներ, գորգեր, յախճապակիններ, արծաթագործութեան եւ սրբազան արուեստի ցուցանմոյշներ, հայկական տարազներ:

300 տարիներէ ի վեր Միսիթարեան մամուլը եւ հրատարակչատունը կը շարունակեն աշխատիլ գիտակից իրենց դերին ու պաշտօնին եւ մինչեւ այսօր Միսիթարեան հրատարակութիւններուն թիւը կը հաշուէ հազարաւոր հատորներ, առանց նկատի առնելու Միսիթարեան պարբերական մամուլը:

Ս. Ղազարի Յայկական Ակադեմիան, հիմնուած 1843-ին եւ Վիեննայի վանքը ունեցան իրենց պաշտօնաթերթերը՝ «Բազմավեպ»ը եւ «Յանդէս Ամսօրեայեն. Երկուքն ալ մինչեւ այսօր անընդհատ կը շարունակեն կատարել հայագիտական իրենց որակաւոր աշխատանքը»:

Միսիթարեան զոյգ վանքերու տպարաններէն լոյս կը տեսնեն հրատարակութիւններու երկար շարք մը, կազմելով Յայ դասական Յեղինակներու հաւաքածոն (գրաբար լեզուով):

Կը յաջորդեն պատմաբանասիրութիւններ: Կը վերակառուցուի Յայկական ամբողջական պատմութիւնը եւ գրականութիւնը. կը մաքրագործուի խեղաթիւրուած Դասական Յայերէն լեզուն (գրաբարը) յարմար քերականութիւններով եւ հետազօ-

տական ուսումնասիրութիւններով:

Հայերէնի կը թարգմանուին յունական եւ լատինական, իտալական, ֆրանսական, գերմանական ու անգլիական գրականութիւններու կարեւորագոյն գործերը: Եւ դեռ, ծաւալուն գրադարան մըն ալ միջազգային ժամանակակից գրական գլուխ-գործոցներու թարգմանութիւններ:

1784-ին առաջին անգամ ըլլալով Յայ ազգը կունենայ իր ամբողջական Պատմութիւնը շնորհիւ Յ. Միքայէլ Չամչեանի եռահատոր հրատարակութեան, որ քաղելով իր ծանօթութիւնները հայ եւ օտար բոլոր աղբիւրներէ, իհմը կը դնէ Յայկական քննական պատմագրութեան:

Արուեստագէտ վարդապետներ կը սկսին փորագրել հայկական քարտէսներ, պատկերազարդել գիրքեր, հրատարակել արուեստի գործեր, հայ պատմական վայրերու, յուշարձաններու նկարներ, վերարժարծելու համար հայ հողին եւ Յայ Սշակոյթին սէրը հոգիներուն մէջ:

98

Յայ թատերական շարժումն ալ շնորհիւ Մխիթարեան աշակերտներու կը սկսի ընդհանրանալ ժթ. դարուն եւ կը ծաւալի հայ գաղութներու մէջ:

1836-1837-ին հրապարակ կ.իջնէ «Նոր Բառգիրք Յայկազեան Լեզուի» երկիատոր բառարանը, որ տակաւին մինչեւ այսօր ալ անգերազանցելի կը մնայ, իբրև ամենէն ընդարձակ եւ անփոխարինելի բառարանը. միակը իր տեսակին մէջ եւ փառքը հայկաբանութեան:

Առաջին անգամ ըլլալով ժողովրդական հայերէնը, աշխարհաբարը կը դառնայ գրական լեզու, մուտք գործելով հայ իրականութեան մէջ, ՏԱՐԳՈՒԹԻՒՆ եւ ԵՂԱՍԱԿ ԲԻՒԶԱՍԴԵԱՆ պարբերականներու հրատարակութիւններով:

Նախորդ Ա. Պոնափարք ճանչնալով Մխիթարեաններու իմացական գործունէութեան բացառիկ երեւոյթը, 1810-ին կայսերական յատուկ իրամանագիրով, Վենետիկի Մխիթարեան Մայրավանքը նկատեց իբրև Ակադեմական Յաստատութիւն: Յայ անուանի գիտնականներու կողքին, Եւրոպացի մեծ հայագէտ գիտնականներ ալ մաս կազմեցին անոր, իբրև անդամներ:

Մխիթարեանները կարելի չէ ճանչնալ ու կարելի չէ գնահատել պէտք եղած ձեւով, եթէ մոռցուի անոնց ՅԱՅ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

Դատեցէք ինչպէս որ կուզէք, գտէք անոնց գործին մէջ ամէն հնարաւոր թեութիւն, կոչեցէք զիրենք միակողմանի, բայց մէկ բան կարելի չէ ենթարկել կասկածի.- անոնց Յայութիւնը, կամ այսպէս կոչուած «Մխիթարեան ազգայնականութիւնը»: Մխիթարեան աշակերտ եւ Յայ արդի բանաստեղծութեան մեծագոյն ներկայացուցիչ

Դանիէլ Վարուժան պարծանքով կը յայտարարէ.- «Ըղեղս հպարտ կը զգայ ինքզինքը՝ հպարտութեամբը Մխիթարեան Իտէալին»:

Այսօր ալ Մխիթարեան Միաբանութիւնը, հակառակ վերջին տարիներու կեանքի զանազան դժուարութիւններուն, կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը քալելով իր հիմնադիրին գծած լուսաշահի ճանապարհէն:

## Մխիթարեան վարժարանները

Գրական գործունեութեան զուգընթաց, Մխիթարեան հայրերը դպրոցական ցանցով մը կը պաշարեն հայ կարեւոր գաղութները, համոզուած ըլլալով թէ կրթութիւնը եւ մտքի լուսաւորութիւնը կենսական բարիք մըն են նոր սերունդներու համար: Անոնք իրենց վարժարաններով անգնահատելի դեր կատարած են անցեալին ու կը շարունակեն կատարել այսօր ազգապահպանումի խոր գիտակցութեամբ: Մխիթարեան վարժարաններէն ելան բազմաթիւ ազգային դէմքեր, գրագէտներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, քաղաքական անձնաւորութիւններ: Այսօր Մխիթարեանները ունին վարժարաններ Փարիզ, Պոլիս, Հալէպ, Պէյրութ, Պուէնոս Այրէս եւ ԼուԱնձելըս:

99

### 3. Ծագումը Զմնառու միաբանութեան

Աբրահամ Պետրոս Ա. Կաթողիկոսի ժամանակ (1742-1749) պատրիարքական կղերը կազմուած էր Եպիսկոպոսներէ եւ մի քանի Անտոննեան կրօնաւորներէ, որոնք, 1750-ին Քրէյմի վանքէն փոխադրուեցան Զմնառու նորակառոյց վանքը: Յոն սկսան ապրիլ հասարակութեամբ, ինչպէս այդ ժամանակուայ հայ վանքերու վարդապետները, ապա Միքայէլ Պետրոս Գ. Գասպարեան Կաթողիկոսի օրով է որ կանոնական սահմանումը տեղի ունեցաւ:

Յակոր Պետրոս Բ. Կաթողիկոսը (1749 - 1753) վանքին նիւթական կառուցուածքը աւարտելէ ետք, իր ամբողջ գուրգուրանքը դրաւ ամրացնելու բարոյական կառուցուածքը, իհմերը նետելով կազմակերպուած հասարակական կեանքի մը Զմնառու վանքին մէջ:

Այսպէս ծագում առաւ Զմնառու Կաթողիկոսական կղերին Միաբանութիւնը, որպէս Կաթողիկոսական Աթոռին կապուած միաբա-

նութիւն, որպէս մնայուն ջոկատ մը, որ տեւապէս եւ առաքելութեան բոլոր մարզերուն համար տրամադրելի ըլլայ Կաթողիկոսին:

## Նպատակ

Միաբանութեան մասնայատուկ նպատակն է, ըստ 1986-ին լոյս տեսած եւ Արեւելեան Եկեղեցիներու կողմէ վաւերացուած կանոնագիրքին թիւ 4 յօդուածին՝

ա.- Կաթողիկէ համայնքը քարոզել հայ ազգին մէջ:

բ.- Քահանայական պաշտօն մատուցանել՝ ի ծառայութեան պատրիարքութեան, միաբանութեան եւ առաքելավայրերուն, ընդ իշխանութեամբ Պատրիարքին, Միաբանութեան Պատրիարքական փոխանորդին եւ թեմերու առաջնորդներուն, ըստ իւրաքանչիւրին իրաւասութեան:

գ.- Միաբանութեան դպրեվանքին մէջ կազմել միաբանութեան նոր անդամներ եւ Կաթողիկոսին տրամադրութեան դմել զանոնք առաքելութիւններուն ի սպաս:

**100**

Առաջին օրէն, Զմնառու միաբանի յատկանիշը եղաւ՝ ցոյց տալ իր ամբողջական տրամադրելիութիւնը ծառայելու հայ ժողովուրդին ուր որ է, հետեւելով Կաթողիկոսին ուղղութիւններուն, որ ի կանոնէ միաբանութեան մեծաւորն է, նոյնիսկ եթէ ինք միաբան չէ: Կաթողիկոսը, արդարեւ, իր ընտրութեան օրն իսկ կը դառնայ միաբան եւ մեծաւոր միաբանութեան:

Անմիջականօրէն սակայն, կը կառավարէ միաբանութիւնը իր կաթողիկոսական փոխանորդին միջոցաւ, որ առ հասարակ է նաև վանքին մեծաւորը:

Իրենց հնազանդութեան ուխտին զօրութեամբ, Զմնառեանականները կրնան անձամբ սեպուիլ մնայուն կերպով զօրաշարժի ենթարկուած գունդ մը առաքեալներու, որոնք չեն կրնար մերժել իրենց առաջարկուած որեւէ առաքելութիւն, բացի երբ շատ լուրջ ու ծանր պատճառ մը ունին մերժելու:

Անոնք, իրենց ներդրումով ու անձնագոհուրդութեամբ, հերոսական դրուագներ արձանագրած են Յայ Կաթողիկէ Եկեղեցւոյ պատմութեան մէջ: Փոքր Ասիոյ գաւառներու մէջ դիմագրաւած են Եղբայրասպան կրիւներ, Կովկասի մէջ, աւելի ուշ, իրենց առաքելութիւնը կատարած են գաղտնաբար: Անոնցմէ շատեր աքսորուած, բանտարկուած կամ սպաննուած են:

Մեծ Եղեռնի տմարդկային արհաւիրքին ինկան 15 նահատակ-

Աեր, որոնցմէ Երանելի Իգնատիոս Մալոյեանը՝ տիպարը 21երորդ դարու կղերականին, պարծանքը Հայ Կաթողիկէ ու Տիեզերական Եկեղեցւոյ, հզօր պաշտպանը Զմնառու Միաբանութեան ու անոր մեծ դպրեվանքին:

## Վարչաձեւ

ա.- Զմնառու միաբանութեան մեծաւորն է Ամէն. Կաթողիկոս Պատրիարքը, որ կը կառավարէ միաբանութիւնը իր պատրիարքական փոխանորդով, որ իր կարգին, չորս վարչական հայրերու հետ միասին կը կազմեն վարչական խորհուրդը որուն պարտականութիւնն է:

- Մատակարարել վանապատկան ինչքերը ու հարստութիւնները
- Արժեւորել միաբանութեան բարոյական վաստակները
- Ոգեւորել անոր առաքելական խանդը
- Յրահրել անոր հոգեւոր աւանդը
- Պայծառացնել անոր ազգային ու մշակութային գանձերը եւ դեռը

**101**

Ամրապնդել անոր պատմական գոյատեւումը նոր միաբաններ պատրաստելով 21երորդ դարու հոգեւոր, տոհմային ու ազգային պահանջներուն համաձայն

բ.- Միաբանութիւնը կը կառավարուի յատուկ սահմանադրութեամբ վաւերացուած 24 Փետրուարին 1986-ին ինչպէս նաեւ կանոնական ընդհանուր ժողովներուն ցուցմունքներով եւ որոշումներով, որոնք կը գումարուին վեց տարին անգամ մը կամ երբ հարկ է Ամեն. Հոգեւոր Տիրոջ՝ միաբանութեան մեծաւորին եւ Արեւելեան Եկեղեցներու յատուկ արտօնութեամբ:

## Վիճակագրական համայնապատկեր

Զմնառու Միաբանութեան այժմ անդամներու ընդհանուր թիւն է 45 միաբան հայրեր կը հաշուին իր շարքերուն մէջ՝

2 Կաթողիկոս Պատրիարքներ, 7 Եպիսկոպոս Հայրապետներ, 2 Թ. Ծ. Վարդապետներ, 36 Վարդապետ Հայրեր: Անոնք կը պաշտօնավարեն 16 երկիրներու մէջ

Լիբանան 18 - Միացեալ Նահանգներ 5 - Ֆրանսա 5 - Սուլիա 4 - անատա 3 - Իրան 2 - Յորդանան 1 - Երուսաղէմ 1 - Աւստրալիա 1 -

Թուրքիա 1 - Արժանդին 1 - Իտալիա 2 - Հայաստան 1 - Ռուսիա 1

1.- Միաբաններու միջին տարիքն է 58 տարեկան

2.- Հրաժարեալ միաբաններ՝ 4

Միաբանութեան կը պատկանին 3 դպրեվանքեր, որոնց մէջ քահանայութեան կը պատրաստուին

Յալէպի փոքր դպրեվանք՝ 8 հոգի

Զմնառու փոքր դպրեվանք՝ 3 հոգի

Զմնառու մեծ դպրեվանք՝ 9 հոգի

Միաբանութիւնը կը հրատարակէ նաեւ պարբերաթերթ մը «Զուարթնոց» վերնագրին տակ, որ կը ծառայէ սերտացնելու ու ամրապնդելու կապերը միաբաններու միջեւ եւ հրատարակելու միաբանութեան պատմութիւնը հետաքրքրող ուսումնասիրութիւններ:

**Եզրակացութիւններ ապագայի հեռանկարով**

Ներկայիս Միաբանութեան ամենէն հրատապ հարցերն են՝

ա.- Կոչումնները. կարիքներն կ,ածին օրէ օր, միջոցները կը նուազին: Դարցը ոչ թէ ծանրաթեռնուած առաքեալներու բեռը թեթեւցնելն է, այլ հաւատացեալներուն կոչին պատասխաննելու կարելիութիւն ունենալը: Ինչ հսկայ աշխատանք կայ կատարելիք, ինչ ծրագիրներ առկախ մնացած՝ աշխատող բազուկներու պակասին պատճառով:

բ.- Աշխատիլ լրջօրէն կղերին հոգեւոր ու տոհմային որակաւորման վրայ, ստեղծելով առիթներ:

գ.- Ծոշափելի կարեւորութիւն տալ կղերին հոգեւոր տոհմային եւ մարդկային պատրաստութեան:

դ.- Տնտեսական աւելի բժախնդիր եւ գիտական կազմակերպում՝ ընդառաջնելու հոգեւոր եւ մշակութային ծրագիրներու իրագործման:

Եւ այժմ կը փակեմ Արշակ Զոպանեանի վկայութեամբ. «Լիբանանի մէկ բարձունքի վրայ Հայաստանի կտոր մը գտայ: Անցեալին մէջ հայ ազգային ու մտաւոր կեանքի վառարան մը հանդիսացած այս վանքը՝ վաղը շատ աւելի օգտակար հաստատութիւն մը պիտի դառնայ անշուշտ եւ ազատագրեալ Հայաստանի գօրացման ու պայծառացման պիտի ծառայէ (22 Մայիս, 21):

Իբրեւ թէ այս մարգարեաչունչ փափաքը այսօր իսկ իրականանար, սակայն համոզուած ենք թէ կամենալը կարենալ է:

Թող այս շնորհքը բոլորս համակէ որպեսզի հաւատարին մնանք իր խօսքին՝

#### 4. Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութիւն՝ հիմնուած Կ. Պոլիս 5 Յունիս 1847-ին

Յիմնադիրը՝ Անտոն-Պետրոս Թ. Յասունեան Կաթողիկոս-Պատրիարք Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եւ առաջին հայազգի Կարդինալ Տիեզերական Եկեղեցւոյ, 1840-ականի շրջանին կը ծրագրէ հիմնել «Յաւատաւոր Կոյսերու» Միաբանութիւն մը, որ նուիրուի՝ վանական ու առաքելական կեանքի Եւ որուն գլխաւոր նպատակն ըլլայ դաստիարակել Հայ Ազգին, ի մասնաւորի աղքատ դասակարգի աղջիկ զաւակները։ Այս բարենպատակ ու ազգօգուտ ծրագիրը կ, իրականանայ գործակցութեամբ Մայր Սրբուհի Յածի-Անտոնեանին, որ դեռասի տարիքէն ներանձնացեալ ու բարեսիրական կեանը վարած էր Եւ իբրեւ «տան մայրապետ» զբաղած աղքատ փոքրիկներու կրթութեամբ։ 9 դեկտեմբեր 1847-ին Մայր Սրբուհին չորս նուիրեալ քոյրերով կ, ուխտեն Աստուծոյ՝ Յնազանդութիւն, Ողջախոհութիւն, Աղքատութիւն հանդերձ առաքելական կեանքի յանձնառութեամբ։ Այսպէս սկիզբ կ, առնէ «Աստուածամօր Տունը»՝ Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութիւնը, որուն գլխաւոր նպատակն էր՝ ուսուցանել Եւ կրթել Հայ աղջկան միտքն ու հոգին քրիստոնէական, մարդկային ու ազգային արժեքներով։

103

Միաբանութիւնը կանոնապէս ճանչցուած ու հաստատուած է Հայ Կաթողիկէ Պատրիարքական Կոնդակով տրուած՝ 5 Յունիս 1847-ին, իսկ Քահանայապետական Կոնդակով՝ 11 Յունիս 1932-ին, Միաբանութիւնը ենթարկուած է Յոռմի Սրբազան Պապին, որպէս իր Գերագոյն Մեծաւորին։

Մայր Տունը՝ նախ շատ համեստ, փայտաշէն տնակ մը կ, ըլլայ. տարիներ ետք, Յիմնադիր Յօր ջանքերով կը կառուցուին Մայր Տուն ու Նորընծայարանը Բերայի Վալիտէ Զեօշնէ փողոցին վրայ։ Յաջորդաբար Պոլսոյ մէջ կը հիմնուին կրթական օճախներ՝ մանկապարտէզ, նախակրթարան, մինչեւ բարձրագոյն վարժարաններ։ Պոլսէն ետք առաքելութեան դաշտը կը տարածուի Արեւմտեան Հայաստանի Եւ Կիլիկիոյ աւելի քան քսան քաղաքներու ու գիւղերու մէջ։

20-րդ դարու արշալոյսին, հայ աղջիկը հպարտ է իր տոհմային դաստիարակութեամբ։ Լոյս, գիտութիւն կը ստանայ, կրօնական ու բարոյական արժեքներով կը կերտուի, ապագայ մայրութեան, ճշմա-

րիտ «Յայ Մայր» ըլլալու կոչումին կը պատրաստուի: Սա կը տեւէ մինչեւ 1915:

Կը հասնի Մեծ Եղեռնը, որ դառնօրէն կը հարուածէ, կը քանդէ Յայուն ստեղծագործ, բարգաւած կեանքին հետ նաեւ վանքերն ու գործօն հաստատութիւնները՝ Յայ Քոյրերուն: Կը նահատակուին տասներեք միաբան քոյրեր, յիսունինգ ուրիշներ կը տեղահանուին, կաքսորուին:

Զինադադարի վաղորդայնին, Յայ Մայրապետը հրատապ պատասխանատուութիւն մը ունի. «Տէր կանգնիլ՝ վերապրած հայ բեկորներուն, հոգատար մայր դառնալ՝ ծնողազուրկ հայ զաւակներուն»:

**104**

1923-ին Մայրավանքը եւ նորմնծայարանը Պոլսէն կը փոխադրուին ապահով վայր, Յօնմ՝ յակտենական քաղաքը: Մայրավանքի այժմու շենքը՝ բարեացակամ նպաստը Մալթայի Ասպետներու Յիմնարկին եւ արգասիքը՝ Յայ Կաթողիկէ Առաջնորդներուն եւ մեր Քոյրերուն զոհողութեան, Յօնմի Մոնթէվերտէ բլուրին վրայ, Վինչենծօ Մոնթի փողոց, թիւ 9, կը դառնայ նոր օրրանը միաբանութեան Ընդհանուր Վարչութեան կրօնաւորական կազմաւորումի կեղոնը՝ նոր կոչումներու, որոնք կը վերընձիւղեն Միաբանութեան տարագրեալ բայց միշտ ամրակուռ բունը:

Սփիտքեան իրականութիւնը պէտք էր անարգել դառնար նաեւ Յայ Քոյրերուն կեանքին եւ առաքելութեան իրականութիւնը: Յայապահանումի անյողողող ոգիով՝ հարկ էր որբանոցներուն կից դպրոցներ կառուցանել ու դարբնել ապագան տարագիր սերունդներուն: Լիբանանի մէջ 1923-ին արդէն հիմք կը դրուի Յօհիսիմեանց Վարժարանին: Այնուհետեւ Սուրբիա, Եղիպտոս, Յորդանան, Իրաք, Իրան, Ֆրանսա եւ այլ վայրեր:

Աներկբայ այս հոգիով հայ մայրապետը կը շարունակէ քալել գաղթական իր ժողովուրդին հետ, կը հասնի մինչեւ հեռաւոր ու անծանօթ հորիզոններ՝ Միացեալ Նահանգներ, ուժացումի սպառնալիքն փրկելու նորահաս սերունդները՝ Յայ Ազգին: 1965-ին Փենսիլվանիա Նահանգին Ֆիլատելֆիա քաղաքի մէջ կը հիմնէ առաջին հայ վարժարանը: 1980-ին եւ 1983-ին կը յաջորդեն Պոսթնի եւ Լուսաճելըսի վարժարանները:

1991-ին մեր Հայրենիքին անկախութեամբ կ'իրականանայ դարաւոր երազը Հայ Քոյրերուն: 1988-ի 7-ը Դեկտեմբերի ահաւոր երկրաշարժը իսկական ահազանգ նը կ.ըլլայ Հայ Քրոջ խղճին: Ան անվարան ինն է՝ Սպիտակ, Կիւմրի ամոքելու ցաւատանց մեր ժողովուրդին անդարմանելի վիշտը:

1992-ին, Հիւսիսային Հայաստանի Ախուրեանի շրջանին, Դիմրիէն 20 քմ. հեռու, Արեւիկ գիւղին մէջ, աղքատիկ, ցուրտ ու անպաճոյծ տուն մը կ.ըլլայ առաջին վանքը, առաքելավայրը երեք կամաւոր քոյրերու: Անշուր այս վայրէն պիտի ճառագայթէր հաւատքի լոյս ու աւետարանական սէր՝ հայրենի մեր ժողովուրդին, որ աւելի քան 70 տարիներ Աստուծոյ օսքէն գուրկ մնացած էր: Քրիստոնեայ Հայուն վերածնունդն է: Արեւիկէն ետք, Կիւմրիի մէջ, ապա Կալինինոյի շրջանի՝ Տաշիր գիւղաքաղաքը, յարակից գիւղերով, աւաններով, յետոյ ճաւախքի տարածքին Նեշտեան, իր տասնեակ գիւղերովը կը դաշնան քոյրերուն համար քրիստոնէականի, կրթական, մարդասիրական գործունեութուններու կայաններ: Բարեսիրական մեծ Հաստատութիւններ, ի մասնաւորի Արեւմտեան Ելոպայի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ՝ Association Alliance Arménienne -ը զօրավիգ կը կանգնին քոյրերուն առաքելութեան: Ներկայիս, Կիւմրիի մէջ, «Տիրամայր Հայաստանի»՝ Որեւրտ Պողոսեան եւ Որիիններ Համալիրը, որպէս կրթարան, ուսումնարան, ընծայարան եւ ընկերային ծարայութեան վայր, արդէն կը գործէ վեց տարիներէ ի վեր: Մեծաթիւ կարուտեալ, որբ երեխաններ, աղջիկներ դպրոցական ու համալսարանական ծրագրին հետ կը ստանան առողջ սնունդ, կրօնական, մշակութային, գեղարուեստական ու մարդկային դաստիարակութիւն:

Հայաստանի հիմնական ու դաստիարակչական գործունեութիւններէն է ամառնային եռամսեայ ճամբարային ծրագրին իրականացունը: Միայն Ծաղկաձորի մէջ, ամէն տարի մինչեւ 800 երկսեռ աղքատ երեխաններ հոգեպէս, ֆիզիքապէս կը կազդուրուին, կարծեւորուին:

Մայրավանքը Յօռմի մէջ, գլխաւոր կայանն է Ընդհանուր Վարչութեան: Ընդհանուր Մեծաւորուիին չորս խորհրդականուիիններով օրինաւոր հեղինակութիւնն է Միաբանութեան, կանոնապէս ընտրուած ամէն վեցամեային Միաբանութեան Ընտրական Ընդհանուր ժողովէն: Նորընծայարանը՝ նոր անդամներու կազմաւորումի վայրը, ուր նոր թեկնածուներ կը ստանան կրօնաւորական եւ գիտական լուրջ պատրաստութիւն: Միաբանութիւնը ունի նաեւ նախապատ-

րաստական կեդրոններ, փոքր ընծայարաններ՝ Կիւմրիի եւ Յալէաի մէջ:

3000-ամեակի այգաբացին, Միաբանութիւնը 157 տարիներ կը հաշուէ արդէն: Իր երկար, մերթ բեղուն, մերթ ազազուն կեանքին ընթացքին ան քալեց անշեղ, պայքարեցաւ ու ջանաց անայլայլ պահել Յիմնադիր Յօր լուսաշող հոգին, որ Է՝ «Յաւատարմութիւն Աստուծոյ կամքին՝ որ կը յայտնուի Սուրբ Կանոններով եւ Մեծաւորուիհիներու հրամանով»: Յիմնադիր Յայրը առաջին օրէն Աղօթամատեանին հետ Կանոնագիրքն ալ կը յանձնէ իր Միաբանութեան, որպէս ուղեցոյց ու պահապան: «Միաբանութիւն մը, կը գրէ ան, չի կրնար տեւողական ըլլալ՝ եթէ իր անդամները կանոնաւոր ու կարգաւորեալ կերպով կառավարելու համար պատշաճ օրէնք չունենայ»:

Անարատ Յղութեան Յայ Քոյրերու Միաբանութիւնը կը կրէ Աստուածամօր ամենագեղեցիկ մէկ տիտղոսը: Իր ընդիանուր վախճանն է. «Իրագործել Աստուծոյ ծրագիրը եւ փնտռել միայն աստուծոյ փառքը»: Իսկ առանձնայատուկ նպատակն է. «Ծառայել Յայ ժողովուրդի զաւակներուն, բարոյական ու տոհմային դաստիարակութեամբ»:

**106**

Սէր Աստուծոյ, Սէր Յայ Եկեղեցւոյ եւ Ազգին հանդէայ՝ Յայ մայրապետին եռեակ մոլիչ ոյժն ու գերագոյն գաղափարականը:

## Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

Եկեղեցու առաջին միսիոներները Հայաստան են եկել 19-րդ դարի վերջին: Պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում հիմնվել են Եկեղեցու ճյուղեր, որոնք գործել են մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը: 1991-ին միսիոներները կրկին եկան Հայաստան: Պաշտոնապես Եկեղեցին Հայաստանում ճանաչվել է 1994 թվականի դեկտեմբերի 22-ին: Այժմ Հայաստանում կա ավելի քան 2000 անդամ, որոնք հավաքվում են մի քանի ծխերում: Յուրաքանչյուր ծուխ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի՝ Հայաստանի կրոնական համայնքի մասն է: Եկեղեցու ծխեր կան Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Աշտարակում, Արարատում, Չարենցավանում, Ալավերդիում և այլ բնակավայրերում: 1998-ից սկսած՝ Եկեղեցին «ԿՕՍ բարեգործություններ» կազմակերպության միջոցով եռանդուն կերպով ողջ Հայաստանով ներգրավվել է մարդասիրական աշխատանքներում: Երկրին օգնություն է հատկացվել սննդի, հագուստի, հիգիենիկ պարագաների տեսքով, ինչպես նաև օժանդակություն է ապահովվել առողջապահության, գյուղատնտեսության և կրթության ոլորտներում:

107

### Հիմնական տեղեկություններ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին քրիստոնեական դավանանք է, ամբողջովին նվիրված Նոր Կտակարանի ուսումնումքին, որը հիմնված է Հիսուս Քրիստոսի ծննդի, կյանքի, խաչելության և հարության վրա: Հավատքն առ Հիսուս Քրիստոսի աստվածայնությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վարդապետության հությունն է: Եկեղեցու անդամները հավատում են, որ Հիսուս Քրիստոսը Աստծու Որդին է, աշխարհի Փրկիչը, խոստացված Մեսիան, որն ապրել է, մահացել, հարություն առել և Միջնորդն է Աստծու և նրա զավակների միջև: Եկեղեցու անդամները սիրում և փառաբանում են Քրիստոսին և փորձում են մեծարել Նրան՝ ապրելով բարի և առաքինի կյանքով: Սա արտահայտված է ազնվու-

թյան, բարոյականության, աշխատասիրության, ամուր միավորված ընտանիքների և ուրիշներին ծառայելու սկզբունքների եռանդուն կենսագործնան մեջ:

Դիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին հաճախ անվանում են «մորմոններ»: Սա մականուն է, որ տրվում է Նրանց՝ Մորմոնի Գիրքն Աստվածաշնչին հավասարազոր Սուրբ Գիրք ընդունելու համար: Եկեղեցին որպես հաստատություն ակնարկելիս խրախուսվում է օգտագործել նրա պաշտոնական անվանումը՝ «Դիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի» կամ «Դիսուս Քրիստոսի Եկեղեցի» անունը: Անդամներին ակնարկելիս խրախուսվում են «Դիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ» կամ «Դիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներ» արտահայտությունները:

108

Անդամները հավատում են, որ Դիսուս Քրիստոսի սկզբնական Եկեղեցին իր լիակատար իշխանության հետ կորել էր Երկրից առաջին առաջալների մահից կարծ ժամանակ անց: Նրանց մահից հետո մնացած հավատացյալ հետևորդները կենդանի մնալու համար պայքարել են զարիրելի ծննդան պայմաններում: Նրանց հաստատուն հավատքի շնորհիվ քրիստոնեությունը պահպանվեց և մ.թ. 2-րդ դարի վերջին դարձավ Դիսուսի աշխարհի իշխող կրոնը: Այնուամենայնիվ, առանց Տասներկու Առաջալների Խորհրդի իշխանության և ղեկավարության, մարդիկ սկսեցին հետևել այլ աղբյուրների՝ դավանաբանական ըմբռննան համար, և որպես արդյունք շատ պարզ և արժեքավոր ճշմարտություններ կորսվեցին: Դարերի ընթացքում Առաջալների իշխանության պակասի պատճառով սկզբնական Եկեղեցին մասնատվեց բազմաթիվ ճյուղերի:

Դիսուս Քրիստոսի Եկեղեցին Երկրի վրա վերականգնվել է 19-րդ դարի առաջին կեսին նախնական Եկեղեցու իշխանության, արարողությունների և կազմակերպության հետ, ներառյալ՝ կենդանի Մարգարեն և առաջալները: Ժամանակի մեջ Դիսուս Քրիստոսի նախնական Եկեղեցուց տարբերելու համար վերականգնված Եկեղեցին անվանվել է «Դիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»: «Սրբեր» բառն օգտագործվում է իր սկզբնական, աստվածաշնչյան իմաստով՝ մատնանշելով Եկեղեցու անդամներին, որոնք աշխատում են հետևել Դիսուս Քրիստոսի օրինակին իրենց ամենօրյա կյանքում:

Եկեղեցու ամենածանաչված հատկանիշներից մեկը ընտանեկան կյանքի և բարձր բարոյական սկզբունքների շեշտադրումն է: Այն նաև մեծապես հարգվում է առողջության օրենքի համար, որը ներառում է հրաժարում ոգելից խմիչքից, ծխախոտից, սուրճից, թեյից և թմրանյութերից:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներն օրինապահ և հավատարիմ քաղաքացիներ են: Նրանք են-թարկվում են օրենքին, մասնակցում և աջակցում են իշխանության բոլոր մակարդակների գործերին, քվեարկում են ընտրություններում և ծառայում են իրենց ազգերի գինված ուժերում:

### **Մորմոնի գիրքը** (և մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին)

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերականգնման կենտրոնական իրադարձությունը Մորմոնի Գրքի հայտնվելը և հրապարակումն էր: Դա մի սրբազն սուրբ գիրք է և Աստվածաշնչի ընկերակիցը:

Գիրքը Մորմոն մարգարեի անվանակիրն է, որը համառոտագրել է հիշատակարանների ավելի վաղ պահապանների արձանագրությունները և իր մահից կարճ ժամանակ առաջ հիշատակարանները վստահել իր որդի Մորմոնիին: Քանի որ իր ժողովուրդը Վերջին պատերազմում կանգնած էր բնաջնջման առջև, Մորոնին ավելացրեց իր կյանքի ժամանակամիջոցի իրադարձությունների մասին սեփական հաշվետվությունը, իսկ այնուհետև թաղեց սուրբ պատմությունը մի բլրի վրա, որտեղ այն մնաց չհայտնագործված 14 դար, մինչև նա թարգմանելու համար այն հանձնեց Զոգեֆ Սմիթին:

**109**

### **Տաճարներ և ընտանիքներ**

Անդամները խոր հավատք ունեն ընտանիքի հավիտենական բնույթի նկատմամբ, ուստի վերաբերվում են տաճարներին հատուկ ակնածանքով և հարգանքով: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տաճարները նախատեսված չեն կանոնավոր շաբաթական երկրպագությունների համար: Դրանք կառուցված են յուրահատուկ, ընտանիքի վրա կենտրոնացված արարողությունների համար, որոնք նախատեսված են ընտանիքի անդամներին որպես հավերժական միավոր միացնելու համար: Վերջին Օրերի Սրբերի կողմից ընտանիքի կարևորությունը ոչ մի տեղ ավելի վառ չի արտահայտվում, ինչպես տաճարում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին գնահատում է քաղաքացիական ամուսնությունների արժեքավորությունը և դիտում է դրանք որպես օրինական, բարոյական և պարտավորեցնող պայմանագրեր կողմերի մահկանացու կյանքի ընթացքում: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հայտարարում

է, որ ամուսնությունը և ընտանիքը կարող են շարունակվել հանդերձյալ կյանքում, երբ զույգերն իրենց ամուսնությունները և ընտանիքները կնքում են հավերժության համար: Նման հատուկ ամուսնությունները պետք է կատարվեն սուրբ տաճարում, հատուկ լիազորված քահանայության կրողների կողմից: Նրանք նաև հավատում են, որ կնքման արարողությունների վավերականության համար ամուսինները պետք է բացարձակ նվիրվածություն հանդես բերեն մեկը մյուսի հանդեպ իրենց ամուսնության ողջ ընթացքում:

### Ընտանեկան պատմություն

110

Եկեղեցու անդամները հավատում են, որ սրբազան և կարևոր տաճարային օրինությունները ոչ միայն նրանց համար են, ովքեր այժմ ապրում են, այլև մահացածների համար նրանց փոխարեն արարողություններին մասնակցելու դեպքում: Ընտանիքի ապրող անդամները հաճախ գործում են որպես իրենց ննջեցյալներին փոխարինողներ, հույսով, որ տաճարային այդ օրինությունները կընդունվեն նրանց կողմից, ում համար դրանք արվում են: Քանի որ ընտանիքի հանգուցյալ անդամների ինքնություննը հաստատել է պետք տաճարային աշխատանքը կատարելուց առաջ, անդամները խրախուսվում են եռանդուն ձևով տեղեկություններ փնտրել իրենց նախնիների մասին:

Որպես հանգուցյալ նախնիների համար տաճարային այս աշխատանքի անբաժանելի բաղադրիչ՝ Եկեղեցին գործածում է աշխարհում ամենամեծ ծագումնաբանական գրադարանը՝ Տաճարի հրապարակի մոտ, Յուտա նահանգի Սոլթ Լեյք Սիթի քաղաքի կենտրոնում: Այսօր հարյուր միլիոնավոր մանրաժապավենային արձանագրություններ են առկա անվճար հանրային հետազոտությունների համար: Անձնական գաղտնիությունը ապահովելու և տվյալները ոչ ճիշտ նպատակներով օգտագործելուց խուսափելու նպատակով հավաքածուն կենտրոնանում է գլխավորապես հանգուցյալ անձերի տվյալների վրա (նախքան 1920թ.): Բոլոր արձանագրությունները ձեռք են բերվել օրինական ճանապարհով տարբեր կառավարությունների և տեղական իշխանությունների (որոնց հրավասության ներքո են գտնվում արձանագրությունները) հավանությամբ և գործակցությամբ: Ընտանեկան պատմության կենտրոնները սփոված են շատ տեղերում, և Եկեղեցին նաև շահագործում է համակարգչային ցանցի Ընտանեկան պատմության ամենամեծ կայքը հետևյալ հասցեով՝ [www.familysearch.org](http://www.familysearch.org):

## Հարաբերություններ այլ Եկեղեցիների և դավանանքների հետ

Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մեկ այլ հիմնարար համոզմունք ամփոփված է հավատո հանգանակի տասնմեկերրորդ կետում: Այն ասում է. «Մենք ընդունում ենք ամենազոր Աստծուն Երկրապատճելու մեր արտոնությունը՝ համաձայն մեր խղճի թելադրանքի և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք Երկրապատճեն ում, ինչպես և որտեղ կկամնան»:

Անդամները խորապես հարգում են բարոյական ազատությունը՝ յուրաքանչյուր անհատի ընտրելու իրավունքը, թե ինչին հավատալ և ինչը կիրառել: Չնայած իր անկախությանը և որոշ տարբերվող համոզմունքներին՝ Եկեղեցին բարյացակամ է մյուս Եկեղեցների և կրոնների հանդեպ:

### Միսիոներական աշխատանքի բնույթը

111

Մոտենալով իր Երկրային ծառայության ավարտին՝ Տեր Յիսուս Քրիստոսը պատգամեց իր աշակերտներին. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Յօր, Որդու և Սուլը Յոգու անունովը» (Մատթեոս Ի.19): Յարությունից հետո իր առաքյալներին այցելություններից մեկի ընթացքում Յիսուսը վերահստատեց, որ նրանք պետք է «իր վկաները լինեն Երուսաղեմում, ողջ Հրեաստանում ու Սամարիայում, մինչև Երկրագնդի բոլոր ծայրեր» (տե՛ս Գործը Ա.8): Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամների համար աստվածաշնչյան այդ հանձնարությունը սրբազն պարտավորություն է դնում Եկեղեցու անդամների վրա՝ վկայել բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների մեջ:

Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներները գալիս են շատ Երկրներից և մշակույթներից: Ոմանք նշանակվում են ծառայելու իրենց հարազատ Երկրում, մյուսները ծառայում են իրենց հայրենի Երկրից հեռու: Եկեղեցու միսիոներների մեծ մասը 19–26 տարեկան Երիտասարդ տղանարդիկ և կանայք են, թեև զգալի թվով տարեց զույգեր նույնպես ծառայում են միսիայում: Ներկայում 50000-ից ավելի միսիոներներ ծառայում են ավելի քան 330 աշխարհասփյուռ միսիաներում: Բոլոր միսիոներները ծառայում են առանց վճարի: Նրանց մեծ մասը ծախսում է սեփական խնայողությունները և ընտանիքի տված օժանդակությունը՝ աջակցելու հա-

մար իրենց՝ 18 ամսից մինչև երկու տարի տևող միսիոներական ժամանակամիջոցում:

Միսիոներները սովորեցնում են և Աստվածաշնչից, և Մորմոնի գրքից: Վերջինս համարվում է Աստվածաշնչին ընկերակից սուրբ գրքի մի հատոր: Երկուսն էլ վկայում են Քիսուս Քրիստոսի աստվածայնության մասին:

**Ուսումնասիրությունը պատրաստել է  
«Դամագործակցություն հանուն ժողովրդավարության»  
կենտրոնը Բաց հասարակության ինստիտուտի  
օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի  
և Նիդեռլանդների Թագավորության կառավարության  
կողմից ֆինանսվորվող «Կրոնական  
հանդուրժողականությունը Դայաստանում»  
ծրագրի շրջանակում:**

---

## **«ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ-2009» ՄԱՍՈՒԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրոնական անհանդուրժողականության, խտրականության և թշնամանքի քարոզության դրսևորումները հայկական մամուլում:

113

Ուսումնասիրվել են մամուլի այն նյութերը, որոնք պարունակում են կրոնական անհանդուրժողականություն կամ թշնամանքի կոչեր կամ նկարագրում են նման դեպքեր: Ուսումնասիրվող մամուլի նյութերը տեղադրված են [www.religions.am](http://www.religions.am) կայքի «Մամուլի մոնիթորինգ» բաժնում:

Այս ուսումնասիրության համար չափորոշիչներ են հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 9-րդ և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ ՔՔԻՄԴ) 18-րդ հոդվածները, «Անհանդուրժողականության բոլոր ձևերի և կրոնի ու հավատքի հիմքով խտրականության վերացման մասին» հռչակագրի (1981) սահմանումները, ինչպես նաև ՀՀ սահմանադրությունը և ՀՀ օրենսդրությունը, որոնք, բացի «Խոհճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից<sup>1</sup>, համապատասխանում են միջազգային չափանիշներին:

Անհանդուրժողականության գնահատման հիմնական չափանիշը «Անհանդուրժողականության բոլոր ձևերի և կրոնի ու հավատ-

---

<sup>1</sup> «Դամագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի կողմից օրենքի վերլուծությունը կարելի է գտնել [www.religions.am](http://www.religions.am) կայքում:

քի հիմքով խտրականության վերացման մասին» հռչակագրի (1981) սահմանումներն են: Այս փաստաթղթում կա երկու սահմանում: Դրանք պարզաբանում են, թե ինչն է համարվում հիմնական կամ ավանդական կրոնին չդավանող կրոնական խմբերի և անհատների նկատմամբ անհանդուրժողականության, խտրականության և թշնամանքի սերմանմանը միտված քարոզ: Հռչակագրի<sup>1</sup> 2-րդ հոդվածի 2-րդ մասում «կրոնի և հավատի հիմքով անհանդուրժողականությունը և խտրականությունը» սահմանվում է այսպես.- «Ներկա հռչակագրով, «կրոնի կամ հավատքի հիմքով անհանդուրժողականություն և խտրականություն» արտահայտությունը նշանակում է ցանկացած տարրերակում, բացառում, սահմանափակում կամ նախընտրություն, որ հիմնված է կրոնի կամ հավատքի վրա, և որի նպատակը կամ հետևանքն է կանխել կամ խոչընդոտել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար ճանաչումը, վայելումը կամ կիրառումը»:

114

Ավելին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է կրոնական թշնամանք քարոզելու անթույլատրելիությունը: Ըստ այդ համաձայնագրի՝ կրոնական ատելության սերմանումը հավասարագոր է թշնամանքի և խտրականության քարոզին:

«Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության պաշտպանությունը, որ առաջ է բերում խտրականություն, թշնամանք կամ բռնություն, արգելվում է օրենքով»:

ՀՀ սահմանադրության 8.1-րդ հոդվածում նշված է. «Դայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը», իսկ ըստ 26-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր որ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը»:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

<sup>1</sup> «Դամագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի կողմից օրենքի վերլուծությունը կարելի է գտնել [www.religions.am](http://www.religions.am) կայքում:

ԶԼՍ-ներով կրոնական թշնամանքի և անհանդուրժողականության քարոզը արգելված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով. «Արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել՝ ... բ) ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու նպատակով»:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը 63-րդ հոդվածում քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգանքների շարքում ամրագրել է նաև «հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը»:

Գործնականում ԶԼՍ-ներում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, որոնք կրոնական թշնամանք են քարոզում, սակայն համապատասխան մարմինները հոդվածի հեղինակներին պատասխանատվության չեն ենթարկում: Հետագա շարադրանքում կներկայացնենք բազմաթիվ հոդվածներ, որոնք խախտում են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային կոնվենցիաներով ամրագրված խղճի ազատության իրավունքները:

**115**

Գնալով ավելի հաճախակի հանդիպող կրոնական խտրականության դեպքերը: 2003 թվականից դպրոցներում դասավանդվում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան: 2007-ի փետրվարի 22-ին Աժ-ճ ընդունել է «ՀՀ և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, որը Եկեղեցուն թույլ է տալիս դերակատարություն ստանձնել հանրակրթական դպրոցներում:

**«Հոդված 8. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությունը կրթական ոլորտում**

**1. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի՝**

**1) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում.**

**2) մասնակցելու պետական կրթական հաստատություններում**

**«Յայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները.**

**3) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները՝ այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացմանն առնչվող խնդիրները.**

**4) նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով:»:**

**116**

«ՀՀ և Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբարությունների մասին» օրենքը թույլ է տալիս նասնակցել «Յայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրերի և դասագրքի մշակման աշխատանքներին: Եկեղեցին պարբերաբար կազմակերպում է հավաքներ ուսուցիչների համար, ներկայացնում է ուսուցիչների թեկնածությունը: Այդ առարկայի դասավանդման գործընթացից սկսած՝ դպրոցներում հաճախ են տեղի ունենում կրոնական անհանդուրժողականության դեպքեր: Յաճախ «Յայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդմանը ուղղակիորեն նասնակցում են ՀԱՍԵ սպասավորները, կամ դասերը տեղի են ունենում Եկեղեցիներում, որը հակասում է «Կրթության մասին» ՀՀ օրենքին, որտեղ սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Իրականում դպրոցներում «Յայ Եկեղեցու պատմություն» առարկան վերածվում է ուղղակի կրոնի դասավանդման առարկայի:

Թեև սույն գեկույցը պատրաստելիս հեռուստաշնկերությունների մոնիթորինգ չի անցկացվել, այդուհանդերձ չափազանցություն չէ այն, որ կրոնական կազմակերպությունների դեմ թշնամական կամ արհամարհական, նսեմացնող արտահայտություններ կարելի է լսել բազմաթիվ հեռուստաշնկերությունների եթերներից:

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել Յայաստանի տպագիր մամուլն ու որոշ կայքեր, որոնք պարբերաբար անդրադառնում են կրոնական խոնդիրներին: Պետք է նաև նշել, որ վերջին տարիներին Յայաստանի որոշ լրատվամիջոցներ արդեն հանդես են գալիս կրոնական հանդուրժողականության դիրքերից և պարբերաբար անդրադառնում են այդ խոնդիրներին, մասնավորապես «Ժամանակ Երևան», «Յրապարակ» օրաթերթերը, [www.Iragir.am](http://www.Iragir.am),

[www.hetq.am](http://www.hetq.am), [www.armenianow.com](http://www.armenianow.com) կայքերը: Կրոնական անհանդուրժողականության և թշնամանքի կոչերի առումով առանձնանում են «Հայոց աշխարհ», «Սովոյե Վրեմյա», «Ազատամտություն», «Իրավունք», «Գոլոս Արմենիի», «Ազգ» թերթերը: «Առավոտ» օրաթերթում 2009-ին հաճախակի են հրապարակվել միակողմանի հոդվածներ, որոնք կրոնական անհանդուրժողականության երանգներ են պարունակում:

### **Կրոնական թշնամանքի մթնոլորտի ձևավորումը ԶԼՄ-ներում**

Ամենից հաճախ մեղադրանքներ են հնչում և թշնամանք արտահայտվում կրոն կամ հավատք ուսուցանելու իրավունքի ենթադրյալ կամ իրական կիրառման դեմ: Այս երևույթի կրքու քննադատությունն ուղղված է թե կրոնական խմբերի ու կազմակերպությունների և թե՝ դրանց շարքային անդամների դեմ, ովքեր ուսուցանում են իրենց կրոնը՝ անկախ նրանից, թե մարդիկ՝ ում ուսուցանում են, դավանո՞ւմ են Հայ առաքելական եկեղեցուն, թե՞ ոչ, կամ Հայաստանի քաղաքացինե՞ր են, թե՞ ոչ: Սա է որոշ լրատվամիջոցների ընդհանուր վերաբերմունքը, որոնք գրադարձ են կրոնի կամ հավատքի ուսուցման վարկաբեկմանը: Ոչ մի կրոնական խումբ, անկախ նրանից, նոր է, թե հին (ավանդական), չի խուսափում քննադատությունից կամ թշնամանքից: Այս ագրեսիվ քննադատության մեջ սովորաբար գործածվում են «հոգեորսություն» և «աղանդ» տերմինները, որոնք հաճախ են կիրառում այն քննադատները, ովքեր կրոնի կամ հավատքի ուսուցանումը կապում են ազգային միասնությանը նպատակառողիված վտանգի հետ:

117

Հայաստանում կրոնական անհանդուրժողականության քարոզությունը հիմնականում հիմնված է երկու եզրույթի վրա՝ «աղանդ» և «հոգեորսություն», որոնք Հայաստանում ունեն յուրահատուկ երանգ և կարող են բացատրել գոյություն ունեցող կրոնական անհանդուրժողականության գաղափարախոսությունը: Այդ եզրերը կրոնական թշնամանքի և անհանդուրժողականության առանցքն են, առանց դրանց բովանդակությունը հասկանալու անհնար է հասկանալ կրոնական անհանդուրժողականության դիսկուրսը Հայաստանում: Մենք կփորձենք տալ այդ հասկացությունների սահմանումը ըստ վերը հիշատակված հոդվածների, իսկ հետո կներկայացնենք հատվածներ նման հոդվածներից:

«Հոգեորսություն» եզրը օգտագործված է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և իրավական իմաստով մոտ է «ոչ պատշաճ դավանափոխությանը», սակայն Հայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցու (հետագա տեքստում՝ ՀԱՍԵ) սպասավորների և մամուլի կողմից այն օգտագործվում է այլ երանգով։ Այդ եզրը կարելի է պայմանականորեն սահմանել այսպես. «Յուրաքանչյուր հայ ՀԱՍԵ անդամ է։ Իսկ նրանք, ովքեր այս կամ այն պատճառով պատկանում են այլ կրոնական ուղղության, հոգեորսության արդյունք է։ Այսինքն՝ ՀԱՍԵ-ին ի ծնե պատկանող հայի «հոգին» գողացվել է նրանից, քանզի ՀԱՍԵ-ն ազգային Եկեղեցի է, և յուրաքանչյուր հայի «հոգին» նրա սեփականությունն է»։

118

Այս եզրին գալիս է լրացնելու «աղանդ» բառը: «Աղանդ» խոր միջնադարում օգտագործվող բառ է, որը սկզբնական շրջանում կիրառվել է ոչ քրիստոնյաների նկատմամբ, սակայն այն հետագայում ձեռք է բերել «սեկտա»-ի իմաստ, սակայն Հայաստանում այն ունի ուրույն երանգավորում: «Աղանդ» բառը հիմնականում գործածվում է այն կրոնական ուղղությունների հանդեպ, որոնց անդամները ազգությամբ հայ են: Հայաստանում ամենամեծ ազգային փոքրանասնություն համարվող եզրիների կրոնը քրիստոնեության, իսլամի, զրադաշտականության, բուդիզմի տարրեր է պարունակում, սակայն հայկական մամուլում երբեւ նրանց նկատմամբ չի գործածվել «աղանդ» եզրը, այնինչ Հայ կաթողիկե Եկեղեցու մի ծառայող մեզ բողոքում էր, որ իրենց զրասենյակի շրջակայքի բնակիչները երբեմն իրենց «աղանդավորականների» տեղ են դնում։ Նման քարոզչությունն արդեն արմատավորվել է հասարակական գիտակցության մեջ:

«Հոգեորսություն» և «աղանդ» բառերը նման տրամաբանությամբ օգտագործելու դեպքերը բազմաթիվ են: Ներկայացնում ենք մի քանի բնորոշ օրինակներ:

Այս տարվա փետրվարին Հայաստանի ԶԼՄ-ները տարածել են ՀԱՍԵ պաշտոնական տեղեկատվությունը, որտեղ նշվում է. «Փետրվարի 16-17-ը Ս. Ղևոնյանց քահանայից սոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կարողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանաների ավանդական հավաքը, որին մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և շուրջ 300 քահանաներ»։ Եկեղեցու մամլո պաշտոնական տեղեկատվության մեջ նշվում է. «Երկօրյա նիստերի արդյունքում քննարկման առարկա դարձան ժամանակակից մարտահրա-

վերները՝ աշխարհիկացման և անձնապաշտության գործընթացները, արարչաստեղծ աշխարհը խեղող զանազան մեղքերն ու մոլությունները, ազգային և կրոնական ինքնությունների սահմանների վերացման տենդենցները, որոնք վտանգում են դարերով թրծված և քրիստոնեական մեր սուրբ հավատով շաղախված ազգային ինքնության անաղարտ նկարագիրը»<sup>2</sup>:

Մամլո տեղեկատվության մեջ մերժվում են Հայաստանի սահմանադրական սկզբունքները՝ երկորի աշխարհիկ լինելու դրույթը համարվում է մարտահրավեր, նույնացվում են ազգային և կրոնական պատկանելիությունը: «Անձնապաշտության» մեջ պետք է երևի հասկանալ մարդու իրավունքների սկզբունքները: «Ազգային և կրոնական ինքնությունների սահմանների վերացման տենդենցները» կրոնական անհանդուրժողականություն քարոզող մամուլի բազմաթիվ հոդվածների մեխն են:

Այս համատեքստում նպատակահարմար ենք համարում հիշատակել վերջին շրջանում հայաստանյան բարձրաստիճան պետական պաշտոնյաների՝ պետության և եկեղեցու փոխհարաբերությունների վերաբերյալ հայտարարությունները: «Ազգ» օրաբերքի հոդվածը անդրադառնում է վարչապետ Տիգրան Սարգսյանի հայտարարությանը. «Ուշագրավ էր վարչապետի որակումը, թե «Եկեղեցին տարանջատված է պետությունից» միտքը հնամաշ է: Եթե եկեղեցին մենք ենք, ապա ես ինչպես և ո՞ր պահին տարանջատեմ իմ մեջ քրիստոնյա մարդուն»<sup>3</sup>: Նույն հոդվածում ասվում է. «Այս անգամ վարչապետի և երիտասարդների հարց ու պատասխանը, բնականաբար, վարչապետի լիազորություններով պայմանավորված, առավել ընդգրկուն դաշտ էր ընդգրկում՝ բարոյական նկարագիր և քրիստոնեական արժեհամակարգ ունեցող քաղաքացի, սոցիալական ծառայությունների մտահոգիչ վիճակ, երթուղայինի ծխող վարորդներ, եկեղեցու պատմության ուսուցիչների նասնագիտական մտահոգիչ ունակություններ, աղանդներ, կաշառակերություն, հեռուստատեսություն, մշակութային իրադարձություններին անհաղորդ մարզեր, Վրաստանում հայկական եկեղեցիների ու մշակութային կոթողների անմիջապես վիճակ և այլն»: Ըստ թերթի՝ վարչապետը կաշառակերության, ծխող վարորդների խնդրի կողքին է դնում «աղանդների» խնդիրը:

Նման տեսակետները պետական բարձրաստիճան պաշտոնյաների շուրջերով հնչեցնելը գործողությունների հրահանգ է դառնում որոշ ԶԼՍ-ների համար խղճի ազատության սկզբունքի դեմ

<sup>2</sup> Iragir.am, 19/02/2009

<sup>3</sup> «Ազգ» օրաբերը #167, 13-09-2008 (<http://azg.am/AM/2008091316>):

հանդես գալու համար, որը հատկապես ցայտում է արտահայտվում իշխանությունների ազդեցության տակ գտնվող հեռուստաընկերությունների և տպագիր լրատվամիջոցներում:

«Հոգեռոսությունն» այսպես է բնութագրում Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանը. «Առաքելությունն ամեն մեկը պետք է իրականացնի իր հոտի սահմաններում և ոչ թե ուրիշի հոտի սահմաններում, կամ պետք է իրականացնի այնտեղ, որտեղ չկա կրոն, անկրոնության մեջ:...Որևէ մեկ այլ դավանական հավաքականության մեջ հավատի քարոզչությունը հոգեռոսություն է, սա պարզ բան է, որ ցանկացած հոգևորական, որ Եկեղեցուց ուզում է լինի՝ Առաքելական, Կաթոլիկ կամ Ավետարանական, հասկանում է և ուրիշներին շփոթեցնել այս իմաստով՝ պետք չէ»<sup>4</sup>:

120

Արարատյան Յայրապետական թեմի առաջնորդական փոխնորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հարցազրույցից. «Առաքելական Եկեղեցին՝ որպես կրոնական հաստատություն, ազգային է մեզանում, և այս առումով ազգայինն ու հոգևորը նույնացել են դարերի ընթացքում և դարձել հայության արժեհամակարգը: Դրանով հայ ժողովուրդը և նախնյաց ժառանգությունն իր մեջ մերառած Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճակատագրերով նույնանում են»<sup>5</sup>:

«Սահմանափակել աղանդների ազատությունը»<sup>6</sup> հոդվածում ասվում է. «Հոգեքանը կարծում է, որ աղանդները քայրայում են Յայ առաքելական Եկեղեցին ու մարդկանց հոգիները և զրկում զարգանալու հնարավորությունից... Վանաձորի Սրբ Գրիգոր Նարեկացի Եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյանը կարծում է, որ Յայ առաքելական Եկեղեցին աղանդների դեմ պայքարում պետք է գլորալ աշխատանքներ սկսի պետության հետ համատեղ: «Մենք պետք է հիշենք, որ սա շատ մարդկանց համար բիզնես է, պարզապես աշխատանք: Մենք շատ խնդիրներ ունենք լուծելու կրթության, դաստիարակության ոլորտներում: Մեր քաղաքացիները պետք է զիտակցեն, որ Եկեղեցին հենց իրենք են և առաջին հերթին իրենք պետք է իրենց պաշտպանեն աղանդներից... Ըստ հոգեքան Վլադիմիր Միքայելյանի, պետք չէ աղանդներին ազատ գործունեության

4 «Յայոց աշխարհ», 27/07/2009 , շաբաթ, 27 հունիսի 2009 #121/292127:

5 Յանրապետական կուսակցության պաշտոնական կայքը  
(<http://hkh.am/news/news.php?action=fullnews&id=2757>):

6 «Առավոտ» օրաթերթ, 04/05/2009:

հնարավորություն տալ՝ հիմնվելով մտքի, խղճի, դավանանքի ազատության սկզբունքի վրա. «Ազատությունը այն կատեգորիան է, որը զարգացման է բերում, իսկ աղանդը, զրկելով մարդուն մտածելու կարողությունից, զրկում է նաև զարգանալու հնարավորությունից»:

2009-ի հոկտեմբերին «Ազատամտություն» թերթը այսպես է գնահատում կառավարությանը կից ազգային փոքրամասությունների և կրոնական կազմակերպությունների հարցերով վարչության նախկին պետի գործունեությունը. «Խառատյանը հասավ նրան, որ Եհովականները, իհսունականները, կրիշնայականները և մնացած զիրինները օրենքով պաշտպանված լինեն, ընդ որում՝ տոտալ աղանդների գործունեության սահմանումը (հիմնական գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները և այլն) այնպես հաստատեց, որ կրոնական կազմակերպությունների կարգավիճակը հավասարվեց Յայ Առաքելական Եկեղեցու կարգավիճակին: Կարկառում ազգագրագետին բնակվ չեր հետաքրքրում ու հուզում այն փաստը, որ հոգեորսները ակտիվորեն լծվել էին (այսօր առավել քան եռանդուն) սեփական ազգը հյուժելու, նրան հոգեպես թուլացնելու, մարդկանց գիտակցությունը նթագնելու գործին: Տիկնոց համար կարևոր կրոնական ազատություններն էին, այլ ոչ թե նորմալ մարդկանց հոգեորսության ճիրաններից փրկելը»<sup>7</sup>:

121

2009-ի ապրիլի 18-ին «Յայոց աշխարհ» օրաթերթը առաջին էջում տպագրել է Երևանի սյուներից մեկի վրա փակցված հետևյալ թռուցիկը. «Միրելի հայրենակիցներ, եղեք զգոն և խելացի, Մի լրացրեք աղանդավորական անասնագլխաքանակը, Յեռու մնացեք Եհովայի վկաններից, մորմոններից, Կյանքի խոսքից, սատանայապաշտներից, ավետարանչականներից, հիսունականներից և մյուս հակահայ քրեածին խմբավորումներից, ՄԵՍՔ ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԶՈՒՑԵԼ ՅԱՆԿԱՑԱԾ ՄՈԼՈՐՅԱԼ ՅԱՅՈՐԴՈՒ ՅԵՏ: ԱՊՐԻԼԻ 24-Ի խումբ»: Թերըն իր կողմից ավելացրել է. «Ասողին՝ լսող է պետք» մեկնաբանությունը<sup>8</sup>:

«Յայոց աշխարհ» օրաթերթի հետագա համարում տպագրված հոդվածը այսպես է պարզաբանում այդ թռուցիկը. «Մի լրացրեք աղանդավորական անասնագլխաքանակը,- գրված է այդ կոչում: -Յեռու մնացեք Եհովայի վկաններից, մորմոններից, Կյանքի խոսքից, սատանայապաշտներից, ավետարանչականներից, հիսունականներից և մյուս հակահայ քրեածին խմբավորումներից....: Խումբը նաև իր պատրաստականությունն է հայտնել՝ զրուցելու յու-

<sup>7</sup> [http://www.azatamtutyun.com/arm/shop/UID\\_13633.html](http://www.azatamtutyun.com/arm/shop/UID_13633.html).

<sup>8</sup> [http://armworld.am/archive.php?day=18&month=4&year=2009&lang=\\_arm](http://armworld.am/archive.php?day=18&month=4&year=2009&lang=_arm)

րաքանչուր մոլորյալ հայորդու հետ, և իր հետ կապվելու համար նշել է Եկտրոնային փոստի հասցեն. [gardmanq@mail.ru](mailto:gardmanq@mail.ru): Բացառությամբ սատանայապաշտմերի, «աղանդավորական անասնագլխաքանակ» բառակապակցությունը կամ բնորոշումն օգտագործելը, կարծում ենք, կոռեկտ չէ, քանի որ տարաբնույթ աղանդմերի շարքային անդամներն, իրոք, մոլորյալ հայորդիներ են: Այնուհանդերձ, խմբի անհանգստությունը և հանրությանը աղանդավորության վտանգներից զգուշացնելու այս փորձը միանգամայն տեղին է ու միայն դրվագանքի արժանի»:<sup>9</sup>

122

Կրոնական թշնամանք տարածելու մեկ այլ եղանակ է մամուլում սուտ կամ չճշտված տեղեկությունների տարածումը, որոնք չեն հիմնավորվում, սակայն ձևավորում են բացասական հասարակական կարծիք: Նման հոդվածներ հաճախ են հանդիպում: Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակներ: «Առավոտ» օրաթերթը հղում անելով «Ա1+» կայքին՝ տպագրել է «Բարբարոսները ավերել են Որոտնավանքը»<sup>10</sup> լուրը, որտեղ նկարագրվում է, որ անհայտ անձինք սրբապրծել են ՅԱՍԵ վանքը: «Պահակը պատմում է. «Նկարները, պատերի կտավները հանել են, այրել: Մի խոսքով, սրբի պատկերներով ինչքան արձանիկներ, խաչեր են եղել, ամբողջը ջարդել են»: Լուրը վերջանում է հետևյալ տողերով. «Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Գրիգոր քահանա Յովսեփիյանը ենթադրում է, որ բարբարոսները եղել են աղանդմերից մեկի ներկայացուցիչներ, սակայն առայժմ ստույգ տեղեկություն չի կարող տա»: Որևէ հիմնավորում չունեցող ենթադրության վրա հիմնված տեղեկությունը տարածվում է մամուլում՝ ձևավորելով հասարակական կարծիք: Յաճախ են ԶԼՄ-ներով տարածվում տեղեկատվություններ «աղանդավորական» երեխաների կամ երիտասարդների ինքնասպանության դեպքերի մասին, սակայն նման պատճառով ինքնասպանությունների մասին քրեական գործերի մասին տեղեկությունները բացակայում են:

«Յայոց աշխարհ» օրաթերթը գրում է. «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության և վերականգնողական կենտրոնի տնօրեն Ալեքսանդր Ամարյանի կարծիքով, աղանդներից եկող մարտահրավերներին դիմագրավելու համար անհրաժեշտ է, որ բուհերում, առանց հապաղելու, պատրաստվեն իրավաբան-կրոնագետներ, հոգեբան-կրոնագետներ, որոնք կկարողանան փորձագիտա-

<sup>9</sup> «Յայոց աշխարհ», 22/04/2009 :

<sup>10</sup> «Առավոտ» օրաթերթ, 14/11/2009::

կան եզրակացություն տալ, թե աղանդների հետ կապի առումով կասկածելի տվյալ հանցագործությունը կամ ինքնասպանությունը կրոնական շարժառիթներով՝ և կատարված, թե՞ ոչ:

Ինքնասպանությունները շատացել են տասնապատիկ, եթե առաջ մենք ցուցակի ամենավերջին շարքերում էինք, հիմա, կարծեմ, եկել ենք ամենասկիզբ,- ասաց կենտրոնի տնօրենը:- Մեզ մոտ ինքնասպանությունները տարեկան 50-ից դարձել են 500-ից ավելի: Ինչո՞ւ մեր երկրում չեն խոսում քայքայիչ և ամբողջատիրական աղանդների գործած չարագործությունների թեկուզ տասը տոկոսի մասին, ինչո՞ւ ոմանք, որ թաքնված են հասարակական կազմակերպությունների ղեկավարների, ներկայացուցիչների կամ իրավապաշտպանների դիմակի տակ, ամեն ջանք գործադրում են աշխարհով մեկ տարածելու և աշխարհին ապացուցելու, թե մեզ մոտ կրոնական ազատություն չկա, որովհետև ճնշում են: Եվ ինչպե՞ս չասել, որ այդպիսիները Հայաստանում հենց իինգ իինգերորդ շարասյուն են»:<sup>11</sup>

«Ազգ» օրաթերթը 2009-ի մարտ ամսին տպագրել է «20-ամյա երիտասարդը ինքնասպանություն է գործել կրոնական հոռի վրա» վերնագրով հոդվածը: Երիտասարդի հավատացյալ լինելու մասին որևէ փաստ հոդվածում չկա, հայտնի է, ըստ հոդվածի, որ նրա ծնողներն են հավատացյալ: Ինքնասպանության հետաքննության հետ կապված նույնպես որևէ տվյալներ հոդվածում չեն բերվում, սակայն հոդվածի վերնագիրը և բովանդակությունը այն միտքն են ուզում ներշնչել, որ «աղանդավորները» հակված են ինքնասպանություն գործելու: «Մարտի 18-ին Էրեբունի քրեակատարողական հիմնարկում հայտնաբերվել է դատապարտյալ Արմեն Խաչատրյանի դիակը՝ կախված վիճակում: Խաչատրյանը քրեակատարողական հիմնարկում է գտնվել 2007-ի հուլիսի 17-ից, երբ պարտադիր զինծառայությունից հրաժարվելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի առաջին մասով դատապարտվեց ազատազրկման 30 ամիս ժամկետով: Խաչատրյանը կալանավայրում է անցկացրել 20 ամիս:

20-ամյա Արմենի ծնողները «Եհովայի վկաներ» աղանդի հետևորդներ են: «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունից հայտնեցին, որ Արմենը մկրտված Եհովայի վկա չէր, սակայն իր անձնական որոշումն էր կայացրել ու ցանկանում էր հետևել ծնողների համոզնունքներին:... Թեպետ կազմակերպության անդամներն ամեն ջանք գործադրում են, որ երիտասարդի

<sup>11</sup> «Հայոց աշխարհ», «ԲԱԺԱՆԻՐ, ՈՐ ՏԻՐԵՍ» ՍԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ «Աղանդնե՞րը, թե՞ մենք ենք տերն այս երկրի» հոդվածը:

մահը իրապարակային մեղադրանքների ու շահարկման թիրախ չդառնա և չդիտարկվի որպես կրոնական հողի վրա կատարված ինքնասպանություն, այնուամենայնիվ փաստերն այլ երևույթի մասին են խոսում»<sup>12</sup>: Հոդվածագիրն այս հարցում դիմում է փորձագետի: «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական և օգնության կենտրոնի նախագահ Ալեքսանդր Ամարյանը նկատում է, որ Հայաստանում վիճակագրական որևէ հետազոտություն կատարված չէ՝ պարզելու կրոնական դրդապատճառներով ինքնասպանությունների քանակը: Սակայն Ամարյանը փաստում է, որ վերջին 10 տարվա ընթացքում ինքնասպանությունների թիվը կտրուկ աճել է: «Վերաբերմունքը բնականաբար բացասական է: Սակայն պետք է ճշտել մանրամասները, օրինակ՝ ինչպես էին երիտասարդի հետ վարվում կալանավայրում: Սովորաբար աղանդավորների նկատմամբ վերաբերմունքը մեղմ է: Իրավապաշտպանները հատուկ հսկողություն են սահմանում: Միգուցե ինքնասպանության որոշումը կապված է ներքին խնդիրների կամ հոգեկան շեղման հետ: Հաճախ այնպես է պատահում, որ աղանդավորները ինքնասպանություն են գործում, երբ հիասթափվում են իրենց ընդունած հոգեկան հավատքից», - ասում է Ամարյանը: Նա նկատում է, որ այսօրինակ դեպքերը բավական շատ են: «Սա առաջին դեպքը չէ: 2004-ին 12-ամյա աղջնակը ինքնասպանություն գործեց, հետո պարզվեց, որ նա աղանդավոր է: Մի քանի տարի առաջ այդպիսի դեպք պատահեց նաև Վանաձորում», - ասում է Ամարյանը: Հոդվածում շարունակվում են բերվել «փաստեր», որոնց մասին որևէ պաշտոնական տվյալներ չկան: Թերթի խնդիրը կրոնական կազմակերպությունների մասին բացասական հասարակական հարձիք ձևավորելն է:

Ըստ «Ազգ» օրաթերթի մեկ այլ հոդվածի՝ «Վերջերս տարբեր թերթերում ցավով կարդացի Մայր աթոռի ներկայացուցչի հաստատումը, որ աղանդավորական քարոզչությունն արդեն իրականացվում է Սուրբ Էջմիածնում և Եկեղեցիների բակերում: Կարծեմ խոսքն այս անգամ ավետարանչական ընկերակցության քարոզչության մասին էր:

Սա արդեն անպատկառության գագաթնակետն է: Այդ անօրենները, հերիք չէ դրանեղուար ընկած մեզ անհանգստացնում և իրենց քաղցրախոսությամբ շեղված գրականություն են պարտադրում, իիմա էլ աներեսաբար մեր ժողովրդին եկեղեցու դրան մոտ են ուզում որսալ: Որքան հանդուգն են դարձել այդ աղանդների ժամանակակիցները, որ չեն խորշում անգամ Սուրբ Էջմիածնի տա-

<sup>12</sup> «Ազգ» օրաթերթ, #58, 02-04-2009:

րածքում իրենց սև գործը կատարելուց»: Յայ առաքելական եկեղեցու ղեկավար Ռընե Լևոնյանը մամուլում հերքել է այդ տեղեկատվությունը: Յոդվածագիրը չի հավատում այդ հերքմանը. «Դժվարանում եմ հավատալ ասվածի անկեղծությանը: Վերապատվելի Լևոնյան, եթե այդքան «բարի ցանկություններ» ունեք լուծելու հայ ժողովրդի առջև ծառացած ծանրագույն խնդիրները և դատապարտում եք Մայր Եկեղեցու դեմ ուղղված գործողությունները, նախ ինքներդ դադարեցրեք ձեր իսկ դատապարտելի գործունեությունը Յայաստանում՝ այդպես լուծելով մեր ժողովրդի ոչ պակաս ծանր՝ հոգևոր միասնության խնդիրը: Զուր մի լցրեք աղանդավորների ջրաղացին և կեղծ հայտարարություններով մի փորձեք համոզել, թե երբեք այստեղ-այնտեղ թերթիկներ չեք բաժանել մարդկանց՝ հրավիրելով իրենց հարցերի պատասխանները գտնել ոչ թե Մայր Եկեղեցուն, այլ ձեզ մոտ՝ պվետարանականների Եկեղեցուն: Եվ մի փորձեք նման հայտարարություններով կամ այլ հնարքներով համոզել մարդկանց, թե ամենասերտ հարաբերությունների մեջ եք Յայ Եկեղեցու հետ, և ձեր սիրտը կատարվածի համար իսկապես ցավում է»<sup>13</sup>:

125

Չիմնավորված, առանց անանուն տվյալների վրա է կառուցվում «Գոլոս Արմենիի» թերում տպագրված հոդվածը: «Այն փաստը, որ տարաբնույթ աղանդների ներկայացուցիչները բավական հարմարավետ պայմաններում են գտնվում Յայաստանում, մեկնաբանությունների կարիք չունի: Չնայած հայրենական մամուլում եղած բազմաթիվ հրապարակումներին, մասնավորապես «Գոլոս Արմենիի»-ի հրապարակումներին, որտեղ իշխանություններին կոչեր են արվում ուշադրություն դարձնել Յայաստանի տարածքում գործող աղանդավորականների վրա՝ «հոգևոր անվտանգության» առումով մեզ մոտ ոչինչ չի փոխվել: Ավելին, վերջին ժամանակներում Երևանում կատարվող մի շարք տարօրինակ իրադարձությունները հակառակի մասին են խոսում: Վերջերս Երևանի բակերից մեկում կատարվել է մի չափազանց տարօրինակ դեպք: Մի խումբ մարդիկ, որոնք ներկայացել են որպես Յայ առաքելական Եկեղեցու հետևողութեր, մեծ շուքով (բարձրախոսներով, ժամանակակից սարքավորումներով և այլն) բակում կազմակերպել են անվճար համերգ՝ իրենց շուրջը հավաքելով մեծ քանակությամբ մարդկանց: Յամերգից հետո սկսել են բաժանել հայերեն և ռուսեն կրոնական գրականություն: Նրանք ասել են, որ ներկայացնում են Յայ առաքելական Եկեղեցին, ավելին, դա կրկնել են մի

13 «Լուծեք հայ ժողովրդի առջև ծառացած ծանրագույն այս խնդիրը», «Ազգ», 19-06-2009:

քանի անգամ, որովհետև բնակչությունը կարծելով, որ նրանք աղանդավորականներ են, սկզբում մեծ անվտահությամբ էին նրանց վերաբերվում», - պատմում է Ա.Լ.-ն»<sup>14</sup>: «Ա.Լ.» -ի խոսքերին վստահությամբ վերաբերվելուց հետո հոդվածագիրը շարունակում է ներկայացնել այլ «փաստեր», որոնց մասին նրան պատմել են հոդվածում անանուն ծանոթները:

Նույն ոգով է գրում «Առավոտ» օրաթերթի հոդվածագիրը. «Հոգեբանը կարծում է, որ աղանդները քայլայում են Յայ առաքելական եկեղեցին ու մարդկանց հոգիները և զրկում զարգանալու հնարավորությունից: «Ես դեպքեսիայի մեջ էի, կյանքն անիմաստ էր ինձ համար, շատ հարցեր էին ինձ տանջում. ինչո՞ւ եմ ապրում, ի՞նչ է լինելու մահվանից հետո: Ըստ էի ծխում, ալկոհոլ օգտագործում», - պատմում է վանաձորցի 23-ամյա Արթուրը և պնդում, որ այս հարցերի պատասխանը գտնելուն և հոգեբանական խնդիրները լուծենուն իրեն օգնել է «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը: Հոգեբանը շարունակում է. «Մարդկանց հակվածությունը և անդամակցությունը այս կամ այն կրոնական-աղանդավորական կազմակերպությանը բացատրում է հոգեբանական գիտությունների թեկնածու Վլադիմիր Միքայելյանը. «Յուրաքանչյուր մարդ ունի հասկացված լինելու պահանջ: Քանի որ Յայ առաքելական եկեղեցին այսօր չի կատարում իր պարտականությունները և մարդկանց հոգեկան բավարարվածություն չի տալիս, մարդկանց այդ պահանջը օգտագործում են աղանդավորականները և միանգամից երկու գործ են կատարում: Նախ՝ քայլայում են Յայ առաքելական եկեղեցին, երկրորդ՝ քայլայում են մարդկանց հոգիները, քանի որ այն, ինչ կախվածություն է առաջացնում, քայլայում է և թույլ չի տալիս մարդուն զարգանալ... Ըստ հոգեբան Վլադիմիր Միքայելյանի՝ պետք չէ աղանդներին ազատ գործունեության հնարավորություն տալ՝ հիմնվելով մտքի, խղճի, դավանանքի ազատության սկզբունքի վրա. «Ազատությունը այն կատեգորիան է, որը զարգացման է բերում, իսկ աղանդը, զրկելով մարդուն մտածելու կարողությունից, զրկում է նաև զարգանալու հնարավորությունից»:

## Կրոնական կազմակերպություններին քաղաքական պայքարի մեջ ներքաշելու մեղանդրանքներ

Յարկ է նշել, որ հատկապես 2008-ից հետո հայկական մամուլում, հատկապես ընդդիմադիր, քազմաթիվ են ՀԱՍԵ-ին ուղղված քննադատական հոդվածները: Դա պայմանավորված է նրանով, որ 2008-ից սկսած՝ ՀԱՍԵ-ն ակտիվորեն ներգրավվել է քաղաքականության մեջ, մասնակցել է իշխող քաղաքական ուժերի նախընտրական քարոզարշավին, որի հետևանքով ընդդիմադիր մամուլը («Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն») հաճախ քննադատում է եկեղեցուն: Սակայն երբեմն քննադատությունը կրում էր ուղղակի վիրավորական բնույթ, որ կարող էր վիրավորել ՀԱՍԵ հետևորդների կրոնական զգացմունքները: Միաժամանակ պետք է նշել, որ այդ վիրավորանքներն ունեն քաղաքական, այլ ոչ թե կրոնական դրդապատճառներ:

2008-ին քաղաքական թեմատիկան սկսեց միահյուսվել կրոնական խնդիրների հետ: 2008-ին «Նովոյե վրեմյա»<sup>15</sup> և «Գոլոս Արմենիի»<sup>16</sup> թերթերում տպագրվեցին մի քանի հոդվածներ, որտեղ փորձ էր արվում ընթերցողներին այն միտքը ներշնչել, որ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները («աղանդավորականները») նախագահական ընտրությունների ժամանակ քվեարկել են ընդդիմության օգտին, սակայն դա ապացուցող որևէ փաստ չին ներկայացրել: Ավելին, «Նովոյե վրեմյա» թերթը հետագայում ստիպված եղավ իրապարակել «7-րդ օրվա աղվենտիստներ» եկեղեցու պաշտոնական գրությունը, որտեղ ասված էր, որ հոդվածի տվյալները իրականությանը չեն համապատասխանում: Բնական է, որ Հայաստանի ցանկացած քաղաքացի ընտրությունների ժամանակ իրավունք ունի քվեարկելու իր նախընտրած թեկնածուի օգտին և մանուլում դրա մասին «մեղադրող» հոդվածների տպագրումը հակառինական է, սակայն այլ խնդիր է, թե որքանով են այդ տվյալները համապատասխանում իրականությանը:

2009-ին նմանատիպ հոդվածներ շարունակվել են տպագրվել հայկական մամուլում: Մասնավորապես «Աղանդները չե՞ն մասնակցում քաղաքական գործընթացներին»<sup>17</sup> հոդվածում բերվում են տվյալներ, որոնց աղբյուրի մասին հոդվածագիրը գաղտնի է պա-

127

15 «Նովոյե վրեմյա», 04/03/2009:

16 «Գոլոս Արմենիի», 01/03/2008, 04/03/2009:

17 «Հայոց աշխարհ», 20/03/2009թ. #51:

հում. «Մեր ստացած հավաստի տեղեկատվության համաձայն՝ Հայաստանում գործող «Եհովայի վկաներ» քայլայիշ և ամբողջատիրական աղանդի անդամները, ինչպես նաև նշված աղանդին հարողները (պիոներները կամ անդամության թեկնածուները), փոքր բացառությամբ, մասնակցել են 2007թ. Ազգային ժողովի և 2008թ. նախագահական ընտրություններին: Ի դեպ, սա և այլ մանրանասներ մեզ հայտնի դարձան շնորհիվ Եհովայի վկաներից ոմանց անզգուշության և տեղեկատվության արտահոսքի, ինչպես նաև տեղանասային ընտրական համձնաժողովի որոշ անդամների ուշիմության: Նրանք նկատել էին խմբերով ընտրության եկած անձանց, որոնց ծանաչել են որպես Եհովայի վկաների:

128

Ինչպես հայտնի է, Եհովայի վկաները, որոշ այլ աղանդների անդամների նման, հրապարակայնորեն և մասնավոր գրույցներում հայտարարել ու հայտարարում են քաղաքական գործընթացներին, այդ բվում՝ ընտրություններին իրենց չմասնակցելու վերաբերյալ: Նախկինում թերևս հենց այդպես էլ կար: Սակայն, ելնելով վերը նշվածից, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում Եհովականները, ամենայն հավանականությամբ ենթարկվելով ինչ-որ մի վերին հրամանի կամ հրահանգի, որոշել են հանուն Եհովայի բացառություն կատարել: Այսինքն՝ համարել են, որ եկել է այդ պահը...

Թերևս առավել ուշագրավն այն է, որ Եհովայի վկաները, մեր ստացած տեղեկությունների համաձայն, Ազգային ժողովի ընտրություններին քվեարկել են «Ժառանգություն» կուսակցության և հիշյալ կուսակցության առաջադրած թեկնածուների օգտին: Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների ժամանակ էլ քվեարկել են հօգուտ թիվ 9-ի, այսինքն՝ քվեարերթիկում 9-րդ համարի դիմաց նշված L. Տեր-Պետրոսյանի»:

Հոդվածում «Եհովայի վկաներ» կազմակերպության անդամներին մեղադրանք է ներկայացվում մի բանում, որը նրանց սահմանադրական իրավունքն է: Մյուս կողմից՝ որպես ինֆորմացիայի աղբյուր են նշվում տեղանասային ընտրական հանձնաժողովի անդամների տվյալները, որը «Ընտրական օրենսգրքի» խախտում է, քանզի ընտրություններին նաև նաև կուտակությունը և քվեարկությունը համարվում են գաղտնի: Հոդվածում փորձ է արվում այն միտքը ներշնչել ընթերցողներին, որ Հայաստանի նկատմամբ գոյություն ունի դավադրություն արտերկրից, իսկ կրոնական կազմակերպությունները օտար ուժերի գործիքն են այդ դավադրության մեջ: Միաժամանակ մեղադրանքներ են հնչեցվում «Ժառանգություն» կուսակցության նկատմամբ, որը նույնպես մասնակցում է այդ «դավադրությանը» և այդ պատճառով «Խղճի ազատության և կրոնական կազ-

մակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագծին դեմ է քվեարկել:

Յոդվածը շարունակում է «բացահայտել» նաև «Կյանքի խոսք» Եկեղեցուն և նրա ղեկավարին. «Հայաստանում «Կյանքի խոսք» «Եկեղեցիների» միության նախագահ, 1995 թվականից երևանյան Եկեղեցու ավագ պաստոր (բողոքականների քահանա) Արքուր Սիմոնյանը, մեզ հասած հավաստի տեղեկատվության համաձայն, 2007թ. դեկտեմբերից մինչև 2008թ. հունվարի 15-ը, այսինքն՝ նախագահական ընտրությունների նախօրեին, գտնվել է ԱՄՆ-ում, մասնավորապես Լոս Անջելեսում, Սիեթլում, Պորտլենդում, Սակրամենտոյում...»: Յոդվածում շարունակվում են «ապացույցներ» բերվել ընտրությունների ժամանակ կրոնական կազմակերպությունների «դավադրության» մասին: Թերթի հաջորդ համարում հոդվածը շարունակվում է<sup>18</sup>. «Սոտ մեկ տարի առաջ մարտյան հայտնի իրադարձություններից հետո «Կյանքի խոսքի» (աղանդի հայաստանյան կառույցի) կայքում գետեղվեց մի ուշագրավ տեղեկատվություն, որը ներկայացնում ենք թարգմանաբար և հատվածաբար, մեր հարցադրումներով ու մեկնաբանություններով հանդերձ.

«Փետրվարի 19-ին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնցից հետո, պաշտոնական տվյալներով, առաջին ընտրական փուլում ծայների մեծամասնությունը տրված է այժմ գործող վարչապետին: Սակայն մեծամասնությունը համոզված է, որ ընտրությունների արդյունքները կեղծված են: Դա ժողովրդի մեջ հուզումների պատճառ է հանդիսացել»:

Յետաքրքիր է քաղաքական գործընթացներից «հեռու» այս աղանդն այդ ինչի՝ հիման վրա որոշեց, թե ընտրությունների արդյունքների կեղծված լինելու համոզմունքը ընտրողների մեծամասնությանն է: Մի թե սրանով չի փաստվում իրոք կրոնական կազմակերպություն հանդես եկող կառույցի և կողմնակալ դիրքորոշումը, և ինչ-ինչ առնչությունը քաղաքական գործընթացներին:

Եվս մեկ մեջքերում «Կյանքի խոսքի» կայքի հիշյալ տեղեկատվությունից. «Վարչապետի կողմնակիցները ցանկացած գնով ուզում են պահել իշխանությունը, դրա հետ կապված սկսվել են ընդդիմության գործիչների և նրանց կողմնակիցների հետապնդումները»:

Բնավ չենք զարմանա, եթե վերը բերված զրպարտալի տեղեկատվությանը կամ հայտարարությանը հանդիպեինք հիշական մամուլում, լսոնականների որևէ կայքում, բայց, ընդգծում ենք, այն «Կյանքի խոսքի» կայքից է:

129

18. «Հայոց աշխարհ», 21/03/2009թ, #2:

Վերջինիս նույն տեղեկատվության մեջ նշված է նաև. «Միաժամանակ առաջացել է երկրի հավատացյալների կրոնական ազատությունների խախտման սպառնալիք: Դա պայմանավորված է նրանով, որ գործող վարչապետին նախընտրական ամբողջ արշավի ընթացքում ակնհայտորեն աջակցում էին կաթողիկոսը և Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու քահանաները, որոնք նույնպես անմիջական ներկայություն են ունեցել քաղաքական իրադարձություններում»:

Եթե մի պահ նույնիսկ ընդունենք, թե ու այդպես է եղել, ապա այն ժամանակ վարչապետ և նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին կաթողիկոսի և այլ հոգևորականների բարոյական աջակցությունը և օրինությունն ինչպես կարող էին «երկրի հավատացյալների կրոնական ազատությունների խախտման սպառնալիք» առաջացնել: Այդպիսի կապի մասին հայտարարելը, կարծում ենք, նույնիսկ անհեթեթք է:

130

Թերևս առավել ուշագրավը «Կյանքի խոսքի» հիշյալ տեղեկատվության վերջին նախադասությունն է. «Ներկա վարչապետին աջակցող այդ իսկ ուժերը (նկատի ունի կաթողիկոսին և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու քահանաներին- Ա.Յ.) Հայաստանում հոգևոր մենաշնորհի կողմնակիցներ են և ավետարանչական Եկեղեցիներին համարում են աղանդներ, որոնց մեղադրուն են ընդդիմության թեկնածուի քվեարկությանը կազմակերպված մասնակցության մեջ»:

Նման մեղադրամք մեզ հայտնի չէ, բայց, այնուհանդերձ, ինչպես չհարցնել՝ մի՞թե հիշյալ քվեարկությանը կազմակերպված մասնակցությունը չի համապատասխանում իրականությանը: Համեմայն դեպք, ավետարանական ընտանիքի անդամ Եկեղեցի հանդես եկող «Կյանքի խոսքի» աղանդ լինելը, ինչպես նաև նրա անդամների կողմից կազմակերպված մասնակցությունը հօգուտ Լ. Տեր-Պետրոսյանի քվեարկության՝ գոնե մեզ կասկածի տեղիք չի տալիս»:

2009-ի փետրվարին «Հայոց աշխարհ» օրաթերթի խմբագրի հոդվածում գուգահեռներ են տարվում քաղաքական ընդդիմության և կրոնական կազմակերպությունների միջև, որոնք անվանվուն են «աղանդներ». «...Հիշեցնենք, որ օրինագիծը զգալիորեն հեշտացնում է աղանդների գործունեությունը մեր երկրի տարածքում: Ըստ որում՝ ոչ միայն Եհովայի վկաների, մորմոնների և ամեն տեսակի, ներողություն արտահայտությանս համար, «Պարող եղբայրների»

կարգի կրոնական աղանդների, այլև քաղաքական աղանդների: Մասնավորապես՝ «Լևոնի աղանդի»... Կրկնում ենք, սեփական աղանդ ստեղծելու Տեր-Պետրոսյանի որոշումն ընդհանուր առմամբ բացատրելի է: Դժվարությամբ է բացատրվում մեկ այլ բան. ինչո՞ւ է կոալիցիան ցանկանում ընդունել աղանդների գործունեությունը հեշտացնող օրենք:

Եվ ինչո՞ւ է, թույլ տվեք հարցնել, օրինագծում բացակայում Ների մասին հոդվածը՝ Քրիստոսի և Աստծո այդ հակառակորդի, «ծովից ելնող գազանի», որը պիտի հայտնվի աշխարհի վերջից առաջ և առաջնորդի խավարի ուժերը: Կոալիցիան ջայլամի պես նախընտրում է նտցնել գլուխն ավագի մեջ ու ձևացնել, թե ոչինչ չի տեսնում: Նույնիսկ այն, որ կարողիկոսին մերժած Լևոն-Ները արդեն մեկուկես տարի թափառում է հայոց աշխարհում:

Ի դեպ, ինչպես հայտնի է, Ների չարագրությունների ընդհանուր ժամկետը 42 ամիս է, այսինքն՝ երեքուկես տարի, որը հայելային արտացոլմամբ համապատասխանում է Քրիստոսի քարոզչության տևողությանը:

Այնպես որ՝ հույսներս չդնենք խորհրդարանի վրա, այլ զինվենք համբերությամբ, քույրեր և եղբայրներ: Բարոյական չարիքի թագավորությանը, որտեղ «մարդիկ կլինեն եսանոլ, արծաթասեր, մեծամիտ, ամբարտավան, զազրախոս, ծնողամերժ, երախտամոռ, սրբապիղծ, անբարյացակամ, անհաշտ, զրպարտիչ, զեխ, դաժան, բարիատյաց, դավաճան, լկտի, գոռոզ, ավելի շատ տարփասեր, քան աստվածասեր», մնացել է ընդամենը երկու տարի»<sup>19</sup>:

**131**

**«Խոր ազատության և կրոնական կազմակերպությունների  
մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»  
օրինագծի հասարակական քննարկումների և  
միջազգային գեկույցների լուսաբանումը  
հայկական մամուլում**

2009-ին ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունել է ««Խոր ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը: Այդ օրենքների կապակցությամբ կազմակերպվել են հասարակական քննարկումներ: ԶԼՍ-ները լայնորեն լուսաբանել են քննար-

19 «Զինվենք համբերությամբ, քույրեր և եղբայրներ», «Հայոց աշխարհ», 25/02/2009:

կումները: Այս օրենքի, ինչպես նաև ԱՄՆ պետդեպարտամենտի՝ Հայաստանում կրոնական ազատություններին նվիրված գեկուցին և առհասարակ կրոնական խնդիրներին նվիրված հոդվածների միայն վերնագրերն արդեն պարզորոշ ցուցադրում են այդ պարբերական-ների դիրքորոշումները.

«*Դայոց աշխարհ*»՝ «Նվեր աղանդավորականներին», «Բաժանիր, որ տիրես, աղանդնե՞րը, թե մենք ենք տերն այս երկի», «Աղանդները վխտում են», «Հոգեորսությունն էլ ինչպե՞ս է լինում», «Վկուկների որսի մեջ մեղադրանքը անհեթեթություն է», «Ինչու՞ են աղմկում աղանդավորականների պաշտպանները», «Եհովայի վկաները մեծ թափով գործում են», «Խորհեք, թե ու՞ր են տանում նրանց ճանապարհները»:

«*Ազգ*»՝ «Հոգին կրկնակի որսալը քրեորեն պատմելի երևույթ է», «Լուծեք հայ ժողովրդի առջև ծառացած ծանրագույն այս խնդիրը», «Լոռու մարզում հայրենասիրական ոգով մատաղ սերնդի դաստիարակությունը հակացուցվա՞ծ է», «20-ամյա երիտասարդը ինքնասպանություն է գործել կրոնական հորի վրա»:

132

«*Ազատամտություն*»՝ «Աղանդավորները հզոր պաշտպան ունեն. ԱՄՆ պետական դեպարտամենտը ամուր կանգնած է նրանց թիկունքին», «Աղանդավորների գաստրոլները», «Դավանափոխը «ազգի մամայի» դերում, իսկ ո՞վ պետք է Յրուշին բարոյականության դասեր տա»:

«*Իրավունք դե ֆակտո*»՝ «Ինչու՞ է բարգավաճում աղանդավորությունը»:

«*Առավոտ*»՝ «Սահմանափակել աղանդավորների ազատությունը», «Կյանքի խոսք» «Միաբանության» տեսքով», «Ովքե՞ր են «Քրիստոնյա ուսանողները»:

«*Իրավունք*»՝ «Պատերազմ ընդդեմ ազգային ինքնության»:

Հոգվածների հիմնական մեխուր «հոգեորսություն» եզրն է: Այս հասկացությունը գործող օրենքը է ներմուծվել 1991-ին՝ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում: «Հոգեորսություն» եզրույթը հաճախ թարգմանում են որպես դավանափոխություն, սակայն այն ավելի մոտ է «ոչ պատշաճ դավանափոխությանը»: Դավանափոխության իրավունքը խղճի և կրոնի հիմնարար ազատության բաղկացուցիչ մասն է: Այլ խնդիր է «improper proselytism» («ոչ պատշաճ

**դավանափոխությունը»):** Օրենքում արգելվում է «հոգեորսությունը», սակայն այն չի սահմանվում: Մանուլում, հեռուստատեսությամբ հաճախ է գործածվում այդ եզրը որպես մեղադրանք՝ ուղղված կրոնական կազմակերպություններին Հայաստանում գործունեություն ծավալելու համար:

«Հայոց աշխարհ» օրաթերթը «Նվեր աղանդավորականներին» հոդվածում լուսաբանում է օրենքի նախագծի քննարկումները. «Խոդի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագիծն այս օրերին դարձել է մի յուրօրինակ լակմուսի թուղթ: Այդ նախագծի քննարկումներին Ազգային ժողովում, տարբեր դահլիճներում թե զանգվածային լրատվամիջոցներով մասնակցող յուրաքանչյուրը, կամա թե ակամա, ուղղակիորեն թե անուղղակիորեն բացահայտում է իր ձգտումները և կողմնորոշումը, իր ինքնությունը, իր ով լինելը: Այն իրողությունը, որ օրենքի նախագծի ամենամոլի քննադատների թվում կառավարությանն առընթեր ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության նախկին պետ Յրամուշ Խառատյանն է, մեզ բնավ չի զարմացնում: Ժամանակին հենց նրա մեղքով, թողտվությամբ է, որ մեր երկրի օրենսդրության կոպիտ խախտմամբ Հայաստանում գրանցվեց «Եհովայի վկաներ» քայլայիշ և ամբողջատիրական աղանդը:

Եհանգիստ է, օրենքի նախագիծն ունի բազմաթիվ և շտկման ենթակա թերություններ, քայլ հիմնականում ծիշտ հակառակ՝ հոգեորսությանը և քայլայիշ աղանդների ազգակորժամ գործունեությանը թույլ դիմագրավելու առումով: Մինչդեռ Յ. Խառատյանը, «Ժամանգություն» կուսակցությունից Աժ պատգամավոր Վարդան Խաչատրյանը, հասարակական որոշ կազմակերպությունների ղեկավարներ և սուսի իրավապաշտպաններ այս կապակցությամբ չեն, որ իրենց քննադատության թիրախ են դարձել օրենքի նախագիծը: Ահա թե ինչեր են մոգոննել նրանք:

Վ. Խաչատրյանը, օրինակ, հայտարարում է, որ օրենքի առաջարկող փոփոխության դեմ «Ժամանգությունը» պայքարելու է, քանի որ «հասարակական օրգանիզմի աղճատմանն ուղղված որևէ քայլ այսօր պետք է բացառել հիմնովին»: Պատգամավորը, որին հիշական թերթերը կրոնագետ, նույնիսկ աստվածաբան են ներկայացրել, հավանաբար «մոռանում է», որ Հայաստանում բուն դրած քայլայիշ և ամբողջատիրական աղանդները հենց իրենք են հետևողականորեն աղճատում հասարակական օրգանիզմը, պառակտում հասարակությունը, հային հայի դեմ, հային Հայ Առաքելական Սուլր Եկեղեցու դեմ համում ...: Օրենքի նախագծում չկա նաև հայ ժո-

ղովրդի ինքնության թիվ մեկ մեխսը՝ Դայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, կրոնական ինքնությունը մեր ինքնության առանցքը դարձնելու որևէ փորձ (ափսոս, որ չկա, եթե լիներ, նախագծի հեղինակներին պետք է միայն դրվատեինք»:

Դաճախ կրոնական անհանդուրժողականություն պարունակող իոդվաճներ հրապարակող «Ազատամտություն» թերթը նույնապես լուսաբանել է օրենքի նախագծի քննարկումները, սակայն «Դայաստանը կարող է դառնալ կրոնական հակամարտությունների թատերաբեն» ծավալուն հոդվածը բավականին լուրջ և հավասարակշիռ վերլուծության է ենթարկել նախագիծը<sup>20</sup>. «Ահա այդպիսի ինտելեկտուալ մի փորձանքի առաջ է կանգնած հայ հասարակությունը՝ շնորհիվ Աժ պատգամավոր Արմեն Աշոտյանի, որը հերիք չէ պատգամավոր է, վերջերս էլ ընտրվել է Աժ կոթության, գիտության, մշակույթի, սպորտի ու երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: Աշոտյանը, երկի շատ լուրջ ընդունելով օրենսդրական գործունեությամբ զբաղվելու իր կարողությունները, Աժ է ներկայացրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծ: Կարծես թե այս ոլորտում այս պահին փոփոխությունների որևէ անհրաժեշտություն չկար. Դայ Առաքելական Եկեղեցին բավարար չափով պաշտպանված է թե՝ օրենսդրորեն, թե՝ կազմակերպարագական ինաստով: Սակայն Աշոտյանի այս նախաձեռնության շնորհիվ մյուս Եկեղեցիները և կրոնական ուղղությունները ակտիվացնան նոր խթան են ստանում: Նրանք այսօր միավորվում են՝ իրենց իրավունքները համատեղ պաշտպանելու Դայաստանի իշխանություններից և Դայ Առաքելական Եկեղեցուց: Իսկ Աշոտյանի ներկայացրած փոփոխությունները այդ պայքարի համար լիակատար իիմք են ստեղծում: Եթե դրանք ընդունվեն և կիրառվեն, ապա Դայաստանի Դանրապետության պետական իշխանության նարմինները, ոստիկանությունը, դատախազությունը և դատարանները, իրենց բան ու գործը բոլած, պետք է զբաղվեն հավատաքննությամբ, որպեսզի պարզեն, թե ով է զբաղվում հոգեորսությամբ, իսկ ով՝ քարոզությամբ: Իրական են նաև այն կանխատեսումները, որ այս փոփոխությունների ընդունումը իրական սպառնալիք է Դայաստանի սահմանադրական կարգին, ըստ որի՝ ՀՀ-ն աշխարհիկ պետություն է, Եկեղեցին անջատ է պետությունից, իսկ փոփոխությունների ընդունման դեպքում Դայաստանը կարող է դառնալ կրոնապետություն:... Ամենամեծ խնդիրը, իհարկե, կապված է առաջարկվող փոփոխություններով հոգեորսությունը սահմանելու և դրա համար

քրեական պատասխանատվություն սահմանելու հետ: Ըստ առաջարկվող փոփոխության, «Դոգեռսություն է համարվում կրոնական կամ դավանաբանական այլ հայացքներ ունեցող կամ դրանք չունեցող քաղաքացիների նկատմամբ քարոզչական այն ներգործությունը, որի ընթացքում առաջարկվում կամ տրամադրվում է նյութական իրախուսանք»: Եկեղեցիներից շատերը գրադարձում են քարեգործությամբ: Մի պահ պատկերացրեք, որ որևէ եկեղեցու քարոզիչ քարոզի ժամանակ ասում է, որ իրենց եկեղեցու անդամները օգնում են իրար, ֆինանսական ռժվարություններ ունեցողին տրամադրվում է օժանդակություն: Սա կարող է լինել կատարյալ հոգեռսության օրինակ, իսկ քարոզիչը՝ դատապարտվել ազատազրկման»:

Նույն թերթը մեկ այլ հոդվածում<sup>21</sup> մեղադրում է ՀՀ կառավարությանը կից Ազգային փոքրամասնությունների և կրոնական հարցերի վարչության նախկին պետին «աղանդավորականների» դեմ չպայքարելու համար. «Կառավարության աշխատակազմի անդամի չորսամյա գործունեության «թագ ու պսակն» այն եղավ, որ գրչի մի հարվածով արտոնեց տոտալ աղանդների ազատ ու անկաշկանդ գործունեությունն ու տարածումը երկրում: Խառաւոյանը հասավ նրան, որ եհովականները, իիսունականները, կրիշնայականները և մնացած զիրիները օրենքով պաշտպանված լինեն, ընդ որում՝ տոտալ աղանդների գործունեության սահմանումը (հիմնական գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները և այլն) այնպես հաստատեց, որ կրոնական կազմակերպությունների կարգավիճակը հավասարվեց Յայ Առաքելական եկեղեցու կարգավիճակին: Կարկառուն ազգագրագետին բնավ չեր հետաքրքրում ու հուզում այն փաստը, որ հոգեռսուները ակտիվորեն լծվել են (այսօր առավել քան եռանդուն) սեփական ազգը հյուծելու, նրան հոգեպես թուլացնելու, մարդկանց գիտակցությունը մթագնելու գործին: Տիկնոց համար կարևոր կրոնական ազատություններն են, այլ ոչ թե նորմալ մարդկանց հոգեռսության ծիրաններից փրկելը: Մի խուքով, դնելով իր ստորագրությունը նման օրենքի նախագծի տակ (որի մշակմանը որպես փորձագետներ հիմնականում մասնակցում են գրանտակերները)՝ Յանուշ Խառաւյան վարչության պետը այդպիսով դարձավ պաշտելի անձ աղանդավորական կազմակերպությունների համար: Այս առումով ամեններ էլ պատահական չէ, որ հետագայում Խառաւյանը անդամագրվեց Լևոնի աղանդին (այս մասին ավելի ուշ):»:

<sup>21</sup> «Ազատամտություն», «Դավանափոխը «ազգի մամայի» դերում, իսկ ով պետք է Յուլիչին բարոյականության դասեր տա», 23/10/2009:

«Առավոտ» օրաթերթի հոդվածում առաջարկվում է ընդհան-րապես սահմանափակել կրոնական ազատությունները, որոնք ան-րագրված են սահմանադրությամբ և միջազգային համաձայնագրե-րով<sup>22</sup>. «Վանաձորի Սր Գրիգոր Նարեկացի Եկեղեցու քահանա տեր Վահան Ազարյանը գտնում է, որ Յայ առաքելական Եկեղեցին աղանդների դեմ պայքարում պետք է գլորալ աշխատանքներ սկսի պետության հետ համատեղ: «Մենք պետք է հիշենք, որ սա շատ մարդկանց համար բիզնես է, պարզապես աշխատանք: Մենք շատ խնդիրներ ունենք լուծելու կրթության, դաստիարակության ոլորտ-ներում: Մեր քաղաքացիները պետք է գիտակցեն, որ Եկեղեցին հենց իրենք են և առաջին հերթին իրենք պետք է իրենց պաշտպանեն աղանդներից»:

Հատերը համոզված են, որ աղանդները օգտվում են մարդ-կանց անտեղյակությունից, և ով տեղեկացված չէ, պաշտպանված չէ աղանդների ազդեցությունից: Աղանդավորական տարրեր կազմա-կերպություններ Աստվածաշունչը մեկնաբանում են տարրեր կերպ: Երևանի Սր Սարգիս Եկեղեցու քահանա տեր Յակոբ Խաչատրյանի հետ գրուցեցինք «Կյանքի խոսք» կազմակերպության մասին. ««Կյանքի խոսք» աստվածարանական գաղափարախոսության հիմքում ընկած է բարգավաճման գաղափարը: Թեև նրանք ասում են, որ դավանաբանորեն չեն տարրերվում Յայ առաքելական Եկե-ղեցուց, բայց այդ բարգավաճման գաղափարի մեջ աստվածաշնչ-յան հիմնական սկզբունքներից շեղումներ կան: Յամաձայն այդ գա-ղափարի՝ մարդու կյանքը անընդհատ բարգավաճում պետք է ունե-նա, հավատի արտահայտությունը պետք է նյութական լինի կյան-քում՝ դրամ, պաշտոնի բարձրացում, առողջության վերականգնում: Այս ամենը Աստվածաշնչի տրամաբանությունից և ոգուց չի բխում: Դրանք խայժեր են, որոնց շնորհիվ անձը կարող է անդամագրվել կազմակերպությանը»:

«Կյանքի խոսք» Վանաձորի ներկայացուցիչները պարբերա-բար այցելություններ են կատարում բանտեր, մանկատներ, ծերա-նոցներ, նվերներ տալիս և քարոզում՝ այսպիսով փորձելով իրենց շարքերը ներգրավել հոգեբանական լուրջ խնդիրներ ունեցող մարդկանց: Ըստ հոգեբան Վլադիմիր Միքայելյանի՝ պետք չէ աղանդներին ազատ գործունեության հնարավորություն տալ՝ հիմն-վելով մտքի, խողի, դավանանքի ազատության սկզբունքի վրա. «Ազատությունը այն կատեգորիան է, որը զարգացման է բերում, իսկ աղանդը, զրկելով մարդուն մտածելու կարողությունից, զոկում է նաև զարգանալու հնարավորությունից»:

«Գոլոս Արմենիի»<sup>23</sup> թերթը մի քանի հոդվածներում ներկայացնում է Ֆրանսիայի և Հունաստանի փորձը, սակայն տվյալները մասնակի են ներկայացված: Հոդվածներում ներկայացվում են Եհովայի վկաների դեմ կիրառված օրենսդրական սահմանափակումները, սակայն չեն ներկայացվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները այդ երկրներից ներկայացված գործերի կապակցությամբ, կամ, օգտագործելով «հոգեորսություն» եզրը, հոդվածներում չի բացատրվում, որ դա եվրոպական իրավունքում «ոչ պատշաճ դավանափոխություն» եզրն է, որի համար իրոք քրեական պատիժներ են սահմանված, այլ ոչ թե «դավանափոխություն» եզրն է, որի տակ երբեմն հասկանում են «հոգեորսություն» ասելով, և որը միջազգային իրավունքում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունք է:

Պետք է նշել, որ ոչ բոլոր թերթերն են միակողմանի ներկայացրել օրենքի նախագծի քննարկումները: [www.lragir.am](http://www.lragir.am), [www.panorama.am](http://www.panorama.am), [www.tert.am](http://www.tert.am), [www.arminfo.am](http://www.arminfo.am), [www.hetq.am](http://www.hetq.am), [www.armenianow.com](http://www.armenianow.com), «Ժամանակ Երևան», «Հրապարակ» թերթերը ակտիվորեն լուսաբանել են նախագծի քննարկումները և հոդվածներում ներկայացրել են բոլոր տեսակետները՝ զերծ մնալով որակումներից:

ԱՄՆ պետդեպարտամենտի «Կրոնական ազատությունների մասին միջազգային գեկույց-2008» գեկույցի Հայաստանին վերաբերող հատվածի կապակցությամբ «Ազատամտություն» թերթը տպագրել է քննադատական վերլուծություն<sup>24</sup>: Ներկայացնում ենք որոշ հատվածներ այդ հոդվածից. «ԱՄՆ պետական դեպարտամենտը հրապարակել է «Կրոնական ազատությունների մասին միջազգային գեկույց-2009»-ը, որում Հայաստանին վերաբերող հատվածը չսահագանց ուշագրավ է: Զեկույցին ուշադիր ծանոթանալուց հետո ինքներդ կարող եք եզրահանգումներ անել՝ ԱՄՆ պետդեպի համար որն է ավելի կարևոր՝ նորմալ մարդկանց իրավունքների պաշտպանությունը, թե՝ հոգեորսների գործունեության համար անսահմանափակ հնարավորություններ ու արտոնություններ ապահովելու հարցը: Անշուշտ, գեկույցի հեղինակների համար գլխավոր աղանդավորական կազմակերպություններին և նրանց անդամներին գործելու լիակատար ազատություն տալու խնդիրն է»: Հոդվածում կրոնա-

<sup>23</sup> «Голос Армении», «ФРАНЦИЯ НЕ ПОПИРАЕТ», Tuesday, 24 February 2009.

<sup>24</sup> «Ազատամտություն», «Աղանդավորականները հղոր պաշտպան ունեն. ԱՄՆ պետական դեպարտամենտը ամուր կանգնած է նրանց բիկունքում», 30/10/2009:

կամ կազմակերպություններին հարող մարդիկ համարվում են ոչ նորմալ: «Ահա այսպես, սույն մոլախոտերն ամեն օր զորամաս աշխատանքի հաճախել նույնպես չեն ցանկանում: Յավանաբար այն պատճառով, որ հայոց բանակում փոքր-ինչ դժվարությամբ է ստացվում հոգեորսությամբ զբաղվելը:... Ահա այսպես աղանդավորների պաշտպան պետդեպը մեկ առ մեկ արձանագրել է տոտալ և ոչ այնքան տոտալ աղանդների նկատմամբ «անհանդուրժողականությամ», «ագրեսիայի» փաստերը»:

Պետդեպարտամենտի գենույցին համաձայնելը կամ չհամաձայնելը թերթի կամ հոդվածագրի իրավունքն է, սակայն Հայաստանի քաղաքացիներին կրոնական պատկանելության պատճառով հրապարակայնորեն ոչ նորմալ մարդ կամ «մոլախոտ» անվանելը ՀՀ քրեական օրենսդրությամբ պատժելի արարք է:

### Մամուլի հաղորդագրությունները կրոնական անհանդուրժողականության և խտրականության դեպքերի մասին

**138**

Մամուլում գնալով ավելի հաճախակի են հանդիպում հաղորդագրություններ՝ կրոնական անհանդուրժողականության կամ խտրականության դեպքերի մասին: Նման դեպքերի մասին հոդվածներ հիմնականում ներկայացնում են [www.lragir.am](http://www.lragir.am), [www.hetq.am](http://www.hetq.am), [www.armenianow.com](http://www.armenianow.com) կայքերը և «Ժամանակ Երևան» թերթը:

2009-ի մայիսի 13-ին «Ժամանակ Երևան» թերթը տպագրել է Մարինե Խառատյանի «Գուգարքի թեմի առաջնորդն ընդդեմ... երեխաների»,<sup>25</sup> որտեղ գրված է. «Գուգարքի թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը նախօրեին Վանաձորի նորակարույց եկեղեցու դահլիճում համրիպել է դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հետ: Յանդիպմանը մասնակցել են նաև մարզպետ Արամ Քոչարյանը, Վանաձորի քաղաքապետը, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետը: Տնօրեններին հրահանգվել է ակտիվ աշխատանք տանել «աղանդավորության», ասել է թե՝ «աղանդավոր» երեխաների դեմ: Ընդ որում՝ Եպիսկոպոսից բացի, ելույթ է ունեցել նաև Լոռու մարզպետը՝ նույն մոտիվներով: Նմանատիպ հանձնարարական տրվել է նաև Սպիտակի դպրոցների տնօրեններին:

<sup>25</sup> [http://religions.am/index.php?option=com\\_content&view=article&id=523%3A2009-05-14-06-11-17&catid=21%3Azhamanak&directory=19&lang=hy/](http://religions.am/index.php?option=com_content&view=article&id=523%3A2009-05-14-06-11-17&catid=21%3Azhamanak&directory=19&lang=hy/).

Երեկ արդեն Վանաձորի թիվ 9 դպրոցում ուսուցիչները սկսել են աշակերտների հարցաքննությունը, թե՞ ով ինչ եկեղեցի է հաճախում, այնտեղ մոմ վառո՞ւմ են, թե՞ ոչ: Ուսուցիչները գրանցել են երեխաների անուն-ազգանունները և սպառնացել, որ եթե աշակերտները հաճախեն «աղանդավորականների», այսինքն՝ Դայ Առաքելական եկեղեցուց բացի այլ եկեղեցիների հավաքներին, խստագույնս կպատժվեն: Բազմաթիվ «քացահայտված» երեխաներ լացելով ու հոգեկան սրբեսի մեջ են դպրոցից գնացել սուսն: Մեզ հասած տեղեկություններով՝ ուսուցիչները հետևում են հրահանգներին, քանի որ վախենում են կորցնել աշխատանքը: Ի դեպ, ամիսներ առաջ Լոռու Սպիտակ քաղաքին կից Զրաշեն և Զիգդամալ գյուղական դպրոցներում նման գործունեությամբ են գրաղվել արդեն ուստիկանները:

«Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը գերազանցում է իր լիազորությունները և միջամտում է պետության գործերին, և սա առաջին անգամը չէ», - մեզ հետ գրուցում երեկ գնահատական ներկայացրեց իրավապաշտպան, Դելսիհյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը՝ շարունակելով. «Նա իր գործողություններով հրահրում է կրոնական անհանդուրժողականություն և քշնամանք՝ կրոնական այլ ուղղությունների նկատմամբ, և Լոռու մարզում կրոնական պատկանելության հիմքով ուսումնականությունների պատասխանատվությունը ընկնում է անմիջապես Սեպուհ Չուլջյանի վրա: Նաև տեղի իշխանությունները՝ մարզպետի, քաղաքապետի, համայնքների ղեկավարների մակարդակով իրենց նման գործողություններով կրոնական անհանդուրժողականություն են սերմանում և պառակտում մտցնում հասարակության մեջ՝ կրոնական պատկանելության հողի վրա»:

Հաջորդ օրը նույն թերթը «Եկեղեցին անցել է «աղանդավոր» երեխաների դեմ «պրակտիկ գործունեության»»: Մարզպետարանը հերթում է, ծնողը՝ հաստատում»<sup>26</sup> հոդվածում շարունակում է լրագրողական հետաքննությունը. «Երեկ մեզ հաջողվեց գրուցել վանաձորցի ծնողի հետ, որի երեխաների հետ աշխատանք էր տարվել դպրոցում: Ծնողը, ով չցանկացավ ներկայանալ, մեզ պատմեց հետևյալը. «Սկզբից ցածր դասարանցիների անուններն են գրանցել: Երեխան ասաց՝ ուսուցուիին երկու-երկու կանչում էր ու հարցեր տալիս իրենց: Դարցրել է՝ ո՞՞ եկեղեցին եք հաճախում, այնտեղ մոմ վառո՞ւմ եք, այնտեղ ծեզ ի՞նչ են տալիս: Ավելի բարձր դասարանցիներին արդեն քացահայտ, ողջ դասարանի մոտ կանգնեցրել՝ պախարակել են, թե դուք աղանդավոր եք, եթե մոմ չեք վառում, այն-

<sup>26</sup> «Ժամանակ Երևան», 15 հոկտեմբերի, 2009:

տեղ, ուր գնում եք՝ հոգեորսներ են, էլ չեք գնալու էդտեղ: Փոքր երեխաս հուզված լացելով, վախեցած եկավ տուն, մեծս նույնպես վախեցած է եկել տուն», - ասաց ծնողը՝ շարունակելով. «Իհարկե, շատ վաս եմ գնահատում, երեխաների վիճակը տեսնելով՝ ես ինքս էի արդեն վաս վիճակում: Ո՞նց կարելի էր նման կերպ վարվել երեխաների հետ»: Մեզ հետ զրուցած մեկ այլ ծնող զարմացավ, որ մարզպետարանը հերքում է փաստը: «Ինչպես թե՝ չի խոսվել: Ամբողջ Վանաձորն է «Լոռի» հեռուստատեսությամբ տեսել: Առաջինը՝ ասվել է, որ հայ եկեղեցու պատմության դասավանդումները պետք է ուժեղացնել, հետո՝ պայքարել աղանդավորների դեմ: Եպիսկոպոսն իր խոսքում ասաց, որ մանկապարտեզները պետք է կոչվեն սրբերի անուններով, իսկ դպրոցներում պետք է պայքարել աղանդների դեմ: Մարզպետը ինքն էլ կոչ էր անում, որ պետք է պայքարել բոլոր աղանդավորների դեմ, այն դեպքում, եթե «աղանդը» իրավաբանական տերմին չէ և կառավարության ներկայացուցիչները, պաշտոնական մարդիկ իրավունք չունեն «աղանդ» բառը գործածել՝ խոսելով կրոնական կազմակերպության մասին: Մարզպետը բացահայտ կոչ էր անում դպրոցներում պայքարել աղանդավորության դեմ: Ամբողջ հավաքը դրան էր նվիրված, ինչի՞ մասին է խոսքը: Ո՞նց էդպիսի բան չի եղել: Դրանից հետո 9-րդ դպրոցում անցել են պրակտիկ գործունեության»:

«Ազգ» օրաթերթը «Լոռու մարզում հայրենասիրական ոգով մատաղ սերնդի դաստիարակությունը հակացուցված է» հոդվածում այսպես է մեկնաբանում այդ դեպքերը. «Իրականության խեղաթյուրումը որոշ զանգվածային լրատվական միջոցների կողմից երբեմն անցնում է անգամ երևակայության սահմանները: Դապա մի տեսեք, թե ինչ վերնագիր է դրվել հանրապետական թերթերից մեկում տպագրված տեղեկատվությանը. «Զանգվածային կրոնական ահարեկումներ Լոռու մարզում»: Վերնագիրը հնչեղ է: Դասե՛ք եվրոպացիներ, իրավապաշտպաններ, «Ժողովրդավարներ», փրկեք կրոնական կազմակերպություններին անհանդուրժող լոռեցիներից:

Երբ վերնագիրն ընթերցելուց հետո խորանում ես բուն տեղեկատվության մեջ, պարզվում է, որ գործ ունենք պարզագույն սաղրանքի, ապակողմնորոշիչ տեղեկատվության և տարրական իրավական գիտելիքների բացակայության հետ: Եվ ամենակարևորը. տեղեկատվությունն ավարտվում է ցնցող եզրակացությամբ. «Ենթադրվում է, որ Եկեղեցու թիրախը դպրոցներն են լինելու»: Ո՞ր Եկեղեցու մասին է խոսքը: Ինչ ասել է՝ թիրախ:

Պարզագույն սաղրանքի, ապակողմնորոշիչ տեղեկատվության մասին ինչն է իրականում հիմք եղել նման ապատեղեկատվու-

թյան համար: 2009-ի մայիսի 11-ին տեղի է ունեցել մարզի դպրոցների տնօրենների համդիպումը Լոռու մարզպետի, Գուգարաց թեմի առաջնորդի, մարզպետարանի կրթության ոլորտի պատասխանատունների հետ: Քննարկվել են դպրոցներում հայ Եկեղեցու պատմություն, հայ ժողովրդի պատմություն, հայոց լեզու և հայ գրականություն առարկաների դասավանդման մեթոդիկան և մատադ սերմոդին հայրենասիրական ոգով դաստիարակելու խնդիրները: Այս առարկաների ծիշտ մատուցումն է, որ կարող է աշակերտի մեջ արթնացնել ազգային ինքնուրյան գիտակցումը և բավարար գիտելիքներով խարսխված ու գիտակցված հայրենասիրության զգացումը: Եվ իսկապես անհանգստանալու հիմքեր կան:...

Ժամանակն է գրող և ընթերցող հասարակությանը հիշեցնել, որ ՀՀ Ազգային ժողովը 2007-ի փետրվարի 22-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտել և սկսել է կիրառվել: Ըստ այդ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի՝ «Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի նպաստելու հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով»:

141

Ոռու մարզում թեմի առաջնորդի և մարզային իշխանության հետ միասնաբար կազմակերպվող միջոցառումներն առաջինն ու վերջինը չեն, իսկ առաջնորդի ազգասիրության մասին լոռեցիները դրվատանքով են խոսում: Ուստի, երբ Հայ առաքելական Եկեղեցին իրեն վերապահված իրավունքների շրջանակներում կրթական հաստատություններում նպաստել է հասարակայնության հոգևոր կրթությանը, հանկարծ այն որակվում է որպես կրոնական անհանդուրժողականություն»<sup>27:</sup>

2009-ի հունիսին Ազգային անվտանգության ծառայության Գյումրու բաժնի աշխատակիցները պարբերաբար անհանգստացրել են «Քրիստոնեական նշակույթի միջազգային ծառայություններ» հասարակական բարեգործական կազմակերպության անդամներին<sup>28:</sup> Կազմակերպությունը տարիներ ի վեր գործում է Հայաստանում և զբաղվում է բարեգործությամբ: Կազմակերպության նախագահն է Լևոն Պարտակյանը: «Հրավիրյալները» օրենքին համապատասխան կարգով պատշաճորեն չեն ծանուցվել, հարցաքնն-

27 «Ազգ» #87, 14/05/2009:

28 Iragir.am, 05/06/2009.

վողմերին չեն բացատրում իրենց կարգավիճակը և իրավունքները: 24-ամյա Նուշիկ Գրիգորյանը պատմում է, որ իրեն երեք ժամ ԱԱԾ բաժանմունքուն պահելու ժամանակ թույլ չեն տվել օգտվել հեռախոսից, իսկ «պետի տեղակալ» ներկայացած Զախոյան ազգանունով անձը կրոնական զգացմունքները նվաստացնող «զրույցներ» է վարել: Նուշիկ Գրիգորյանին ստիպել են ինչ-որ թղթի վրա «բացատրություններ» գրել: «Դարցաքննության» է հրավիրվել նաև կազմակերպության անդամ Արթուր Ավագյանը, որը հեռախոսով իրեն հրավիրած քննիչ Արթուր Դարությունյանից պահանջել է պատշաճ կարգով իրեն հրավեր ուղարկել: Ըստ կազմակերպության ղեկավար Լևոն Պարտակյանի՝ Արթուր Ավագյանին ԱԱԾ աշխատակիցները սպառնացել են չներկայանալու դեպքում «հաշվեհարդար տեսնել» նրա հետ: «Դրավիրվածներին» ԱԱԾ ծառայության աշխատակիցներն իրենց գործողությունները բացատրում են այն բանով, որ պայքարում են «հոգեռսության» դեմ: Այս տվյալները մեզ հաղորդել են ԱԱԾ «հրավիրված» այդ կազմակերպության անդամները, ինչպես նաև այս դեպքը նկարագրված է ԱՄՆ պետդեպարտամենտի «Կրոնական ազատությունների մասին միջազգային գեկույց 2009-Դայաստան» գեկույցում<sup>29</sup>: Կազմակերպության ղեկավար Լևոն Պարտակյանի բաց նամակում<sup>30</sup> ասվում է, որ «Նուշիկը, նույն սկզբունքով, ԱԱԾ երեք աշխատակիցների, Արմենի, Արթուրի և Զախոյանի կողմից ենթարկվել է հարցաքննության, հեգնանքի և ծաղրանքի առարկա է դարձել նրանց կողմից, քննադատվել է և անվանարկվել է նրա՝ կրոնական հայացքների (իր հավատքի ծառայությունը, նվիրվածությունը ու պատկանելիությունը իր՝ քրիստոնեական, հոգևոր-մշակութային ծառայություններին), դեմքի գույնի, չամուսնանալու փաստի, անձնական (որը լինելը), ընտանեկան և սոցիալական վիճակի և ստորացնելու միտումով առաջարկվել է մաքրել քաղաքի հրապարակում գտնվող Եկեղեցու բակը»: «Iragir.am»-ուն այս դեպքերի մասին լրատվություն տպագրելուց հետո ԱԱԾ աշխատակիցները նրանց այլևս չեն անհանգստացրել<sup>31</sup>:

«Ժամանակ Երևան» օրաթերթը<sup>32</sup> տեղեկացնում է, որ «Լոռու մարզի Մրգահովիտ գյուղի դպրոցի ուսուցիչները կրոնական անհանդուրժողականության արշավ են սկսել: Դպրոցի տնօրենը սպառնացել է քրեական պատասխանատվության ենթարկել «Ավե-

<sup>29</sup> Դայաստանում ԱՄՆ դեսպանատան պաշտոնական կայք ([http://armenia.usembassy.gov/irf2009\\_arm.html](http://armenia.usembassy.gov/irf2009_arm.html)):

<sup>30</sup> Iragir.am, 05/06/2009.

<sup>31</sup> Ըստ «Քրիստոնեական մշակույթի միջազգային ծառայություններ» հասարակական բարեգործական կազմակերպության ղեկավար Լևոն Պարտակյանի՝ մեզ տրամադրած տվյալների:

<sup>32</sup> <http://zhamanak.com/news/8698>, 18:13 Yerevan | 14:13 GMT | Thursday 15 October, 2009.

տարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցու» անդամներից մեկի երեխաններին այն բանի համար, որ աղանդավորական են: Ուսուցիչները երեխանների շրջանում հարցումներ են անցկացնում՝ բացահայտելու համար աղանդավորականներին: «Դայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչը կոչ է արել մյուս երեխաններին չշփվել աղանդավորականների հետ: Այժմ երեխանները մեկուսացված են ընկերներից: Նման դեպքերը բնորոշ են ոչ միայն Լոռու մարզին, այլև տարածված են ողջ Հայաստանում»:

2009-ի գարնանը մեծ աղմուկ էր բարձրացել Ավետարանական եկեղեցու հովվի կողմից հրավիրված «Օկլահոնայի երգող տղամարդիկ» երգչախմբի բարեգործական համերգների շուրջ, որի պատճառով երգչախմբի համերգները դադարեցվել են: Ներկայացնում ենք մանուլի արծագանքները այդ դեպքերի կապակցութեամբ. «Օրեր առաջ պարզվեց, որ Դայ ավետարանական եկեղեցին Մայր Աթոռ Սուլրը Էջմիածնի աչքի առաջ, մեր անդուր ու անլուսամուտ պետության տարածք է «Ներկրել» «Օկլահոնայի երգող տղամարդիկ» երգչախմբի անվան տակ երգող աղանդավորներ: Միացյալ Նահանգներից Հայաստան ժամանած երգող հոգևորները իբր եկել են համերգների, սակայն իրականում ամերիկյան աղանդավորական երգչախումբը Դայ ավետարանչական համայնքի հետ ձեռք ձեռքի այստեղ գրադարձելու են քարոզչությամբ: Պատեհ առիթ կա՝ ապրիլի 24-ը: Եվ Դայ ավետարանական եկեղեցին, որը համերգների կազմակերպիչն ու հովանավորն է, որոշել է Օկլահոնայի երգչախմբի ելույթներով «հարգանք մատուցել» Դայոց ցեղասպանության զոհերի հիշատակին...»

Սակայն երգչախմբի կայքէջերից Մայր Աթոռի հայտնաբերած մի փաստաթուղթը բացահայտում է Դայ ավետարանական եկեղեցու սույն նախաձեռնության իրական նպատակը: Գլխավորապես այն, որ նախաձեռնության հեղինակն ու գաստրովոր բապտիստները, Ցեղասպանության զոհերի հիշատակը շահարկելով, առնվազն 1-2 շաբաթ Հայաստանում գրադարձելու են կոնկրետ միսիոններական գործունեությամբ:

Ապացույցը հիշյալ փաստաթորի արծանագրություններն են, ըստ որոնց, Հայաստանը որակվում է որպես հակասեմականության տարրեր կրող երկիր, իսկ Հայաստանյաց առաքելական եկեղեցին իր ճնշող ազդեցությամբ «սպառնալիք է նոր Մեծ առաքելության եկեղեցիների ածի համար»...

Այս փաստը վերջապես ստիպել է Մայր Աթոռին ձայն հանել, որն էլ երեկ օրաքերթերից մեկում հրապարակեց իր հայտարարությունը, ուր մասնավորապես նշված է. «Մայր Աթոռ Սուլրը Էջմիածի-

Նը խստորեն դատապարտում է սույն միջոցառմանը ներգրավված բոլոր կազմակերպիչներին, ի մասնավորի հրավիրող Յայ ավետարանական համայնքին, Ցեղասպանության զոհերի նվիրական հիշատակի շահարկմանը Յայաստանի Յանրապետությունը և Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին անվանարկելու փորձերը»<sup>33</sup>: Յետագա տեքստում ներկայացվում են տեսակետներ Յայ ավետարանական Եկեղեցու մասին. «Ի դեպ, անցած տարիներին տարբեր առիթներով, երբ հանդիպել եմ հայ Եկեղեցու սպասավորների ու բարձրաստիճան հոգևորականների հետ, նրանցից մշտապես փորձել եմ ծշտել՝ Յայ ավետարանական Եկեղեցին աղա՞նդ է, թե՞ ոչ: Եվ իմ բոլոր գրուցակիցները նշել են, որ աղանդ է: Բայց միայն «անկյուններում», իսկ հրապարակավ՝ ոչ Սայր Աթոռը և ոչ ել որևէ հոգևորական այդ մասին չեն հայտարարել... Եվ Ողնե Լևոնյանն անվրոդվ շարունակել է իր աղանդավորական գործունեությունը՝ ավետարանից հոգևորների ակտիվ քարոզության շնորհիվ ավելացնելով իր հավատացյալների թիվը:... Անցած տարիներին կարևոր ու հիշարժան բոլոր իրադարձությունները նշելիս (տոն, թե տարելից) բոլորս ենք նկատել, որ արարողությունների ժամանակ երկիր դեկավարների թիկունքում մշտապես ներկա է Ողնե Լևոնյանը: Գուցե այս հագամա՞նքն է հետ պահել Յայ առաքելական Եկեղեցուն հրապարակավ զգուշացնելու իր նոլորյալ հոտին, որպեսզի չընկնեն ավետարանականի որոգայթը: Սակայն դա արդարացում լինել չի կարող, քանզի փաստ է, որ (չխորանալով դավանաբանական ակնհայտ տարբերությունների մեջ) ավետարանականը որևէ կերպ չի «մերձծվում» առաքելականի մեջ: Թեկուզ միայն այն պատճառով, որ քրիստոնեությունը, որպես պետական կրոն, հռչակվել է դեռևս 1700 տարի առաջ, իսկ ավետարանականն ունի ընդամենը 160 տարվա պատմություն»:

«Յայոց աշխարհ» օրաբերքը այսպես է մեկնաբանում դեպքը. «Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի մամուլի դիվանի ապրիլի 18-ին տարածած տեղեկատվության, ԱՍՍ-ի «Օկլահոնայի երգող տղամարդիկ» անվամբ բապտիստական երգչախմբի կայքէջերից մեկում զետեղված տեղեկատվության համաձայն, Յայաստանը բնութագրվում է որպես հակասեմականության տարբեր կրող երկիր: Կարծում ենք, այս լկուի գրապարտությունն արդեն իսկ բավարար է բոյկոտելու Ամերիկայից արդեն Յայաստան ժամանակաշրջանում՝ «Singing Men of Oklahoma» երգչախմբի այսօրվա ելույթը Դիլիջանում, վաղվա

<sup>33</sup> www.azatamtutyun.am, «Աղանդավորների գաստրոլները», 22/04/2009:

Ելույթը՝ Վանաձորում, և ապրիլի 24-ի ելույթը Երևանի «Արամ Խաչատրյան» համերգասրահում: ....իրականում չկա Յայաստանյաց Առաքելական Եկեղեցու ծնշող կամ ինչ-որ հակաօրինական ազդեցություն, ընդհակառակը՝ քայբայիչ աղանդերի և նրանց գործունեության դեմ պայքարելու առումով կա նրա անհրաժեշտ ազդեցության բացակայություն: Բոլորովին այլ խնդիր է, որ հավատացյալների մեջ մասը նախապատվությունը տալիս է ոչ թե տարատեսակ աղանդերին և իբրև Եկեղեցի ներկայացողներին, այլ Յայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն»:<sup>34</sup>

## Եղիակացություն

Յայկական մամուլում կրոնական թեմաներով հոդվածները, նախորդ տարիների համեմատ, շատացել են: Մյուս առանձնահատկությունն այն է, որ թեման գնալով քաղաքականանում է, որը կարելի է համեմատել ԱՊՀ մյուս երկրներում ընթացող նմանատիպ գործընթացների հետ: Յայաստանյաց առաքելական Եկեղեցու ներկայացուցիչները գնալով ավելի ակտիվ դերակատարություն են ստանձնում քաղաքական կյանքում, որի մասին վկայում են 2008-ի նախազահական ընտրությունների քարոզարշավի, այնպես էլ ՀԱՍԵ կաթողիկոսի ուղերձները և հոգևորականների հրապարակային ելույթները: Կրոնական կազմակերպությունների նկատմամբ հնչող մեղադրանքներում հաճախ կարելի է հանդիպել քաղաքական բնույթի այնպիսի քննադատություններ, ինչպիսիք են «ազգային միասնության», «հոգևոր անվտանգության»<sup>35</sup> նկատմամբ եղած «սպառնալիքներ»: Յաճախ են նույնացվում ազգային և կրոնական պատկանելությունը: Նման տեսակետների կարելի է հանդիպել նաև պետական պաշտոնյաների ելույթներում, պետական փաստաթղթերում:

145

Ի տարբերություն նախորդ տարիների, մամուլի որոշ միջոցներ ավելի ակտիվ են հանդես գալիս կրոնական հանդուրժողականության դիրքերից: Մամուլի միջոցները նկարագրում են կրոնական անհանդուրժողականության և խորականության դեպքերը, սակայն պատկան մարմինները ննան դեպքերին չեն արձագանքում: Ի տարբերություն նախորդ տարիների, կրոնական խնդիրներ լուսաբանող նյութերում կարելի է հանդիպել տարբեր տեսակետների, որը չի կարելի ասել հեռուստատեսության մասին:

34 «Յայոց աշխարհ», «Ինչ են իրականում ցանկանում երգող տղամարդիկ», 21/04/2009:

35 «Խողթի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախարանում գրված է, որ այդ փոփոխությունների նպատակներից է «հոգևոր անվտանգության» ապահովումը:

## ԿՐՈՆԻ ԵՎ ՀԱՎԱՏՁԻ ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԵԼՁԱՆՈՒՄ

Աղբեջանի տարածքը՝ 33,774 կմ<sup>2</sup> է, իսկ բնակչությունը՝ 8.2 միլիոն։ Աղբեջանը կորցրեց Լեռնային Դարաբաղի նկատմամբ վերահսկողությունը 1990-ական թթ. Դայաստանի հետ մղած պատերազմի ժամանակ։

«Առանձին կրոնական խմբերի անդամակցության վերաբերյալ հավաստի վիճակագրական տվյալներ չկան։ Պետական մարմինները հավաստիացնում են, որ բնակչության մոտ 96%-ը մահմեդականություն է դավանում։ Չնայած դրան՝ նշված մեծամասնության շրջանում կրոնական պահպանողականությունը համեմատաբար քիչ է տարածված։ Ըստ «Կրոնական կառույցների հետ աշխատող պետական հանձնաժողովի» (SCWRS)՝ նույնության բնակչության մոտավորապես 65%-ը շիա մահմեդականներ են, իսկ 35%-ը՝ սուննի մահմեդականներ։

146

Բնակչության մնացած մասը մեծ մասամբ ռուսական ուղղափառ եկեղեցու հետևորդներ է, տարբեր քրիստոնեական խմբերի անդամներ, հրեաներ և արեհստներ։ Շիա մահմեդականները, սուննի մահմեդականները, ռուս ուղղափառները, հրեաները երկրի «ավանդական» կրոնական ուղղություններից են։ Ավելի քան 100 տարի երկրում կան յութերական, հռոմեական կաթոլիկ, մկրտական, մոլոկանական (ռուսական հին ուղղափառության հետևորդներ), 7-րդ օրվա արվենտիստական և բահայյական փոքր խմբավորումներ։

1991 թ. անկախության հօչակումից ի վեր երկրում գործունեություն ծավալեցին նաև կառավարության կողմից «ոչ ավանդական» համարվող մի շարք այլ կրոնական խմբավորումներ։ Դրանցից էին վահաբիական և սալաֆիստական մահմեդականները, պենտեքոստալ և այլ ավետարանական քրիստոնյաները, Եհովայի վկաները և կրիշնայականները։ Բաքվում կան նաև վտարանդի քրիստոնեական բազմաթիվ խմբավորումներ<sup>1</sup>։

Աղբեջանական պետությունը ապահովում է կրոնի ազատությունը երկրում, բայց օրենքը հավասարաչափ չի գործում երկրի

<sup>1</sup> ԱԱՆ պետդեպարտամենտ., 2009թ. Կրոնի վերաբերյալ միջազգային գեկույց. Աղբեջան». Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատամքի բյուլոն (26 հոկտեմբերի 2009թ.), <http://www.state.gov/g/drl/rls/irf/2009/127299.htm; internet>.

տարբեր մասերում<sup>2</sup>, քանի որ պետությունը ի վիճակի չէ գործնականում օրենքով պաշտպանվածություն ապահովել<sup>3</sup>: Մի շարք պաշտոնական որոշումներ կառավարությանը հնարավորություն են տալիս վերահսկել կրոնական գործունեությունը, ներառյալ՝ գրանցման բարդ պահանջները, կրոնական նյութերի ներմուծման գրաքննությունը և նորադարձության դեմ ուղղված օրենքները: Այս դրույթները խստորեն սահմանափակում են կրոնական կազմակերպությունների՝ իրենց կառույցներն ամրապնդելու և նույնիսկ պատշաճ գործունեություն իրականացնելու հնարավորությունները, և որոշ խմբերի կողմից օրենքի պահանջները կատարելու անկարողությունը իրենց խոցելի է դարձնում քրեական հետապնդումների նկատմամբ:

### Ասոցիացիաների ազատությունը

Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր անհատ ունի խղճի ազատության և իր վերաբերմունքը կրոնի հանդեպ անկաշկանդորեն դրսնորելու իրավունք, կարող է արտահայտել կամ քարոզել իր կրոնական համոզմունքները և իրականացնել կրոնական արարողություններ:

147

2001 թ. Ադրբեյջանի նախագահն ստեղծեց կրոնական կազմակերպությունների հետ աշխատող պետական հանձնաժողովը<sup>4</sup>, որը վնասակար ազդեցություն ունեցավ Ադրբեյջանի՝ կրոնի վերաբերյալ 1992 թ. ընդունված հարաբերականորեն ազատական օրենքի վրա:

Հանձնաժողովը կրոնական կազմակերպություններից պահանջում է վերագրանցվել կառավարությունում: Նույնիսկ անհատի կողմից ձևավորված հավաքատեղիները ենթակա են գրանցման<sup>5</sup>: Սկսած 2001 թ.՝ շատ կազմակերպությունների համար ավելի ու ավելի դժվարացավ գրանցում ձեռք բերելը: Այդ ժամանակից ի վեր

2 ԱԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդ: Ընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբ, փաստարուր համար A/HRC/WG.6/4/AZE/2, էջ 8, պարագանք 28,  
[http://lib.ohchr.org/HRBodies/UPR/Documents/Session4/AZ/A\\_HRC\\_WG6\\_4\\_AZE\\_2\\_E.PDF](http://lib.ohchr.org/HRBodies/UPR/Documents/Session4/AZ/A_HRC_WG6_4_AZE_2_E.PDF)

3 ԱԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդ: Ընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբ, փաստարուր համար A/HRC/WG.6/4/AZE/3, էջ 5, պարագանք 22,  
[http://lib.ohchr.org/HRBodies/UPR/Documents/Session4/AZ/A\\_HRC\\_WG6\\_4\\_AZE\\_3\\_E.PDF](http://lib.ohchr.org/HRBodies/UPR/Documents/Session4/AZ/A_HRC_WG6_4_AZE_3_E.PDF)

4 Հանձնաժողովը ձևադրվել է նախագահի թիվ 512 հրամանագրի հիման վրա 2001թ. հունիսի 20-ին,  
[http://www.dqdk.gov.az/eng/esasname\\_e.html](http://www.dqdk.gov.az/eng/esasname_e.html) (Վերջին այցելությունը՝ 2008թ. օգոստոսի 1):

5 Թեև «Կրոնի մասին» 1992թ. օրենքը (լրացված 1996 և 1997թթ.) պարտադիր գրանցում չի նախատեսում, պետական պաշտոնյաները բոլոր մակարդակներում հաճախ գործում են այնպես, իբր այդպես է նախատեսված: Ոսդիկանություն ու տեղական իշխանությունները բազմաթիվ հետապնդուներ են ձեռնարկել այն կրոնական համայնքների նկատմամբ, որոնք նախընթերել են չգրանցվել կամ մերժում են ստացել:

Տես նաև Ֆելիքս Քորլի, Ադրբեյջան. Կրոնական ազատության հետազոտություն, 2003թ. հունիս: Ֆորում 18-ի լրատվական ծառայություն, 25 հունիս 2003թ.: [http://www.forum18.org/Archive.php?article\\_id=92](http://www.forum18.org/Archive.php?article_id=92).

«գրանցված կրոնական հանձնաժողովների թիվը 400-ից նվազել է մինչև 168-ի»<sup>6</sup>: Շատ դժվար է գրանցում ստանալը, և վերջինիս 7-քայլանոց «կամայական և սահմանափակող» գործընթացը ենթարկվում է հաճախակի և երկարատև ծգծգումների: Գրանցում չունեցող կազմակերպությունները հաճախ անօրինական են համարվում և, հետևաբար, «դաշնում են տեղական իշխանությունների համար հարձակումների և դրանք փակելու թիրախ»: Դանձնաժողովը շարունակում է հետաձգել կամ մերժել մի շարք քրիստոնեական խմբերի գրանցումը:

Աղրբեջանում գրանցում են ստացել 336 իսլամական և 28 ոչ իսլամական կրոնական կազմակերպություններ: Վերջիններից 20-ը քրիստոնեական, 7-ը իրեական և 1-ը կրիշնայական կազմակերպություններ են: Այժմ Բաքվում գործում են հռոմեական կաթոլիկ եկեղեցի, 3 սինագոդ և 3 ռուսական ուղղափառ եկեղեցի: Գյանջա, աչմազ քաղաքներից յուրաքանչյուրում կա ռուսական ուղղափառ եկեղեցի, իսկ Օդրուգ, Թուրք քաղաքներում գործում են սինագոգներ:

Ընդհանուր առմամբ, կառավարությունը գրանցման գործընթացը օգտագործում է որպես գործիք՝ ուղղված անցանկալի համարվող կրոնական խմբերի դեմ: Գրանցում չունեցող այն կազմակերպությունները, որոնք նախընտրում են գործառնել պետական գրանցման բացակայության պայմաններում, կանգնած են անօրինական հայտարարվելու և փակվելու կամ տեղական իշխանությունների կողմից հասցեական հետապնդման ենթարկվելու վտանգի առջև:

Կրոնական կազմակերպությունների հետ աշխատող պետական հանձնաժողովը, որն իր ստեղծման օրից հետևում է գրանցման գործընթացին, անցանկալի համարվող դիմումների հետ վարվելու բազմաթիվ մեթոդներ է մշակել: Այն ստիպում է կրոնական կազմակերպություններին հետ վերցնել ներկայացված դիմումները, անտեսում է դրանք, շարունակ վերադարձնում է «ուղղումների» կամ «սխալների» պատճառով կամ մերժում է դրանք:

Իսկապես, քանի որ գրանցման դիմումները տեղական իշխանությունների կողմից հաստատվելու կարիք ունեն նախքան դրանց հասնելը հանձնաժողովին, ժողովրդականություն չվայելող կրոնական կազմակերպությունների չգրանցման հավանականությունը մեծ է:

Ալիաբադում գործող պետական նոտարական գրասենյակը առանց օրինական հիմքերի տարիներ շարունակ մերժում է Մկրտական կրոնական համայնքի տասը հիմնադիրների ստորագրություն-

<sup>6</sup> Կրոնական ազատության միջազգային հանձնաժողով. «Աղրբեջան. Կրոնական ազատության պայմանները վատրապանում են» (23 օգոստոսի 2004թ., այսուհետ՝ «Կրոնական ազատության պայմանները»), [http://www.uscirf.gov/index.php?option=com\\_content&task=view&id=372&Itemid=51&date=2008-06-01](http://www.uscirf.gov/index.php?option=com_content&task=view&id=372&Itemid=51&date=2008-06-01):

ները: Գրանցման կարգավորման պետական հանձնաժողովը նաև հավաստագիր է պահանջում տասը հիմնադիրներից յուրաքանչյուրի գործատուից՝ առանց մեկնաբանելու՝ ինչո՞ւ է դա անհրաժեշտ, ի՞նչ պետք է այն պարունակի և ի՞նչ է լինելու այն դեպքում, երբ հիմնադիրները չեն աշխատում: Դիմնադիրները նաև հավաստագիր պետք է ներկայացնեն դեկավար մարմիններից՝ նշելով նման կազմակերպության անհրաժեշտության «կարիքը», որը տեխնիկապես անհնարին է դարձնում համայնքի անկախության ապահովումը:

Մոտ 2000 ենթադրաբար գործող կրոնական կազմակերպություններից, որոնցից 406-ը գրանցվել են արդարադատության նախարարության կողմից մինչև պետական հանձնաժողովի ստեղծումը, պետական հանձնաժողովն իր կայքէջում որպես գրանցվածների հաշվառում է միայն 386-ին:

Տեղական կամ ազգային մակարդակներով գրանցման մերժում ստացած կրոնական կազմակերպություններից են անկախ մզկիթները, մկրտականները Նեֆքեչալայում և Ալիհաբադում, աղվենտիստական համայնքը՝ Նախիջևանում, մեծ հունական բողոքական եկեղեցին՝ Խսմայիլիում, անկախ յութերական կրոնական համայնքը՝ Բաքվում, ինչպես նաև տարբեր բողոքական եկեղեցիներ Սումգայիթում:

Իշխանությունները հավանություն չեն տալիս հատկապես բողոքական եկեղեցիներին, որոնք ներգրավում են հիմնականում ազերիներին:

Հանձնաժողովի նախկին դեկավարը՝ Ռաֆիկ Ալիկը, 2002 թ. դատարանի որոշման հիման վրա փակել տվեց բողոքական եկեղեցին՝ հավաստիացնելով, որ քահանան՝ Սարի Միրզունը, վիրավորել է իսլամը:

Միրզունին արգելվեց գրադարձը քարոզչությամբ, և նա ենթարկվեց լրատվական ուժգին քննադատությամբ:

Գրանցման հարցում մերժված կրոնական կազմակերպությունները հնարավորություն ունեն բողոքարկել մերժումը դատական ատյաններում: Շատերը նախընտրում են այդ քայլին չգնալ՝ մտավախություն ունենալով, որ դատական համակարգում տիրող կաշառակերությունը և դատական համակարգի սերտ լինելը կառավարության հետ կխոչընդոտեն արդար վճիռ կայացնելուն: Երբ Բաքվի մկրտական եկեղեցին բողոքարկեց դատական վճիռը, նրան չհաջողվեց վերանայել դատարանի վճիռը: Գրանցման հարցում մերժված կազմակերպությունները նաև մտավախություն ունեն, որ եթե իրենք բողոքի ալիք բարձրացնեն, միայն կենթարկվեն հետագա «պատժամիջոցների», օրինակ՝ ոստիկանության այցելությունների:

Կրոնական համայնքներին գրանցման հարցում մերժելու հետ մեկտեղ կառավարությունը նաև չի ցանկանում կրոնական ուղղվածության խմբավորումների բազմացումը: Կրոնական ազատությունների միջազգային ասոցիացիայի տեղական մասնաճյուղի գրանցման դիմումը 2002 թ. ի վեր որևէ արձագանք չի ստացել արդարադատության նախարարության կողմից: Մուսուլմանական իրավունքներ քարոզող Դեպարտամենտը կրոնական կազմակերպությունը իբրահիմողի Ալլահիվերդիկի գլխավորությամբ չկարողացավ գրանցում ծեռք բերել՝ չնայած դատարանի վարույթն ընթանում էր հօգուտ իրեն<sup>7</sup>:

150

2009թ. ի վեր բոլոր կրոնական կազմակերպությունները պետք է վերագրանցվեն: 2009 թ. մարտի 18-ին Սահմանադրության 18-րդ և 48-րդ հոդվածների լրացումները հաստատվեցին հանրաքվեով, որի վրա էլ հիմնվելով՝ հանձնաժողովը մինչև 2010 թ. հունվարի 1-ը վերագրանցման պահանջ առաջ քաշեց: Ժամկետների խախտումը հանգեցնում է տուգանքների: Չնայած այս զարգացումներին՝ տուգանքների և այլ պատժամիջոցների սպառնալիքներին՝ չգրանցված բազմաթիվ կրոնական խմբավորումներ շարունակում են գործել, ներառյալ՝ նուսուլմանական տարբեր համայնքներ, Եհովայի վկաները և մի քանի ավետարանական-քրիստոնեական կազմակերպություններ:

### Պաշտամունքի և հավաքի ազատություն

Աղբեջանական Հանրապետության Սահմանադրության 49-րդ կետը, ընդունված 1995 թ. նոյեմբերի 12-ին, ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կազմակերպելու հավաքներ: Համաձայն այս հոդվածի՝ սովորաբար ոչ մի թույլտվություն անհրաժեշտ չէ խաղաղ հավաքներ, ցույցեր և այլ միջոցառումներ վարելու համար: Խաղաղ հավաքների ազատության իրագործման միակ պայմանը համապատասխան գործադիր մարմիններին նախապես տեղյակ պահելն է<sup>8</sup>:

Ըստ կրոնական կառույցների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի՝ Աղբեջանում կան 1750 մզկիթներ, որոնցից մոտավորապես 500-ն են պաշտոնապես գրանցված:

7 Ֆորում 18-ի ներկայացրած՝ Աղբեջանի ընդհանուր պարբերական դիտարկումը, [http://www.upr-info.org/IMG/pdf/F18\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_Forum18\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/F18_AZE_UPR_S4_2009_Forum18_upr.pdf)

8 «Քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության լիգա», «Աղբեջանի Հանրապետություն, ՄԱԿ-ի կողմից ընդհանուր պարբերական դիտարկում», էջ 1-2.: [http://www.upr-info.org/IMG/pdf/CLRPL\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_Citizens\\_LaborRightsProtectionLeague\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/CLRPL_AZE_UPR_S4_2009_Citizens_LaborRightsProtectionLeague_upr.pdf)

Անկախ այս հավաստիացումներից՝ հաճախակի են հետապնդումները թե՝ գրանցված և թե գրանցում չունեցող կրոնական կազմակերպությունների նկատմամբ՝ անկախ անվանումներից և համոզմունքներից<sup>9</sup>:

2009թ. հունվարի 29-ին Բաքվում ոստիկանությունը ներխուժեց Եհովայի վկաների մի հավաքատեղի, իսկ 2009 թ. ապրիլի 9-ին Գյանջա քաղաքի ոստիկանները ներխուժեցին տեղի Եհովայի վկաներից մեկի՝ Եգյանա Գահրամանովայի տուն: Ներխուժումը տեղի ունեցավ այն օրը, երբ Եհովայի վկաները նշուն էին Քրիստոսի մահվան օրը՝ տարվա իրենց ամենակարևոր կրոնական իրադարձությունը:

Մզկիթներն ու կրոնական տարատեսակ շինությունները փակվել են շինծու մեղադրանքների պատճառով, օրինակ՝ վկայակոչելով անվտանգության նորմերի խախտումը, շինարարության «անօրինական» լինելը կամ կոմերցիոն նպատակների համար «նախատեսված» հողատարածքի ձեռքբերումը<sup>10</sup>:

2009թ. հունիսի 19-ին մամուլում հայտնված այն տեղեկությունները, թե նորակառույց մզկիթը նախատեսվում է քանդել, բողոքի ալիք բարձրացրեց Աղրբեջանի հյուսիս-արևմուտքում գտնվող Դելիմնեղլի քաղաքում: Հազրաք Ալի մզկիթի շինարարությունը ավարտվել էր մի տարի առաջ: Գորանբոյ համայնքի պաշտոնյաներից Մոհհամադ Աշուրովը հայտարարեց, որ մզկիթը քանդվում է մոտակայքում բնական գազի խողովակի առկայության պատճառով:

2009 թ. հունիսի 19-ին Բաքվի Սուլրախանի շրջանի Յենի Գունեշլի թաղանասում գտնվող Ղազրաք Ֆաթիմա մզկիթը փակվեց շրջանի պաշտոնյաների կողմից: Ոստիկանությունը արգելեց մահմեդականներին աղոթել, անջատեց էլեկտրականությունը և սպառնաց քանդել դեռևս անավարտ կառույցը: Ենթադրվում է, որ մզկիթի փակման որոշումը կայացրել է Սուլրախանի համայնքի դեկավարությունը: Շարունակում են ուժի մեջ մնալ 2008 թ. օգոստոսին համատարած ընդունված մզկիթից դուրս աղոթքը «ժամանակավորապես» արգելող որոշումները՝ ուղեկցված վոացական որոշ ուղղափառ և մկրտական եկեղեցիների վերաբացման արգելքներով:

<sup>9</sup> Տես Եհովայի վկաներին նվիրված հատվածը:

<sup>10</sup> ԱՄՆ պետդեպարտամենտ. 2009թ. Կրոնի վերաբերյալ միջազգային գեկույց, Աղրբեջան, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո (26 հոկտեմբերի 2009թ.), <http://www.state.gov/g/drl/rfs/lrf/2009/127299.htm>:

## Արտահայտման ազատություն

Կրոնական գրականության գրաքննությունը, որը գոյություն ուներ խորհրդային ժամանակաշրջանում, շարունակվեց 1992 թ. «Կրոնի մասին» օրենքում և նրա հետագա լրացումներում: Օրենքը պահանջում է թույլտվություն ստանալ պետական հանձնաժողովից նախքան որևէ կրոնական համայնք կամ անհատ կկարողանա տպել, ներմուծել կամ տարածել որևէ կրոնական գրականություն: Սա խոսքի ազատության ոլորտում Ադրբեյջանի ստանձնած պարտավորությունների ոտնահարման հստակ օրինակ է: Պետական հանձնաժողովի պարտավորությունների մասին 2001 թ. հուլիսին ընդունված օրենքի 9.2-րդ հոդվածը հստակորեն բացահայտում է հանձնաժողովի վրա դրված գրաքննության առաջադրանքները. «Վերահսկել կրոնական գրականության, հոդվածների և այլ կրոնական տեղեկատվական նյութերի արտադրությունը, ներմուծումը և տարածումը և տալ համաձայնություն կրոնական ինստիտուտների և համապատասխան պետական մարմինների դիմումների հիման վրա՝ ըստ հաստատված ընթացակարգի»:

**152**

Միայն գրանցված կրոնական կենտրոնները կարող են հիմնել տպագրատներ, և այն ամբողջ գրականությունը, որ նրանք կտպագրեն, պետք է նախապես ենթարկվի գրաքննության: Պետական հանձնաժողովը նաև պնդում է, որ յուրաքանչյուր նյութի տպաքանակը ևս պետք է հաստատվի իր կողմից: Հանձնաժողովի հատուկ մասնագետների բաժինը վերահսկում է այս գրաքննությունը: Այդ բաժնի մի պաշտոնյա ֆորում 18-ին հայտնեց, որ իրենց արգելած կրոնական գրականությունը չի տպագրվել:

Ոստիկանությունը նաև առգրավում է կրոնական գրականությունը ստուգայցերի ժամանակ: Ալիարադի հյուսիսային մասի գյուղերից մեկի մկրտական քահանա Յամիդ Շաբանովը ուներ քրիստոնեական Աստվածաշունչեր և վրացերեն ու աղոթեցաներեն գրականություն, որոնք առգրավվեցին 2008 թ. հունիսին կատարված ոստիկանական ստուգայցի ժամանակ: Այդ դեպքից 3 ամիս առաջ ոստիկանությունը կրոնական գրականություն էր առգրավել նաև մոտակայքում գտնվող Զաքարա բնակավայրում բնակվող Եհովայի վկա Մաթանաթ Գուրբանովայից: Երկու դեպքում էլ ոստիկանությունը հայտարարել է, որ գրականությունն «անօրինական» է: Տարբեր դավանանքների (ներառյալ՝ մուսուլմաններ, բողոքականներ և այլն) պատկանող աղոթեցանցի բազմաթիվ հավատացյալներ մաքսակետերում ականատես են եղել գրականության առգրավման: Շատ երկրներ, օրինակ՝ Ավստրալիան և Ամերիկան, իրենց ճանապարհորդական ուղեցույցներում Ադրբեյջան այցելողներին զգու-

շացնում են, որ «մաքսային մարմինները կարող են խիստ կանոններ սահմանել» կրոնական գրականություն տանելու համար<sup>11</sup>:

Պաշտոնապես հավատափոխությունը օրենքով չի արգելվում, բայց նրա հանդուրժելիության աստիճանը կախված է շրջանային դեկավարությունից: Ընդհանուր առնամբ, ամբողջ Երկրով մեկ տարածված նախապաշարունք կա քարոզչությամբ գրաղվող կրոնական համայնքների, մասնավորապես ավետարանական քրիստոնյաների և այլ միսիոներական համայնքների հանդեպ: Մուսուլման հավատափոխ քաղաքացիները սովորաբար թշնամնքի թիրախ են դառնում: Օտարերկրացիներին մեծ մասամբ արգելվում է քարոզչություն անել<sup>12</sup>, և նրանք ենթարկվում են տուգանքի կամ արտաքսվում են<sup>13</sup>:

2003 թ. ի վեր կառավարությունը ուժեղացրել է գրաքննությունը և վերահսկողություն է սահմանել բոլոր կրոնական համայնքների կրոնական գրականության վրա: Բոլոր հրապարակումները պետք է նախապես քննվեն հանձնաժողովի կողմից: Որոշ համայնքներ, ինչպես, օրինակ՝ ադրբեյջանցի մկրտականները, տարիներ շարունակ պայքարել են մինչև թույլտվություն են ձեռք բերել ներմուծել գրականություն իրենց մայրենի լեզվով, նույնիսկ Նոր Կոտակարանի նման տարածված գրքերը: Նույնիսկ թույլատրելուց հետո իշխանություններն իրենց էին վերապահում այդ գրականության տարածման եղանակների վերահսկողությունը<sup>14</sup>:

### Քարոզական գործունեություն

Թեև գոյություն չունի որևէ օրենք, որ արգելում է օտարերկրացիներին դեկավարել կրոնական կազմակերպություններ, կրոնի մասին օրենքը կրոնական համայնքները նկարագրում է որպես «չափահաս քաղաքացիների ինքնական կազմակերպություններ», և պետական հանձնաժողովը պնդում է, որ օտարերկրացիները չեն

<sup>11</sup> Տես Ֆորում 18-ի ներկայացրած՝ Աղրբեջանի ընդհանուր պարբերական դիտարկումը, պարագաֆներ 26-28,  
[http://www.upr-info.org/IMG/pdf/F18\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_Forum18\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/F18_AZE_UPR_S4_2009_Forum18_upr.pdf)

<sup>12</sup> «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցողների մասին իրավական կարգավիճակի մասին» Աղրբեջանի Հանրապետության օրենք, գլուխ 1, հոդված18, <http://www.azerb.com/az-law-foreigners.html> (Վեբի այցելություն՝ 31 հունիս 2008թ.):

<sup>13</sup> Կրոնական ազատությունների Բեթեթի իհմնադրամ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդ: Ընդհանուր պարբերական դիտարկում. Աղրբեջան, էջ 5, 8 սեպտեմբերի 2009թ.  
[http://www.upr-info.org/IMG/pdf/BF\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_BecketFundforReligiousLiberty\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/BF_AZE_UPR_S4_2009_BecketFundforReligiousLiberty_upr.pdf)

<sup>14</sup> Օրենքի և արդարության եվոպական կենտրոն, Ընդհանուր պարբերական դիտարկում. Աղրբեջան 2009, էջ 2,  
[http://www.upr-info.org/IMG/pdf/ECLJ\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_EuropeanCentreforLawandJustice\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/ECLJ_AZE_UPR_S4_2009_EuropeanCentreforLawandJustice_upr.pdf)

կարող դեկավարել դրանք: Յակառակ մարդու իրավունքների ոլորտում Ադրբեյջանի ստանձնած միջազգային պարտավորություններին՝ «Կրոնի մասին» պետական օրենքի 1-ին հոդվածը, ինչպես նաև 1996 թ. ընդունված «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցողների մասին» օրենքի 18-րդ հոդվածը արգելում են վերջիններիս ծավալել «կրոնական քարոզչություն»: Վարչական տուգանքների 300-րդ հոդվածը պատժում է օրինախախտներին՝ սահմանելով տուգանք նվազագույն աշխատավարձի 25-ապատիկի չափով կամ արտաքսում: 2008 թվականի օգոստոսին Ուսւաստանի քաղաքացի, ազգությանը աղրբեջանցի Ինամզադե Մամեդյարովը դարձավ 9-րդ օտարերկրյա Եհովայի վկան, որն արտաքսվեց այս հոդվածի համաձայն 2009թ. դեկտեմբերից ի վեր<sup>15</sup>:

## 154

---

<sup>15</sup>Տես Ֆորում 18-ի ներկայացրած՝ Ադրբեյջանի ընդհանուր պարբերական դիտարկումը, պարագրաֆ 29, [http://www.upr-info.org/IMG/pdf/F18\\_AZE\\_UPR\\_S4\\_2009\\_Forum18\\_upr.pdf](http://www.upr-info.org/IMG/pdf/F18_AZE_UPR_S4_2009_Forum18_upr.pdf)

## ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

11 դեկտեմբերի, 1863

Կոստանդնուպոլսի մեջ հրատարկված **Մեղուի** մի քանի համարներում, որ գոնե 220-221 և 222 (176-րդ համարը, որպես նաև 222-ի շարունակությունը դեռ չտեսանք) Ա. Պ. Ա. ստորագրությամբ մի պատվական աշխատություն տեսանք, որ անախտազիր ոգով, ազատ ու լուսավոր հայացքով հանդես է հանել մեզ անձանոթ հեղինակը՝ ամերիկյան միսիոնարների չարաչար ընթացքը Տաճկաստանի մեջ, մեր խեղճ ազգին տված հարվածները և Քրիստոսի Ավետարանը իրենց ձեռքում խարերայության գործիք շինելը: Ի՞նչ անոթալի բաներ, որ հրապարակ է հանած այդ ոգելից աշխատության մեջ, դոքա տակավին հարյուրից մեկը չեն, ինչ որ հայտնի է լուսավոր նարդոց առհասարակ որսորդ միսիոնարների վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին չէ ընկել գրչի տակ, բայց **Յաննիպալ փոռքան**. հեռի չէ այն օրը, երբ հայ ազգության ոգին հաշիվ կպահանջե նոցանից լուսավոր աշխարհի առաջև: Մենք հանդիսաբար հայտնում ենք արգու հեղինակին մեր առ ի սրտե շնորհակալությունը:

Բայց ցավում ենք, որ արգու հեղինակը թյուր ընթանողություն ունի բողոքական եկեղեցու բռնակալ դրությանց մասին: Յեղինակը կարծում է, թե այդ բոլոր պախարակելի գործերը և հալածասեր ուղղությունը Տաճկաստանի մեջ գտնված միսիոնարների, սոցա անհատական հատկություններից է բխում և թե բուն միսիան, այսինքն կառավարող ընկերությունը, ազատ է այդ դատապարտելի գործերից:

Մեղուի 223 համարում արգու հեղինակը հարցանելով, թե միսիոնարների վարմունքը ինկվիզիցիոնից ի՞նչ տարբերություն ունի, այսպես է պատասխանում. «Այո՛, կա մեկ մեծ տարբերություն մը աս երկու կարգի անձանց մեջ. **Լոյոլայի** գործավորները (ճիզվիթները) բուն զիրենք դրկող ընկերության հարազատ կամքը կկատարեն... իսկ անոնք (միսիոնարները) անտարակույս ենք (՝), որ իրենց ընկերութենեն ո՛չ երեք այսպիսի հրահանգություն մը առած են (՝), վասն որո ասոնք անոնցմե ավելի դատապարտելի վիճակի մը մեջ են... Մանավանդ որ, Ամերիկայի պես բարեհոչակ և ազատ երկրի մը մեջ ծնած և երկար ատեն ուսումնական (՝) և քրիստոնեական (մեղա աստուծո) հրահանգություններ առած ըլլալովնին, ո՛չ երեք ներելի

կրնա համարվիլ այպիսի եպերելի վարմունք մը, որ խղճի, ազատության և բանականության գլխովին դեմ է»:

Սենք ոչ միայն համաձայն չենք արգու հեղինակի կարծիքին, այլ մանավանդ դորան ներհակ կարծիքի տեր ենք:

Արգու հեղինակը **Մեղուի** 221 համարում հանդես գալով միսիոնարների շեյլոքյան կարգի իշխանավորների վերաբերյալ մի գործը՝ առանձին ծանոթությամբ, նույն համարի նույն երեսում արդեն ըսած էր. «Մի՛ քամահրեք ամերիկյան միսիոնարները, քանզի կղեր ըլլալովնին, պարտավոր են աշխարհիս կղերական ընդհանուր հոսանաց առջև իյնալ. այն է՝ քարոզել այլոց և ոչ իրենց անձին. աստվածային պարզ և մաքուր կրոնը (խոռվ կենա գլխներին) իրենց եռապետական և միսթիգական վարմունքովը ժողովողյան զգվելի երևունել, մեկ խոսքով, վատության և անտարբերության օրինակ մը ցույց տալ աշխարհին և վերջապես իրենց անկարգ վարմունքեն խրատվողներուն դեմ մարդկային ուժին փորձը փորձել ու զանոնք իբրև անկրոն դատապարտել... Թեև ոչ այլոց պես ամպիոններեն, այլ միսթիգականությամբ»:

156

Եթե արգու հեղինակը այսքան պարզ հայացք ունի այս բաների մասին, նշանակում է՝ հարկավոր է նորան միայն իիշեցնել, թե այդ միսիոնարների ուղարկող բուն միսիան նույնաբես բաղկանալով կղերից, հ՞նչ առիթ ունեին այդ կղերքը ուրանալ իրենց պարտքը որևէ դիպվածում, որ է «աշխարհիս կղերական ընդհանուր հոսանաց առջև իյնալ», այլովք հանդերձ:

Մեզ կթվի, թե արգու հեղինակը «միսթիգական» խոսքը «ծիզվիթական»-ի տեղ է գործածում կամ միսթիգականությունը՝ ծիզվիթականության տեղ, որ ներելի չէ:

Կսխալի արգու հեղինակը, եթե միսիայի անդամոց կղերականությունը մոռանալով, զուտ ավետարանական, աստվածային և մարդկային սկզբանց տեր ճանաչե Ամերիկայից Տաճկաստան միսիոներ ուղարկող ընկերությունը:

Կկամենա՞ր պարոնը, որ ցույց տայինք նորան բողոքական եկեղեցու առոտողաֆեքը, թեև առանց այս անունին, թեև ինկվիզիցինի, պապի և Շռովմի եկեղեցու անունը չին կամենում լսել,- աղաչում ենք աշխատություն հանձն առնուլ և կարդալ Մակոլեյի Անգլիու պատմությունը: - Աղաչում ենք կարդալ Թովմաս Շենրիկոս Բոքլ անզուգական հեղինակի աշխատությունը՝ «Քաղաքակրթության պատմությունը Անգլիու մեջ», մանավանդ այս անմահ աշխատության երկրորդ հատորը, որտեղ իհանալի բաներ կամ բողոքական եկեղեցու վերաբերությամբ: Այս բաները մի երկու միսիոնարների գործերը չեն, այլ բողոքական եկեղեցու գործը: Այս եկեղեցին շինվելով Շռովմի եկեղեցու ավերակների վերա, այնքան ազատություն

բերեց իր ժողովրդին, որքան այն տերություն[ք]ը միջին դարերում, որ կազմվեցան նույն Հռովմի կայսերապետության ավերակներում: Ազատությունը մի լոկ խայծ է բողոքական քարոզիչների կարթի ծայրում. վայ միամտին, որ խարվելով կրօնվի,- այնուհետև անպայման ստրկությունը նորա հավիտենական բաժինն է: Բողոքական եկեղեցին (թողմելով առաջին խռովությունքը և արյունահեղ պատերազմները, ուր բողոքականք չէին միայն մեղավոր, այլև պապականք), ի՞նչ խռովություններ, ի՞նչ քաղաքական երկպառակությունք, ի՞նչ երկրիմի ընթացք և խարդախությունք ցույց չի տվեց Անգլիո մեջ շարունակ – Կարլոս առաջինի գլխատվելուց մինչև Վիլհելմ Օրանժյանի թագավորելը,- և տակավին սորա ոգով, հրաժարվելով երդմնելուց (որովհետև այժմ հակամետ էր դարձյալ պաշտպանելու Յակոբ Բ. Ստյուարտի և նորա ժառանգի իրավունքը): Բայց այդ ամենը մի ըստ միոցե պատմել մեր գործը չէ, վերը նշված հոյակապ իմաստասեր պատմաբանքը արդեն դրել են այն մարդկության առջև:

Ո՞վ չգիտե կամ չէ լսել Ռոբերտ Օուենի և նրա Նուալեներքյան դպրոցի անունը. ո՞վ չգիտե այն ազնիվ մարդու սուրբ և նվիրական խորհություն – յուր իհմնած դպրոցով և գործարանով վերացնել սուկալի աղքատությունը... Բայց և ո՞վ չգիտե, թե ինչե՞՞ր չբերեց այն մարդու գլուխը բողոքական եկեղեցին: Ամերիկայի մեջ դարձյալ՝ ինչե՞ր չքաշեց քվեքընների ծեռքից (թեև Մաքոլեյը սոցա անվանում է անվնաս աղանդավորը, երևի յուր մայրը քվեքընների լինելու պատճառով): Ռոբերտ Օուենի գերեզմանի հողը տակավին թարմ է, այս իրողությունքը գրեթե մեր աչքի առաջև անցան: Երանի՛ թե մի-այն սոքա լինեին:

Ի՞նչ է կարծում պարոնը, ամերիկյան միսիան լինելով Նյու-Յորքի մեջ, պաշտո՞՞ւմ է նույն ազատությունը, որ ոգի է տալիս Մի-այլալ Նահանգներին: Կարծո՞ւմ է, թե միսիոնարները՝ Ամերիկայի մեջ կամ Անգլիա կամ ուր և իցե, մի կրոնական թշվառ դպրոցում ստանալով մի որպիսի և իցե կրթություն՝ շերեփներո՞վ էին խնում ազատությունը: Քա՞վ լիցի:

Եգիպտոսի քուրմերից մինչև քվեքը՝ կերպարանափոխությունը կան, բայց իրը նույնը կմնա, քանի որ դոքա ինքյանց ժողովրդեն անջատ մարմին մի կծացնեն: Ազատության պահապանքը դոքա չե՞ն. դոքա ավազակ են ուրիշի խղճի ազատության. դոքա հափշտակում են այդ ազատությունը և քամում են ազատ դատողության վերջին բարոյական զորությունը, որ առավել բացարձակաբար բռնանան յուրյանց որսի վերա: Այդպիսի ընթացքով դոքա միշտ դժբախտ մարդկության ուտիչ ու ցեցերը պիտի համարվին...

Այսօր բողոքական եկեղեցին ժիպակ է դարձել (սնդիկ), որ ամենափոքր հարվածից, մի չնչին զարկից հարյուրավոր մասերի

կցնդի: Մի՞թե արգո հեղինակը կարող է հավատալ միսիոնարների ասածին. որպես թե՝ այդ էր խոճի ազատության երևույթը: Եթե այդպես է, ինչի՞ ուրեմն զանազան բաժանմանք պատկանող բողոքականք հալածում են միմյանց, և ի՞նչպես «չուտելու և չի խմելու» ուխտելով: Այո՛, այսօր է՛լ չի պատահել, որ եպիսկոպոսանք Մարգարիտ Մելեչլեն և Մարգարիտ Ուելսոն երիցական կանանցը խեղդեն Սոլվեյ ծովածոցում, տեղատվության ժամանակ սյուներ դնելով ավագի վրա բարձր ու ցածր տեղերում, որ մակընթացության առաջին զոհի կտուամահ լինելը երկրորդը տեսնելով, հրաժարվի երիցական աղանդից և ընդունե եպիսկոպոսական երկնային ուղղափառությունը,- թեև երկու կանայքն էլ ստոյիկյան քաջությամբ մեռան, պաշտելով յուրյանց խոճի ազատությունը: Այո՛, Ամերիկայի կամ Անգլիո մեջ այսօր կախաղան կամ խարույկ էլ չկա, բայց խարույկները և Բարգելոնի մեջ մարած են. ո՛րքան վերջինը կարելի էր վերագրել պապական եկեղեցու ազատասիրության, նույնքան և առաջինը բողոքականներին, որք մերժելով պապի իրավասությունը, երբեք չմերժեցին խարույկը և կախաղանը «հերձվածողների» ընդդեմ, մինչև որ քաղաքակրթությունը գորանալով, այդ երկուսը միասին կործանեց՝ առանց բողոքական կամ պապական եկեղեցիների, ո՛չ թե ցանկության, այլ գեթ թույլտվության. նզովք և մերժողությունք ծաղկում են ոչ միայն պապական եկեղեցու գոգում, այլ բողոքականում և այն ո՛չ միայն կենդանիների, այլև մեռելների ընդդեմ:

Պե՞տք են ապացույցը,- ուրիշ ամենը թողած, այս միայն ենք հարցանում: Ի՞նչ պատճառով Ուեստ-Մինստեր աբբայության մեջ չենք տեսանում լորդ Բայրոնի գերեզմանը. նա ամեն իրավունքով պիտի այնտեղ թաղվեր, որպես լորդ և հոյակապ բանաստեղծ: Բայց նա այնտեղ թաղված չէ: Երբ բանաստեղծի մարմինը բալասանած Հունաստանից Անգլիա բերին, բողոքական եկեղեցին և նորա փարիսեցի արբանյակները, տեսնելով այդ փաթաթված և բալասանված մարմինը, ծափ զարկին և կարծեցին թե նումիացու է, կարծեցին թե՝ Լոնդոնը Մեմփրին է, կարծեցին թե, պառլամենտների տեղ մի փարավոն է թագավորողը. ուստի և հական թոթափել դիադատության հին ատյանը նորոգեցին: Այնտեղ հիշվեցավ, որ հոյակապ բանաստեղծը ընդդեմ է եղած եկեղեցուն, որպես հանցավոր յուր ամուսնու ընդդեմ. այնինչ հանցանքը մինչև այսօր ևս տակավին ապացուցված չէ. (Տես Մակոլեյի հատվածը Բայրոնի մասին). այնտեղ հիշվեցան բանաստեղծի անառակությունը Վենետիկի մեջ. որպես թե մինչև այսօր այդ աբբայության դուռը փակվեցավ Բայրոնի դագաղի առաջև: Չկարողացան գուշակել, որ Բայրոնը գերեզմանից փառք խնդրող չէր, այլ նորան փառք տվող:

Մենք չենք մերժում, թե որևէ ընկերության մի գործակալի

անհատական հատկությունքը չէին կարող հանդես ունենալ կամ պատասխանատու կացուցանել այդ ընկերության բոլոր պաշտոնակատարությանը, բայց նույնպես խնդրում ենք ընդունել, որ բոլոր այդ գործակալքը միասին առնված, այն ընկերության ոգու հայտարարն են:

Արգու հեղինակը ուսումնականության է ենթարկում այդ «յուր տեսակի» գիտության աշխատավորների մոտ. Երանի, թե ավելի լավ ծանոթանար նոցա կրոնական դպրոցների հետ, այն ժամանակ կփոխեր յուր կարծիքը և կմայեր նոցա վրա իրու հասարակ և տգետ արեղաների, որ գիտեին հարկավ անգլերեն և գուցե մի երկու ուրիշ լեզու ևս, այն էլ դժվարավ:

Մենք հույս ունինք, որ մեր համազգի հրովարմեական կամ քաղաքական եղբայրքը չգայթակղին մեր խոսքերից. մենք ոչ ոքի ներքին կրոնը կամ խիղճը դատելու, չասենք հանդգնությունը, այլ՝ գեթ աշխարհաբար խոսելով, հիմարության վիզ առնող չենք. և մեր պատերազմը այս կամ այն հավատալիքի ընդեմ չէ, այլ բռնության ընդեմ, որ մենք տեսնում ենք այն եկեղեցիներում, որք կամենում են մեզ ազատություն պարգևել: Ո՞հ, մի ազատություն, որ բնավ տարբերություն չունի բռնությունից: Ինչ որ վերաբերում է բուն ներքին կրոնին, թո՞ղ յուրաքանչյուր մարդ յուր խղճնտանքից հարցանե և պատասխան տա աստուծո. մենք ոչ ինկվիզիտոր ենք, ոչ միսիոնար:

Բայց երբ բռնությունը ազատությամբ շուլարվելով հանդես կգա, երբ նեղսիրտ խավարը խղճի ազատության և լուսեղեն դիմակներով կզարդարվի և բուն ազատությունը կքարկոծվի, այն ժամանակ ամեն ստույգ ազատասիրի պարտքն է բանականության սրով ասպարեզ մտնել և կեղծավոր փարիսեցիների գլխից Մովսեսի քողը վերացնել. այս վարդապետության հետևում ենք և մենք:

Մնաք բարյավ:

## **ԿՐՈՆ ԵՎ ՀԱՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Համար 10  
փետրվար, 2010

**160**

---

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 70x100 1/16, ծավալը՝ 10 տպ.մամ.  
Տպաքանակը՝ 400 օրինակ







































**180**







